ԷՎԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ-ԲԱԳԻ

ՀԱՅ – ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ «ԱՐՄԵՆԻԱ» ԱՄՍԱԳԻՐԸ

ԵՐԵՎԱՆ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

ЭВА ГЕВОРГЯН-БАГИ

АРМЯНО-ВЕНГЕРСКИЕ ЛИТЕРАТУРНЫЕ СВЯЗИ И ЖУРНАЛ „АРМЕНИЯ“

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1979

891.981.09 + 894.511.09

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԷՎԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ-ԲԱԳԻ

ՀԱՅ-ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ «ԱՐՄԵՆԻԱ» ԱՄՍԱԳԻՐԸ

ՀԱՅԿ.ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄ. ՀԱՅ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1979

Տ Ap 84 (Հունգ.)
Գ 47

Աշխատանքում քննարկվում են հունգարահայ «Արմենիա» (1887—1907) ամսագրի հարուստ և բազմազան նյութերը՝ հունգարահայերի գրական և բանահյուսական ստեղծագործությունները, առանձին հեղինակների՝ հայերեն լեզվով գրված բանաստեղծությունները, հունգար դասականների երկերի հայերեն առաջին թարգմանությունները, ինչպես նաև Դ. Մարտոնի «Արա Գեղեցիկ» ողբերգությունը:

Առաջաբան և խմբագրություն՝
Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ,
բանասիրական գիտությունների թեկնածուներ
Ս. Գ. ԱՄԻՐՅԱՆԸ ԵՎ Կ. Հ. ՅԻՆԳՈՁՅԱՆԸ

Գ $\frac{70202}{703(02)-79}$ 55—78

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979

ԱՌԱՋԱԲԱՆ

ՀԱՅ-ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՐԱԽԱՅՐԻՔԸ

Հայության պատմական բախտն իր խոր կնիքն է թողել նրա հոգևոր մշակույթի զարգացման վրա։ Ինքնուրույն պետականության կորստից հետո, արաբների, սելջուկ-թուրքերի, ապա նաև թաթար-մոնղոլների ամայացնող արշավանքների ու կոտորածների պատճառով, դեռ միջնադարից ծայր են առնում անվերջանալի արտագաղթերը։ Ժողովրդի կենսունակ տարրերը, հանուն ազգային ոգու և ավանդների պահպանության, թողնելով իրենց պապերի շեմն ու շիրիմները՝ զանգվածորեն ձգտում են դեպի անծանոթ և օտար վայրեր, դեպի ռուսական տափաստաններ ու Ղրիմի թերակղզի, իսկ այնուհետև ցրվում Արևելյան Եվրոպայի առևտրական բանուկ ճանապարհների երկայնքով՝ հիմնելով իրենց նոր բնակավայրերն ու քաղաքները։ Բայց այստեղ էլ, տնտեսական-քաղաքական նոր իրադրությունների մեջ, հենց առաջին օրերից, նրանց մշտական ուղեկիցները դարձան ձուլման ու փոշիացման անտեսանելի ուրվականները։

Այս նոր հանգրվաններում հայերը հեշտությամբ տեղի չտվին. նրանք տոկացին ու մաքառեցին հանուն ազգության, լեզվի ու կրոնի պաշտպանության, հիմնեցին դպրոցներ, կառուցեցին եկեղեցիներ ու տաճարներ, կազմեցին ու նկարազարդեցին ձեռագիր մատյաններ, հյուսեցին բնության ու սիրո

մասին խաղեր ու տաղեր, կազմակերպեցին թատերական ներկայացումներ, խորհրդածեցին տիեզերական առեղծվածների շուրջ, դավանաբանական սխոլաստիկ հարցերով չարչարեցին իրենց միտքը... Ժամանակը, սակայն, իր գործն առաջ էր տանում, և նրա դեմ անզոր էին և՛ բարգավաճ առևտրական կյանքը, և՛ եվրոպական միջավայրերից ստացած տպավորությունները, և՛ ներքին ինքնավարության իրավունքն ու հայկական դատարանները, որոնք երկար դարեր գործում էին Կամենեց-Պոդոլսկում, Լվովում, Սամոշույվարում...

Այն շփումը եվրոպական ժողովուրդների հետ, ապա և ներգրավումը համաեվրոպական հոգևոր ու առևտրական կյանքի ոլորտներ, որոշակի ազդեցություն են թողնում հայերի հոգեբանության վրա, աննկատելիորեն փոխում նրանց ազգային դիմագծերն ու գեղագիտական պահանջմունքները։ Մայրենի լեզվով երբեմն ստեղծված մշակութային արժեքներին փոխարինում էին օտար լեզուներով հորինված արձակ ու չափածո երկերը, պատմական ժամանակագրությունները, իրավական վավերագրերը, իսկ հետագայում՝ դադարեցին նաև դրանք։

Բայց ի՞նչ են իրենցից ներկայացնում համահայկական մշակույթի այս ճյուղավորումները, ի՞նչ յուրահատկություններ ունեն օտար լեզուներով նրանց հորինած գեղարվեստական երկերը, հրապարակախոսական էջերը և բանահյուսությունը։ Հիշյալ խնդիրները, ըստ էության, հետազոտության առարկա չեն դարձել մեզանում ո՛չ անցյալում և ո՛չ էլ մեր օրերում, եթե մի կողմ թողնենք լրագրական համառոտ տեղեկությունները հայկական ծագմամբ օտար այս կամ այն գրողի, գործչի կամ արվեստագետի և հայատառ թուրքերենով գրված առանձին երկերի ու պարբերականների մասին։

Այս բացը լրացնելու ուղղությամբ վերջին տարիներս որոշակի աշխատանքներ են ծավալվում Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում՝ սկսելով հունգարահայերի թողած մշակութային արժեքների ուսումնասիրությունից, որի համար կարծես նախախնամությունն ինքն էր ձեռք

մեկնում՝ Հեռավոր Հունգարիայից ասպիրանտական ուսումնառության կոչելով ամեն ինչով հարմար թեկնածուի, որպիսին էլլա Գևորգյան-Բալին է*:

Հունգարալեզու հայ գրականությանն ու մշակույթին նախապատվություն տալը ուներ և այլ պատճառներ, քանի որ արևմտաեվրոպական հայկական համայնքների մեջ իր ներքին կյանքով և ստեղծած հոգևոր արժեքներով առանձնահատուկ տեղ է գրավում հունգարահայ գաղութը, որ անցել է զարգացման երկար ճանապարհ: Սկիզբ առնելով X—XI դարերի սահմանագծից և հետագա դարերում ապրելով իր բուռն ծաղկումը՝ XIX դարասկզբից սկսվեց նրա վայրէջքը, դարի վերջին տասնամյակներին մի կարճատև վերելք ապրեց, և այնուհետև սկսվեց անկումը, որ զուգադիպեց ներկա դարի 20-ական թվականներին: Այսօր հունգարահայերի բեկորները ցրված են Հունգարական Ժողովրդական Հանրապետության մի քանի քաղաքներում (մասնավորապես՝ Բուդապեշտում, ուր հայ համայնքն ունի իր եկեղեցին, իսկ որոշ ժամանակ գործում էր նաև ակումբը) և Ռումինա-

---

* Էլլա Գևորգյան-Բալին ծագումով հունգարուհի է: Բարձրագույն կրթությունն ստացել է Դեբրեցենի Կոշուտի անվան և Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարաններում (1964—1969), իսկ ասպիրանտական ուսումնառությունը՝ Երևանում, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: Հակումը դեպի բանասիրական գիտությունները, դեպի Արևելքը ու հայերը սկսվում է վաղ տարիներից, բայց հայոց լեզվի, գրականության ու պատմության ուսումնասիրությանը նվիրվելու վերջնական վճիռը նա կայացրել է 1967—1968 թթ., Մոսկվայում ուսանելու շրջանում: Սկզբում շրջապատի հետ հաղորդակցվելու և գիտելիքներ քաղելու միակ միջոցը ռուսաց լեզուն էր, և Էլլա Բալին ագահորեն կարդում ու մշակում էր ռուսերեն այն բոլոր գրքերը, որոնք առնչվում էին հայերին ու նրանց գրականությանը: Հետո, երբ մեսրոպյան գրերը և մեր «հին, ձկուն ու բարբարոս» լեզուն արդեն մատչելի ու ընտանի էին նրան, սկսեց օգտվել բուն հայկական բնագրերից:

Սահմանված ժամանակաշրջանում Էլլա Գևորգյան-Բալին գրեց ու պաշտպանեց դիսերտացիա հունգարահայոց գրական-մշակութային կյանքի ու հոգևոր զարթոնքի պատմության կարևոր շրջաններից մեկի մասին, որի ընդարձակված տարբերակն է սույն գիրքը:

կան Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտնող Տրանսիլվանիայում։

XVII—XVIII դարերում, նաև՝ XIX դարի առաջին տասնամյակներին, հայ լեզուն ու մատենագրությունը տակավին մատչելի էին հունգարահայերի մեծ մասին։ Այնտեղ դեռ գործում էին հայկական դպրոցներ, ստեղծվում էին գեղարվեստական երկեր, տեղական բարբառով երգվում ու ասվում էին ժողովրդական խաղեր, առակներ, ու հեքիաթներ։ Բայց 1830—40-ական թվականներից սկսած՝ տնտեսական ու քաղաքական որոշակի գործոնների ազդեցության տակ, իրադարձությունները արմատապես փոխվեցին։ Կապիտալիզմի բուռն զարգացման պայմաններում հայերն սկսեցին ավելի ու ավելի մուտք գործել համահունգարական տնտեսական ու մշակութային կյանքի ոլորտներ, հավաքվել երկրի մեծ քաղաքներում, հանրային ու վարչական մարզերում գործելու հնարավորություններ ստանալ, որոնց համար հայ դպրոցի տված կրթությունն արդեն բավարար երաշխիք չէր։ Հայ պատանիների ստվար խմբերն սկսեցին լցվել հունգարական միջնակարգ և բարձրագույն դպրոցներ, իսկ գրողներն ու արվեստագետները՝ իրենց գործունեությունը ծավալել հունգար հոգևոր մշակույթի համապատասխան մարզերում։ Հիշյալ պատմաշրջանում հունգար նոր գրականության գանձարանն իրենց շոշափելի լուման են ներմուծել հայկական ծագումով մի շարք գրողներ։

Հիշենք նրանցից գեթ մեկ-երկուսի անունները.

Գերգեյ Չիկի (1842—1891), որը հիմնադիրն է հունգար ռեալիստական դրամայի, և որի ստեղծագործությունները, մասնավորապես՝ «Տատիկ», «Փրփուրներ», «Զրպարտիչներ», «Խայտաբղետ աղքատություն», այսօր էլ բեմադրվում են Հունգարական Ժողովրդական Հանրապետության թատրոններում և հուզում ու գրավում բազմահազար թատերասերների։

Իշտվան Պետելեի (1852—1910), որը դարավերջին մեծ ժողովրդականություն վայելող արձակագիրներից էր և ժամանակակիցներից մեծարվել է «Հունգարական Տուրգենև»

պատվանունով։ Պետելեին սերտ կապերի մեջ էր նաև հայկական շրջանների հետ, կազմակերպում և ուղղություն էր տալիս Տրանսիլվանիայի հայոց գրական կյանքին։

Հայեր էին նաև գրող և հրապարակախոս Մորից Լուկաչը, դրամատուրգ Լասլո Գորովեն, բանաստեղծ ու արձակագիր Էլեմեր Բանյային, որ մտերիմն էր հունգար հռչակավոր սիմվոլիստ-բանաստեղծ Ադի Էնդրեի, և ուրիշներ։

40-ական թվականներին, հունգարական հեղափոխության օրերին, անմահ փառքով են պսակվել հայազգի զորավարներ Յանոշ Ցեցյանը, Վիլմոշ Լազարը և Էրնեո Կիշը։

Հունգարահայերը գործել ու հռչակվել են նաև այլ բնագավառներում, բայց ներկա պարագայում մեր հետաքրքրքրության առարկան գրականության և մշակույթի գործիչներն են, այն էլ՝ օտար լեզվով ստեղծված հայ գրականության։

Ազգային ինքնուրույնության պահպանման խնդիրը այսօրինակ իրագործություններից հետո էլ դեռ շարունակում էր հուզել շատերին։ Մոռանալով հանդերձ մայրենի լեզուն՝ հունգարահայ նոր մտավորականության մի ստվար մաս՝ Տրանսիլվանիայի հայկական քաղաքներում գործող ուսուցիչներ, ծառայողներ ու գրասերներ, հավատարիմ մնացին իրենց ազգությանը և սկսեցին ուղիներ որոնել հայության խոյառ ձուլման առաջն առնելու, Մայր Հայաստանի հետ նրանց հոգևոր կապերն ամրապնդելու համար։ Բուրժուական ազգերի ձևավորման ընթացքն էլ սնունդ էր տալիս հունգարահայոց ազգային զգացումներին։ Այս ամենն էլ, ի վերջո, 80-ական թվականների վերջերից ծնունդ տվին վերածնության շարժման, որն ընդունված է անվանել հունգարահայոց հոգևոր զարթոնք և որն ամենից ավելի արտահայտվել է հրապարակախոսության և գեղարվեստական գրականության բնագավառներում։

Հունգարահայ միջավայրում ստեղծվեց մի ինքնատիպ գրականություն, որի կերպարներն ու հերոսները թեպետև հայեր էին, նյութը՝ հայկական, բայց լեզուն՝ հունգարերեն։ Իր շահախնդրություններով ու ստեղծագործական հատկանիշներով այս գրականությունը գտնվում էր Մայր Հայաս-

տանի Արևելյան և Արևմտյան հատվածներում ծավալող հայալեզու գրականության որոշակի ազդեցության տակ մի կողմից և հունգար մեծ քերթողների՝ մյուս։ Մի դեպքում հունգարահայ երիտասարդ բանաստեղծների ու արձակագիրների գրական ուսուցիչները հայ մեծ գրողներ Աբովյանը, Ալիշանը, Պատկանյանը, Պարոնյանը, Սունդուկյանը, Պեշիկթաշլյանը, Դուրյանը և մյուսներն էին, որոնց կյանքին ու ստեղծագործություններին նրանք հաղորդակից էին դառնում արևմտաեվրոպական լեզուներով եղած թարգմանությունների (գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն) և հունգարական փոխադրությունների միջոցով, մյուս կողմից՝ հունգար աշխարհահռչակ գրողներ Շանդոր Պետեոֆին, Ֆերենց Կեոլչեին, Միհայ Վերեշմարտին, Իմրե Մադաչը և ուրիշներ։

Էվա Գևորգյան-Բագիի բանասիրական հետազոտության առարկան ահա ա՛յս գրական-մշակութային միջավայրում ստեղծված գեղարվեստական ստեղծագործություններն ու բանահյուսական նմուշներն են, օտարալեզու հայ պարբերական հրատարակություններից մեկի գրական արգասիքները։

Իհարկե, մեկ աշխատությամբ պատասխաններ տալ հիշյալ ընդարձակ նյութի թելադրանքով ծագող բազմաթիվ և բազմազան խնդիրներին, մանավանդ որ վերջինների համակողմանի քննության համար հետազոտողից պահանջվում է նաև հունգարահայոց տեղական խոսվածքի (Սուտխալի բարբառի), գրաբարի և գերմաներենի (ավստրո-հունգարական կայսրության պետական լեզվի) խոր իմացություն, իսկ երիտասարդ հեղինակին առայժմ դրանք հաղթահարելու ճանապարհին է, ուստի և նրա առաջին աշխատությունը նվիրված է հունգար հողում, հունգարերեն լեզվով, XIX դարի վերջին տասնամյակներին և XX դարասկզբին, շուրջ 20 տարվա ընթացքում ստեղծված արձակ ու չափածո երկասիրությունների քննությանը, հիմնական աղբյուր ունենալով 1887 թվականից սկսած՝ Տրանսիլվանիայի Սամոշույվար կամ Գեռլա քաղաքում լույս տեսնող «Արմենիա» հունգարահայ ամսագրում հրատարակված արձակ ու չափածո նյութերը,

գրականագիտական հոդվածներն ու անդրադարձումները, թարգմանությունները բուն Հայաստանյան հայ գրականությունից: Գոհունակությամբ պետք է նշենք, որ Էվա Գևորգյան-Բագին կարողացել է բացահայտել հունգարալեզու հայ գրականության օրինաչափությունները, նրա կապերն ու առնչությունները Մայր Հայաստանի գրականության և հայության հիշյալ բեկորների հետ, հունգար հայրենիքի դասական քերթության ավանդների հետ, իր եզրակացությունները խարսխելով փաստական հարուստ նյութի վրա:

Բայց այն նյութերը (լինեն դրանք ոտանավորներ թե պատմվածքներ, հոդվածներ թե գրական լուրեր), որոնք քննության են առնվում սույն աշխատության մեջ, գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ, որպիսի հանգամանքը, սակայն, բնավ չի խանգարել, որ երկերի ընտրությունն ու մեկնաբանումը կատարվի մեծ ճաշակով, մասնագիտական լրջությամբ և որոշակի նպատակասլացվածությամբ:

Այսուհետև հայ ժողովրդի բազմադարյան գրականության պատմության հետազոտողները մեծապես պիտի օգտագործեն Է. Գևորգյան-Բագիի հավաքած հարուստ նյութերը, հենվեն նրա ուշագրավ եզրակացությունների վրա, որպես հայության պատմական բախտի թելադրանքով՝ օտար ափերում հորինված այլալեզու հայ գրականության ճյուղերից մեկի անկանխակալ քննության արդյունքներ:

Է. Գևորգյան-Բագիի ուշադրությունից չեն վրիպել հունգարական իրականության մեջ նույն ժամանակահատվածում հայկական թեմաներով ստեղծված գեղարվեստական երկեր նույնպես, ինչքանով որ դրանք առնչվում են Հունգարահայոց հոգևոր զարթոնքի խնդիրներին ու «Արմենիա» ամսագրին: Այդօրինակ երկերից մեկը Դ. Մարտոնի «Արա Գեղեցիկ» ողբերգությունն է, որի հանգամանալից քննությանը նվիրված հոդվածը նախապես լույս է տեսել ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական բաժանմունքի «Լրաբեր» հանդեսում (1974, № 8):

Հեղինակն, ըստ ամենայնի, ճիշտ է գնահատել նաև հունգարահայոց զարթոնքի գրական գործիչների՝ Խ. Սոնգոտյանի, Ղ. Պատրուբանյանի, Ղ. Ավետիքյանի, Ս. Մոլնարյանի, Լ. և Գ. Ըստկարյանների, Է. Միհալֆիի, Յ. Մերջայանի, Ռ. Շալլակի, Կ. Կրիտշայի, Տ. Տեորեոշի և այլոց անձն ու վաստակը, դրանով իսկ հարստացնելով օտար լեզվով ստեղծագործող հայ քերթողների ու քերթության ամբողջական պատկերը, որ, պիտի խոստովանել, բնավ էլ հըստակ չէ։

Մեր համոզմամբ՝ ներկա աշխատությունը շոշափելի նպաստ է հայ և հունգար գրական ու մշակութային առնչությունների և հայ գրականության միջազգային կապերի ուսումնասիրության ասպարեզում։

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ավելի քան հազար տարվա վաղեմություն ունեն հայ-հունգարական առաջին շփումները, սակայն Տրանսիլվանիայի հայ գաղութը կազմավորվել է XVII դարի 70-ական թվականներից։ Հետագայում այն ստվարանալով՝ դարձել է Եվրոպայի ամենախոշոր, ավանդներով հարուստ գաղթավայրերից մեկը։

Տրանսիլվանիայի հայ համայնքի հասարակական, տնտեսական ու հոգևոր կյանքին բազմիցս անդրադարձել են նախահոկտեմբերյան շրջանի պատմաբաններն ու բանասերները, բայց գաղութի պատմության հանգամանալի ուսումնասիրմանը ձեռնարկվեց միայն սովետական ժամանակաշրջանում և այն էլ՝ վերջին տասնամյակներին։ Մենք նկատի ունենք ակադեմիկոս Հ. Աճառյանի՝ հունգարահայերի բարբառի հետազոտությանը նվիրված աշխատությունը («Քննություն Առտիալի բարբառի», 1953), ռումին բանասեր Ի. Ա. Պոպեսկուի հավաքած բանահյուսության նյութերը, Ս. Քոլանջյանի հոդվածները հունգարահայոց պատմական անցյալի մասին և այլն։ Այս բոլորով հանդերձ, գաղութի գրականությունը՝ հունգարահայերի հոգևոր-մշակութային կյանքի դրսևորման այդ կարևորագույն բնագավառը, որը հայ մշակույթի անխզելի մասն է կազմում, ցարդ չի հետազոտվել, թեև հայ-հունգարական գրական առնչությունները արդեն երեքհարյուրամյա պատմություն ունեն։

Սույն աշխատության մեջ հետազոտվում է հայ-հունգարական գրական առնչությունների ամենաուշագրավ երևույթը՝ Հունգարիում լույս տեսած հայկական «Արմենիա» (1887—1907) ամսագիրը, նպատակ ունենալով բացահայտել

դրա էջերում ամփոփված գրական հարուստ նյութերի գաղափարական-գեղագիտական արժեքը։

Պարտք եմ համարում իմ խորին շնորհակալությունը հայտնել բանասիրական գիտությունների դոկտոր Պիոն Հակոբյանին՝ հայ հարուստ գրականության մասին իմ՝ հունգարուհուս գիտելիքները հարստացնելու, ինչպես նաև այն ջանքերի համար, որոնց շնորհիվ ներկա աշխատությունը լույս է տեսնում հայերեն։

Ա.

ՀՈՒՆԳԱՐԱՀԱՅԵՐԸ ԵՎ ԳԱՂԹԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԶԱՐԹՈՆՔԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ XX-Ի ՍԿԶԲՆԵՐԻՆ

«Ժողովուրդ Հայկայ, որ բնակի ընդ հովանեաւ գահին սրբոյն Իշտվանայ...»[1]:

Բազմաթիվ վավերական տվյալներ հաստատում են, որ Հունգարիայի երբեմնի տարածքում հայերն ապրել են դեռևս մաջարների պետության սկզբնավորման օրերից՝ XI դարի սկզբներից։

Իրողություն է նաև, որ այնտեղ առանձին հայեր են եղել դրանից էլ առաջ։ Հունգարիայի պատմության առաջին շրջանին վերաբերող մի ուշագրավ երկում՝ Շիմոն Կեզայու ժամանակագրության մեջ (1282—83)[2], հիշատակված է, որ հայոց առաջին խմբերն երևացել են Հունգարիայում դեռևս

---

[1] „Az "Örmény Múzeum—Egyesület" alakuló közgyűlése", "Armenia", *1905*, № *4*, o. *120* (*կրկնություններից խուսափելու համար այսուհետև կնշենք միայն ամսագրի թվականը, համարը և էջը*)։

[2] „M. Gesta Hunnorum et Hungarorum" (Kiadása: Szentpétery Imre szerk. Scriptores rerum Hung. tempore ducum regumque stirpis Arpadianae gestarum I—II. Bp., 1937—38).

X դարում՝ իշխան Գեզայի օրոք (971—997), իսկ հետո՝ առաջին թագավորների ժամանակ (Հունգար թագավորական առաջին հարստությունը իշխել է 1001—1301 թթ.), Բագրատունյաց և Կիլիկյան հայկական թագավորության հողերից աստիճանաբար գաղթել և այստեղ են հաստատվել շատերը։ Հայտնի է, օրինակ, որ 1218 թ. Հունգարիայի Անդրաշ II թագավորը Կիլիկյան Հայաստանի թագավոր Լևոն II-ի հետ փոխօգնության դաշնագիր է կնքել, որի հավաստիությունը հազիվ թե կասկած հարուցի, քանի որ այն «վավերացվել» է Անդրաշ II-ի որդու և Լևոն II-ի դստեր նշանադրությամբ (ամուսնությունը խափանվել է Լևոն II-ի վաղաժամ մահվան պատճառով)[3]։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Հունգարիայի երբեմնի մայրաքաղաք Էստերգոմում բնակություն հաստատած հայերի մասին պատմող վավերագրերը։ Դրանցից մեկը Բելա IV թագավորի 1243 թ. մարտի 31-ի հրամանագիրն է, որով վերահաստատվում էին հիշյալ քաղաքում բնակվող հայերի նախկին արտոնությունները[4]։ Մյուսը Լասլո Կուն թագավորի 1281 թ. հրամանագիրն է, որով նույն քաղաքի հայերին պատկանող հողերը նվիրաբերվում էին Ավգուստինյան օրդենին (կրոնական միաբանություն)[5]։

Հայտնի է այնուհետև, որ XV—XVII դարերում լեհ թագավոր Ալբերտի արշավանքի (1497) և Մոլդավիայի իշխան Ստեփան Ռարեշի (1551) հալածանքների պատճառով մեծ թվով հայեր Սուչավայից գաղթում են Հունգարիա և Տրանսիլվանիա։ XVII դարում Գերգյոսենտմիկլոշ (այժմ՝ Գեորգեն) և Եղիսաբեթուպոլիս (այժմ՝ Դումբրավեն) բնակավայրերում ապրում էին հայեր, որոնք գաղթել էին Մոլդավիայից[6]։

Ազգագրագետ Լասլո Ռետիի (1851—1914) «Հունգարա-

---

[3] *Ц. П. Агаян, Е. К. Саркисян, В. К. Восканян*, Об армяно-венгерских исторических и культурных связях и задачах их изучения, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1969, № 5, էջ 43։

[4] „A magyarhoni örmény gyarmatok", 1887. № 3, o. 92—93.

[5] Նույն տեղում։

[6] «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Երևան, 1972, էջ 387։

Հայերը» հոդվածում գտնում ենք այդ շրջանին վերաբերող մի քանի ուշագրավ տվյալներ։

1415 թ. Բուդա քաղաքի բնակիչ ոմն Յակաբ իր տունը վաճառում է Մարտոն (Մարտիրոս) անունով մի հայի։ 1432 թ. Պեշտի քաղաքային վարչության անդամներից մեկը կոչվում էր Էգեդեմ Էրմեն (այսինքն՝ հայ)։ Միջնադարյան Հունգարիայի հռչակավոր դեմքերից մեկի՝ Մատյաշ կամ Մատվեյ Կորվին Թագավորի (1443—1490) Բուդա ամրոցում, իբրև բերդապետ, ծառայել է Իշտվան Էրմենը (Ստեփանոս Հայը)։

Համաձայն Էստերգոմի եպիսկոպոս Միկլոշի մի նամակի (1453), Տոլմաչ բնակավայրում եղել է հայոց եպիսկոպոսություն, իսկ առաջնորդին կոչել են Մարտոն (Մարտիրոս)։ 1609, 1628 և 1649 թթ. հունգար ազնվականական ցուցակներում, որոնք հայտնաբերվել են Դյուլաֆեհերվարի (այժմ՝ Ալբա-Յուլիա), Կապիտուլիի և Կոլոժմոնոշտորի (այժմ՝ Մոնոշտուր) կոնվենտի դիվաններում, հիշվում են նաև հայ ազնվականների անուններ[7] և այլն։

1886 թ. Թուրքերից Բուդայի ազատագրման 200-ամյակի առթիվ հիշյալ քաղաքում կազմակերպված ցուցահանդեսում ի ցույց էին դրված այն վեց գաղտնի նամակները, որոնք Բուդա ամրոցից Վիեննա էր ուղարկել հայ դերձակ Գաբորը (Գաբրիել), մեկ այլ հայի՝ ոսկերիչ Յանոշ Դիոդատոյի միջոցով, որոնք կարևոր տվյալներ էին պարունակում ու փութացնում պաշարված Բուդայի ազատագրումը։ Դրանք պետք է հանձնվեին Վիեննայի ռազմական խորհրդի նախագահին[8]։

Հունգարահայ «Արմենիա» ամսագրի (1887—1907) համարներում կարելի է տեղեկություններ գտնել հունգարական այն տեղանունների մասին, որոնց արմատը կամ «էրմեն» (հայ) բառն է, կամ էլ վերջինիս ձևափոխությունը։ Այդտեղ

---

[7] *Réthy László*, A magyar örmények, 1890, № 5, o. 129—134.

[8] *Molnár Antal*, Örmények Buda visszafoglalásánál, 1887, № 1, o. 3—8, *Эдмонд Шюц*, Новые данные о Габриеле Токатеци, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1961, № 1, էջ 103—106։

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

հիշվում են Էօրմենեշ անունով մեկ բնակավայր, նաև՝ Էօրմենսեկեշ[9]։

Հունգարահայության բուն պատմությունը, ըստ ամենայնի, սկսվում է XVII դարի երկրորդ կեսից, երբ հայերի հոծ զանգվածները, մասնավորապես Մոլդավիայից, փոխադրվեցին այստեղ։ Նրանց նախնիների մի մասը Անի քաղաքի ու մերձակա վայրերի երբեմնի բնակիչներն էին և Տրանսիլվանիա էին հասել երկարատև ու դժվարին ճանապարհներ կտրելուց հետո։ Արդեն վաղուց հայերը հաստատվել էին Ղրիմում, իսկ 1475 թ., երբ թուրքերն ու թաթարները գրավում են Ղրիմի ծաղկուն քաղաքները, հայերի մի մասը, թողնելով իրենց այս նոր հայրենիքը, ցրվում են հարավային Ռուսիայի, Լեհաստանի և Մոլդավիայի զանազան բնակավայրերում ու քաղաքներում։

Տրանսիլվանիա վերադաղթած հայերի՝ Մոլդավիան թողնելու հիմնական պատճառը 1669 թ. մոլդավական ապստամբության պարտությունն էր և թուրքերի վրեժխնդրության վտանգը։ 1672 թ. հայերի մի զանգված՝ շուրջ 3000 ընտանիք, անցավ Կարպատներն ու ապաստան խնդրեց Տրանսիլվանիայի իշխան Միհայ Ապաֆիից։ Նրանցից շատերը տուն ու տեղ դրեցին Գերգյոսենտմիկլոշ և Ջիկսեպվիզ (այժմ՝ Ֆրումոասա) բնակավայրերում, իսկ ժամանակներ անց՝ նաև Տրանսիլվանիայի այլ մասերում։ Տրանսիլվանահայերի հոգևոր կենտրոնը կամ, այսպես կոչված, հայկական եպիսկոպոսությունը գտնվում էր Բեստերցե (այժմ՝ Բիստրիցա) քաղաքում[10]։

---

[9] „Örmény helységnevek Magyarországon", 1888, № 3, o. 92.

[10] XIX դարում փորձեր արվեցին գիտականորեն հիմնավորելու հայերի ու հունգարների պատմական կապերն ավելի վաղ ժամանակներում։ Կարծիք հայտնվեց, որ նրանք միմյանց հետ շփվել են դեռևս հունգարների հին հայրենիքում ու, բացի այդ, հայերը մասնակցել են այժմյան հունգարական հողերի գրավմանը (895)։ Խոսվեց նաև այն մասին, որ ներկա Հունգարիայի որոշ շրջաններում, որոնք մի ժամանակ մտնում էին Հռոմեական կայսրության կազմի մեջ, հայերն ապրում էին մինչև հունգարական ցեղերի մուտք գործելը։ Մանրամասնությունները տե՛ս Խ. Ղուկասյանի (Կրիշտոֆ Լուկաչ, 1804—1876) «Հունգարների նախ-

Այստեղ էլ, սակայն, Տրանսիլվանիայի հայությունը շուտով հարկադրված եղավ օրհասական կռիվ մղելու հանուն իր ազգային դիմագծի ու դավանաբանական սկզբունքների պահպանության։

XVII դ. վերջերին Վատիկանի նվիրակ, բնիկ մոլդավահայ Օքսենտ Վրզարյանը (Օգսենտիուս Վերզար) սկսեց նրանց կաթոլիկացնել, որն էլ մեծապես հարվածեց հունգարահայության ազգային ինքնուրույնության պահպանմանը։ Սակայն, ինչպես նկատել է Ս. Քոլանջյանը, Օ. Վրզարյանն ի վիճակի չեղավ ավարտելու սկսած գործը, և հունգարահայերը դեռ երկար ժամանակ պայքարում էին կաթոլիկ եկեղեցու և լատինականության դեմ[11]*։ Նույնիսկ XVIII դ. վերջերին Տրանսիլվանիայում դեռևս կային բավականաչափ լուսավորչական հայեր։*

Օ. Վրզարյանի նախաձեռնությամբ հայերը հողեր են գնում Գեռլա կոչվող ամրոցի մոտ, Սամոշ գետի ափին և մինչև 1713 թ. կառուցում են քաղաք, որը կոչվում է Գեռլա, երբեմն էլ՝ Էորմենվարոշ (Örményváros, *Արմենոպոլ, Հայաքաղաք) կամ Սամոշույվար (Նոր բերդ Սամոշի ափին)։ Չնայած հնարավոր չեղավ այստեղ հավաքել Տրանսիլվանիայի բոլոր հայերին, այնուամենայնիվ, Սամոշույվարը բարգավաճեց ու դարձավ հունգարահայության կենտրոն և այդպիսին էլ մնաց մինչև գաղթօջախի մայրամուտը։*

Սկզբնական շրջանում Տրանսիլվանիայի հայ գաղութն ուներ ներքին ինքնավարություն ինչպես տնտեսական խնդիրներում, այնպես էլ իրավական։ Երկրամասի հայկական բնակավայրերի (Գեռլա, Եղիսաբեթուպոլիս, Գերգյոսենտմիկլոշ, Չիկսոպլիզ) կառավարման համար ստեղծված էր «Հայկական կոմպանիա» անունով մի հաստատություն, որին ժամանակ

նները, հին անվանումներն ու բնակավայրերը» (Կոլոժվար, 1870) և Խ. Սոնգոտյանի (Կրիշտոֆ Սոնգոտ, 1843—1907) «Հունգարների ծագումը և հին հայրենիքը» (Սամոշույվար, 1905) աշխատություններում (երկուսն էլ հունգարերեն)։

[11] Ս. Քոլանջյան. *Տրանսիլվանիայի հայերի պայքարը ազգային ինքնուրույնության պահպանման համար, «Էջմիածին» (ամսագիր), 1964, № 12, էջ 38։*

անց փոխարինելու նրան առանձին բնակավայրերի ինքնավարության մարմինների իրենց պետերով: XIX դարի կեսերին Գերգյոսենտմիկլոշն ու Չիկսեպվիզը կորցրին իրենց ինքնավարությունը, սակայն Գեռլան և Եղիսաբեթուպոլիսը մինչև վերջ էլ պահպանեցին այն՝ ունենալով իրենց ներկայացուցիչները Հունգարիայի պետական ժողովում:

Սկզբներում Տրանսիլվանիայի իշխաններից և ավստրո-հունգարական թագավորներից (Կարլ III, Մարիա-Թերեզա) հայերը ստացան զանազան արտոնություններ: Ավելի ուշ՝ Լեոպոլդ I-ը հայկական բնակավայրերը ճանաչեց որպես քաղաքներ, իսկ Իոսիֆ II-ը՝ Սամոշույվարին (1726) և Եղիսաբեթուպոլսին (1738) տվեց թագավորական ազատ քաղաքների իրավունք: 1725 թ. հայ բնակավայրերի պատգամավորները արդեն հրավիրվում են Կոլոժվարի պետական ժողովին, իսկ 1791 թ. պետական ժողովը հայերին պաշտոնապես հայտարարում է երկրի լիիրավ քաղաքացիներ:

Հունգարահայերը մեծ մասամբ զբաղվում էին արհեստներով ու առևտրով: Նրանք ունեին իրենց եղբայրությունները կամ համքարությունները: Մեծ հռչակ էին վայելում մանավորապես կաշեգործները, կոշկակարները և թանկարժեք մորթիներ մշակողները: Մանուֆակտուրայի (ճոթեղենի) լավագույն ձեռնարկությունները գտնվում էին Գեռլա և Եղիսաբեթուպոլիս բնակավայրերում:

Մինչև XIX դարի կեսերը հունգարահայերը, ըստ ունեցվածքային դրության, բաժանված էին երեք դասի, որոնց իրավունքները խստորեն սահմանում էր քաղաքային խորհրդարանը[12]: Ըստ այդմ հաշվի էին առնվում առանձին դասերի ներքին կյանքի շատ մանրամասներ. նրանց հագուստն ու հարդարանքը, սեղանի սպասքը, տնային գործածության իրերը և այլն: Որոշված կարգից շեղվողները ենթարկվում էին դրամական տույժի:

Դեռևս XVIII դարից ունևոր շատ հայեր ձեռք են բերում հողեր (առաջին հերթին Բանատ գավառում), շատերն էլ

---

[12] *Szongott Kristóf*, A magyarországi örmények ethnográphiája Szamosújvár, 1903, o. 64–65.

Հաբսբուրգներից ստանում են ավնվականության իրավունք՝ պետությանը դրամական աջակցություն ցույց տալու և այլ ծառայությունների դիմաց։ Այսպիսով՝ աստիճանաբար ձևավորվում է նաև հունգարահայ ազնվականությունը։

Տրանսիլվանիայի հայությունը լուրջ ուշադրություն էր դարձնում կրթական գործին։ Դպրոցներ էին բացում ինչպես քաղաքային վարչությունները, այնպես էլ Վիեննայի Մխիթարյանները։ Եղիսաբեթուպոլիս քաղաքում առաջին դպրոցները բացվել են 1685 և 1724 թթ., իսկ Գեռլայում՝ 1700 թ.[13]։ Վերջինում, մասնավորապես XVIII դարավերջին, դպրոցական գործն ապրում է մեծ ծաղկում։ Հայտնի է, որ դրանց համար ծրագրեր է մշակել Միքայել Չամչյանը։

Գաղթավայրի դպրոցներում ավանդվում էին՝ հայերեն, հունգարերեն, լատիներեն, իսկ վերջին շրջանում նաև՝ գերմաներեն։ Մնացած առարկաներից միայն տարրական գիտելիքներ էին հաղորդվում։

Բարձրագույն կրթություն ցանկություն ունեցողները պետք է ընդունվեին հունգարական կոլեջներ ու համալսարաններ և կամ մեկնեին արտասահման։ Շատերն էլ սովորում էին Մխիթարյան հայրերի մոտ։ Հայ երիտասարդների մեծ մասը բարձրագույն կրթություն ստանալուց հետո այլևս չէր վերադառնում հայրենի վայրեր, քանի որ գավառական քաղաքներում գործելու համար համապատասխան պայմաններ գրեթե չկային։ Նրանք մնում էին մայրաքաղաքում կամ երկրի տնտեսական ու մշակութային մյուս կենտրոններում։ Հետագայում նրանցից շատերը համալրում են հունգար գիտության ու մշակույթի նշանավոր գործիչների շարքերը։ Հիշենք հայ գերդաստաններից սերած հունգար ամենահայտնի գործիչներից մի քանիսի անունները՝ Հաբսբուրգների դեմ մղված 1848—49 թթ. ազատագրական շարժման հերոսներ Վիլմոշ Լազար, Էռնեո Կիշ, Յանոշ Ցեց (Ցեցյան), դրամատուրգ Լայոշ Դորովի (1780—1839), հրապարակախոս և գրող Մորից Լուկաչ (1812—

---

[13] Տե՛ս *С. Коланджян*, Армяне в Трансильвании и их культура, „Литературная Армения", 1962, № 2, стр. 61.

1881), հունգարական քննադատա-ռեալիստական դրամայի հիմնադիր Գերգեյ Չիկի (1842—1891), հրապարակախոս և գրող Էլեմեր Բանյայի (1875—1915), որը հունգար ընթերցողներին ավելի հայտնի է Ջուրոյ ծածկանունով, արձակագիր Իշտվան Պետելեի (1852—1910), լեզվաբան Լուկաս Պատրուբանյան (Լուկաչ Պատրուբան, 1861—1926), հռչակավոր երգչուհի Կորնելիա Հոլլոշի (1827—1890), հունգար նկարչության պատմության մեջ նատուրալիստական դպրոցի հիմնադիր Շիմոն Հոլլոշի (1857—1918), բժիշկ Գերգեյ Պատրուբանյան (1830—1891), հունգար ջրաբանության հիմնադիր Էդեոն Բոգդանֆի (1863—1944) և ուրիշներ։

Տրանսիլվանիայի հայ համայնքի հոգևոր ու մշակութային կյանքի զարգացման հայեցակետից նայելով՝ XIX դարն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում։ Ամենուր նկատվում է նշանակալից վերելք, որ պայմանավորված էր հանրային կյանքի կապիտալիստական վերակառուցման և ազգային-ազատագրական կռիվների դարաշրջանի՝ գիտության, մշակույթի և հասարակական մտքի համընդհանուր զարգացմամբ։ XVIII դարավերջի և XIX դարի առաջին կեսի հատկանշական գծերից էին ազգային ինքնագիտակցության արթնացումը և շրջադարձը դեպի ազգային հոգևոր ու մշակութային արժեքները։ Տրանսիլվանահայերի այս ձգտումները առաջինն իրենց ստեղծագործությամբ մարմին ավին Զաքարիա Կապրուշյանը (Զակարիաշ Գաբրուշ, 1794—1870) և Խաչիկ Ղուկասյանը։ Սրանք հունգարահայ այն առաջին գործիչներն են, որոնք գիտակցում էին հունգարական իրականության մեջ իրենց ինքնուրույնությամբ պահելու գործում հայ ազգային մշակույթի, պատմության և գրականության մեծ դերը։

Զ. Կապրուշյանը՝ «Սամոշույվարի այգ. գանձը»[14], որն ամբողջ 42 տարի զբաղվել է մանկավարժական աշխատանքով, ուսուցիչ էր ո՛չ միայն իր առօրյա պարտականություններով, այլև կոչմամբ ու էությամբ։ Նա կազմել է հայ-հունգարերեն այբբենարան, ընթերցարան, հինգ հատորից

[14] *Szongott Kristóf*, Gábrus emlékezete, 1887, № 10, o. 294.

բաղկացած մի եռալեզու (հայերեն-լատիներեն-հունգարերեն) բառգիրք, գրել է չափածո էջեր ու դրամաներ (դարձյալ երեք լեզվով՝ հայերեն, լատիներեն ու հունգարերեն)։ Մասնավորապես աչքի են ընկնում Կապրուշյանի հոգևոր երգերը, ճառերը (քարոզները), եղերերգությունները՝ «Դավիթ թագավոր», «Անօրինակ որդիական սեր» և այլն[15]։

Կապրուշյանին են պատկանում նաև հունգար հայրենասիրական քնարերգության երկու հանրաճանաչ էջերի՝ Ֆերենց Կյոլչեու (1790—1838) «Հիմն» («Himnusz») և Միհայ Վերեշմարտու (1800—1855) «Բարբառ» («Szózat») բանաստեղծությունների հայերեն թարգմանությունը։ Քաջ գիտակցելով լուսավորության ու կրթության դերն ազգի հոգևոր զարգացման և ազգային ինքնաճանաչման գործում, նա ամեն կերպ ջանացել է խթանել հունգարահայ գաղութի կրթական գործը, նպաստել իր հայրենակիցների հոգևոր աշխարհի հարստացմանը։

Խ. Ղուկասյանը՝ առօրյա պարտականությամբ, Գեռլայի ծխատեր քահանան էր, միաժամանակ՝ տեղի գիմնազիայի տնօրենն ու ուսուցիչը, քաղաքային որբանոցի հիմնադիրը, շրջահայաց ու խոհուն մի անձնավորություն։ Նա խորապես զգում ու հասկանում էր, որ Տրանսիլվանիայի հայ գաղութի գոյատևման համար որոշիչ նշանակություն կարող են ունենալ հայոց հին պատմության ուսուցումը և հունգարահայության մեջ հայ ազգային մշակույթի և հնավանդ արժեքների մասսայականացումը։ Մանավանդ որ, ինչպես ինքն է ասում՝ «չենք կարող սիրել ու գնահատել այն, ինչը չենք ճանաչում»[16]։ Ուստի և իր ողջ կյանքում Խ. Ղուկասյանը ջանում ու տքնում էր, որպեսզի Տրանսիլվանիայի հայությունը սովորեր, սիրեր ու գնահատեր իր պատմությունն ու հոգևոր արժեքները։ Հանուն գոյատևման մղված այդ պայքարում՝ նրա զենքերը գրիչն ու կենդանի խոսքն էին, որի լավագույն արգասիքը «Հիշողություններ Տրանսիլվա-

[15] Ս. Քոլանջյան, *Համառոտ ցուցակ ձեռագրաց Գեռլա հայաքաղաքի*, «Բանբեր Մատենադարանի», 1969, № 9, էջ 433—485։

[16] *Lukácsy Kristóf*. Emlékezetek az erdélyi örmények múlt életétől, Bécs, 1859, o. 7.

նիայի Հայության անցյալից» (1858) Հրապարակախոսական երկն է։

Հակառակ վերնագրի, այդ գրքույկում ամենից ավելի խոսվում է ընդհանրապես հայերի, հայոց հին պատմության ու կրոնի, Հայաստանում քրիստոնեության տարածման, ոսկեդարյան Հայաստանի մշակութային վերելքի ու նման հարցերի մասին։ Հայրենասիրությունը և բարոյական վեհությունը, նկատում էր նա, միշտ էլ հայ ժողովրդի բնորոշ գծերն են եղել, հետևաբար հունգարահայերը պետք է շարունակեն այդ սուրբ ավանդները։

Ե. Պուկասյանը հեղինակ է նաև մեծարժեք գիտական աշխատությունների, որոնցով ըստ էության դրվել են հունգար հայագիտության հիմքերը[17]։

Զ. Կապրուշյանի նման Պուկասյանը ևս յուրօրինակ նախակարապետը դարձավ այն, այսպես ասած, հզոր ու մշակութային բուռն զարթոնքի, որը երևան եկավ Տրանսիլվանիայի հայ գաղութի կյանքում XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին։

* * *

Ազգային ինքնագիտակցության արթնացումը և հետաքրքրությունը դեպ այն ամենը, ինչ հայկական էր, լիցք էր ստանում այն յուրահատուկ պայմաններից, որոնց մեջ ապրում էր Տրանսիլվանիայի հայությունը։ Հայերի գլխին՝ XIX դարի երկրորդ կեսից սկսած, կախված էր լիակատար ձուլման վտանգը։ Մյուս կողմից՝ հունգարահայ գաղութի զարթոնքը անխզելիորեն կապված էր XIX դարի կեսերից Եվրոպայում ծայր առած ազգային ինքնագիտակցության արթնացման համընդհանուր պրոցեսի և, մասնավորապես, ավստրո-հունգարական կայսրության մեջ մանող և հայերի հետ մշտապես շփվող ազգերի՝ հունգարների, սեկլերների, սաքսոնացիների և ռումինների կյանքում առաջ եկած համանման երևույթների հետ։

Հունգարահայության ուծացումը, որ տեղի ունեցավ մի քանի սերնդի աչքի առջև, միանգամայն օրինաչափ և ան-

---

[17] „Historia Armenorum Transsilvaniae", Wien, 1859.

խուսափելի երևույթ էր։ Հունգարահայ գաղթօջախը համեմատաբար փոքրաթիվ էր և, որպես առանձին ազգություն, չէր ճանաչվում (1892 թ. տվյալներով՝ շուրջ 15000 հոգի)։ Մի կողմից՝ անջատվածությունն ու հեռավորությունը մայր երկրից, մյուս կողմից՝ կաթոլիկ եկեղեցին իրենց բացասական դերն էին խաղում։ Բայց ամենագլխավոր պատճառը, որի հետևանքով հայերն աստիճանաբար ձուլվեցին հունգարացիների հետ, թաքնված էր նրանց սոցիալ-տնտեսական կյանքի պայմանների մեջ։

XIX դարում, երբ Հունգարիայում արդեն հասունացել էր ֆեոդալիզմի ճգնաժամը, և սուր կերպով զգացվում էր բուրժուական վերափոխումների անհրաժեշտությունը, երկրում ապրող ազգություններից գլխավորապես հունգարներն էին, որ հանդես էին գալիս իբրև հասարակական նոր կարգերի ամենաուժեղ ու ամենահետևողական կողմնակիցները։ Մյուսների տիրապետող դասակարգերը հիմնականում խոշոր հողատերեր էին, որոնք և ձգտում էին պահպանել ավատական կացութաձևը։ Հունգար ավատների նման նրանք էլ այդ նպատակի համար օգտագործում էին այն ազգային հակասությունները, որ գոյություն ունեին հունգար և ո՛չ հունգար ժողովուրդների միջև, հատկապես XIX դարում։ Բայց հունգարների ու հայերի միջև այսպիսի հակասություններ չկային։ Հայերը, որոնք զբաղվում էին բացառապես արհեստներով և առևտրով, ընդհակառակը, շահագրգռված էին կապիտալիզմի արագ զարգացմամբ։

Ավստրիայի և Հունգարիայի միջև 1867 թ. կնքված պայմանագիրը (ավստրո-հունգարական կոմպրոմիս) մեծապես նպաստեց երկրի տնտեսական ու մշակութային կյանքի բուռն զարգացմանը, որի հետևանքով շարունակվեց հայերի վերաբնակեցումը Հունգարիայի ու Տրանսիլվանիայի այլ մասերում։ Ավելի ու ավելի շատ հայեր սկսեցին ձգտել դեպի Բուդապեշտ ու երկրի մյուս խոշոր քաղաքներ, որի հետևանքով հայկական բնակավայրերի դեմքը աստիճանաբար սկսեց փոխվել։ Նախկին ազգային համախմբվածությունը վերանում էր, հեռացած հայերի տեղը զբաղեցնում էին այլազգի բնակիչներ։ XIX դ. վերջից հայերենը նույն-

պես դուրս էր մղվում գործածությունից։ Այն լսվում էր միայն եկեղեցիներում, բայց արդեն ո՛չ թե գրաբար հայերենը, այլ Սասխալի բարբառը։ Առտնին խոսակցության ժամանակ հայերն օգտագործում էին հունգարերենը, որը և շատ շուտով դարձավ մեծ մասի միակ խոսակցական լեզուն, իսկ հայկական կենտրոններից դուրս ապրող հայերից շատերը աստիճանաբար մոռանում էին իրենց ծագումը։

Հայերը, որոնցից շատերը անցած քաղաքական հեղաբեկումների օրերին կորցրել էին իրենց ունեցվածքը և հարկադրված էին գործունեության այլ ոլորտներ որոնել, եռանդուն մասնակցություն էին ցույց տալիս Հունգարիայի տնտեսական ու հոգևոր կյանքին՝ աստիճանաբար ավելի ու ավելի շոշափելի դիրք գրավելով հունգար մշակութային կյանքում։ Սակայն XIX դ. վերջերին Հունգարիայի հայկական բնակավայրերում (առաջին հերթին Սամոշույվար և Եղիսաբեթուպոլիս քաղաքներում) դեռևս պահպանվել էր հայ մտավորականության բավական ստվար խումբ, որն առանձնապես սուր էր զգում մոտալուտ լիակատար ձուլման վտանգը և ջանում դրա առաջն առնել։

Հունգարահայ համայնքի պահպանման համար պայքարն սկսվեց Սամոշույվարում, որը մինչև վերջ էլ մնաց այդ շարժման կենտրոնը։ Նրանց մեծապես աջակցում էին Վիեննայի Մխիթարյանները, որոնց միաբանների մեջ քիչ չէին հունգարահայերը։ Աստիճանաբար սկսեցին արթնանալ նաև ավստրո-հունգարական կայսրության տարածքում եղած և համարյա թե արդեն ձուլված այն հայերը, որոնք Տրանսիլվանիայի հայությունից կտրված էին ու հեռու։ Գրեթե ողջ աշխարհի հայերն իրենց ուշադրությունը դարձրին այս երևույթի վրա։ Իհարկե, հունգարացիներն ու հունգարական մամուլը ևս չէին կարող անտարբեր անցնել այդ երևույթի կողքով, քանի որ հայերի հետ հարևանություն էին անում մի քանի դար շարունակ։ Հայ գաղութի պահպանումը, առավել ևս բարգավաճումը շարժման գլխավոր նպատակն էր[18]։ Դրա համար պետք էր շարունակել այն

---

[18] Տե՛ս Յուլիոս Մերզայանի «Հունգարահայերի կենցաղի ու սովորությունների այլափոխման ու վերացման պատճառների մասին» հոդվածը,

գործը, որ սկսել էին Խ. Ղուկասյանը և Ջ. Կարբուշյանը. այսինքն՝ պետք էր Տրանսիլվանիայի հայության մեջ արթնացնել ու ամրապնդել նախ և առաջ ազգային ինքնագիտակցությունը:

Այս խնդիրները լուծելու համար Սամոշույվարի մտավորականները ծավալեցին բազմակողմանի գործունեություն՝ շոշափելի օգնություն ու աջակցություն ստանալով նաև Տրանսիլվանիայից դուրս ապրող հայ մտավորականներից:

Նախ և առաջ հոգ տարվեց ընդարձակելու և զարգացնելու «մայրաքաղաք» Սամոշույվարը, վերջինս երկրի բարեկարգ ու բարգավաճ քաղաքներից մեկը դարձնելու համար: Մշակութային զարթոնքի նախանձախնդիր այդ մարդիկ մեծ ջանքեր թափեցին այն հին շենքերի վերանորոգման համար, որոնց վրա առանձնապես նկատելի էր հայկական ճարտարապետության կնիքը կամ էլ ունեին հայերեն վիմագիր արձանագրություններ: Վերանորոգվեց հայոց հին եկեղեցին, ճաշակով ձևավորվեցին գլխավոր հրապարակն ու զբոսայգին, փոխվեցին փողոցների հին անունները, դրանք վերակոչելով Սամոշույվարում ծնված նշանավոր հունգարահայերի անուններով: Քաղաքապետարանի դահլիճը զարդարում էին Արարատի համապատկերը և Հունգարիայի պետական խորհրդի բոլոր հայ պատգամավորների դիմանկարները:

Սամոշույվարը մշակութային առումով ավելի մեծ նշանակություն ուներ, քան Հունգարիայի գավառական խոշոր քաղաքներից շատերը: Այստեղ գործում էին մի քանի դպրոց և պրոգիմնազիա: 1897 թ. սեպտեմբերից բացվեց գիմնազիան, որը նույնպես դարձավ զարթոնքի գաղափարն արծարծող կարևոր օջախ:

Քաղաքի մշակութային կյանքում մեծ դեր էր խաղում սիրողների թատերական խումբը, որի ներկայացումներին հաճախ մասնակցում էին հունգարական մշակույթի հանրահայտ դեմքեր: Հայտնի է, օրինակ, որ բանաստեղծ Դ. Ռուդնյանսկին (1850—1913) այստեղ կարդացել է հայ գրողնե-

---

ուր մանրամասն ծրագիր է մշակված հունգարահայության մշակութային ու հոգևոր կյանքի աշխուժացման վերաբերյալ (1895, № 10, էջ 314—319, № 11, էջ 356—363, № 12, էջ 387—397):

րից կատարած իր թարգմանությունները (Ռ. Պատկանյանի «Ազատն մեր երգը», Ս. Շահազիզի «Գիշեր», «Երազ» բանաստեղծությունները)։ Սիրողների թատերական խումբը Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող ողբերգական դեպքերի օրերին, 1896 թ. մարտի 15-ին, ներկայացրեց Հունգարիայի պատմական անցյալից վերցրած մի թատերգություն՝ «Դոբո Կատիցա կամ Էգերյան գեղեցիկ օրեր» խորագրով, որի թեման հունգար ժողովրդի պայքարն էր թուրք զավթիչների դեմ։

Սամոշույվարում գործում էր նաև տպարան, որը պատկանում էր Էնդրե Թոդորանին։ Այստեղ էր տպագրվում հունգարահայության զարթոնքի գաղափարը մարմնավորող „Armenia, Magyar-örmény haviszemle“ («Արմենիա, հունգարահայ ամսագիր»)-ը։

Ազգային զարթոնքի գաղափարով խանդավառված հունգարահայ մտավորականությունը մեծ եռանդ է ներդնում նաև հայագիտական հետազոտությունների ծավալման գործում, որի արդյունքը պատմագիտական, գրականագիտական, լեզվաբանական և ազգագրական-բանահյուսական ուսումնասիրություններն են։ Ստեղծագործական ձիրք ունեցողները շարադրում են գրական-գեղարվեստական ինքնուրույն երկեր, թարգմանում հայության արևելյան և արևմտյան հատվածների գրողների արձակ ու չափածո ստեղծագործությունները։ Դրանք բոլորը տպագրվում էին «Արմենիա» ամսագրի էջերում, իսկ ապա արտատպվում հունգարական այլևայլ պարբերականներում կամ առանձին գրքերով։

Մասնավորապես շատ բան է արվել պատմագիտության ասպարեզում։ Այսօր էլ իրենց արժեքը պահպանում են այն աշխատությունները, որոնք նվիրված են բուն հունգարահայերի պատմությանը և պատկանում են այնպիսի լուրջ գիտնականների գրչին, ինչպիսիք են Ղ. Ավետիքյանը, Գ. Գովրիկյանը, Խ. Սոնգոտյանը, Ա. Մոլնարյանը և Յ. Մերզայանը (Գյուլա Մերզա)[19]։ Մնացած գրական-գիտական հրա-

[19] Հիշյալ հեղինակների գործերին կանդրադառնանք աշխատության հաջորդ գլխում։

տարակուսություններից ուշագրավ են Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Սոնգոտյանի թարգմանությունը, ինչպես և Հ. Պարոնյանի երգիծական ստեղծագործությունները, արոնք հունգարերեն է փոխադրել Մարտոն Կապատանը[20]:

Հունգարահայ գաղթօջախի եռանդուն գործիչների ուշադրությունից նմանապես դուրս չեն մնացել գաղթավայրի հայության բանավոր ստեղծագործության և նյութական մշակույթի հուշարձանները: Առհասարակ XIX դարի վերջերին, ազգագրության ուսումնասիրության առումով Հունգարիայում շատ բան էր արվում: 1887-ից հրատարակվում էր „Ethnologische Mitteilungen aus Ungarn“ («Ազգագրական տեղեկություններ Հունգարիայից») ամսագիրը, որի խմբագիրն էր Անտալ Հերմանը (1851—1926): Այս ամսագիրն ուներ հատուկ հավելված՝ „Armenische Beiträge“ («Հայկական դեկույցներ») խորագրով, որի խմբագիրներն էին նույն Ա. Հերմանը և Կ. Պատրուբանյանը:

1903 թ. լույս է տեսնում Խ. Սոնգոտյանի «Հունգարահայ ազգագրությունը»[21], որտեղ քննության են առնված հայերի և հունգարահայության ծագման հարցերը, նրանց հնօրյա մշակույթը, մարդաբանական առանձնահատկությունները, տարազը, ապրելակերպը: Գրքի վերջին չորս գլուխները նվիրված են հունգարահայերի ժողովրդական բանահյուսությանը: Այսպիսով՝ Խ. Սոնգոտյանի շնորհիվ կորստից ընդմիշտ փրկվեցին հունգարահայոց բանահյուսության մեծարժեք հուշարձանները:

Ժամանակակիցները շատ բարձր գնահատեցին Խ. Սոնգոտյանի «Ազգագրությունը»: Հայտնի ազգագրագետ Ա. Հերմանը գրել է. «Այդ գիրքը պետք է պահվի յուրաքանչյուր հայ կրթված ընտանիքի գրադարակի առաջին շարքում... պետք է դառնա Տրանսիլվանիայի հայության ավետարանը»[22]:

---

20 *Kapatán V. Márton*, Baronian H. Hagop, Szatírák, Ford. örményből, Szamosújvár, 1914.

21 *Szongott Kristóf*, A magyarországi örmények ethnographiája, Szamosújvár, 1903.

22 *Herrmann Antal*, Az erdélyi örmények monographiája, 1904, № 6, o. 169.

1903 թ. լույս տեսավ նաև հունգարահայ նշանավոր գրող Էլեմեր Բանյաու կազմած «Հայկական երգիծապատում» եռահատոր ժողովածուն[23], որը նույնպես ջերմ ընդունելություն գտավ։

Հունգարահայության զարթոնքի շրջափուլի արդյունքներից մեկն էլ Հայկական թանգարանն էր, որի հիմնադրման գործում մեծ դեր է խաղացել Ս. Հերմանը։ 1905 թ. ստեղծվեց «Հայկական թանգարանային ընկերությունը», որի նախագահ դարձավ Խ. Սոնգոտյանը։ Այն գործեց մինչև թանգարանի պաշտոնական բացումը (1909)։

Թանգարանում ցուցադրվում էին զգեստներ, հին անոթներ, կնիքներ, դրոշակներ, Սամոշույվարի դատարանի արձանագրությունների մատյաններ, առանձին արհեստավորական ընկերությունների կանոնադրություններ, հին ու արժեքավոր ձեռագրեր, գորգեր. գեղեցիկ բանվածքներ, դրամներ և այլն։

Հունգարահայության մշակութային զարթոնքը, սակայն, ի վիճակի չեղավ լուծելու իր առջև ծառացած բոլոր հարցերը։ Չնայած թափված ջանքերին, հունգարահայերը մշակութային ասպարեզում ներքին ազատություն չստացան, մինչդեռ գաղութի պահպանության և համախմբման համար դա խիստ կարևոր նշանակություն կունենար։

Օ. Վրդարյանի մահվանից հետո (1715) Մարիա-Թերեզա կայսրուհին հայոց եպիսկոպոս նշանակեց Սամոշույվարի եկեղեցու ավագ քահանա Մինաս Թորոսյանին (Միհալ Թեոդորովիչ), որի թեկնածությունը սակայն Վատիկանը չվավերացրեց, և հայերն անցան Տրանսիլվանիայի կաթոլիկ եպիսկոպոսի գերիշխանության տակ։ Ինքնուրույն եպիսկոպոսություն ունենալու համար հունգարահայերի ձեռնարկած հետագա փորձերը ոչինչ արդյունքի չհանգեցրին։ Թեև կրոնական, բայց այդ հաստատության վերացումը զրկեց հայերին ներքին ինքնավարության վերջին օղակից և արագացրեց ձուլման ընթացքը։ Զարթոնքի գաղափարներն արծարծողները հասկանում էին, որ հայերի համար

[23] *Bányai Elemér*, Örmény anekdoták, I—III, Szamosújvár, 1903.

կարևոր խնդիր էր ինքնուրույն եպիսկոպոսության վերականգնումը, բայց «Արմենիայում» և Հունգարիայի ուրիշ շատ պարբերականներում տպագրված համապատասխան հոդվածներն ու կրակոտ քերթվածներն անկարող եղան որևէ բան անել:

Հունգարահայ մշակութային զարթոնքի անդադրում գործիչները ուրիշ ծրագրեր էլ ունեին։ Խ. Սոնգոտյանն, օրինակ, ուզում էր մի ամսագիր էլ հրատարակել հայոց լեզվով, «Հունգարիա» անունով, նպատակ ունենալով ավելի սերտ կապեր ստեղծել հունգարահայության և Հայաստանի միջև։ Սամոշույվարի մտավորականները գտնում էին, որ իրենց քաղաքը՝ աշխարհագրական հարմար դիրքի շնորհիվ, հաջողությամբ կարող էր իրար հետ կապել Արևմուտքն ու Արևելքը, կամ Եվրոպայի և մայր հայրենիքի հայությունը՝ դառնալ մշակութային այնպիսի կենտրոն, ինչպիսին Վենետիկն էր։ Օրինակ՝ Ա. Հերմանը հանդես եկավ մի հոդվածով[24], որով աշխատում էր հիմնավորել Վիեննայի Մխիթարյան միաբանությունը Սամոշույվար փոխադրելու նպատակահարմարությունը։ Նրա կարծիքով՝ Եվրոպայի հայությունից մեկուսացված Մխիթարյանները դրանով միայն կշահեին, իրենց հերթին հնարավորություն տալով հունգարահայոց «մայրաքաղաքին» դառնալու հայ մշակույթի ու գիտության հեղինակավոր կենտրոն։

Տակավին 1869 թ. Դյուլաֆեհերվար (այժմ՝ Ալբա-Յուլիա) քաղաքի կաթոլիկական գիմնազիայի ուսուչ Հակոբ Ավետիքյանը (Յակոբ Ավեդ) հունգարահայ պատանեկության համար փոխադրելով Նոյմանի հայ գրականության ձեռնարկը, առաջաբանում ուրվագծում էր հայոց «մայրաքաղաքի» դերը. «Սամոշույվարի ամենագեղեցիկ հրապարակի վրա, հայոց արքեպիսկոպոսի պալատից ոչ շատ հեռու, վեր է խոյանում գիտությունների հայոց կաճառը, ուր, իբրև կենտրոն, մեր ազգային լեզուն ու գրականությունն ուսումնասիրելու և զարգացնելու համար աշխարհի բոլոր ծայրերից հավաքվելու են գիտնականները։ Հենց այս-

---

[24] *Herrmann Antal,* Mechitáristák Szamosújvárt. 1905, № 7. o. 225—228.

տեղ էլ քննարկվում են հայ գիտնականների աշխատությունները և երիտասարդ արձակագիրների ու բանաստեղծների ստեղծագործությունները։ Ինչպես է հրճվում իմ հոգին, երբ տեսնում եմ, որ մենք թեպետ ապրում ենք աշխարհով մեկ սփռված, բայց հոգով միասին ենք, բոլորիս ոգեվորում են միևնույն գաղափարն ու նպատակը։ Հայոց գիտության այս կաճառից քիչ այն կողմ գտնվում է հայ ազգային համալսարանը, ուր ուսումնածարավ հայ երիտասարդությունը, կրթությունից բացի, ստանում է նաև իսկական ազգային դաստիարակություն»[25]։

Սահմանափակ թվով մարդկանց գործունեության արդյունք լինելով հանդերձ՝ հունգարահայ մշակութային զարթոնքը ժամանակակիցների շրջանում առաջ բերեց համընդհանուր ոգևորություն ու հետաքրքրություն։

Անսովոր էր այդ մարդկանց եռանդն ու աշխատասիրությունը։ Խանդավառված հայրենասիրության և ընդհանուր մարդասիրության վեհ գաղափարներով՝ նրանք, իբրև անհատներ, չէին կարող մշակութային զարթոնքի գործը հասցնել մինչև հաղթական ավարտ։

Շնորհիվ այդ շարժման՝ թեպետև չկանխվեց, բայց այնուամենայնիվ դանդաղեցվեց ընդհանուր ձուլումը։ Զարթոնքը կյանքի կոչեց գրական-մշակութային հսկայական ժառանգություն, որ հայության ընդհանուր մշակույթի անբաժանելի մասն է։ Դրա մի կարևոր բաժնի՝ «Արմենիա» ամսագրում տպագրված գրական-գեղարվեստական ինքնուրույն ու թարգմանական երկերի և հայագիտական (բանասիրական) հոդվածների համակողմանի ուսումնասիրմանն ու վերլուծմանն էլ նվիրված է սույն աշխատությունը։

Հարկ է նշել, որ «Արմենիա» ամսագիրը ցարդ գիտական ուսումնասիրության նյութ չի դարձել։ Վերջին տասըտասնհինգ տարում հունգար գիտնականներ Շանդոր Կոզոշան և Դյորդ Ռադոն կազմել են նրա նյութերի վերլուծական մատենագիտությունը, որը սակայն լույս աշխարհ չի եկել։

---

[25] „Irodalom és művészet", 1898, № 2, o. 62.

Բ

«ԱՐՄԵՆԻԱ» ԱՄՍԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Գիտամատչելիական հանդես՝ հատուկ շարքով և տետրակների ձևով հրատարակված»[1]:

Աշխատակիցներից մեկը ամսագրի լույս ընծայման քսանամյակի առթիվ գրել է. ««Արմենիայի» հիմնադրումը հետևանք է, Սամոշույվարի ծնունդ, հանգուցյալ արքեպիսկոպոս և արբահայր Ըստկարյանի (էստեգար—է. Գ.-Բ.) Տրանսիլվայում գտնվելուն»[2]: Իրականում, սակայն, Վիեննայի Մխիթարյան միաբանության արքեպիսկոպոսի ժամանումը հունգարահայոց մայրաքաղաք՝ հանդեսի ծննդյան գործում սոսկ արտաքին կողմն է հանդիսացել: Հունգարալեզու հայագիտական ամսագրի հրատարակման ներքին երկու, անչափ կարևոր, նախապայմանները՝ կարիքն ու ցանկությունը, եղել են դրանից առաջ էլ:

Սամոշույվարի գիմնազիայի ուսուցիչ Խաչիկ Սոնգոտյանն իր վրա առավ ամսագիրը խմբագրելու դժվարագույն հոգսը և հաջողությամբ շարունակեց այն շուրջ քսան տարի,

---

[1] *Harmath Domokos.* Helyzetünk a magyar társadalomban, 1893, № 6, o. 198.

[2] *ZA—LA.* Szongott Kristóf „Armeniájá"-nak húszéves történetéből, 1907, № 3, o. 90.

3—297

ընդհուպ մինչև իր մահը (1907)։ Սկզբնական շրջանում նրան օգնում էր Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Գ. Գովրիկյանը, հետագայում Սոնգոտյանը մնաց գրեթե մենակ։

Ամսագրի առաջին համարը լույս տեսավ 1887 թ. հունվարի 1-ին։ Առաջնորդողում հանգամանորեն խոսվում էր խնդրո առարկա հանդեսի հիմնադրման շարժառիթների ու նպատակների շուրջը։ «Մեր օրերում, երբ հայոց հին մշակույթի ուսումնասիրությունը արևելագիտական հետազոտությունների կարևորագույն առարկա է դարձել ոչ միայն Արևելքում ու հայոց հնօրյա հայրենիքում, այլև Արևմուտքում, կարիք չունենք հանգամանալից ապացույցներ բերելու մեր գրական ձեռնարկման օգտակարության և արժեքի մասին, որ նպատակ ունի հնարավորին չափի մանրամասնորեն ծանոթացնելու հունգար հասարակայնությանը հայ մշակույթի նվաճումներին ու, միաժամանակ, միջնորդ օղակ դառնալ հունգար և հայ գրականությունների միջև»[3]։ «Կուզենայինք, որ մեր ամսագիրը լիներ այնպիսին, ինչպես „Monatschrift für den Orient"-ը կամ Փարիզի „Revue d'Orient"-ը։ Համարյա եվրոպական բոլոր երկրներում ձեռնարկված են այսօրինակ գործեր»[4]։

Եվ ահա հունգարահայերը որոշում են հունգար գիտության կողմից «աչքաթող արվածը լրացնել» սույն հայագիտական հանդեսով։

Խրախույս կարդալով՝ հունգարական հասարակայնությանը՝ բաժանորդագրվելու իրենց պարբերականին, «Արմենիայի» հրատարակիչները նույն առաջնորդողում հանգամանորեն բացատրում էին, թե ինչ էր նշանակում «հայագիտությունը ներկայացնել իր բոլոր բնագավառներով»։ Դա նշանակում էր՝ «հոդվածներ տպագրել Հայաստանի աշխարհի, հայ ժողովրդի և հունգարահայության անցյալի ու ներ-

---

[3] *Govrik J. Gergely, Szongott Kristóf,* Előfizetési felhívás, 1887, № 1, o. 2.

[4] *Szongott Kristóf,* Az Armenia, a magyar örmények és az Erdélyrészi magyar közművelődési egyesület, 1887, № 1, o. 13.

կայի մասին... Հունգարերեն թարգմանությունների միջոցով հանրությանը ներկայացնել հայ դասական գրողներին, գիտական հաղորդումներ տալ հնագիտության, մատենագրության, վիմագրության, լեզվագիտության, եկեղեցու պատմության, ժողովրդական բանահյուսության ծագումնաբանության և այլ բնագավառների վերաբերյալ»[5]:

Այս ամենը ցույց է տալիս, որ ամսագիրն ուներ ընդարձակ ծրագիր, և նրա աշխատակիցները ձգտում էին իրականացնել այն գիտական պատշաճ մակարդակով։ Բայց նրանց հետապնդած նպատակը նեղ իմաստով հայագիտական հանդես հրապարակ հանելը չէր. Սոնգոտյանն ու նրա օգնականներն ուզում էին, որ «Արմենիան» դառնար և՛ հանրամատչելի պարբերաթերթ, և՛ ի վիճակի լիներ ընթերցող լայն հասարակայնության ուշադրությունը հրավիրել հայերի վրա։ «Արմենիան» հրատարակվում էր հունգարերեն, որը հնարավորություն էր տալիս այն կարդալու ոչ միայն հունգարահայերին, այլև Հունգարիայի մնացած ժողովուրդներին։ Մյուս կողմից, սակայն, «Արմենիան» հասկանալի չէր բուն Հայաստանում և զանազան գաղթավայրերում ապրող հայությանը, հետևաբար և շոշափելի նպաստ չէր կարող բերել հունգարահայերի ու նրանց եղբայրակիցների հոգևոր կապերի ամրապնդման գործին։

Այս խնդիրը հաղթահարելու նպատակով որոշ քայլեր էին արվում. մասնավորապես առաջին տարիներին ամսագրի համարների մանրամասն բովանդակությունը հայերեն թարգմանությամբ պարբերաբար տպագրվում էր «Հանդես ամսօրյա» հայագիտական ամսագրում, որից հասարակայնությունը կարող էր տեղեկանալ, թե ինչ խնդիրներ էին հուզում Տրանսիլվանիայի հայ գաղութին և գրական ինչ գործեր էին ստեղծվում այնտեղ։

Առաջին համարում, առաջնորդողից անմիջապես հետո, Սոնգոտյանը տեղավորել էր ամսագրի գաղափարական դիրքորոշումը պարզող մի փաստարկված հոդված ևս, որտեղ խելամտորեն պատասխանում էր այն զրպարտանք-

[5] Govrik J. Gergely, Szongott Kristóf, նշվ. հոդվ., էջ 2։

ների և թշնամական հարձակումներին, որոնք բերանացի ու գրավոր ձևով լսվում էին այս ու այն կողմից՝ դեռ «Արմենիայի» լույս աշխարհ գալուց առաջ։ Գլխավոր խմբագիրը հրաշալի հասկանում էր, որ Հունգարիայում, որտեղ ազգային հարցը քաղաքական բարդ խնդիր էր, անկարելի է, որ գրկաբաց ընդունվեր տեղական մի բուռ հայերի ձեռնարկումը։ Այդ պատճառով էլ իր ընդարձակ հոդվածում նա կրկին ու կրկին ընդգծում էր, որ հունգարահայոց հանդեսի երևան գալը ո՛չ մի դեպքում չպետք է դիտվի իբրև ընդվզում հունգար ժողովրդի ու պետության դեմ։ Պատմական անցյալից առնված օրինակներով նա հաստատում էր, որ հունգարահայերը միշտ էլ տերության հարազատ որդիներն են եղել և երկրին մատուցած իրենց անփոխարինելի ծառայություններով վաստակել են սեփական պարբերաթերթ ունենալու իրավունքը։ Սոնգոտյանը հավաստացնում էր, որ «Արմենիան» հետապնդում է զուտ գիտական նպատակներ ու, բացի այդ, «պիտի ծառայի հունգար լեզվին..., դառնալով բարի օրինակ երկրի մյուս ժողովուրդների համար»[6]։ Նա խոստանում էր հրապարակ հանել զտարյուն «հայկական» ամսագիր ու այդ առումով նշում, որ քաղաքականությունը խստիվ կերպով պիտի օտարվի նրանից։ Վերջին պարագան խմբագիրը համարում է իր պարբերականի անարգել հրատարակության գլխավոր պայմանը։

Եվ այսպես՝ «Արմենիան» իր կյանքի ուղին սկսեց հաստատուն քայլերով, ունենալով մշակված ծրագիր, որոշակի նպատակ ու մշտապես լինելով բանիմաց խմբագրական մարմնի ղեկավարության տակ։ Խմբագրի ու նրա աշխատակիցների միջև չկային սկզբունքային այնպիսի տարակարծություններ, որոնք խանգարեին ամսագրի առջև դրված խնդիրների իրագործմանը։ Սոնգոտյանը, որն ապրում էր հունգարահայությանը օտարացումից փրկելու գաղափարով միայն, ամսագրի հոգին էր, աշխատում էր առանց դադար առնելու, ամբողջությամբ նվիրվելով ազգային

[6] Szongott Kristóf. նշվ. աշխ., էջ 12։

գարթոնքի գործին։ Ամսագրի 241 համարներում[7], որոնք լույս են տեսել նրա խմբագրությամբ, անձամբ ինքը հրապարակել է շուրջ 400 հոդված (բոլորն էլ ստորագրված), չհաշված այն, որ մի քանի համարի նյութ ամբողջությամբ ինքն է գրել (1898, փետրվար և 1905, օգոստոս)։ Այս ամենը վկայությունն է այն բանի, որ անգամ ամենադժվարին պահերին, երբ աշխատակիցներն ինչ-ինչ պատճառներով չէին կարողանում նյութ հասցնել, խմբագիրը չէր խախտում ամսագրի անխափան հրատարակման վերաբերյալ իր խոստումը և ամեն ինչ անում էր, որպեսզի «այլասերման դատապարտված հունգարահայության այս հոգևոր կապը»[8], որքան կարելի է, հաստատուն մնար։

Որքան էլ «Արմենիան» կյանքի էր կոչված պատմական համապատասխան իրադրությունների ներքին թելադրանքով (հունգարահայ գաղթօջախում XIX դարավերջերին և XX-ի սկզբներին նկատվող մշակութային և հոգևոր առաջընթացով), այդուհանդերձ այն շատ ամուր կապված էր Սոնդոտյանի անձնավորության հետ։

Գլխավոր խմբագրի մահվանից հետո հոգեվարք է ապրում նաև հունգարահայոց պարբերականը։ Ճիշտ է, «Հայկական թանգարանի ընկերությունը» որոշում է «Արմենիան» դարձնել իր պաշտոնաթերթը, և խմբագրումը հանձնարարվում է ազգագրագետ Անտալ Հերմանին ու հայազգի հնագետ Գուստավ Պապպին, որոնք 1907 թ. առաջին կեսին հրատարակում են միացյալ երեք համար (մի գրքով), բայց հուլիս ամսից այն արդեն չի երևում հունգարական պարբերականների շարքում։ Վերջին համարի վերջին էջի վրա, ի դեպ, տպագրված է մի ծանուցում, ըստ որի «Արմենիան», որպես ամսագիր, «դադարում է գոյություն ունենալուց և այսուհետև հրատարակվելու է գրքի ձևով, իբրև Սամոշույվարի «Հայկական թանգարանի ընկերության»

---

[7] Բացառությամբ հոբելյանական համարների՝ «Արմենիայի» մնացած բոլոր ամսատետրակները բաղկացած են 32 էջից։

[8] „Herrmann Antal és Papp Gusztáv nyilatkozata az „Armenia" további szerkesztéséről", 1907, № 2, o. 35.

պաշտոնական տարեգիրը, նույն թանգարանի տնօրեն Ցանոշ Տիմեշվարիի խմբագրությամբ»[9]: Լո՞ւյս է տեսել արդյոք հիշյալ տարեգիրքը, թե ո՛չ, հավաստի տվյալ չունենք: «Արմենիայի» մատենագիտության կազմողներից մեկը՝ Գյորգ Ռադոն, գրել է, թե այդօրինակ հրատարակություն չի կարողացել գտնել մինչև անգամ Ի. Սեչենիի անվան հունգարական պետական գրադարանում[10]:

Վեց տարի անց, 1913-ին, հունգարահայերը փորձում են վերականգնել իրենց ամսագիրը, բայց կարողանում են հրատարակել միայն մեկ համար:

«Արմենիան», ինչպես ասացինք, հրատարակվել է քսան տարի: Նրա վերջին համարում տեղավորված վիճակագրական մի համառոտ տեղեկանքից պարզվում է, որ անցած տարիներին այնտեղ տպագրվել են 1829 հոդված, 2090 փոքրիկ հաղորդում և 396 տարբեր նկարներ: Աշխատակիցների թիվն անցել է 150-ից, որոնք իբրև ծնունդով հայեր, միմյանց հետ եղել են սերտ կապի մեջ՝ նվիրված իրենց ազգությանը և ամսագրի նպատակներին: Բացի այդ, նրանք բոլորն էլ, առանց բացառության, սերում էին հունգարական հասարակության միջին խավերից և կրողներն էին վերջիններիս կենսափիլիսոփայության ու ձգտումների՝ տարբերվելով միմյանցից մասնավորապես իրենց կրթությամբ, մտավոր ունակություններով, տաղանդով:

Առկա աշխատակիցների և նյութական ու այլ կարգի դժվարությունների պայմաններում ամենևին էլ դյուրին բան չէր իրականացնել այն նպատակները, որոնք դրված էին հանդեսի առջև. այն է՝ «Հայ մշակույթի նվաճումները հնարավորին չափ ներկայացնել իրենց բոլոր բնագավառներով»: Դրա համար պահանջվում էր ունենալ արտակարգ լայն թեմատիկա: Ընթերցող հասարակայնությանը նախ և առաջ պետք էր ծանոթացնել հայ ժողովրդի պատմության և հունգարահայ գաղթօջախի անցյալին, որովհետև «Արմե-

---

9 1907, 200:

10 Գյորգ Ռադո, Հայ գրականությունը Հունգարիայում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1960, № 11, էջ 78:

նիայի» ընթերցողները՝ լինեին դրանք հայ, հունգար կամ սաքսոնացի, հավասարապես անտեղյակ էին հայ ժողովրդի անցյալին։ Հունգարահայությանը անծանոթ էին նաև եվրոպական արևելագետների աշխատությունները, իսկ սերնդից-սերունդ փոխանցվող բերանացի ավանդություններից ու ազգային զրույցներից Տրանսիլվանիայում, այն էլ XIX դարի վերջերին, շատ քիչ բան էր պահպանվել։

Եվ ամսագիրը հարկադրված տպագրում էր երկարապատում ու շարունակելի հոդվածներ հին ու միջնադարյան Հայաստանի քաղաքական ու եկեղեցական պատմության վերաբերյալ։ Դրանց հեղինակները ընդամենը մի քանի հոգի էին, որոնք հրաշալի գիտեին եվրոպական լեզուներ և մեծապես օգտվում էին արևմտաեվրոպական հայագետների աշխատություններից։ Սեն-Մարտենի, Դյուլորիեի, Լանգլուայի, Լեմանի, Խանիկովի և ուրիշների օտար ու հայ գիտական հանդեսներում տպագրված հոդվածներն ու հրապարակումները այդ առումով յուրօրինակ սկզբնաղբյուրներ էին ծառայում։ «Արմենիայում» պատմական թեմաներով հանդես եկող հոդվածագիրներից մեկ-երկուսը, բարեբախտաբար, դեռ չէր մոռացել մայրենին (տվյալ դեպքում՝ գրաբարը, մասամբ էլ հունգարահայ հին բարբառը) և անհրաժեշտության դեպքում ու հնարավորության սահմաններում դիմում էին նաև ազգային գրավոր աղբյուրներին։

Հունգարահայության պատմությունը ևս իր հիմնական գծերով անծանոթ էր նոր սերնդին։ Գաղթօջախի հոգևոր ու մշակութային զարթոնքի տարիներին կարիք զգացվեց Տրանսիլվանիայի անցյալի վրայից վերցնելու անորոշության քողը, որ ուսումնասիրողներից պահանջում էր վիթխարի ջանքեր։ Նրանք սկսեցին քրքրել պետական ու եկեղեցական դիվանները՝ լույս աշխարհ հանելով կարևորագույն վավերագրեր, որոշումներ, կալվածագրեր, իշխանական ու այլ կարգի արտոնագրեր և այլն։ Մանրակրկիտ հետազոտական աշխատանքից հետո միայն կարելի էր ասել, թե ո՞րտեղից, ե՞րբ և ի՞նչպես էին հայերը հասել Հունգարիա, իրենցից ի՞նչ էին ներկայացնում նրանք, ե՞րբ խառնվեցին

այս նոր հայրենիքի կյանքին և, ի վերջո, ինչպես նրանք դարձան հունգար տերության լիիրավ քաղաքացիներ։

Պատմական թեմաներով գրողներից կուզենայինք հիշել միայն կարևորագույն հոդվածների հեղինակներին։ Նրանցից Սամոշույվարի գիմնազիայի ուսուցիչ Յանոշ Տեմեշվարիի գրչին են պատկանում հոդվածներ Տրանսիլվանիայում հաստատվելու շրջանի հայոց գավառների, կենցաղի ու սովորությունների մասին և արժեքավոր վավերագրերի հրատարակումներ։ Ավելին. ծանոթանալով հունգար ազնվականների վերաբերյալ Իվան Նագյի աշխատություններին, ուր չնչին տեղ էր հատկացված հունգարահայ ազնվականներին, Տեմեշվարին ձեռնարկում է մի ընդարձակ աշխատության՝ «Հունգարահայ ազնվական գերդաստանների արտոնագրերը»[11] խորագրով, որը շարունակաբար տպագրվում է «Արմենիայի» 26 համարներում։

Բավականաչափ շատ են նաև Սոնգոտյանի՝ նույն խնդրին նվիրված մեծ ու փոքր աշխատությունները։ Առանձնապես ուշագրավ է նրա «Հունգարահայոց տոհմաբանությունը», ուր այբբենական կարգով տրված է հունգարահայ ազգանունների բացատրությունը։ Բացառիկ արժեք է ներկայացնում նաև «Հունգարահայոց Սամոշույվար մայրաքաղաքը գրով և պատկերներով» մենագրությունը։ Ղուկաս Ավետիքյանը՝ Տրանսիլվանիայի երկրորդ հայկական նշանավոր բնակավայրի՝ Եղիսաբեթուպոլսի հոգևոր հայրը, մենագրություն է պատրաստել հիշյալ քաղաքի մասին։ Վերջինս թեպետև չի տպագրվել ամսագրում, բայց նրա կառուցվածքի ու բովանդակության մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդվել առանձին հոդվածով։

«Արմենիան» մեծ ուշադրություն էր նվիրում նաև պատմական Հայաստանի բնաշխարհների նկարագրությանը։ Աշխատակիցներից քչերին էր բախտ վիճակվել անձամբ լինելու նախնյաց հողում։ Ի վիճակի չլինելով իրենց անձնական տպավորությունները հաղորդել ընթերցողին, նրանք ստիպված դիմում էին Եվրոպայի (նաև՝ հունգար) բնախույզ-

[11] *Temesváry János.* A magyar-örmény nemes családok czimerlevelei, 1893, № 12—1896, № 4.

գիտնականների ու ճանապարհորդների ուղեգրական երկերին, ինչպես նաև թարգմանություններ կատարում եվրոպական այլևայլ հանդեսներից, ինչպես օրինակ՝ «Leipziger illustrirte Zeitung», Վիենի «Revue Alpine» և այլն, որոնց մեջ առանձնապես շատ էր խոսվում Արարատի ու Էջմիածնի, նաև այն վայրերի մասին, որոնք հունգարահայության համար հայության և Հայաստանի խորհրդանիշներն էին։ Նշենք ուշադրավ մեկ ուրիշ փաստ ևս. «Արմենիան» Ա. Մոլնարյանի թարգմանությամբ հատվածներ է տպագրել Ղ. Ալիշանի «Տեղագիր Հայոց Մեծաց» աշխատությունից[12]։

Բազմաթիվ հոդվածներ էին նվիրված նաև հայոց լեզվին, որոնց հեղինակները մեծապես տարբերվում էին իրարից. լեզվագիտական խնդիրներ էին շոշափում ինչպես մասնագետները, այնպես էլ գավառագետները։ Հիշենք հունգարական ակադեմիայի անդամ, արևելագետ Գեզա Կունին (1838—1905), բանասիրության դոկտոր Ղ. Պատրուբանյանին, Հունգարիայի պետական ժողովի՝ Սամոշույվարի պատգամավոր, հայագետ Ա. Մոլնարյանին, առանձին հայ-կաթոլիկ հայերի և այլոց։ «Արմենիայում» թարգմանաբար տպագրվում էին նաև արևմտաեվրոպական որոշ լեզվաբանների աշխատություններ, ինչպես օրինակ՝ Հյուբշմանի ու Էնեսի, որոնք պատմահամեմատական լեզվաբանության ոգով քննության էին ենթարկել հայոց լեզվի ծագման, հնության ու առնչությունների հարցերը։ Հանդեսն ուշադրություն էր հրավիրում հայերենից հունգարերենին անցած բառերի վրա, սիրով էջեր տրամադրում հայոց լեզվի ուսումնասիրությանը վերաբերող լրատվություններին։ Այսպես՝ հաղորդվում էր, որ Շիմոն Ցառուոն քահանան հորինում է հունգարերեն-հայերեն և հայերեն-հունգարերեն բառարաններ, հայագետ Անտոն Վոյթյանը (Անտալ Վոյթ, 1877—1899) տպագրության է պատրաստել «Հայոց լեզվի տեսական և գործնական քերականություն» (լույս չի տեսել), իսկ Ղ. Ավետիքյանը առանձին հոդվածով ծանուցում էր, որ ինքը դիտավորություն ունի հրատարակելու «Հայոց լեզվի ընթերցարան հունգարահայոց համար», ուր

[12] *Molnár Antal,* Nagy Örményország földje, 1890, № 3, o. 68—72, № 4, o. 100—104, № 5, o. 134—138.

տեղեկություններ կարդան նաև հայ ժողովրդի ու նրա մշակույթի մասին[13]։

«Արմենիայի» 249 ամսատետրակների մեջ համարյա չկար մեկը, ուր չխոսվեր որևէ նշանավոր հայի մասին։ Վերջիններս, բնականաբար տարբերվում էին ո՛չ միայն մասնագիտությամբ կամ ունեցվածքային վիճակով, այլև բնակավայրով, կոչումով և այլն։ Նրանց կյանքն ու գործերը շատ հաճախ ներկայացվում էին ամենայն մանրամասնությամբ։ Էականն այն չէր, թե տվյալ անհատը գիտնական էր, գրող, զինվորական, վաճառական, պետական կամ հոգևոր գործիչ, այլ այն, որ նա հայ էր, ու հոդվածն էլ նպատակ ուներ համոզելու ընթերցողներին, որ հայ ժողովուրդը ետ չի մնում աշխարհի մյուս ազգերից, որ նա ծնել է տաղանդավոր զավակներ, որոնք ապրում են երկրագնդի տարբեր մասերում, սիրիշ ժողովուրդների համար օգտակար կյանքով և վայելում ընդհանուրի հարգանքը։

Իհարկե, հայ մշակույթն իր ողջ բազմազանությամբ ներկայացնելը հունգարահայոց հոգևոր պարթոնքի գործիչների ուժերից վեր էր, մի կողմ թողած, որ տվյալ ժամանակահատվածում հայ հին մշակույթի մի շարք առաջնակարգ հուշարձաններ և միջնադարյան հայ քնարերգության հատկանշական էջեր դեռևս անբավարար էին հետազոտված կամ բոլորովին անծանոթ էին, իսկ ամսագիրն էլ այնպիսի հնարավորություններ չուներ, որ նոր ու թարմ խոսք ասեր կամ թափանցեր այդ խնդիրների էության մեջ։ Ճիշտ է, հայ հոգևոր ճարտարապետության և երաժշտության մասին պատահում են առանձին հաջողված հոդվածներ, բայց, օրինակ՝ փիլիսոփայության, ճշգրիտ գիտությունների ու մանր արվեստների մասին համարյա ոչ մի խոսք չէր ասվում։

Հայոց հոգևոր և մշակութային գործունեության բնագավառներից ամենից հանգամանորեն հին ու միջնադարյան մատենագրությունն է ներկայացված։

Հայ մշակութային կյանքի անցուդարձերից «Արմենիան» մշտապես աչքի առաջ ուներ այն ամենը, որ տեղի էին ունե-

---

[13] *Ávedik Lukács*, Örmény olvasókönyv magyarok számára, 1890, № 1, o. 26–27.

նում Արևելյան (ռուսական) և Արևմտյան (տաճկական) Հայաստանում, Վիեննայի ու Վենետիկի Մխիթարյան միաբանություններում և աշխարհով մեկ սփռված հայկական գաղթավայրերում։ Որպես կանոն՝ դրանց հատկացվում էին ամսագրի վերջին էջերը՝ «Մանրալուրք», «Մատենագրություն, գեղարվեստ», «Ի՞նչ նոր բան կան հայոց վրա» խորագրերի տակ։ Ընթերցող հասարակայնությունը ամսագրի այդ մասերից, օրինակ, կարող էր իմանալ Պ. Ադամյանի Համլետի, Բաքվի հայոց թատրոնի, Գ. Սունդուկյանի առանձին դրամատիկ երկերի բեմադրության, Գր. Արծրունու և նրա «Մշակի», Հ. Այվազովսկու կտավների, Եվրոպայում ճանաչում գտած հայ ուրիշ նկարիչների ու այլոց մասին։ Այդ համառոտ լուրերից ընթերցողը կարող էր իմանալ, որ Հայաստանում ևս, ինչպես և քաղաքակիրթ երկրներում, կային տաղանդավոր դերասաններ ու նկարիչներ, թատրոններ ու դպրոցներ, հրատարակվում էին գրքեր ու ամսագրեր։ Կարող էր իմանալ առանձին գրողների, գրքերի ու պարբերականների անուններ, բայց թե, ըստ էության, դրանք.իրենցից ի՞նչ էին ներկայացնում, հասարակական հոսանքներից որի՞ն էին հարում կամ ի՞նչ նպատակներ ունեին, այդ մասին խոսք անգամ չէր կարող լինել։

Սակայն մենք իրավունք չունենք դրա համար մեղադրելու «Արմենիայի» խմբագրին։ Բանն այն է, որ հունգարահայությունը կտրված էր իր նախնյաց հայրենիքից, իսկ քաղաքական հանգամանքները, որոնց մեջ հրատարակվում էր այդ հանդեսը, բացառում էին քաղաքականությամբ զբաղվելը։ Վերջապես՝ XIX դարավերջին և XX-ի սկզբներին բուն Հայաստանում սրված քաղաքական իրադարձությունները դժվարացնում էին լիակատար ու ճշգրիտ գաղափար կազմելու ժողովրդի հոգևոր ու մշակութային կյանքի, սոցիալական ու քաղաքական անցուդարձերի մասին։

Ամենից ավելի «Արմենիան» լավատեղյակ էր Մխիթարյանների մշակութային գործունեությանը, որովհետև հանդեսի աշխատակիցներից շատերը անձնական սերտ կապերի մեջ էին նրանց հետ։ Ամսագիրը բազմազան առիթներով հանգամանորեն գրել է Մխիթարյանների պատմության ու գոր-

ծանոթության, հրատարակած գրքերի, գիտական աշխատությունների, կատարած թարգմանությունների, պաշտոնաթերթերի և այլ գործերի ու իրագործումների մասին։

«Արմենիա» ամսագրի նպատակներից մեկն էլ հունգարահայոց ներքին կյանքի ցուցադրումն էր, և հավատարիմ այդ սկզբունքին՝ հանդեսը հանգամանորեն խոսել է հունգարահայոց մշակութային առօրյայից, ընդարձակ հոդվածներ ու սեղմ լուրեր տպագրելով հայ ծագմամբ հունգար գրողների ու արվեստագետների մասին, իսկ «Սամոշույվարի քրոնիկոն» և «Հայրենական ժամանակագրություն» բաժինների միջոցով լուրեր հաղորդելով Տրանսիլվանիայի հայ գաղութի մշակութային կյանքի տատացիորեն գրեթե բոլոր հետաքրքրական անցուդարձերի վերաբերյալ, ինչպես օրինակ՝ ինքնագործ թատերական ու երգչախմբերի ելույթների, նորատիպ գրքերի, դպրոցների ու գիմնազիաների մասին և այլն։

Ամսագրի մշտական աշխատակիցների իմացությունները՝ կապված աշխարհիս հայկական գաղթավայրերի մշակութային կյանքի հետ, բավականաչափ սահմանափակ լինելով հանդերձ, «Արմենիան» այնուամենայնիվ, ջանում էր գեթ ամեն համարում, թեկուզև շատ համառոտ, որևէ նոր լուր կամ էլ մանրամասն հաշիվ տալ արևելագիտական միջազգային գիտաժողովներում հայոց վերաբերյալ կարդացված դասախոսությունների մասին։

Հայ ժողովրդի, նրա կեցության ու մտածողության ձևերի, սովորույթների մասին հոդվածներն, անհասարակ, պետք է ամսագրի ամենահետաքրքրական նյութերը լինեին։ Բայց ներկայացնել ժողովրդին առանց անձամբ նրա հետ ծանոթ լինելու, իհարկե, շատ դժվար էր։ Այդ պատճառով էլ Խ. Սոնդայանից և Հ. Զիլինգարյանից բացի, ամսագրի մնացած աշխատակիցներից և ո՛չ մեկն այդպիսի ծանր պարտականություն հանձն չէր առնում։ Սոնդայանը հայերի մասին իր հարուստ գիտելիքները քաղել էր գրքերից ու մասնագիտական հրատարակություններից, իսկ Զիլինգարյանը աշխատակիցներից միակն էր, որ ծնվել ու մեծացել էր Հայաստանում։ Նա Անդրկովկասից էր, ուսանել էր հայ-

րենի Ախալքալաքում ու Տփղիսում, ապա մեկնել արտասահման, ընդունվել Հալլեի համալսարան, իսկ այնտեղից էլ անցել Բուդապեշտ, որտեղից թղթակցություններ էր ուղարկում կովկասյան մի քանի պարբերականների: Նա մասնակցել էր հունգար հանրաճանաչ գիտնական և ճանապարհորդ Ենեո Զիչիի (1837—1916) կովկասյան արշավախմբին, որպես քարտուղար ու թարգման, և, ժամանակակիցների ասելով, լավ գիտեր ինչպես Կովկասը, այնպես էլ կովկասյան լեզուները:

Ճիշտ է, հայոց հետ անմիջական շփում չունենալը լուրջ արգելք էր, որ նրանց կյանքն ամսագրում բազմակողմանիորեն ներկայացվեր, բայց հետաքրքրական հոդվածներ, այնուամենայնիվ, տպագրվում էին: Մեծ մասամբ դրանք ազգագրական տեսություններ էին (օրինակ՝ վանեցիների և արաբկիրցիների հարսանիքը), ուխտագնացություններ, տարազի մասին ակնարկներ, հայ և վրաց ժողովուրդների ընդհանուր և տարբերակիչ գծերի մասին դիտողություններ և այլն:

Ինչ խոսք, այդ առումով ամենահաջող հոդվածները հունգարահայոց ազգագրությանը նվիրվածներն են, որոնց նյութն էր տարազը, խոհարարական արվեստը, կենցաղը և այլն, նաև՝ Դ. Ավետիքյանի հրատարակած վավերագրերը «Եղիսաբեթուպոլիս քաղաքի բնակիչների իրավունքների ու պարտականությունների մասին»[14]: Այդ վավերագրերը հետաքրքրական շատ բան են հաղորդում հիշյալ քաղաքի հայերի առտնին կյանքի, ծեսերի ու տոնախմբությունների, առանձին արհեստավորական ընկերությունների կանոնադրությունների մասին և այլն:

Անչափ մեծ է նաև Սոնգոտյանի վերոհիշյալ «Հունգարահայոց ազգագրության» մեծածավալ աշխատության արժեքը, որը նույնպես շարունակաբար տպվել է «Արմենիայում»:

Արդիականության և, ընդհանրապես, հայության ու հայոց երկրի բախտի նկատմամբ ամսագրի ցուցաբերած

[14] *Avedik Lukács,* Szabad kir. Erzsébetváros képviselötestületének kegyuri jogai és kötelmei, 1903. № 11, o. 336—338.

հետաքրքրությունը անսահման էր։ Ջերմ սերն ու անհաղթահարելի ձգտումը դեպի հնօրյա հայրենիքում ապրող իրենց եղբայրներն արդեն բնազդական զգացումներ ու հակում էին դարձել, որոնց թելադրողը բանականությունն ինքն էր։

Իսկ այս իրադրությունն ամենից առաջ ապացույցն էր այն բանի, որ խմբագրության հավաստիացումը, թե քաղաքականությունը բնավ տեղ չպիտի գտնի ամսագրի էջերում, դառնում էր լոկ քող։

«Արմենիան» հրատարակվում էր մի այնպիսի ժամանակահատվածում, երբ ֆիզիկական ոչնչացման վտանգն սպառնում էր արևմտահայությանը, և Եվրոպայի մեծ տերությունների ձեռքին խաղալիք դարձած հայկական հարցը ավելի ու ավելի էր խճճվում։ Բնական է միանգամայն, որ այս պայմաններում «Արմենիան», որն երբեք չէր հակադրվել պետության պաշտոնական քաղաքականությանը, չէր կարող կուրորեն հետևել ավստրո-հունգարական իշխանության դիրքորոշմանը Թուրքիային վերաբերող խնդիրներում, չէր կարող թաքցնել իր համակրանքը, իր արցունքներն ու պայքարը հարազատ եղբայրների բախտի համար կամ դիտավորությունները՝ օգնելու նրանց։ Համարից համար ավելի ու ավելի հատու և համարձակ էին դառնում եղբայրակիցների հետ համերաշխության կոչերը, լսվում մեղադրական խոսքեր թուրք կառավարության հասցեին, չնայած, ի վերջո, քանակական առումով սակավ էին իսկական հրապարակախոսական էջերը։

Ամենահետաքրքրական ու փաստալից հոդվածը (թուրք տիրապետողներին մերկացնելու առումով) պատկանում էր Հ. Չիլինգարյանի գրչին («Հայոց պետական-իրավական վիճակը Թուրքիայում»)[15]։ Սովորաբար Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող արյունալի դեպքերի մասին պատմող նյութերը տպագրվում էին «Ի՞նչ նոր բաներ կան հայոց վրա» բաժնում։ Ուշագրավն այն է, որ 90-ական թվականների երկրորդ

[15] *Cselingárián Jakab.* Az örmények államjogi helyzete Törökországban, 1895, № 5, o. 132—136.

կեսից հիշյալ բաժինն ավելի է ընդարձակվում։ Կան ամսատետրակներ, որոնց համապատասխան բաժնի բոլոր նյութերը նվիրված են Արևմտյան Հայաստանի ողբերգական անցուդարձերին։ Որքան ցնցող էին դեպքերը, և ահավոր ու բացահայտ՝ ջարդն ու թալանը, այնքան սահմռկեցուցիչ էին հաղորդումները, նայած թե ինչ ձևով էր խմբագրությունը ստանում այս կամ այն լուրը, կամ էլ ինչ ընթացք էին ստանում ավստրո-հունգարական կայսրության և Թուրքիայի հարաբերությունները։

Շատ դեպքերում ամսագիրն զգուշանում էր իր կարծիքը կամ վերաբերմունքը պարզորոշ կերպով արտահայտել։ Բաժնի նյութերը սովորաբար քաղվում էին մամուլի մյուս պաշտոնական օրգաններից, և ամեն անգամ ճշտորեն նշվում, թե ո՞րտեղից է արտատպված կամ թարգմանված։

«Արմենիայի» համար աղբյուր դարձած այդ պարբերաթերթերից էին եվրոպական, ամերիկյան և հունգարական հետևյալ հանրաճանաչ լրագրերն ու ամսագրերը՝ „Autorite“, „Temps“, „Revue de Paris“, „La Justice“, „Armenia“ (*Ֆրանսիա*), „Neue freie Presse“ (*Ավստրիա*), „Saturday Globe“, „The Boston Herald“, „Dailly News“ (*անգլո-ամերիկյան*) և „Magyar Állam“, „Tiszántúl“, „Fővárosi Lapok“, „A katholikus hitterjesztés lapjai“, „Budapesti Hirlap“ (*հունգարական*)։ Աղբյուրները մանրախնդիր ճշգրտությամբ նշելը հիմք է տալիս եզրակացնելու, որ «Արմենիան» չափից ավելի զգուշավորություն էր հանդես բերում՝ ջանալով ընդհանրապես խուսափել քաղաքականությամբ զբաղվելու մեղադրանքից։ Նա գրում էր խիստ համառոտ և միայն այնպիսի բաների մասին, որոնք մամուլից արդեն հայտնի էին։ Բայց, պետք է ասել, որ «Արմենիայի» հաղորդումների ներգործման մեծ ուժը թաքնված էր հենց այդ զուսպ խոսքի ու դիպուկ վերնագրերի մեջ։ Հիշենք մեկ-երկուսը. «Թուրքական պետության հոգեվարքը»[16], «Թուրքիայում հարկերն հավաքում են անօրի-

---

[16] „Miniszterválság Törökországban“, 1890, № 3, o. 96.

նաքար ու ահավոր սպառնալիքով»[17], «Հայերին պիտի կոտորել...»[18] և այլն:

Այդ կարճ լուրերը ուշագրավ մանրամասներ էին պարունակում տաճկահայերի մասին, բացահայտում նրանց քաղաքական վիճակի խղճությունը և Թուրք չարդարարների հայահալած քաղաքականության էությունը: Օտար լրագրերից ու հանդեսներից արտատպվող բոլոր քաղվածքներն էլ ընտրվում էին մեծ ճաշակով ու բանիմացությամբ: «Արմենիան» այդ ճանապարհով ընթերցողներին տեղեկացնում էր, որ Թուրքիայում տպագրվող հայերեն գրքերից անխնայորեն ջնջված է «Հայաստան» բառը[19], փակված է Կ. Պոլսի «Հայրենիք» լրագիրը[20], իսկ հունգար արևելագետ և ճանապարհորդ Արմին Վամբերիի (1832—1913) ուղեգրության հատորից կատարված արտատպությունների միջոցով ներկայացվում էր Թուրքիայում ապրող հայի կերպարը, որն ամբողջ գիշերն արթուն հսկում էր տան կտուրին, զենքը ձեռքին, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանար պաշտպանել իր ընտանիքը անսպասելի հարձակումներից ու բռնություններից[21]:

1896 թ. հունիսյան համարում տպագրված էր կայսրության արտաքին գործերի մինիստր, կոմս Գոլուխովսկու հունիսի 9-ի հայտարարությունը[22], որից պարզ երևում էր, որ Ավստրո-Հունգարիան, իբրև Բալկաններում մշտական խաղաղության հաստատելու հետևողական կողմնակից (որով խիստ շահագրգռված էր) գտնում էր, որ այդօրինակ խաղաղության երաշխիքը մեծ տերությունների կողմից Թուրքիայի ներքին գործերին չմիջամտելն է, որն, ի դեպ, պահանջում էր զոհեր: Իսկ խաղաղության զոհերը, ներկա դեպ-

---

[17] „Hogy szedik az adót Törökországban", 1890, № 5, o. 160.

[18] „Ki kell irtani az örményeket!", 1896, № 3, o. 100.

[19] *Szongott Kristóf*, Utazás Örményországban, 1891, № 8, o. 237—241.

[20] „Az örmény hirlapirodalomból", 1892, № 2, o. 63.

[21] „Az örmény kérdésről", 1896, № 10, o. 318—322.

[22] „Külügyminiszterünk előterjesztése az örmény kérdésben", 1895, № 7, o. 223—225.

քում, «ահավոր վիճակում գտնվող հայերն էին»։ Նշանակում է, ավստրո-հունգարական կայսրությունը մի կողմից պաշտպանում էր չմիջամտելու սկզբունքը և բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հետ, մյուս կողմից՝ չէր կարողանում առաջվա նման «փակել աչքերն ու ականջները», ողջ Բալկանների համար վտանգավոր ու ճակատագրական համարելով ներքին-քաղաքական հարցերը լուծելու Օսմանյան կայսրության այդօրինակ ձևը։ Տարօրինակ էր Գոլուխովսկու մյուս հայտարարությունը, ըստ որի սուլթանը մեղք չուներ հայերի թափած արյան գործում՝ «ժողովրդի բարօրության համար սուլթանի հոգացումները իզուր անցան։ Նրա լավագույն դիտավորությունները Թուրքիայի պետական ծախու ապարատի անհաղթահարելի դիմադրության պատճառով անհաջողության մատնվեցին»,—դրա հանցավորը Թուրքիայում ստեղծված իրադրություններն էին. «Ռեֆորմները լավ ու վսեմ բաներ են, բայց սոսկ թղթի վրա դրանք գծելը դեռ անբավարար է։ Պետք է ունենալ դրանք իրականացնելու համար համապատասխան միջոցներ։ Բայց Թուրքիայում այդ միջոցները գլխովին բացակայում են...»։

Այս բոլորից հետո հասկանալի է, որ «Արմենիան» սկսեց ավելի համարձակ գրել Արևմտյան Հայաստանի իրադարձությունների մասին։ Նրա համառոտ լուրերը ընթերցողների շրջանում ո՛չ միայն հակակրանք էին առաջ բերում հանդեպ Թուրքիան, այլև զայրույթ՝ հասկացնել տալով, որ հայերին կոտորելով անկարելի էր լուծել Թուրքիայի ներքին պրոբլեմները։ Ամսագիրը գրում էր, որ «Ներոնի և Դիոկղետիանոսի ժամանակները վերածնվել են Հայաստանում»[23], որ «հայերի ջարդը կատարվում է հենց սուլթանի հրամանով»[24], ապա և տպագրում լուսանկար-փաստաթուղթ, թե ինչպես թուրքերը բաց ծովում կոտորում են հայ փախստականներին, ու վերջապես՝ հրապարակում նշանավոր եկեղեցական գործիչների հրապարակային կոչը՝ հայերին օգնելու վերաբերյալ։ «Արմենիան» հարց էր բարձրացնում, որ լավ կլիներ, եթե հայ գաղթականներին ապաստան տային

[23] „Örmény vértanu", 1897, № 4. o. 127.

[24] „A szultán politikája", 1897, № 6, o. 194.

հունգարահայ գաղթօջախում։ Սամոշույվարում հանգանակություն է սկսվում։ Ամսագիրն իր հերթին պաշտպանում է այդ նախաձեռնությունը և հանգամանորեն լուսաբանում նրա ընթացքը։

«Արմենիան» հրատարակվում էր Հունգարիայի պատմության մի այնպիսի շրջափուլում, որն ընդունված է կոչել՝ «Կոմպրոմիսների ժամանակներից մինչև առաջին համաշխարհային պատերազմ», այսինքն՝ 1867 թ. մինչև 1914 թ.։ Այս ժամանակաշրջանի բնորոշ գծերն էին՝ ծառայել Հաբսբուրգների շահերին, ամրապնդել տիրապետող դասակարգերի միջև կապերը, զարգացնել երկրում կապիտալիզմը և փայփայել այն հույսը, թե հունգարներն իրենց 30 միլիոնանոց ժողովուրդ օրըստօրե ավելի պիտի հզորանան։ Այս ամենն, ի վերջո, հղի էր վտանգավոր հետևանքներով՝ սոցիալական պրոբլեմների առավել սրմամբ և բռնի հունգարացման անցանկալի արդյունքներով։

Հունգարահայոց ամսագիրն այս բարդ ժամանակաշրջանի ամենավստահելի և անվտանգ պարբերականներից մեկն էր։ Նրա ձգտումն էր համակրական վերաբերմունք առաջ բերել դեպի հայ հարուստ հովանավորները և հայերի մեջ պատվաստել պետական հավատարմություն իրենց օրերի Հունգարիայի նկատմամբ։ «Արմենիան» Ֆրանց-Յոզեֆ կայսրը կոչում էր ինքնակալության «ժողովուրդների բարի հայր» և արժանավոր ժառանգ, հունգարական պետության հիմնադիր և առաջին թագավոր Իշտվան I-ի (1000—1038), բազմիցս փառաբանության խոսք ասում հունգար ազգության մասին, որն ուներ «ասպետական բնավորություն»։ Ամսագիրը հաճույքով տպագրում ու տարածում էր հունգարական այն ավանդույթները, որոնք սիրելի էին նաև հայերի համար։ Ամենից առաջ մեծագույն սիրով նշվում էր մարտի 15-ը՝ 1848 թ. բուրժուական հեղափոխության տարեդարձը, սակայն երբեք չանցնելով պաշտոնապես թույլատրված սահմանները։ Անգամ այս դեպքում էլ «Արմենիան» մեծ վաստակ ունի մասնավորապես 1848—49 թթ. ազատագրական շարժման հայազգի զորավարներ Վիլմոշ Լազարի և Էռնեո Կիշի մասին (վեր-

չիններս մահապատժի էին ենթարկվել Հաբսբուրգների հրամանով, 1849 թ. հոկտեմբերի 6-ին) հրապարակած բազմաթիվ արժեքավոր ու հետաքրքրական տվյալներով։ Սանդոսյանն առաջինն էր Հունգարիայում, որ անդրադարձավ ազատագրական շարժման հերոս՝ հայ զորավար Յանոշ Ցեցյանին, որն ապրում էր Բուենոս Այրեսում, տպագրեց նրա սքանչելի ինքնակենսագրությունը։

Ժամանակակիցներից մեկը, անդրադառնալով «Արմենիայի» ընդհանուր ոգուն, բնութագրել է այն իբրև մի հանդես, ուր «շաղկապվում են միմյանց հունգարական հայրենասիրությունը և սերն առ հայ ժողովուրդ»[25]։ Եվ իսկապես. ամսագիրը մշտապես ձգտում էր ի հայտ բերել և լույս աշխարհ հանել հունգարների ու հայերի ընդհանուր գծերը և զուգահեռներ անցկացնելով նրանց պատմությունների միջև՝ հաստատել, որ երկու ժողովուրդներն էլ հավասարապես արժանի են աշխարհի մյուս ժողովուրդների ուշադրությանն ու հարգանքին։ Պետք է ասել, որ հունգար հայրենիքի և հայ ազգի նկատմամբ ջերմ զգացմունքներ առաջ բերելու ձգտումը ստեղծագործական ազդակ է ծառայել հունգարահայ մտավորականների որոշ աշխատությունների համար, որոնք չնայած որ գրվել են գիտական որոշակի նպատակներով, բայց ցավոք այդ առումով շատ են կաղում։ Դրա ցայտուն օրինակներից էր Սանդոսյանի «Հունգարների ծագումը և հին հայրենիքը» շահեկան աշխատությունը, որտեղ, ի դեպ, ասված է, որ 895 թ. (այսինքն՝ տվյալ երկրամասում հունգարների հաստատման տարում) ութ ցեղեր նվաճեցին ապագա հունգարական պետության տարածքը, և դրանցից չորսը (Կերեգիաս, Օնդ, Կունդ, Հուրա) հայկական ծագում ունեին։ Հունգարներն, ըստ Սանդոսյանի գրքի, մինչև նոր հայրենիքում հաստատվելը քրիստոնյաներ էին և քաղաքակիրթ։ Արպադ իշխանի անունը, որի ղեկավարության տակ էին առաջին հունգարները, նա բխեցնում էր հայերեն «առ փառ» (իմա՛ փայտ) և բացատրում, թե դա նշանակում է՝ «Օն, ի զեն»։ Ժամանակակիցները, որոնց շրջանում մեծ համարում ունեին Խ.

[25] „Tiszántúl", 1897, № 6, o. 192.

Սոնգոտյանն ու նրա գիրքը, ի վիճակի չէին պատասխանելու «սրտի արյունով» գրված նրա «մտացածին» էջերին ու սխալները։ Նրանք ամենից առաջ տեսնում ու բարձր էին գնահատում այդ գրքը ծնող շարժառիթները և հեղինակի կատարած վիթխարի աշխատանքը[26]։

Ամսագրի աշխատակիցների տածած հայրենասիրական զգացումները Հունգարիայի հանդեպ և «քաղաքականությամբ չզբաղվելու» սկզբունքը հազիվ թե պատճառ դառնային հայոց նկատմամբ հանիրավի վերաբերմունքի, թեպետ նման փաստերն, այնուամենայնիվ, արձանագրվել են և պատշաճ հակահարված ստացել։ Խոսքը «Պատասխան Ֆերենց Կոշուտի «Արևելյան հարցը» հոդվածին»[27] և «Պատասխան «Կոլոժվարի» հոդվածներից մեկին»[28] խորագրերով և հրապարակախոսական մեծ կրքով գրված էջերին է վերաբերում։ Բանն այն է, որ «էգետերտեշ» (Համաձայնություն) ամսագրի 1895 թ. նոյեմբերյան համարում լույս էր տեսել քաղաքագետ Ֆերենց Կոշուտի ստորագրությամբ առաջնորդող, ուր թուրքերը բնութագրվում էին որպես «անասելի ազնիվ ու քաջ» ժողովուրդ, իսկ հայերի մասին ասված էին լոկ անբարյացակամ ու զրպարտչական խոսքեր։ Հայոց պատմության մեջ, Կոշուտի ասելով, միակ լուսավոր կերպարը Տիգրան Մեծն էր, իսկ հայերի բնավորության բնորոշ գիծը՝ օտար լծին կուրորեն հնազանդվելը, հետևաբար և հայության այժմյան ողբալի վիճակը անցյալի անմիջական ու բնական շարունակությունն էր։

Կոշուտի խոսքերին առաջ են բերում Սոնգոտյանի արդար զայրույթը։ Վերջինս դառնացած էր մասնավորապես նրանից, որ հայկական հարցին՝ այդ «մարդասիրական, համամարդկային և քաղաքացիական ազատության խնդրին», նման վերաբերմունք ցույց տվողը ավստրիական լծից

---

[26] „*Szongott Kristóf* méltatása", 1907, № 2, o. 57—58.

[27] *Szongott Kristóf*, Válasz Kossuth Ferencznek, 1896, № 1, o. 7—27.

[28] *Szongott Kristóf*, Válasz a „Kolozsvár" egyik czikkére, 1896, № 5, o. 141—157.

Հունգարիայի ազատագրման առաջնորդի՝ «Ազատության քուրմ» Լայոշ Կոշուտի (1802—1894) որդին էր։

Սոնգոտյանը Ֆ. Կոշուտի զրպարտագրին պատասխանում է համարձակորեն՝ սրամտությամբ և երկաթե տրամաբանությամբ ջարդուփշուր անելով նրա բոլոր փաստարկները։ Հոդվածը նախապես ուղարկում է «Էգետերտեշին», բայց զգալով, որ տպագրելու մտադրություն չունեն, հրապարակում է «Արմենիայում»։

Սոնգոտյանի արդար զայրույթը շարժող մյուս հոդվածն էլ լույս էր տեսել Կոլոժվարի քաղաքային լրագրում, 1896 թ. մարտի 30-ին, «Հայոց եպիսկոպոսությունը» վերնագրով։ Հեղինակը Կալման Սենտկիրային էր։ Վերջինս հունգարահայերի՝ ինքնուրույն հոգևոր իշխանությունը վերականգնելու ձգտումը վտանգավոր էր համարում հունգարների համար և հրապարակորեն առաջարկում՝ չընձեռել նրանց այդպիսի իրավունք, նաև արհեստականորեն նվազեցնելով սևացնում ու ոչնչի էր հավասարեցնում հունգարահայերի անցյալն ու ծառայությունները հունգար հայրենիքին։ Սոնգոտյանն իր պատասխանում անհերքելի փաստերով ցույց էր տալիս Սենտկիրայիի խոսքերի սնանկությունը և բացատրում, թե որն էր հայկական հայրենասիրության էությունը. «Մենք,— գրում էր նա,— այնպիսի հունգարներ չենք, որ պարտականություններ ունենանք հայության հանդեպ, և ո՛չ էլ այնպիսի հայեր, որ պարտավորված չզգանք հունգարների առջև... Թող մեղանից չպահանջեն ավելին, քան այն, որ հոժարակամորեն տալիս ենք, այսինքն՝ այնքան, որքան կարող է և, առանց երես դարձնելու, պատրաստ է տալու ինքնասիրությունը»։

Ժամանակակիցները «Արմենիան» անվանում էին ո՛չ միայն «հայրենասիրական», այլև «չափավոր ամսագիր՝ կաթոլիկական ուղղությամբ»[29], այն պատճառով, թերևս, որ նրա համարյա յուրաքանչյուր ամսատետրակում լուրեր էին տպագրվում կաթոլիկ աշխարհի մասին, և ընդհակառակը, վարված էին այն օրերի «մոդայիկ ու վտանգավոր» ուսմունք-

---

[29] „Az iroi érdem jutalma", 1904, № 4, o. 134.

ները։ Օրինակ՝ նրա համարներից մեկի «Մատենագրություն, գեղարվեստ» բաժնում ժամանակակից եվրոպական վեպերի մասին ասված էր. «Նրանք աշխարհը պատկերացնում են կամ իբրև հիվանդանոց, կամ աշխատանոց և կամ էլ՝ իբրև հասարակաց տուն... Նրանց բնորոշ են կենցաղային մանրամասները, անբնական կրքերի, տարօրինակ բնավորությունների և հանդուգն գաղափարների վերարտադրությունը։ ...Փառք աստված... որ մեր հայրենիքում այս ամոթալի բաները բնավ չկան»[30]։ Անտարակույս, հունգար գրականության վերաբերյալ վերջին դիտողությունն անհիմն էր, թեպետև «Արմենիայի» ուղղությունը նկատի առնելով՝ անչափ ճշմարտացի։ Աշխարհի գեղարվեստական ընկալման այդ ձևը, որ մատնանշվում էր հիշյալ բաժնում և որին իրականում առնչվում էին Դոստոևսկու, Դիկկենսի և Զոլայի անունները, հունգարահայ ամսագրի աշխատակիցների շրջանում հետևորդներ չուներ։

«Արմենիայի» էջերում, ընդհանրապես, հասարակագիտական խնդիրներ չէին շոշափվում, և մարդկանց միջև գոյություն ունեցող դասային և ունեցվածքային տարբերությունների պատճառը համարվում էր վերուստ սահմանված բնական վիճակը։ Դրա փայլուն ապացույցները ամսագրում տպագրված գրական փորձերն էին, որոնց մեջ բոլոր հարցերը լուծվում էին քրիստոնեական բարոյախոսության ըմբռնումներով. «Մենք բոլորս Տիրոջ զավակներն ենք, բոլորս Նրա առջև հավասար ենք։ Իսկական սոցիալիզմն ահա այս է...»[31]։

«Արմենիան» մի որոշ չափով ուներ նաև, եթե կարելի է ասել՝ գերդաստանային բնավորություն («Թախումի օրգան», ինչպես «Հյուսիսափայլի» կապակցությամբ նկատել է Մ. Նալբանդյանը)։ Այս յուրահատկությունը մի կողմից բացատրվում էր նրանով, որ «Արմենիան» հունգարահայոց խոսափողն էր ու այդ պատճառով ուներ շեշտա-

[30] „Cantu Caesar. .", 1898, № 8, o. 225.

[31] „Isten gyermekei vagyunk...", 1905, № 5, o. Hazai Krónika.

ված հայկական դիմագիծ։ Մյուս կողմից՝ նրան այդպիսին էին դարձնում տպագրվող բազում ու բազմազան լուրերն ու հայտարարությունները՝ զանազան երեկույթների, տոնահանդեսների, հարսնախոսությունների ու նշանդրեքների, կնունքների, հարսանյաց հանդեսների ու ճանապարհորդությունների, թաղումների և այլնի մասին։ Նմանօրինակ հայտարարությունների մեծ մասն առնչվում էր հայոց միջին խավերին, որոնք և նյութապես օժանդակում էին «Արմենիային»։ Այդ խավի մարդիկ կապված էին միմյանց հետ ընդհանուր ծագմամբ, կրթությամբ, հետաքրքրություններով, մտածողության ու կեցության ձևերով, երբեմն և ազգակցական սերտ կապերով, որ դժվար չէ կռահել բնտանեկան հայտարարություններից։

Բնականաբար հարց է ծագում. մինչև ո՞ր աստիճան և ի՞նչ չափով էր «Արմենիան» կարողանում իրականացնել իր ծրագիրը և այն դերը, որ վիճակված էր նրան խաղալու XIX դարավերջի և XX-ի սկզբի հունգարահայության մշակութային և հոգևոր զարթոնքի շարժման մեջ։

Պետք է նշել, որ ամսագրի առանձին համարների միջև նկատվում են զգալի տարբերություններ։ Որոշ համարներ շատ հարուստ ու բովանդակալից են, և հարազատ դաղթավայրի պատմությամբ ու գրականությամբ, բանահյուսությամբ և հանրային ու մշակութային կյանքով, նաև ողջ «հայ» աշխարհով հետաքրքրվող ընթերցողն այնտեղ կարող էր գտնել բազմազան ու գրավիչ նյութեր։ Բայց շատ համարներ էլ անչափ աղքատ են։ Մասնավորապես վերջին տարիներին պատահում էր, որ ողջ ամսատետրակը հատկացվում էր որևէ գիտական աշխատության, որոնք իրենց հերթին մեծապես զանազանվում էին որակով կամ լրջությամբ։ Պատահում են համարներ էլ, ուր գիտական հետաքրքրական հոդվածների կամ գեղարվեստական հաջող թարգմանությունների կողքին տեղ են գտել Սամոշույվարի բնտապետի տանը կազմակերպված «շքեղ հանդեսի» նկարագրություն, հայկական ապուրների ու քաղցրավենիների գեղատոմսեր, հարսանիքի կամ թաղման ազդեր։

Մասնավորապես 1900-ական թվականներից զգացվում

է «Արմենիայի» ընդհանուր մակարդակի անկում, կարծես կորչում է հրատարակիչների նախկին եռանդը։ Աշխատակիցների մի մասը վախճանվում է, մյուսները ծերանում են, իսկ նոր սերունդն էլ ի վիճակի չէր շարունակելու մեծերի սկսած գործը։ Այս շրջանի համարներում արդեն չենք հանդիպում ընթերցողների սիրելի արձակագրուհու՝ Կլարա Կրիաշայի պատմվածքներին, Գրիգոր Շիմայանի (Գերգեյ Շիմայի)՝ հայ բանաստեղծներից կատարած թարգմանություններին, Հակոբ Մարկովիչյանի (Յակաբ Մարկովիչ) հոդվածներին հին Հայաստանի մասին և այլն։ Վերջին տարիներին ամսագիրը փաստորեն հրատարակվում էր միայն ու միայն մի մարդու՝ Սոնգոտյանի վիթխարի ջանքերի շնորհիվ։

Հունգարական պարբերականների մեծ մասը ջերմորեն է արտահայտվել «Արմենիայի» մասին՝ բաժանելով «Կիշ ույշագի» (Բեջթեկ) հայտնած կարծիքը. «...Բոլոր հունգարահայերը պետք է այն կարդան։ Բայց մնացած ընթերցողներն էլ այնտեղ կարող են գտնել հետաքրքրական շատ բաներ...»[32]։ Ամսագրի հարյուրերորդ համարի առաջնորդողում խոսվում է նրա աճող հեղինակության և ժողովրդականության մասին։ «Այն պարբերականները, որոնք մինչև մեր ամսագրի հրատարակությունը դեմ էին մեզ, դարձան մեր ամենահավատարիմ բարեկամները։ Ո՛չ միայն ամսագրերը, այլև շաբաթաթերթերն ու լրագրերը սկսեցին հաճախակի արտատպել մեր հոդվածները ու ամբողջ ձայնով գովաբանել մեզ ու մեր հոդվածները...»[33]։ Իսկ մի ուրիշ հեղինակավոր պարբերական („Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes") ցավով արձանագրում էր, որ նման մի ամսագիր, «զվարճախոսաբար», միայն հունգարահայերն ու հունգարները կարող են կարդալ»[34]։

Հունգարահայ ամսագրին մեծ ուշադրությամբ հետևում

[32] „Hazai lapok nyilatkozatai az „Armeniá"-ról", 1888, № 3, o. 92.

[33] Govrik J. Gergely, Az „Armenia" és Szongott Kristóf, 1895, № 5, o. 144.

[34] „Hazai lapok nyilatkozatai az „Armeniá"-ról", 1888, № 3, o. 92.

էին նաև հայ պարբերականները՝ ըստ արժանվույն գնահատելով նրա ու խմբագրի արդյունավետ գործունեությունը։ Օրինակ՝ Վիեննայի «Հանդես ամսօրյա» անդրադառնալով Խ. Սոնգոտյանի ծանրակշիռ վաստակին, գրում էր. «Եթե Սոնկոդյան չունենար ամենևին ուրիշ արդյունք մը, այս բավական էր յուր ազգն իրեն շնորհապարտ ընելու, զինք հիշատակի արժանի անձ մ՚ընելու»[35]։

«Արմենիային» մոտիկ կանգնած ժամանակակիցները նկատում էին նաև նրա թերիները։ Հունգար հայտնի հրապարակախոս և նշանավոր գրող Էլեմեր Բանյային մի առիթով նկատել է. «Այն կարող էր դառնալ հունգարական գիտական նշանավոր պարբերականներից մեկը, բայց դրա փոխարեն մնաց ո՛չ այնքան բարձր մակարդակով մի ամսագիր... որի մեջ շատ լավ բան կա, բայց և շատ էլ՝ անճշտություններ... Հայագիտության վիճակը Հունգարիայում շատ ավելի լավ կլիներ, եթե հենց սկզբից ամսագիրը դառնար այնպիսին, ինչպիսին նրա կոչումն էր։ Իսկ Սոնգոտյանն իր գիտական աշխատություններում բարձրացրած հարցերի շնորհիվ կարող էր դառնալ ողջ Եվրոպայում հեղինակություն վայելող մի գիտնական...»[36]։

Գիտական լուրջ մակարդակի հասնելու համար «Արմենիային» շատ բան էր պակասում։ Նրա առաջ քաշած հարցերն ու խնդիրները, որ միշտ էլ հետաքրքրական էին և լուծման համար կարիք ունեին փորձառու անձանց, մեծ մասամբ վճռվում էին միապաղաղ և ո՛չ գիտական եղանակներով։ Դրա մեղավորը, սակայն, ժամանակն ու հանգամանքներն էին, նաև այն անբարենպաստ պայմանները, որոնց մեջ հրատարակվում էր ամսագիրը։ Հաշվի առնելով այս ամենը, կարծում ենք, ճիշտ էր հայ ծագմամբ հունգար գրող Լուկա Հարմաթը, երբ Սոնգոտյանին ուղղած նամակում ասում էր. «Այն, ինչ դուք անում եք, սովորական աշխատանք չէ... դա անձնազոհության իսկական

[35] «Հանդես ամսօրյա», 1895, № 1, էջ 11։

[36] „Szongott Kristóf méltatása", 1907, № 2, o. 63–65.

գլուխգործոց է...»[37]։ Ահա ինչու, հունգարահայ ամսագրին արժեքավորելիս, հետազոտողը պարտավոր է ավելի քիչ անդրադառնալ նրա թերություններին և ամենից ավելի խոսել նրա բերած նորույթների մասին, որոնք կարևոր են և հսկայական։

«Արմենիան» բավականաչափ երկարակյաց հանդես էր և անընդմեջ հրատարակվել է ավելի քան քսան տարի, դառնալով լիակատար ձուլման շեմին կանգնած սակավաթիվ հունգարահայության՝ հանուն գոյատևման մղած հերոսական պայքարի դյուցազներգությունը։ Այն հունգարահայության մշակութային ու հոգևոր առաջադիմության գաղափարի արծարծման հիմնական ասպարեզը եղավ և մինչև վերջ մաքառեց նույն այդ նպատակի համար։ Միայն Հունգարիայում այն առաքվում էր ութսունհինգ բնակավայրեր։ «Արմենիան» առանձնապես սերտ կապեր էր հաստատում նաև արտասահմանյան երկրների հայության հետ, յուրահատուկ միջնորդ դառնալով նրանց և հունգարահայության միջև՝ հաղորդակից դարձնելով իրենց առջև ծառացած խնդիրներին ու գաղութի անցուդարձերին։ Ամսագիրն ընթերցողներ ուներ օտարերկրյա ավելի քան քսան քաղաքներում, այդ թվում՝ Մոսկվայում, Թիֆլիսում, Կալկաթայում, Վիեննայում, Կ. Պոլսում և այլն, իր ընթացիկ համարները փոխանակում էր «Հանդես ամսօրյա» (Վիեննա), «Մուրճ» (Տփղիս), «Արա» (Հնդկաստան) և այլ ամսագրերի հետ։

Վերջապես՝ «Արմենիայի» մեծագույն ծառայություններից մեկն էլ բուն Հունգարիայում, երկրի մյուս ժողովուրդներին ու ընթերցող լայն շրջաններին հայ ազգության, նրա պատմության և մշակույթի հետ ծանոթացնելն էր, որ մեծապես նպաստում էր այդ երկրի ժողովուրդների փոխադարձ վստահությանն ու հոգևոր մերձեցմանը։

---

[37] *Harmath Lujza.* Levél a Szerkesztőhöz, 1895, № 4, o. 112.

Գ.

ՀՈՒՆԳԱՐԱՀԱՅԵՐԻ ԳՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայ երգիչնե՛ր, երգեցէ՛ք...»[1]։

1. ՀՈՒՆԳԱՐԱԼԵԶՈՒ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Արմենիա» ամսագրի գրական նյութերի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում տրանսիլվանահայ գրասերների ստեղծագործությունները, որոնց մեջ դժվար չէ լսել հիշյալ գաղթավայրի աշխատավորական խավերի ցավի և ուրախության կանչերը։ Կարծես թե գործ ունենք գրականգեղարվեստական յուրօրինակ վավերագրերի հետ, որոնք լավագույն հնարավորություններ են ընձեռում ուսումնասիրողին որոշելու համար այն հասարակական իրավիճակը, հոգևոր կյանքը, ունեցվածքային դրությունը, ապրելակերպը, հետաքրքրությունների շրջանակը, շահախնդրությունները, հոգսերը և այլն, որ ուներ հունգարահայությունը անցյալ դարավերջին և ներկա դարու սկզբներին։

Բոլոր այդ ստեղծագործություններում (իսկ դրանք գրված են տարբեր նյութերի մասին) շոշափվում են միմիայն «հայկական» խնդիրներ՝ կապված այդ ժողովրդի ու նրա հունգարահայ հատվածի կյանքի ու պատմական բախտի հետ։

Չնայած հունգարահայերի նախնիները շատ հարյու-

1 Ղ. Պատրուբանյան, *Բանաստեղծը, 1902, № 10, էջ 293։*

րամյակներ առաջ թողել էին Անին, իսկ Տրանսիլվանիայի հայ գաղթավայրն էլ ավելի քան 200-ամյա պատմություն ուներ, բայց հայ ժողովրդի պատմական անցյալը դեռ շարունակում էր հուզել հունգարահայերին և սնունդ տալ նրանց գրական ստեղծագործություններին: Այս առումով ուշագրավ է Հակոբ Գոպչայանի (Յակաբ Գոպչա) «Անահիտի տոնին» բանաստեղծությունը, որի առանցքը հեթանոսության և քրիստոնեության պայքարն էր ավատական Հայաստանում: Այս հետաքրքրական քերթվածի սկզբում բանաստեղծն իր երևակայության ուժով կյանքի է կոչում հեթանոս ոճով մի շքեղ հանդես.

Zajgó Tigris, bősz Eufrát',
Tündérvölgyét, termő partját,
Zarándokok' ujjongása,
Örömzaja általjárja.

Halld Ararát' ifjú népe
Örömnapod beköszönte
Anahid' az istenasszony'
Ünnepe lesz e nagy napon.

Ciprusoknak közepette,
Ott áll az ő szoborképe;
Oda, oda, Erizába—
Menj, siess Hajk fia, lánya![2]

Ուխտավորների հրճվանքն ու ուրախ աղմուկը
Լցվել է ահեղագոչ Տիգրիսի և ամեհի Եփրատի
Հավերժահարսերով լի
Հովիտն ու արգավանդ ափերը:

Լսի՛ր դու, Արարատյան աշխարհի ժողովուրդ,
Հասավ քո հրճվանքի օրը.
Այսօր տոնն է
Անահիտ դիցամոր:

² *Gopcsa Jakab.* Anahid ünnepén, 1890. № 6. o. 179.

Սախնիի մեջ
Կանգնած է նրա բագինը.
Այնտեղ, այնտեղ, դեպ Երիգա շտապեցեք,
Որդիք և դուստրեր Հայկի...

Բաբայի թարգմանությամբ այսպես են հնչում բանաստեղծության առաջին տները։ Հաջորդներից իմացվում է, որ այս համընդհանուր ցնծությունից անմասն է միայն մի ծերունի։ Եվ երբ «մեծ արքա և հերոս Տրդատը» հետաքրքրվում է, թե ինչո՞ւ, վերջինս համարձակորեն պատասխանում է, որ ինքը «միակ և հավիտենական աստծո առաքյալն է»։ Թագավորը հրամայում է «խռովարարին» նետել խոր վիրապ, իսկ տոնախմբությունը շարունակել։ Վերջին (17—18) քառատողերով նկարագրվում է, որ ժամանակներ հետո «Վանա ծովի և Տիգրիս գետի ափերին» հաղթանակեցին ըմբոստ ծերունու գաղափարները։

Գոլչայանի բանաստեղծության մեջ ընդամենը մի դրվագ է պատկերված Հայաստանում հեթանոսության և քրիստոնեության պայքարի պատմությունից՝ Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի բախումը, ընդգծելով հայոց առաքյալի խրոխտ անհատականությունը, որն այդպիսի սուրբ տոնի ժամանակ համարձակվում էր վիրավորել հին աստվածներին և դրանով իսկ դեմ դուրս գալ ո՛չ միայն թագավորին, այլև ցնծությամբ արբած ժողովրդին։ Հետաքրքրական ձևով է ներկայացված նաև ծերունու արտաքինը, որի թույլ մարմնի տակ թաքնված են վիթխարի հոգևոր ուժեր.

Erőtelen görnyedt teste;
Ősz haja mint hó csillámlik,
Hó szakálla derekáig[3].
Նրա մարմինն անուժ է, կորացած.
Արծաթ մազերը փայլում են ինչպես ձյուն,
Եվ ձյունե մորուքն իջնում է մինչև ծնկներ...

Գոլչայանը ջանք չի խնայում ստեղծելու քրիստոնեական առաքյալի հերոսական կերպարը, բայց համոզել ընթերցողին

[3] *Նույն տեղում, էջ 180։*

քրիստոնեության բարոյական գերազանցությունը հեթանոսության նկատմամբ՝ նրան չի հաջողվում։

Պատմական Հայաստանից բացի, կար նաև խոշտանգված մի հայրենիք, դեպ ուր հունգարահայ գրողները դարձնում էին իրենց հայացքը։ Նրանց համար ևս այրող խնդիր էր 1890-ական թվականների Հայաստանի ու հայության ճակատագիրը, մանավանդ որ՝ ի պատասխան հայ ժողովրդի ազատագրական շարժումների, թուրքերն արյունալի կոտորած էին սկսել Կարինում, Սասունում և այլուր։

Բանաստեղծության ժանրն այս առումով ամենահարմարն էր գեղարվեստորեն վերարտադրելու հունգարահայության տառապալից մտքերն ու զգացումները իրենց հին հայրենիքում ապրող եղբայրների դառը բախտի հանդեպ։ Այս նյութին հայող ստանավորներում սովորաբար հանդես են բերվում երկու քնարական հերոս՝ հայրենիքից հեռու ապրող պանդուխտը և ճնշված ու հարստահարված ազգի գեղանի դուստրը, որը զոհ էր գնում բռնակալների անասնական կրքերին։ Հունգարահայերի աչքում դրանք երկուսն էլ տառապած ու խոշտանգված Հայաստանի խորհրդանիշներն էին։

Իր սրտակեղեք խորհրդածություններում հայ պանդուխտը համադրում էր միմյանց հայրենիքի փառավոր անցյալն ու արյունալի ներկան և տանջվում Հայաստանին բաժին ընկած անհույս բախտից ու նրա կարոտից։

Hol kékebb az ég, fénylőbb a nap,
Hol bűvösebb a csalogány dala,
Ott van az én édes szülő hazám,
A nagy, a fényes ős Armenia![4]

Ուր բիլ է երկինքը, և արևը շողում է պայծառ,
Ուր հնչում է հմայիչ երգը սոխակի,
Այնտեղ իմ հայրենի երկիրն է,
Հին ու շքեղ աշխարհ Հայաստանը։

---

[4] *Mihályfy Imre,* A bujdosó, 1898, № 7, o. 204.

Թշվառ պանդուխտը մի բաղձանք ուներ՝ գոնե իր աճյունը ննջի հայոց հողում, ու գալիք դարերում Հայաստանը լիներ երջանիկ։ Ուստի և աղոթում էր բարձրյալին. «Ցրիր հայրենի երկնքից մռայլ ամպերը, Դարձրու նրան մեծ ու ազատ... Որ խաղաղությունը թագավորի նրա հողում»[5]*։*

Գերի հայուհու կերպարին, իբրև Հայաստանի խորհրդանիշի, հունգարահայ ստեղծագործողներն ավելի հաճախ էին դիմում, քան պանդխտի։ Այս առումով ուշագրավ է Էմերիկոս Միհալֆիի (Իմրե Միհայֆի) «Ալմիրա» քերթվածը[6]*, որի ստեղծագործական աղբյուրը, թերևս, Դ. Մարտոնի «Արա Գեղեցիկ» ողբերգությունն է և Ռ. Շալլակի բանաստեղծությունները շահի (սուլթանի) հարեմում տանջվող հայ կնոջ մասին։ Շալլակի «Զրույց հայ գեղեցկուհու մասին»*[7]*) չափածո երկը, որն իրականում բալլադ է, սկըսվում է այսպես.*

Anyám mesélte réges régen,
Fejem ölébe nyugovék.

Նստեցնելով ինձ ծնկներին՝
Մայրս պատմել է շատ վաղուց...

Չնայած հնօրյա անցքերից է վերցված նյութը, բայց ընթերցողը կռահում է, որ հեղինակի ցանկությունը այսօրվա մասին խոսելն է։ Շահի (սուլթանի) հարեմում է Էրզրումի ամենագեղեցիկ հայ օրիորդը։ Թեև նա մեծացել էր կարիքի մեջ, իսկ հիմա շրջապատված է ծառաներով և հարստությամբ, բայց այնուհանդերձ անբախտ է, որովհետև սիրական «հայրենիքում իբրև ստրուկ» է ապրում։ Գիշեր-ցերեկ նրան հետապնդում են մղձավանջային տեսիլները. աչքի առջև գալիս՝ կոտորածի սարսափները, այրվող տներն ու սրահար մարդիկ։ Նա չի կարողանում, ավելի ճիշտ՝ չի ուզում խուսափել հայրենիքի ընդհանուր բախտից և ինքնա-

---

[5] *Mihályfy Imre.* A Pákrátidák lánya, 1905, № 1, o. 32.

[6] *Mihályfy Imre.* Almira, 1897, № 1, o. 17.

[7] *Sallak Róza.* Rege a szép örmény leányról, 1895, № 1, o. 9–11.

սպանությամբ վերջ է տալիս կյանքին, դառնալով ջերմ հայրենասիրության ու անզուսպ բողոքի մարմնավորում, իր վերջին խոսքերով մեկ անգամ էլ, կարծես, ցանկանալով ընդգծել այդ.

Erős a vért mit hordozok én,
Soh' se félts árva nemzetem,
Hogy e gaz, bitorló csábszava,
Erőt veszen a szivemen.

Զրահը, որ հագել եմ, ամուր է.
Որբ ժողովուրդ, մի վախենա ինձ համար.
Սուտ գայթակղությունները չեն կարող
Սարկացնել իմ հոգին...

Ավելի հետաքրքրական է Ռ. Շալլակի մյուս բանաստեղծությունը՝ «Գերուհին»։ Եթե «Զրույցի...» հերոսուհին ինքնասպանությամբ վերջ տալով կյանքին՝ պասսիվ պայքարի ուղի էր բռնում, «Գերուհին» շահին (սուլթանին) է դիմում համարձակ ու խրոխտ.

Gőgös betörő hallgass a szómra,
Hogyha a szivem szeretni tudna,
Önnön kezemmel tépném izekre...[8]

Մոլի չարագործ, լսիր ինձ,
Եթե անգամ սիրտս սիրեր քեզ,
Ձեռքովս պատառ-պատառ կանեի այն...

Այս խոսքերի համար նրան բանտ են նետում, բայց կարողանում է փախչել այնտեղից։

Մասնավորապես երկրորդ բանաստեղծության մեջ Շալլակը հաջող է պատկերել հայ կնոջ բարոյական գեղեցկությունը և կանխատեսել պարտությունն օտար զավթիչի, որը հանդես է բերված ամենատարբեր իրադրությունների մեջ՝ զավթողական պատերազմների, սիրո ու ցասման պահերին, և ամենուր՝ անմարդկային էությամբ։ Գերի հայուհու հանդեպ տածած նրա զգացումները ո՛չ թե սիրո արգյունք են, այլ՝ անասնական կրքերի։ Հոգեբանական առումով

[8] *Sallak Róza*, A fogoly leány, 1897, № 1, o. 12.

նույնպես նա ավելի բարդ է, քան առաջին բանաստեղծության համանուն կերպարը: Երկուսն էլ արյունարբու դավթիչներ են, բայց և ահաբեկվում են վտանգի պահին: «Զըրույցի...» շահը (սուլթանը), տեսնելով աղջկա արյունաշաղախ մարմինը, սկսում է դողդողալ ու թվում է նրան, թե լսում է իր կոտորած հայերի մահվան խուլ կանչերը: «Գերուհու» շահը (սուլթանը), ընդհակառակը, մշտապես ներքին սարսափի մեջ է, և հաճախ է պատահում, որ կանխազգում է իր անփառունակ վախճանը: Եվ ինչպես Տալյակն է գրում, այդ պահերին նա թռցնում էր գույնը, կախում գլուխը և «թափառում մեկ դահլիճից մյուսը», իսկ գիշերները «նրա երազները լիքն էին սարսափով»: Բանաստեղծությունն ընթերցողի մեջ ամրապնդում է այն հավատը, որ չնայած ժամանակավոր հաջողությանը, դաժան բռնությունն ու կույր ուժը ի վերջո պետք է պարտվեն:

«Հայոց հարցի» մասին խոսվում է նաև Յուլիուս Մերզայանի ստեղծագործությունների մեջ, միայն թե շոշափվում է ո՛չ թե առանձին անհատների բախտը, այլ՝ ամբողջ ազգության, և այն էլ շատ որոշակի: Օրինակ՝ «Դավանանքների տոնին» բանաստեղծության մեջ[9] երեք խորաններից (լատինական, հունական, հայկական) բարձրացող աղերսանքներից պարզվում է, որ հայկականը գտնվում է ամենաողբալի վիճակում, քանի որ այն ուզում են առհասարակ ոչնչացնել: Իր մեկ այլ բանաստեղծության մեջ էլ («Հայ անկախության դյուցազունները») Յու. Մերզայանը ընթերցողներին ծանոթացնում է հայոց պատմության արյունալի էջերին: Նա հիշեցնում է Զեյթունի ու Սասունի հերոսներին և բանաստեղծությունը եզրափակում մի հարցումով, որը արտահայտությունն էր ազգի ապագայի նկատմամբ հեղինակի ունեցած խոր տագնապի.

Nem mese de nem is álom:
Harcz folyik az örmény tájon...
Vajjon meddig ontja a vért
Az örmény a szabadságért?[10]

---

[9] *Merza Gyula.* A ritusok ünnepén, 1903, № 1, o. 6.

[10] *Merza Gyula.* Az örmény szabadsághösök, 1896, № 4, o. 110.

Հեքիաթ չէ սա և ո՛չ էլ երազ.
Հայոց հողում հիմա կռիվ է...
Դեռ ինչքա՞ն ժամանակ հայերը
Ազատության համար արյուն պիտի թափեն։

Սովորաբար մարդս ջանում է ելք որոնել ամենաանհուսալի վիճակում անգամ, իսկ երբ դա չի հաջողում, սկսում է գեթ հուսալ, որ շուտով կգտնի։ Հունգարահայերը անկեղծորեն ցավակցում էին իրենց եղբայրներին ու խորապես հավատում, որ շուտով ցանկալի բեկում տեղի կունենա նրանց բախտում։ Հայաստանի պայծառ ապագայի այդ վառ հավատն արտահայտվել է Գրիգոր Շիմայանի «Նոր Հայաստան» բանաստեղծության մեջ։ Հեղինակն, իհարկե, հստակ պատկերացում չունի, թե ինչպես պիտի ծնվեր այդ նոր Հայաստանը, և ասում է միայն, թե «լինելու է այնպիսին, ինչպես հին ժամանակներում»[11], այսինքն՝ հզոր ու հռչակավոր, և հայության վերածին տերը պիտի լիներ նաև հունգարահայերի նախնիների հայրենի քաղաքի՝ շքեղ Անու։

Սամոշույվարի ամսագրում Հայաստանը միշտ չէ, որ ներկայացվում էր կարեվեր խոցված մի երկիր։ Էմերիկոս Միհալֆիի երեք ստանավորներում՝ «Թեհրանի վարդը (արևելյան ավանդություն)»[12], «Երեք երիտասարդ (ռոմանս)»[13] և «Աբգար իշխանի երազը (ավանդություն)»[14], չկան ո՛չ արյուն, ո՛չ վերքեր, ո՛չ կոտորած և, ընդհանրապես, ո՛չ էլ գորշ առօրյա։ Պատկերվում է մի հեքիաթային աշխարհ, ուր փթթում է վարդը, և դայլայլում սոխակը, ուր իշխանն երազում է հավերժահարսերի մասին, իսկ չքնաղագեղ օրիորդ Մարիամը մերժում է պարսից շահի ու Թավրիզի մեծահարուստների ձեռքը, որպեսզի սերը նվիրաբերի հայ հովվին, — ուր Անիի դուստր Տիրուհին իրեն երջանիկ է զգում հարսանեկան առագաստում։

---

[11] *Simay Gergely,* Új Örményország, 1895, № 2, o. 36.
[12] *Mihályfy Imre,* Teherán Rózsája, 1895, № 5, o. 141.
[13] *Mihályfy Imre,* Három ifju, 1895, № 5, o. 161—162.
[14] *Mihályfy Imre,* Ábgár herczeg álma, 1895, № 2, o. 46—48.

Այս ոտանավորները հովվերգություններ ենք կոչում, դժվարանալով բացատրել, սակայն, թե ինչ նպատակով է հեղինակն այդ ժանրին դիմել։ Ինչ-որ բան, կարծես, հուշում է դրանց գրության թվականը, որ 1895-ն է, սարսափելի կոտորածների և դաժան հալածանքների տարին Արևմտյան Հայաստանում։ Մեր կարծիքով՝ է. Միհալֆին ցանկացել է այդ ձևով հեռացնել իր միտքը դաժան իրականությունից և «հայոց հարցի» լուծումը փնտրել հեքիաթների անհավատալիորեն գեղեցիկ և մշտապես արդար աշխարհում։

Հայաստան աշխարհի պատմական բախտին նվիրված այս և մյուս ստեղծագործությունները ցույց են տալիս, որ հայ ժողովրդի ահավոր ողբերգությունը հունգարահայոց համար դարձել էր շարունակական տագնապի և հոգեկան անբուժելի վերքերի մշտական աղբյուր։ Եվ երբ ուշադրությամբ վերընթերցում ենք դրանք, ապա առանց դժվարության նկատում ենք վերոհիշյալ ստեղծագործությունների և XIX դարի երկրորդ կեսի հայ հայրենասիրական քնարերգության թեմաների ու արտահայտչամիջոցների ընդհանրությունները։ Օրինակ՝ պանդուխտի կերպարը և մահմեդական տիրողների գերության մեջ տառապող հայորդիների հայրենաբաղձ կարոտը, պապ ու ծաղկուն հայրենիքի մասին նրանց մտապատրանքները, իբրև մշտական գործող անձեր ու տրամադրություններ, հանդես են բերված ու նկարագրված նաև «Արմենիային» նախորդած ու նրա օրերում ստեղծված հայ քնարերգության մեջ։ Հիշենք Ղ. Ալիշանի «Պլպուլն Ավարայրի», «Հրազդան», Ռ. Պատկանյանի «Հազարեն մեկը», Ս. Շահազիզի «Գերի հայի աղոթքը» և այլ գործեր, որոնք չէին կորցրել իրենց թարմությունն ու կենսականությունը նաև 80—90-ական թվականներին։ Հիշենք, այնուհետև, Մ. Պեշիկթաշլյանի երգած «վասն հայրենյաց մեռած» հերոսներին, Ռ. Պատկանյանի «Հույս» ոտանավորում փայփայված «Նոր Հայաստանի» կերպարը, հայրենիքի փարթամ, դրախտային բնությունը՝ գովերգված Հովհաննես Հովհաննիսյանի բանաստեղծություններում։

Թեպետև XIX դարի վերջերին և XX-ի սկզբներին Տրան-

սիլվանիայի հայերը, որոնք վաղուց հրաժեշտ էին տվել իրենց ազգային տարազին, նաև՝ դավանությանը, հայկական սովորություններից քիչ բան էին հիշում, մոռացել էին անգամ լեզուն, բայց այնուամենայնիվ՝ կանգնած լինելով լիակատար ձուլման շեմին, չարչարում էին իրենց միտքը հունգարական իրականության մեջ հայկական ազգային գծերի պահպանման անհուսալիության հարցով: Մեռնող գաղթականության այս հոգեվիճակը և հարազատ ժողովրդի կործանման անվերջանալի թախիծը իրենց արտահայտությունն են գտել բնարական մի քանի հատվածներում, որոնք տպագրվել են դարձյալ «Արմենիայում»: Ուշագրավ է այդ առումով Գրիգոր Ֆեկըրյանի (Գերեո Ֆեյեր) «Աղէկ կը հիշեմ...» բանաստեղծությունը: Հեղինակն ասում է, թե դեռ մանկուց հաճախելով եկեղեցի՝ զգացել է շարունակ մի թախիծ, որ պարուրել էր բոլորի հոգին, զգացել, սակայն չի կարողացել հասկանալ, թե ինչն էր դրա պատճառը: Անցել են տարիներ, ու միայն հիմա կարողացել է գտնել հայերի այդ «համընդհանուր վշտի» բացատրությունը:

A fájdalomban elmerülten
Mindenki sirt, csak én örültem,
Nem fogva fel a gyász okát;
Panaszát az örmény daloknak,
Örök buját a templomoknak –
Nem értém sok sok éven át.

De a mit lelkem meg nem értett,
Befutva már egy ifju éltet, –
Előttem áll a mély titok:
„Armeniának nincs jövője"...
Vesztünk halálunk hirdetője –
Az áni-i szél sir, zokog[15].

Սուզվելով ահավոր ցավի մեջ՝
Բոլորը լալիս էին, ես էի միայն ուրախ,
Չէի հասկանում, թե ինչից է վիշտը,

[15] *Fejér Gerö,* Emlékszem jól..., 1895, № 4, o. 113.

Ինչո՞ւ են հայոց երգերն հեկեկում,
Ինչո՞ւ հավիտենական թախիծն է իջել եկեղեցուն.
Տարիներով այդ չէի հասկանում:
Բայց մանկության տարիները վաղուց անցել են.
Եվ ինչին հասու չէր երեխան,
Գաղտնիք չէ այր մարդու համար.
«Հայաստանի վերջն արդեն հասել է...»—
Հեկեկում է Անիից փչող քամին՝
Գուժկանը մեր մահի ու կործանման...

Հասուն տաղանդի կնիք է կրում նաև «Վիշտ» խորագրով մեկ այլ բանաստեղծություն, որի հեղինակը, ցավոք, հայտնի չէ։ Այն հյուսված է իբրև երգ, որի նմաններն անչափ տարածված են XIX դարի հունգարական քնարերգության մեջ և որոնք, իրենց սկիզբն առնելով ժողովրդական բանահյուսությունից՝ զարգացման բարձրակետի էին հասել Շանդոր Պետեֆիի (1823—1849) ստեղծագործության մեջ՝ «Ամպերը սահում են...» («Ereszkedik le a felhő...», *1846), «Թուխպը պատում է...»* («Száll a felhő...», *1846) և այլն։*

«Վիշտը» կառուցված է զուգահեռականության սկզբունքով, որ հաճախ է կիրառվում անգիր բանահյուսության մեջ, երբ փորձ է արվում բնության երևույթների կամ առարկաների զուգահեռականությամբ վերարտադրել մարդկային զգացումներ.

Miért van az, hogy a felhő
Eltakarja a napot?...
Miért van az, hogy szivemen
Ugy érzem a bánatot?...

Felhő s bánat hasonlitnak:
Mindakettő oly sötét;
Ám a felhő hamar tünik,
De a bánat—öröklét.

Ինչի՞ց է, որ ամպը,
Ծածկում է արևը...

Ինչի՞ց է, որ սիրտը
լցվում է վշտով...
Ամպ ու վիշտ քույր ու եղբայր են,
երկուսն էլ խավար,
Բայց ամպը ցրվում է,
իսկ վիշտը՝ մնում...

Առաջին չորս քառատողերում մատնանշվում է միայն, թե ինչ նմանություններ կամ տարբերություններ կան արեգակը ծածկող ամպերի և մարդկային սիրտը պարուրող վշտերի միջև, ու միայն վերջին, հինգերորդ քառյակում է բացահայտվում վշտերի բուն պատճառը.

Miért is hát ez a bánat,
A mely kinoz, fojtogat?
Tudjátok meg:
Örményhontól messze—távol
Bolyongok az ég alatt![16]

Ինչի՞ց է, որ այս վիշտը
տանջում, խեղդում է ինձ։
Իմացե՛ք.
Ես թափառում եմ երկնի տակ,
Հեռու, շա՜տ հեռու, իմ Հայաստանից...

Անանուն քերթողի այդ «թափառականը» թեև հայ պանդուխտ է, բայց անհավանական չէ նաև, որ նկատի առնված լիներ (գուցե և ամենից առաջ) Հայաստանի մասին թախծող հունգարահայը։

Լիակատար ձուլման գիտակցությունը խորապես ցնցում էր Տրանսիլվանիայի հայությանը։ Այդ է վկայում Լադիսլաուս Ըստեկարյանի (Լասլո Էստեգար) «Վերջին հայը»[17] արձակ բանաստեղծությունը կամ եղերգությունը։ Ծննդավայրից հեռու ապրող հեղինակը մինչ երանության մեջ խորհրդածում է ծննդյան տոների մասին, որ անցկացնելու է

---

[16] *E.*, Bánat, 1898, № 9, o. 263.
[17] *Esztegár László*, Az utolsó örmény, 1894, № 1, o. 15—18.

Հայրենի տանը՝ Սամոշույվարում, հարազատների շրջանում, հանկարծ հիշում է, որ բոլորը չէ, որ պիտի նստեն տանական սեղանի շուրջ. չէ՞ որ գերդաստանի թանկագին շատ անդամներ վաղուց մեռել են։ Խոհերը նրան հանգեցնում են ամբողջ ընտանիքների և ժողովուրդների մահվան մտքին։ Նա երևակայում է, թե ինչպես գուշակները՝ ճակատագրի այդ վիճակագիրները, հիմա արդեն, երբ հերթը հասնում է Սամոշույվարի հայերին, կարող են ասել. «Միթե կարելի էր երևակայել, որ շատ տարիներ հետո պիտի գա մեկը, որը կարողանա ասել, թե ինքը վերջին հայն է»։ Եվ հեղինակը նկարագրում է այդ վերջին հային, որը մի ղառամյալ ծերունի է։ Հեռավոր վայրերից նա եկել է հայրենի քաղաք՝ Սամոշույվար, և ուզում է հրաժեշտ տալ հնամենի ու հարազատ վայրերին, որպեսզի կարողանա աչքերը հանգիստ փակել։ Քաղաքում այլևս հայեր չկան, հայոց լեզուն չի լսվում անգամ եկեղեցում։ Միայն Տրանսիլվանիայի հայոց առաջնորդ Վրդարյանի հուշարձանն է, որ հիշեցնել է տալիս այդ երկրամասի երբեմնի բնակիչներին։ Վերջին հայն իր քայլերն ուղղում է այդ կողմը։ Փողոցում ցուրտ է։ Ձմեռային մռայլ երեկոյան բոլորը տուն են շտապում՝ կարեկցանքով նայելով հուշարձանի հիմնաքարերն համբուրող այդ ծերուկին և չհասկանալով ամենևին նրա խոր ու անփարատելի վիշտը։

Գրիգոր Ըստկարյանի (Գերգեյ Էստեգար) «Երազիս տեսա...»[18] բանաստեղծության մեջ էլ հունգարահայոց ապագա բախտի վերաբերյալ տագնապները փոքր-ինչ այլ ձևով են փարատվում։

Առաջին տողերում դեռ հուսահատության կանչերն են հնչում.

Álmodám, hogy otthonomban elhagyatva ültem én,
Remegéssel gondolkodva az örmény nép jövőjén.
Már azt hivém: végfeloszlás, semmisülés és halál
Éri most a kis nemzetet, a mely hazát itt talált.

---

[18] *Esztegár Gergely*, Álmodám, hogy..., 1895, № 4, o. 140.

Nem lehet, hogy annyi *viszaly, balszerencse,* sors után
Igy pusztuljon el örökre: a létharcz nehéz utján!
. . . .
. . . . az örmény végső kincsét veszti el
Drága gyöngyét—anyanyelvét—magyarral cserélte fel.

Երազիս տեսա, որ մենակ ու դողդող՝ նստած եմ տանը
Եվ մտորում եմ հայոց ապագայի մասին.
Թվում է, քայքայում, կործանում ու մահ է սպասվում
Այդ փոքրիկ ազգին, որն այստեղ հայրենիք գտավ.
Անկարելի է, *որ այդչափ* դավերից *ու* վշտերից *հետո*
Այսպես նա մեռնի՝ հանուն գոյատևության մղվող
ծանր կռիվներում...
. . . .

...Հայերը կորցրին իրենց վերջին հարստությունը.
Իրենց թանկարժեք մարգարիտը. իրենց մայրենին փոխեցին հունգարերենի հետ...

Եվ նա այս ծանր վիճակից դուրս գալու ելքը կարծես գտնում է՝ նետվել գիրկը «բարի մայրիկի՝ Հունգար հայրենիքի», որը սակայն իր հերթին հայերից պահանջում է նոր զոհողություն՝ նրանց լեզուն.

Századok viharja után az elbolygott gyermeket
Átöleltem,—hazát adtam,—hol *bölcsőt* és *sirt* lelhet!
Magyar haza az én nevem, s az ezer év ünnepén
A gyermek is magyar legyen, ki a magyar földön él.

Երկար դարերի փոթորիկներից հետո ես գրկեցի իմ
տատանդական լավակին,
Պարգևեցի նրան հայրենիք, որ կարող է դառնալ
և՛ օրրան, և՛ գերեզման.
Իմ անունն է հայրենի Հունգարիա, և իմ հազարամյա
տոնին
Հունգար հողում ապրող որդին թող մեծանա հունգար...

Հեղինակը ջանում է հավատացնել ընթերցողին, իհարկե, նաև իրեն, որ արդար է հայոց բախտի այդօրինակ լուծումը, դրա համար օգտագործելով նաև Ֆ. Կեոլչեու «Հիմն» և Մ. Վերեշմարտու «Բարբառ» ստեղծագործություն-

ների՝ հունգար հայրենասիրական քնարերգության այդ երկու անման քերթվածների առանձին արտահայտություններ ու բառեր (քաղվածքներում դրանք ընդգծված են)։

Այո՛, հունգարահայերը կարոտում էին Հայաստանին, բայց Հունգարիան նրանց համար արդեն այնքան հարազատ էր դարձել, որ չէին կարող նրա ազատության ու փառքի համար արյուն չթափել։ Եվ պատահական չէ, որ Հունգարիայի վերջին դարերի պատմության շատ էջեր իրենց հայրենանվեր գործերով ու սխրանքով զարդարում են հայերը։

Հայրենի եզերքը ավելի նեղ հասկացություն է, քան հայրենիքը։ «Եզերք» նշանակում է մի վայր, ուր ծնվել է մարդս և անցկացրել իր մանկության տարիները։ Սամոշույվարը հայրենի եզերք էր Հունգարիայով մեկ սփռված հայության համար։ Քաղաքի մասին գրված կամ նրան նվիրված բազմաթիվ ստանավորներում հնչում էին նրանց սերը և կարոտի զգացումները՝ հեռու տեղային ճշան ու մեծամիտ հայրենասիրությունից։

Ամենից ավելի Ռ. Շալլակն է անդրադարձել այդ հույզերին, հայրենի քաղաք Սամոշույվարի կարոտին, քաղաք, ուր անցել էր նրա անհոգ մանկությունը, և ծնվել առաջին սերը․

Visszavágyik a lelkem
A vonzó, édes tájra,
Hol lelkem az örömnek
Utait mind bejárta...[19]

Հոգիս տենչում է
Հայրենի անուշիկ վայրեր,
Որոնցով ձգվել են
Ուրախության բոլոր ճամփաները...

«Հայրենի եզերքի» թեմայով գրված ամենահաջողված երկը, սակայն, Վարդան Աֆղանյանի (Տիվադար Տեորեոշ) «Սամոշույվար» խորագրով քնարական խոհրդածու-

---

[19] *Sallak Róza.* Részlet a multból, 1898, № 1, o. 16.

թյունն է. «Ամենայն անգամ, երբ դեմքս շոյում են պարնանային արեգակի առաջին ճառագայթները, ու տեսնում եմ Մարոշի սառն ալիքների փայլը, մտածում եմ իմ հայրենի քաղաքի մասին»[20]*: Այդպես վերհիշելով այն ամենը, ինչ բնորոշ էր քաղաքին ու թանկ իր համար՝ իր ջերմ վերաբերմունքը, իր թաքուն հույզերն է արտահայտում դրանց նկատմամբ: Նկարագրում է քաղաքի մերձակա բլուրները, ջինջ երկինքը, իրենց տնակը՝ դռանը կապած Հեկտոր շանը, եկեղեցու ավագ խորանը զարդարող Ռուբենսի հոյակապ նկարը, գիմնազիայի տղաների սիրած հայկական երգերը: Հիշում է անգամ, որ քաղաքային գերեզմանոցում թաղված է Շանդոր Ռոժայի (ժողովրդական վրիժառու, 1813—1878) գլխատված մարմինը, իսկ բանտում արգելափակված է եղել Մաննասեշը, որը հավատացնում էր ամենքին, թե Սիբիրի կայարի հանքերում տեսել է Պետեֆիին: Հեղինակն անսահման սեր է տածում դեպի Սամոշույվարի բնակիչները, որոնք «գիշերները ննջում են պարզ, ազնիվ մարդկանց խաղաղ քնով»*[21]*:*

Տրանսիլվանիայի հայ գրասերները միայն բանաստեղծական պատկերներով չէ, որ խանդավառվել են: Նրանց գրիչը գործի է դրվել նաև արձակի բնագավառում՝ «Արմենիայի» էջերում պարբերաբար հրապարակ հանելով մի ամբողջ շարք կարճ պատմվածքներ: Բայց դրանցից հետաքրքրական են այն գրվածքները միայն, որոնք, սխալված չէինք լինի, եթե ընդհանուր անունով կոչեինք պատկերներ Տրանսիլվանիայի հայության կյանքից՝ նկատի ունենալով ազգագրական դրվագների առատությունը դրանցում: Վ. Աֆղանըստանի «Սավատուր» պատմվածքը, որ հենց համանման ենթավերնագիր էլ ունի («Նորավեպ Տրանսիլվանիո հայոց կյանքից») և ժամանակին թարգմանվել է հայերեն ու տպագրվել Կ. Պոլսի «Արևելքում» (թարգմանիչ Հ. Ջիլինգարյան), ամբողջացնում է հիշյալ գաղթավայրի հայազգի Քվազիմոդոյի և էսմերալդայի անսովոր պատմությունը: Տղան մի

---

[20] *Törös Tivadar*, Szamosújvár, 1888, № 5, o. 149.

[21] *Նույն տեղում, էջ 159:*

հայ խանութպանի մոտ գործակատար է՝ Ասլաթուր անունով, աղջիկը՝ Նանիկոն, տիրոջ դուստրն է, խանութը տեղացիները կոչում են «Միթրա» (բառացի՝ եպիսկոպոսական խույր, թագ)։ Նրանից հետո, երբ հարբած թղթամոլները գիշերը սպանում են իրենց խաղընկեր խանութպանին, որբ մնացած Նանիկոյի խնամքն ընկնում է Ասլաթուրի վրա։ Ու մի օր խեղանդամ Ասլաթուրի մեջ բռնկվում է սերը։ Իր հերթին Նանիկոն էլ սիրահարված է Պարի ազգանունով, թույլ բնավորության տեր մի երիտասարդ բժշկի, որը քեֆերի մեջ վատնել էր հոր փողերը ու անգամ մոռացել հարազատ ծնողին։

Ի վերջո, տեսնելով, որ Նանիկոն լուրջ սիրահարված է Պարիին, Ասլաթուրն «օգնում» է նրանց՝ վճարում բժշկի պարտքերը, անգամ հարսանիք անում ու նույն օրն էլ հրաժեշտ տալով՝ հեռանում տնից, պատճառաբանելով, թե գնում է Սևանավանքի տոնավաճառ։ Երրորդ օրը հայտնվում է կառապանը և պատմում, որ Ասլաթուրն ինքնասպանություն է գործել ինչ-որ գինետան ախոռում։

«Արմենիայում» տպագրված գրական-գեղարվեստական երկերի շարքում իր կառուցվածքով ու լեզվով, կերպարներով ու բնավորություններով «Ասլաթուր» պատմվածքը առանձնահատուկ տեղ է գրավում։ Հեղինակը կենտրոնական գործող անձին ներկայացրել է բազմազան առումներով։ Ասլաթուրը և՛ ճարպիկ ու գործերից խանութպան է, և՛ աղնիվ ու բարի մարդ, որը մոլեռանդորեն հավատում է աստծուն, և՛ մի այնպիսի երիտասարդ, որն իր ողջ էությամբ ենթարկվում է ճակատագրական սիրո զգացմանը։ Պատմըվածքի ամենահաջող մասերից է Ասլաթուրի արտաքինի նկարագրությունը. «Խիտ, սև մազերը կիսով ծածկել էին նրա ճակատը։ Կարմրատակած, շարժուն դեմքին աճել էր փարթամ, սև մորուք, որը նա զգզում էր կարմրակարմիր ձեռքերով, երբ անգործ նստած էր լինում։ Աչքերի մեջ երևում էին ազնվություն ու բարություն։ Երբ ծիծաղում էր, այլանդակ երեսը բոլորովին փոխվում էր, և փայլատակող աչքերի մեջ ցոլանում էր նրա պարզ հոգու հանդարտությունը։ Քաղաքի բնակիչներն ասում էին, որ նա սատանայի պես ճար-

պիկ ձեռքեր ունի։ Նրա խանութում այնքան սուրճի հատիկներ չկային, ինչքան նախանձողներ ուներ. աղապարոններն անգամ հաճախում էին «Միթրա», չնայած խանութի երկարությունը հազիվ մի քանի քայլ լիներ»[22]։

Հոգեբանական վերլուծումների առումով ուշագրավ են նաև այն դրդապատճառները, որոնցից ելնելով՝ Սավատուրը ճակատագրորեն անհասկանալի էր համարում իր սերը Նանիկոյի հանդեպ։ Նա համոզված էր նախ՝ որ ինքն իբրև ընչազուրկ, անարժան է տիրոջ աղջկա սիրուն, և ապա՝ որպես աստվածավախ մեկը, եթե տարվեր կնոջով, պիտի հեռանար Բարձրյալից։ Որքան էլ տարօրինակ է, Սավատուրն, հոգում բորբոքված սիրո կրակը հանգցնելու համար, միջոցներ է որոնում հեռուներում, չմտածելով սակայն, որ գլխավոր պատճառը իր խեղանդամությունն է, որ կարծես չէր էլ անհանգստացնում նրան։

Տրանսիլվանահայ փոքրիկ քաղաքը, ուր ծավալվում են դեպքերը, նույնպես նկարագրված է մեծ վարպետությամբ։ Այստեղ ևս կարելի է տեսնել գավառական քաղաքին բնորոշ դեպքեր ու դեմքեր, այստեղ էլ բնակիչները, գրեթե բոլորը, ճանաչում են իրար, նախանձում միմյանց բախտին, հետաքրքրվում ուրիշների կյանքի մանրուքներով, բամբասում։

Ցնցող ու տպավորիչ խոսքերով է նկարագրված այն իրավիճակը, երբ քաղաքով մեկ տարածվում է Նանիկոյի հոր սպանության լուրը.

«Պահակի հառաչի հետ, որ խռովեց վաղորդյան անդորրը, ողջ փողոցում, մեկը մյուսի հետևից բացեցին պատուհանները, և մարդիկ քնատ դեմքով՝ սարսափի մեջ շրջվեցին։ Քաղաքով մեկ լսվում էր միայն մի փսփսոց. «Հեքիաթ Կրիկորին սպանել են Կեռվեչեշում...»[23]։

Քաղաքի հատկանշական տիպերից ամենահաջողվածները, թերևս, քայլող լրատու Մանի Պերընավն (գույն՝ շատախոս Մանի) ու տիրացուն (կանտոր) են, որոնք հուլար-

---

[22] *Törös Tivadar*, Àszvádur, 1891, № 10, o. 307.

[23] Նույն տեղում, էջ 308—309։

կավորությունների ժամանակ բամբասում էին սրան-նրան։

Վ. Աֆղանատանի պատմվածքը աչքի է ընկնում նաև նրանով, որ այստեղ ուշադրություն էր դարձված տրանսիլվանահայության ամենատգետ խավերի վրա, որոնց ընդհանրապես անտեսում էին «Արմենիայի» մնացած աշխատակիցները։ Դեռ մանկությունից Սավատուրին բաժին էին ընկել չարքաշ վիճակը, կարիքը, տառապանքները։ Այդ թշվառ հոգուն տիրություն էր անում նույնքան թշվառ մի կին՝ Մանուշակը։ Նա ձեռագործ էր անում, իսկ փոքրիկ խեղանդամ Սավատուրը անտառում ընկած դրանք վաճառում էր։ Ճիշտ է, այս ամենին պատմվածքում հատկացված է չնչին տեղ, բայց խեղճերի կյանքից վերցված այդ հատուկենտ պատկերները, այնուհանդերձ, խիստ ուշագրավ են և բազմանշանակ։ Բանն այն է, որ ինչպես գրում է հեղինակը, թշվառ ու խեղանդամ մանկանը օգնության ձեռք մեկնողը դարձյալ թշվառն է, և որ աղքատի մահն էլ դարձյալ խեղճ է ու անզույն, ինչպես և նրա կյանքն առհասարակ։

Վերջապես, անհատականացված է նաև առանձին կերպարների խոսքը, ելնելով նրանց հասարակական դիրքից, ազգային պատկանելությունից և անձնական հատկություններից։ Օրինակ՝ չահել ռումինուհիները փսփսում են իրար ականջի. «Հարճիկ Սավատուրը սիրում է գեղեցկուհի դոմնիզորային»[24]։ Ընդգծված բառերը հատուկ են Տրանսիլվանիայի ռումիններին և նշանակում են աշխատասեր մարդ և օրիորդ։

XIX դարավերջին և XX դարի սկզբներին տրանսիլվանահայության կենցաղում դեռ կենսունակ էին ու գործում էին որոշ հին սովորույթներ ու ավանդներ, որոնց, բնական է, չէին կարող չանդրադառնալ տեղական գրողները, եթե ձգտում էին գաղթաշխարհի կյանքի հատկանշական կողմերը վեր հանել կամ իրենց դատավճիռը կարդալ։ Ուշագրավ է այս առումով Կլարա Կրիտշայի «Անեծքը» պատմվածքը[25], որի հայերեն թարգմանությունը տպագրվել է նաև «Բազ-

[24] Նույն տեղում։

[25] *Kritsa Klára*, Az átok, 1890, № 1, o. 11—20, №2, o. 41—49.

մավեպում»[26]: Հայոց հնամենի սովորույթով՝ դեռ մանուկ, ծնողները նշանում են իրենց զավակներին՝ Լուկաշ Անիշորին և Մարգիտ Մալնաշիին: Եվ երբ հարսանիքին միայն հաշված օրեր էին մնում, մի աղքատ ստարագի (սեկլեր) հյուսն դիմում է հայ քահանային, որպեսզի նա համոզի Լուկաշին, որ չամուսնանա: Բանն այն է, որ Լուկաշը գայթակղել էր հյուսնի աղջկան, որն արդեն երեխա էր սպասում: Մարդասեր քահանան խոսք է տալիս կատարել անբախտ հոր խնդիրքը. իր մոտ է հրավիրում փեսացուին: Սա խոստովանում է, որ ինքը չի սիրում հարսնացուին և սիրահարված է սեկլերի աղջկան, բայց վախենում է դեմ գնալ ծնողների կամքին: Մեծ դժվարությամբ խափանվում է պսակը: Պարզվում է նաև, որ Մարգիտն էլ սիրում է մեկ ուրիշի: Անզրդվելի է մնում միայն վերջինիս հայրը, որը կարծելով, թե ավանդական կարգը ոտնահարելու միակ մեղավորը քահանան է, որոշում է վրեժ լուծել, սկսում է նրա մասին զրպարտչական լուրեր տարածել, քաղաքացիներին լարել նրա դեմ և, ի վերջո, հարկադրել, որ հեռանա քաղաքից:

Հեղինակի ուշադրության կենտրոնում է եղել ոչ թե երիտասարդների ճակատագիրը, այլ այն բախումը, որ սկսվել էր հնի ու նորի, ավանդականի ու բնականի միջև: Այդ պատճառով էլ Մալնաշին՝ հին սովորույթների և ավանդական բարոյախոսության այդ համառ կողմնակիցը, կերպարը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում:

Արձակագրուհուն, ըստ ամենայնի, հաջողվել է ստեղծել տրանսիլվանահայի մի կերպար, որը ճակատագրի ու հնավանդ սովորույթների հարկադրանքով՝ հոգով ու մարմնով դարձել է անասելիորեն սահմանափակ: Հերոսը չի հասկանում, որ տվյալ դեպքում՝ ղեկավարվելով կամ վարվելով ավանդական կենսափորձի թելադրանքով, թույլ է տալիս մի այնպիսի անմարդկային արարք, որը դժբախտություն է բերում շատերին: Ընտանիքի պատվի ու անաղարտության նրա պատկերացումները սխալ են, անճիշտ՝ նաև նրա հա-

[26] «Բազմավեպ», 1893, № 2, էջ 97—100, № 5, էջ 244—248, № 8, էջ 391—395 և № 9, էջ 488—492:

շիվները, որ իբր թե, եթե ավանդական կարգից շեղվի, ապա դրանով կանարգվեն և՛ իր ընտանիքը, և՛ ինքը՝ ողջ կյանքում մնալով անպատիվ։ Թվում է, հոգեբանորեն պատճառաբանված են նրա արարքները ընդդեմ քահանայի։ Խեղված բարոյականությունը միայն կարող է դաժանություն ծնել։

Կ. Կրիտչայի ստեղծագործության մեջ, հին ու նոր բարոյական ըմբռնումների բախումից բացի, շոշափվում են և ուրիշ խնդիրներ։ Դրանցից մեկը խառը ամուսնության հարցն է, որ սկսվել էր տրանսիլվանահայերի ու երկրամասում բնակվող ազգությունների՝ սեկլերների, ռումինների, սասերի, հրեաների ու մյուսների միջև և հետևանք էր մասնավորապես XIX դարի վերջերին բացառապես հայ ազգաբնակչություն ունեցող բնակավայրերի ազգագրական կազմի լուրջ փոփոխության ու հայերի թվի զգալի անկման։

Խառը ամուսնությունից խուսափելը Տրանսիլվանիայի հայության համար նախազգուշական միջոց էր ընդդեմ ձուլման և ուծացման։

Թեպետև այս պատմվածքում Անիշորի և օտարազգի աղջկա ամուսնության խնդիրը գլխավոր հարցերից է, սակայն գավառական քաղաքի մյուս բնակիչների արարմունքներից դժվար է ենթադրել, թե դա նրանց համար անցանկալի երևույթ է։

«Արմենիայի» ամենաժողովրդական արձակագրուհին՝ Կ. Կրիտչան, «Անեծքից» բացի ունի ուրիշ ստեղծագործություններ էլ։ Նրա «Գեղեցիկ Վարդուհին» պատմվածքը գրված է այսպես կոչված «ձեռնտու ամուսնությունների» թեմայով և հաջողությամբ վեր է հանում բուրժուական հասարակության մեջ մարդկանց սոցիալական ու հանրային վիճակի փոփոխությունները[27]։

Հանդիպադրվում են քույրեր՝ Ռոժան (Վարդուհին) և Մարգիտը (Մարգարիտ), որոնք իրենց մտավոր ու անձնական բարեմասնություններով կատարյալ հակոտնյաներ են։ Ո՛չ գեղեցիկ, բայց անչափ բարի Մարգարիտը հասնում է երջան-

---

[27] *Kritsa Klára*. A szép Rózsa, 1890, № 6, o. 169–179, № 7, o. 201–207, № 8, o. 244–252, № 9, o. 264–272.

կության, գտնում կյանքի իսկական ընկեր, սակայն գեղեցկուհի, բայց փառամոլ Վարդուհին կործանվում է իր իսկ թեթևամտության պատճառով։ Նա ձգտում էր կոմսուհի դառնալ ու մի փեսացու էլ գտնում է, բայց կոմսն այլ նպատակներ ուներ՝ գայթակղել գեղեցկուհուն, որովհետև հայ հասարակ խանութպանի դուստրը չէր կարող նրա կինը լինել։ Ի վերջո, խաբված ու լքված Վարդուհին մեռնում է իբրև խելագար։

Պետեր Կրիտշայի «Ջանում է հոգատար հայրիկը...» բանաստեղծության մեջ էլ ծնողները թեպետ հասնում են իրենց նպատակին, բայց դրա համար շատ թանկ են վճարում։ Աղջկա համար ճարում են «հաջող» փեսացու, բայց հարսանիքից հետո նա բոլորովին մոռանում է հորն ու մորը, իսկ եթե մեկ-մեկ էլ բարձր շրջաններում հանդիպում է նրանց, ապա ամաչում է ճանաչել։ Նրա վարմունքը հանդեպ ծնողներն այնքան անշնորհակալ է, որ մինչև իսկ զարմացնում է ազնվական ամուսնուն։

Այս երկու ստեղծագործությունները սակայն, գրված էին ո՛չ այնքան հանրային կյանքի հակասությունները երևան բերելու համար, որքան բարոյախոսական քարոզ կարդալու, թե մարդ պետք է գոհ լինի իր բախտից և ոտքերը վերմակից ավել չմեկնի։ Դա շատ պարզ երևում է Պ. Կրիտշայի ոտանավորի եզրափակիչ տողերից՝ ուղղված ընթերցողներին.

Mivelt lelkü örmény hölgyek!
Legyen intő példa nektek,
Hogy ily bünbe ne essetek![28]

Բարեկիրթ հայուհինե՛ր,
Թող ձեզ համար սա դաստիարակիչ օրինակ ծառայի,
Որ այսպիսի տհաճ վիճակի մեջ չընկնեք...

---

[28] *Kritsa Péter*, Munkál a jó apa, 1897, № 12, o. 383.

Իրականում, սակայն հաշվենկատ ամուսնությունը ո՛չ թե բարոյագիտական խնդիր էր, այլ՝ սոցիալական։ Հայ հարուստ առևտրականները անհագ ցանկություն ունեին մուտք գործելու հունգար ազնվականության շրջանները։ Դրա համար նրանք նյութական զոհողություններ էին անում հօգուտ Հաբսբուրգների, փոխարենն ստանալով ազնվականի տիտղոս ու հողեր կամ ջանում էին ազգակցական ու խնամիական կապեր հաստատել հունգար վերնախավի հետ։

Իր ազգագրական հենքով և հունգարահայոց առօրյա կյանքում պահպանված հնավանդ ծեսերը վերարտադրելու առումով հետաքրքրական է մեկ այլ գործ ևս՝ Կ. Կրիտշայի «Եվ ո՛չ մեկը վնասակար չէ»[29] երգիծական պատմվածքը։ Միամիտ, սակայն ժլատ խանութպանի և նրա խորամանկ կնոջ մասին հյուսված այս պատմությամբ հեղինակին հաջողվել է ստեղծել խոսքի և գրության կոմիզմի հաջող օրինակներ։

Հունգարալեզու հայ գրականության սույն վերլուծական տեսությունն ավարտելուց առաջ կուզեինք մի քանի խոսք էլ ասել «Արմենիայի» 1896 թ. նոյեմբերյան համարում «Սամոշույվարյան լրաբեր» բաժնում տպագրված այն երգի մասին, որի հեղինակն է Վ. Աֆղանստանը։ Երգը գրված է նախորդ տարվա նախընտրական եռուզեռի առիթով ու թեպետ մի առանձին գեղագիտական արժեք չի ներկայացնում, բայց հետաքրքրական է իբրև հունգարահայ գաղութի կյանքի վավերագիր.

Örményül prédikál a pap.
Mandátumot csak Molnár kap;
Jöhet ide a muszka czár
Nem numerál itt a krajczár!

Քահանան քարոզում է հայերեն,
Մանդատը միայն Մոլնարին է տրվում.
Թե անգամ ռուս ցարն էլ խնդրի,
Կրայցարն այստեղ արժեք չունի։

---

[29] *Kritsa Klára.* Egyik sem ártalmas, 1892, № 1, o. 24—27, № 2, o. 51—54.

Երկրորդ տողի ակնարկը վերաբերում է Անտոն Մոլնարյանին, որը Սամոշուլվարի պատգամավորն էր անկախների կուսակցության մեջ և «Արմենիա» հանդեսի եռանդուն աշխատակիցը, իսկ չորրորդ տողի իմաստն այն է, թե կաշառքը չի կարող դեր խաղալ ընտրությունների ժամանակ, ինչպես առևտրի մեջ գրոշանոց կրայցար մանրադրամը։

«Արմենիա» ամսագրում վերոհիշյալներից բացի տպագրվել են նաև բազմաթիվ այլ բանաստեղծություններ, որոնց գրության համար ազդակ են ծառայել հունգարահայ նշանավոր դեմքերի հոբելյանները («Հայ ազգի հպարտությունը» ոտանավորը՝ նվիրված 1848—49 թթ. հունգարական ազատագրական շարժման զորավար Ճանոշ Ցեցյանին, «Ազնվագույն հոգի» ոտանավորը՝ նվիրված հայտնի բժիշկ Իշտվան Մալինին և այլն), հիշյալ գաղթավայրի համար մեծ նշանակություն ունեցող զանազան անցուդարձերը (Օր.՝ «Հայոց թանգարանը», «Հայոց եպիսկոպոսությունը», «Օգնեցե՛ք...», որով հրավեր էր ուղղվում հունգարահայերին՝ նվիրաբերումներ անելու հօգուտ թուրքական տիրապետության տակ հեծող իրենց եղբայրների և այլն)։

«Արմենիա» ամսագրում տպագրված գրական-գեղարվեստական նյութերը մեծ թիվ են կազմում և, հարկավ, վերլուծվածներով չեն սպառվում։ Եղած հսկայածավալ նյութից ընտրված են միայն այնպիսիք, որոնք ձևի կամ բովանդակության տեսակետից որոշ հետաքրքրություն են ներկայացնում, որոնց մեջ հունգարահայերը խոսում ու պատմում են իրենց մասին, բնութագրում կամ ի ցույց դնում իրենց գործելակերպն ու սովորույթները։

Շնորհիվ այդ ստեղծագործությունների՝ ընթերցողի առջև բացվում է մի յուրօրինակ աշխարհ, որն ունի ինքնատիպ դեմք, կոլորիտ, միջավայր։ Այդ աշխարհի բնակիչներին՝ հեղինակներին ու իրենց հերոսներին, մենք տեսնում ու շոշափում ենք համապատասխան գրվածքների տողամիջերքին, իբրև կենդանի ու շոշափելի մարդիկ իրենց խոհերով ու առանձին արարքներով։ Մեզ ըմբռնելի են դառնում նրանց մտածողության ձևերն ու կեցության այլևայլ կողմերը, նաև

այն հայկական երանգներն ու յուրահատկությունները, որոնցով աչքի էր ընկնում Տրանսիլվանիայի հայությունը, որը շարունակում էր պահպանել իր դիմագիծը XIX դարավերջի և XX-ի սկզբների Հունգարիայի մնացած ծայրագավառներում:

ՀԱՅԱԼԵԶՈՒ ՔԵՐԹՎԱԾՆԵՐ

Բացի հունգարալեզու արձակ ու չափածո ստեղծագործություններից, «Արմենիա» հանդեսն իր էջերում տպագրել է բազմաթիվ բանաստեղծություններ՝ հեղինակային կամ ժողովրդական, որոնք, որ կարևոր է ներկա դեպքում, գրված են մայրենի լեզվով, մի դեպքում՝ բավականաչափ մշակված արևմտահայերենով ու մյուս դեպքում՝ Տրանսիլվանիայի հայ բարբառով:

Հեղինակային քերթվածները, բացառությամբ մեկի, հունգարահայ նշանավոր գրող ու գիտնական Ղուկաս Պատրուբանյանի գրչի արգասիքներն են:

Ինքը՝ Ղուկաս Պատրուբանյանը, չափազանց ինքնատիպ և ուշագրավ դեմք է հունգարական իրականության և ընդհանուր լեզվագիտության պատմության մեջ՝[30] իբրև հեղինակավոր հնդեվրոպաբան, իբրև խմբագիր ու աշխատակից միջազգային լայն ճանաչում գտած լեզվաբանական հանդեսների՝ „Sprachwissenschaftliche Abhandlungen" (հրատարակվել է 1897-ից)[31], „Indogermanische Forschungen", „Zeitschrift für deutsche Wortforschung", «Բանասեր» և այլն, իբրև Բու-

---

[30] Ղ. Պատրուբանյանն ուսանել և ավարտել էր Բուդապեշտի համալսարանը, այնուհետև հայոց լեզվի ու պատմության գիտելիքները խորացրել Վիեննայի Մխիթարյանների մոտ: Սերտ կապերի մեջ էր Եվրոպայում գործող հայագիտական համարյա բոլոր կենտրոնների հետ: Իր դոկտորական դիսերտացիայում հայոց լեզվի ընձեռած տվյալների օգնությամբ նա քննել ու լուծել է հնդեվրոպաբանական մի շարք առանցքային հարցեր:

[31] Ղ. Պատրուբանյանի խմբագրած այդ ամսագիրը գիտական աշխարհում վայելում էր բարձր հեղինակություն: Նրան աշխատակցում էին հռչակավոր լեզվաբաններ Հայնրիխ Հյուբշմանը, Հերման Օստհոֆը և ուրիշներ:

պեշտի համալսարանի հայոց լեզվի և գրականության պրո-ֆեսոր (պաշտոնի է կոչվել 1900 թվականին):

Խնդրո առարկա բանաստեղծությունները գրված և հրա-տարակված են «Արմենիայի» 1902—1903 թթ. համարներում, ընդ որում, թվով 16 այդ ոտանավորները երբեմն ստորագրվել են հենց հայերեն գրերով, երբեմն էլ՝ լատիներեն տառա-դարձությամբ: Որպես կանոն՝ յուրաքանչյուր բանաստեղծու-թյուն ուղեկցվում է ստորատակի համառոտ ծանոթություննե-րով, նաև՝ բառացի թարգմանությամբ կամ բովանդակության վերաշարադրմամբ հունգար լեզվով, որոնց հեղինակը ամ-սագրի խմբագիր Խ. Սանդոյանն է:

Պատրուբանյանի քերթվածների խղճամիտ քննությունը իրավունք է տալիս ասելու, որ նա հիմնավոր ու բազմազան գիտելիքների տեր լինելուց՝ բանաստեղծական արվեստի ու մայրենի լեզվի նրբություններին, իր ժողովրդի հին ու նոր մշակույթին և քաղաքական պատմության քաջատեղյակ լի-նելուց բացի, եղել է նաև նուրբ հոգու տեր մարդ և ապրել ու տառապել է մարդկության հոգսերով:

«Արմենիայում» հրատարակված նրա բանաստեղծու-թյունների մեծ մասի (թվով տասը) ստեղծագործական շար-ժառիթը հարազատ ժողովրդի նկատմամբ տածած ջերմ զգա-ցումներն են, ապա և՝ սրտակեղեք մորմոքն ու անհանգստու-թյունը հայության ճակատագրի համար: Այո՛, Պատրուբան-յանը կոչումով գիտնական էր և ո՛չ բանաստեղծ, բայց, այ-նուամենայնիվ, եթե փորձենք տալ նրա տաղանդի գնահատա-կանը, ապա նրան պիտի կոչենք „poetus doctus“, և ո՛չ թե՝ „poetus natus“:

Նրան գրական-ստեղծագործական աշխատանքի մղողը հայության թշվառ ու ողբերգական ներկան էր և XIX դ. երկ-րորդ կեսի հայ հայրենասիրական շարժումն ու քնարերգու-թյունը, որոնք հարկադրում էին բոլոր նուրբ հոգիներին և հայրենիքի ցավով տառապողներին հանգավոր խոսքի դիմե-լու:

Պատրուբանյան մարդու և հայրենասերի ուշադրությու-նից չէին կարող վրիպել Արևմտյան Հայաստանում թուրք տիրապետողների հրահրած ցեղասպանության հետևանքով

հայությանը բաժին ընկած աղետավոր ներկան և սարսափներով լի ապագան, այսինքն՝ այն իրադարձությունները, որոնք հուզում էին նույն ժամանակների բնաշխարհիկ հայ գրողներին։ Բացի այդ, խառնվածքով էլ, որպես գիտնական-բանաստեղծ, հոգեհարազատ լինելով մասնավորապես Ալիշանին ու Նալբանդյանին, ապա և՝ Պեշիկթաշլյանին ու Ռ. Պատկանյանին, Պատրուբանյանն իր ոճով ու դավանանքով էլ հետևում ու ձայնակցում էր հայ քնարերգության ռոմանտիկական ուղղության հուշակավոր դեմքերին։

Նրանց նման՝ Պատրուբանյանն էլ երևակայության ուժով իրար էր հակադրում հայ հայրենիքի երբեմնի վեհ ու շքեղ պատկերը ժամանակի ավերակներին ու ամայությանը և այդ ճանապարհով առավել ընդգծում և հուզիչ դարձնում ազգի ու հայրենիքի ողբերգությունը։ Ամենուրեք, ուր նայում է բանաստեղծի քնարական հերոսը, տեսնում է ավեր ու մահվան սարսափներ (դրանք անձնավորված են փոթորկի պատկերով), մոռացված շիրիմներ և անցյալի ողբալի հիշատակներ։ Ամեն կողմից նրա ականջին են հասնում լացի ու հոգեվարքի ձայներ, մեռնողների աղեկտուր կանչեր, աղոթք ու հառաչանք.

Սպանված են քաջ-տղաներ,
Ամեն տեղ կան գերեզմաններ,
Հողը կարմիր է արյունեն...[32]

Ուր մեկ անգամ հանգիստ տեղ կար,
Փոթորիկ է միշտ, անդադար։
Հայաստան է այս երկիրը,
. . . .

Երկայն կուլե հոն փոթորիկ,
Ձոհ է նորա որդի, աղջիկ,
Երբ կըսեսուն, ղավակ չունին,
Ծնողքները մեծ ցավ ունին[33]։

[32] Ղ. Պատրուբանյան, *Գերեզմաններ*, 1902, № 4, էջ 104։
[33] Ղ. Պատրուբանյան, *Փոթորիկը*, 1902, № 6, էջ 162։

Այս մռայլ, բայց և անպաճույճ տողերի մեջ դժվար չէ նշմարել Ալիշանի «Լուսնկայն գերեզմանաց հայոց», Պեշիկթաշլյանի «Փոթորիկ», Պատկանյանի «Ինձ մի սիրիր», Նալբանդյանի «Մուսայից մուսային» և Շահազիզի «Հովիտ տրտմության» բանաստեղծությունների ուղղակի արձագանքները, նրանց բնորոշ ոճերն ու պատկերները։

Հիշյալ ստեղծագործողների պատկերավորման հնարանքներն ընդօրինակելուց և նրանց քերթվածների ընդհանուր ոգուց լիցք առնելուց բացի, Պատրուբանյանը հետևել ու յուրացրել է նաև նրանց հայրենասիրական քնարերգության հատկանշական մոտիվները։ Նա նույնպես խանդավառված է գարնան ու գարնանային ծաղիկների շքեղ տեսարաններով, թռչունների թովիչ երգով և արևգակի կենսատու ճառագայթներով («Ծաղիկներ», «Գարունը, «Ուրախություն»), վերարտադրում է մարդու ինքնաբուխ հրճվանքն ու անզուսպ ոգևորությունն այդ ամենը տեսնելու և վայելելու պահերին.

Աշխարհքը ի՞նչ սիրուն է,
Երբ ամառն կամ գարուն է...

Նրա քերթվածներում եւ գարնան հրճվալից ձայների ու բնության շքեղ տեսարանների կողքին հայտնվում են Արևմտյան Հայաստանի ու հայության ողբալի կացության հիշատակներ։

Հայաստան, քո ծաղիկը
Բացվող չէ. փոթորիկը
Մահ կը բերե, ոչ ծաղիկ...[34]

Ողջ չըկա, և գարուն չի գա,
Միշտ ձմեռն է սրտերու...[35]

Մայր երկրի քնարերգակների համար այս խոսքերը գուցե և շատ սովորական են, և համոզվելու համար բավական է թերթել Ալիշանի «Հայոց աշխարհիկ», Պատկանյանի «Գարնան երգ» ու «Վերջին գարուն» բանաստեղծու-

[34] Ղ. Պատրուբանյան, Ծաղիկներ, 1902, № 9, էջ 263։

[35] Ղ. Պատրուբանյան, Գարունը, 1902, № 5, էջ 136։

թյունները, բայց այն, որ դրանց արձագանքը լսվում է մայրենի լեզուն համարյա մոռացած և հոգեվարք ապրող մի գաղթավայրում, անչափ գնահատելի են դարձնում և՛ հունգարահայ քերթողին, և՛ այդ գաղթօջախի քերթությունը։

XIX դարի երկրորդ կեսի հայ քաղաքացիական քնարերգության նախասիրած ու տարածված արտահայտչական միջոցներից մեկն էլ բնության երևույթների և հայրենիքի վիճակի հակադրությունն է, որ ցցուն է արտահայտված վերոհիշյալ բանաստեղծների երկերում, մասնավորապես Մ. Պեշիկթաշլյանի «Աշուն», «Երգ հայրենի» ոտանավորներում, որտեղ զուգահեռ է անցկացվում մի կողմից կործանվող հայրենիքի և մյուս կողմից աշնան մեռնող բնության միջև։ Պատրուբանյանի «Ողախություն» ոտանավորի քնարական հերոսը ևս մտովի խոսքի բանվելով օդում ազատ ճախրող թռչունների հետ, անհուն կսկիծով նկատում է, որ բնական նույն ձգտումն ունեցող իր ազգակիցներին, սակայն, բաժին է ընկել ահավոր օրհասը.

Դուք ազատությունը
Ինչպե՞ս կսիրեք,
Ազատ օդի մեջ
Ի՞նչ երջանիկ եք։

Հայերն ալ ազատ
Էին մեկ անգամ...
Հիմա է Հայաստան
Դիակ անզգամ[36]։

Հայ քաղաքացիական քնարերգության մեջ շատ հոլովվող անուններից են Անին ու Արարատը (կամ Մասիսը)՝ իբրև խորհրդանիշներ պատմական Հայաստանի, հայերի քաղաքական ազատության և անկախ պետականության, որոնց բանաստեղծական պատկերումներին կարելի է հանդիպել շատ հայ գրողների երկերում՝ «Մասիսս սարերուն» (Ալիշան), «Ամպամած Մասիս» (Պատկանյան), «Ա՛նի, Ա՛նի, ա՜խ, Ա՛նի...» (Աբովյան), «Անի քաղաք նստեր՝ կուլա...» (Արա-

[36] Հ. Պատրուբանյան, Ողախություն, 1903, № 4, էջ 103։

բառյան) և այլն։ Բայց այս սիմվոլները հանրապետության, նաև Պատրուբանյանի համար, ունեին մեկ այլ գրավչություն ևս։ Հանրապետության շրջանում հարատևող ավանդական զրույցների հավաստմամբ՝ Անին նրանց նախնիների երբեմնի բնօրրանն էր, ամենասուրբ ու նվիրական վայրն աշխարհում։ Մասսյաց լեռների ողբը և լացող Անու արցունքները, միաժամանակ, ողբն ու հառաչանքն էին ողջ հայության՝ ծագած միևնույն վշտից և ուղղված միևնույն նպատակին։ Տառապած հայրենիքի պատկերը վերստեղծելու համար Պատրուբանյանն ևս այդ երկու կերպարներին է դիմել, նրանց փրկության ու վերաշինման շուրջ խորհել ու տվայտել.

Եվ մեծ սգո մեջ է
Լեռնը Արարատ,
Որպեսզի հայը
Հոն դեռ չէ ազատ։
Եվ կուլա Անի,
Կուլա անդադար,
Որպեսզի տեր է
Հոն տաճիկ-թաթար։

Թռչուններու ձայնը
Լսե, Լուսավորիչ,
Աղոթելով ըլլաս
Նորեն ազատիչ։
Եվ հայոց ազգը
Նորեն ըլլա ազատ,
Որ ուրախ ըլլա
Անի և Արարատ...[37]

Թուրք բռնապետության լծից Հայաստանի ազատագրումը Պատրուբանյանի նվիրական բաղձանքն էր։ «Հայոց հարցը» նա քննում էր մարդասիրության հայեցակետից առհասարակ, և գտնում, որ Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական գավառներում տիրող դրությունն ու օրինականության ոտնահարումները աղաղակող հակասության մեջ են մար-

---

37 Նույն տեղում։

դու ազատության իրավունքի հանրահայտ սկզբունքների հետ, վերջինների կոպիտ խախտման ու բացորոշ անարդարության արդյունք են։

Այս եզրահանգումները գեղարվեստորեն մարմնավորվել են Պատրուբանյանի «Հարյավ ի մեռելոց...» բանաստեղծության մեջ։ Քրիստոսի հարությունը հուշակելով որպես մարդկության փրկության համար մղվող պայքարի հաղթական ավարտ և համընդհանուր ցնծության ազդակ ողջ մարդկության ու բնության համար, բանաստեղծը նկատում է նաև, որ ըստ այդմ պետք է որ արմատապես փոխվի մարդկության, ինչպես նաև հայերի ու Հայաստանի ճակատագիրը.

Հայաստան... քո համար ալ
Պիտի գա հարություն,
Հայերը ալ ազատ են...
Ուրախ լեր, մարդկություն[38]։

Կապել «հայոց հարցը» բարձրյալի հետ, Հայաստանն անվանել Գողգոթա, իսկ ազատությունը՝ սրբազան, Փրկչի հարությունը հուշակել «ճշմարտության» ու «ազատության» վերածնման տոն,—այսօրինակ այլաբանություններն ու համեմատությունները հազվադեպ երևույթ չէին Պատրուբանյանին ժամանակակից ու նախորդ շրջանի բնաշխարհիկ քերթողների ստեղծագործություններում ևս։ Հիշենք Շահազիզի «Ազատ մարդ», «Ջոհեր», Պեշիկթաշլյանի «Ի նահատակութիւն Վարդանանց» ոտանավորները և այլն։ Բայց «Հարյավ ի մեռելոցն...» ուշագրավ է ուրիշ առումով էլ։ Հեղինակն այստեղ հանդես է գալիս բարձր բարոյականության և իսկական մարդասիրության ջատագով և տվյալ հայեցակետից քննելով հայ ժողովրդի բախտը՝ համարձակորեն ընդգծում է, որ հայերն իբրև ընդհանուր մարդկության մեկ մաս, արժանի են ազատության թագավորության մեջ բարգավաճելու։

Պատրուբանյանը մինչև իսկ մտովի տեսնում էր այդ պահը և իր «Երազը» բանաստեղծության մեջ վերստեղծում ազատ Հայաստանի հմայիչ պատկերը, որը հայկական հայ-

38 Վ. Պատրուբանյան, Հարյավ ի մեռելոց..., 1903, № 5, էջ 136։

ընտանիության գաղափարն արծարծողների շարունակական երազանքների կրկնությունը կարծես լիներ.

Ազատված էր հայ ժողովուրդ,
Նորեն կար թագավոր հայոց.
Ազգասեր, բարեպաշտ ոգով
Վառված էր հին ամեն ծոցւ

Ազատ Հայաստանի երևակայական պատկերը ստեղծել են նաև Պատրուբանյանի պաշտելի հայ բանաստեղծները՝ Նալբանդյանը («Երազ») և, մանավանդ, Շահազիզը («Այն երազ էր...», «Երազ», «Լևոնի վիշտը» և այլն)։ Որքան էլ նրա քերթվածը վերջիններիս կրկնությունը լիներ, այնուամենայնիվ իր անմիջականությամբ ու պարզությամբ գրավում էր ընթերցողին։ Երազն ինքնըստինքյան հոգեկան անհանգիստ վիճակ է ենթադրում, իսկ երազի միջոցով մարդու միտքն ու հոգին շարունակ փաթաթվող խոհերի ու կերպարների վերարտադրությունը, ինչ խոսք, ձևոք է բերում ներգործման մեծ ուժ։ Էլ չենք ասում, որ հեղինակն այդ ճանապարհով ազատվում է խնդրի որոշակի լուծումից, մի բան, որ ամենևին էլ հեշտ գործ չէր։

Իր նախընտրած հեղինակի՝ Շահազիզի քերթվածների նման, Պատրուբանյանի «Երազի» մեջ ևս շոշափելի ու իրական ոչինչ չկա, ամեն ինչ երևակայական է, գծված հին հայ հայրենիքի փայլուն արքաների ու օրինապահ հպատակների կաղապարների օրինակով։

Այդ է հաստատում նաև բանաստեղծության եզրափակիչ տողերում հանդիպող ազատ օրվա ու հայրենիքի փառաբանությունը.

Ե՞րբ կուգաս, ով ծաղիկ երկնային,
Շատ սպասյալ հայ ազատություն...[39]

Երազանքը՝ երազանք, բայց անուրախ ներկան վերափոխելիս պետք մատնանշել ավելի շոշափելի ազատ ու իրավակարգ, որոշակիորեն ասել, թե ե՞րբ և ի՞նչպես պետք թևածի ազատությունը հայ հայրենիքում։ Պատրուբանյանն,

---

[39] Գ. Պատրուբանյան, Երազը, 1902, № 8, էջ 233։

ինչ խոսք, դժվարանում էր այդ որոշակի խոսքն ասել և իր նախորդների հետևությամբ կրկնում էր.

Ձենք գիտեր, ինչ պիտի ըլլա
Աղքատ[40] հայ ազգին ապագա[41]։

Ուշի ուշով քննելով Պատրուբանյանի մյուս ստեղծագործությունները, նկատում ենք, որ որքան էլ անորոշ լիներ հայության գալիք օրը, այնուամենայնիվ նա հավատում էր դրան և իր ողջ հույսն ու սպասումները կապում երիտասարդության հետ.

Պարտեզի մեջ ծաղիկներ
Են սիրուն պատանիներ։
Վարդեր են Հայաստանի,
Հաջորդներ մեծ Վարդանի...[42]

Ազգային հերոս Վարդան Մամիկոնյանի անունը հնուց ի վեր պաշտամունքի առարկա էր դարձել ողջ հայության համար և մի որոշ չափով ձեռք էր բերել խորհրդանիշի արժեք։ Վարդան ասելով հասկանում էին անձնուրաց ու վսեմ հայրենասեր, մեծ հայ։ Նրա կերպարին անդրադարձած հայ դասական գրողների երկերում ևս նույն ըմբռնումն է նկատվում։ Հիշենք Խ. Աբովյանի «Առ նահատակութիւն սրբոց Վարդանանց», «Նահատակաց մերոց կայան...», Ղ. Ալիշանի «Պլպուլն Ավարայրի», Մ. Պեշիկթաշլյանի «Ի նահատակութիւն Վարդանանց», Ռ. Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը», Շահազիզի «Երգ մեռնող հայրենասերի» բանաստեղծությունները։ Բնական է միանգամայն, որ Պատրուբանյանի համար ևս Ավարայրի ճակատամարտի

[40] Հայ քաղաքացիական բնարերգության մեջ Հայաստան և հայ անունների մշտական մակդիրներն են՝ անտեր, դժբախտ, անբախտ, անհայր, թշվառ, հալածված, խղճուկ և այլն։ Պատրուբանյանի բառապաշարը, ըստ էության, շատ համեստ է, նա օգտագործում է աղքատ մակդիրը (աղքատ հայեր—«Գարունը», աղքատ հայ ազգը—«Արևը»), որ պարզորոշ հունգարիզմ է, քանի որ հունգարերենում այդ բառը «szegény» նշանակում է և՛ աղքատ, և՛ անբախտ։

[41] Ղ. Պատրուբանյան. *Արևը*, 1902, № 7, էջ 127։

[42] Ղ. Պատրուբանյան, *Երիտասարդը*, 1903, № 6, էջ 180։

Հերոսը դարձել է ազատության խորհրդանիշ և հայրենասիրական ամենանվիրական զգացումների մարմնավորող։ Վարդանի կերպարին Պատրուբանյանն անդրադարձել է «Արևը» բանաստեղծությամբ՝ ընդգծելով այն միտքը, թե թուրքական լծից Հայաստանը կարող են փրկել միմիայն նոր Վարդան Մամիկոնյանները.

Պիտի գա մեկ անգամ վայրկյան,
Երբ նորեն հաղթող կը լինի
Դյուցազն մը, նոր Մամիկոնյան։

Եվ բանաստեղծը սրտի թրթիռով սպասում էր այդ բաղձալի օրվան, որովհետև նոր Հերոսի ծննդյան պահը արդեն վաղուց հասել էր.

Շղթաները համբերելու
Բավական էր մարդիկներու՝
Մեռանիլ կամ ազատվելու...
Ազատություն հայ սրտերու...[43]

«Արևը» և «Գարունը» քերթվածները Պատրուբանյանի քաղաքական ու հայրենասիրական քնարերգության լավագույն արտահայտություններն են, ըստ որում վերջինի մեջ նա փարում է զենքի ուժով փրկության և ազատության հասնելու գաղափարին։ «Գարունը» ունի նաև ենթավերնագիր՝ «Արևելյան հայերու ազգային երգը»[44], որն իր բնույթով ու բովանդակությամբ մերձենում է Շ. Պետեոֆիի «Ազգային երգին», ուր հունգար մեծ քերթողն ասում է.

Ստոր է նա, ողորմելի,
Ում համար թանկ է ավելի
Չնչին կյանքը իր սեփական,
Քան հայրենիքն ու ապագան։

43 Ղ. Պատրուբանյան, Գարունը, 1902, № 5, էջ 136։

44 «Արևելյան հայերուն» ասելով՝ Պատրուբանյանը նկատի ուներ Թուրքիայի տիրապետության տակ հեծող հայությանը, քանի որ Արևմտյան Հայաստանը՝ ելնելով Հունգարիայի աշխարհագրական դիրքից, դառնում է Արևելյան։

Երդվե՛նք աստծուն հունգարների
Առհավետ,
Մենք աշխարհում ճորտ չենք լինի
Այսուհետ:

Շղթան շողում է, բայց սրի
Շողն ավելի լավ կփայլի,
Դե, էլ ինչո՞ւ շղթա կրել.
Թո՛ղ շողշողան նորից սրեր:
Երդվե՛նք աստծուն հունգարների
Առհավետ,
Մենք աշխարհում ճորտ չենք լինի
Այսուհետ[45]:

Պատրուբանյանը Պետեֆիին է հետևում նաև տաղաչափությամբ, որի «Ազգային երգը» գրված է հունգարական ժողովրդական երգերի գույնով, որոնց նմուշներին հանդիպում ենք այդ ժողովրդի հին գրականության մեջ և կոչվում են «հին, ութվանկյան»: Վերջինս վանկաշեշտային ոտանավոր է և սովորաբար կազմված է լինում երկու չորսվանկյան ոտքից: Ահա այսպես.

Fényesebb a/ láncnál a kard 4+4
Jobban ékesíti a kart, 4+4
És mi mégis/ láncot hordunk! 4+4
Ide veled,/ régi kardunk![46] 4+4

Նույն համաչափությունն ու չափն է առկա նաև Պատրուբանյանի գործում.

Շղթաները | համբերելու 4 + 4
Բավական էր | մարտիկներու... 4 + 4

Այո՛, «Գարնան» վրա զգացվում է ազդեցությունը հունգարական հեղափոխական հռչակավոր երգի, որ գրել էր

[45] Պետեֆի, Բանաստեղծություններ (թարգմ. Վ. Դավթյանի), Երևան, 1957, էջ 170—171:

[46] *Petöfi Sándor*, Nemzeti dal, Petöfi Sándor összes költeményei, Bp. 1959, o. 403.

Պետեոֆին 1848 թ. մարտի 14-ին, հունգարական բուրժուական հեղափոխության նախօրեին։ Բայց մոլորություն կլինի «Գարնան» մեջ փնտրել նույնպիսի հեղափոխական գաղափարներ կամ ապստամբության հրավեր, որով ներթափանցված է «Ազգային երգի» յուրաքանչյուր տողը։ Հեղափոխությունը Պատրուբանյանի էությունը չէր, և իր ամենահամարձակ քերթվածներում անգամ նա մնում էր նույն մարդասերն ու հայրենասերը։

Ղ. Պատրուբանյանն, ինչպես սկզբից էլ նշվեց, լավատեղյակ էր քերթության արվեստին, բայց թե ստեղծագործական առօրյայում ինչպես են գործադրվել տեսական այդ գիտելիքները, գեղարվեստական ի՞նչ արտահայտչամիջոցներ ու ձևեր է նա օգտագործել և կամ բանաստեղծական ի՛նչ նախասիրումներ ունեցել, դրա պատասխանը կարող են տալ միայն նրա քերթվածները։ Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում «Աշխարհքը» և «Ճամբորդություն» բանաստեղծությունները, որոնք իրավունք են տալիս ասելու, որ նրանց հեղինակին, հայ ռոմանտիկ քնարերգությունից բացի, հետաքրքրել են նաև գուսանականաշուղական խաղերն իրենց գեղջկական պարզությամբ ու փիլիսոփայությամբ, եզրահանգումներով ու դատողություններով՝ մարդու կոչման, կյանքի ու մահվան և այլ հավիտենական խնդիրների վերաբերյալ։ Մարդկությանը միշտապես հուզող այդ հարցերը Պատրուբանյանն ես լուծում է ժողովրդական իմաստության ու կենսափորձի օգնությամբ, աշուղ-բարոյախոսների հետևությամբ։ Ժողովրդական պարզ դատումների և կյանքի հարափոփոխ էության ըմբռնման արտահայտությունները սրանով նրան մոտեցնում են դարավերջի հայ իրականության մեջ սկիզբ առած այն շարժմանը, որի հստակ ձևակերպումը տվել էր Թումանյանը՝ «Դեպի ժողովուրդը, դեպի բնությունը՝ հայ գրողներ...»[47]։

Այսպիսով՝ ժողովրդայնության այս շարժումը Պատրուբանյանն արձագանքում էր յուրովի, ժողովրդի արվեստին, ժողովրդական գուսանների ոճին, դատողության ձևերին ու կենսափիլիսոփայությանը նմանվելով։

---

[47] Տե՛ս «Թումանյանը քննադատ», Երևան, 1939, էջ 3։

Գեղջուկ իմաստասերների ու գուսան-բարոյախոսների նման Պատրուբանյանն ևս «Աշխարհքը» ոտանավորում ավելի շատ պատմում է բախտի, աշխարհի և, ընդհանրապես, մարդկային բնավորության փոփոխականության և խաբուսիկ էության մասին.

Կապրինք աշխարհքի մեջ
Այսօր դեռ երջանիկ,
Բայց վաղը ինչ կուգա.
Չենք գիտեր դեռ հիմիկ։

Ու թեպետ երջանկությունը կարող է երբեմն շատ շուտ երես դարձնել մարդուց, վերջինս, սակայն, չպետք է կորցնի լավ օրվա հույսը.

Կը հուսանք ամեն լավ,
Երջանիկ ապագան,
Կը մաղթենք, որ օրերը
Միշտ բախտավոր ըլլան...[48]

«Ճամբորդություն» մեջ էլ Պատրուբանյանը կյանքն համեմատում է երկար ճանապարհի հետ, որը ծայր առնելով օրորոցից՝ ձգվում է մինչև մահվան փոս, մինչև գերեզման։

Ճամբորդություն է կյանք...
Օրորոցի մեջ.
Կըսկըսինք ճամբան
Եվ միշտ առաջ կերթանք.
Եվ ճամբորդության
Վերջ է գերեզման։

Ոչ ոք չգիտի, թե երբ է գալու իր մահը, բայց հաստատ է մի բան. վաղ թե ուշ այն գալու է.

Շուտով կուգա մահը,
Կամ այսօր, կամ վաղը։

Պատրաստվեցեք երթալ
Անտեն, մարդիկներ...[49]

48 Վ. Պատրուբանյան, *Աշխարհքը*, 1903, № 2, էջ 50։
49 Վ. Պատրուբանյան, *Ճամբորդություն*, 1903, № 3, էջ 56։

Թվում է, թե վերոհիշյալ գործերը գրելիս Պատրուբանյանն աչքի առաջ է ունեցել մասնավորապես Ջիվանու՝ դարավերջերին մեծ ժողովրդականություն վայելող «Կուգան ու կերթան» կամ «Ձախորդ օրերը...» հայտնի խաղը, որը շատերին է գլխահակ խորհել տվել կյանքի վաղանցիկության մասին և թևավորել լավ օրերի հույսով.

Ձախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան.
Դառն ցավերը մարդու վրա չեն մնա երկար,
Որպես հաճախորդ, շարվե-շարան, կուգան ու կերթան[50]։

Գ. Պատրուբանյանի գրչին են պատկանում նաև մի քանի հոգևոր բանաստեղծություններ, քնարական սեռի մի տեսակ, որ բավական լայն տարածում ուներ XIX դարի երկրորդ կեսի եվրոպական գրականության մեջ՝ կապված հասարակական մտքի մեջ օրավուր իրեն զգացնել տվող կրոնական հոսքերի ու փիլիսոփայության հետ։ Մասնավորապես 90-ական թվականներին հունգար իրականության մեջ իրեն զգացնել էր տալիս նեոկաթոլիցիզմը, իսկ կաթոլիկական ժողովրդական կուսակցությունն ավելի ու ավելի հասարակական մեծ կշիռ էր ձեռք բերում։ Արվեստի ու գրականության մեջ նոր հոսանքներ էին դառնում միստիցիզմն ու տրանսցենդենտալիզմը։

Հունգարահայ բանաստեղծի «Գիշերը»[51], «Հարություն»[52] և «Երկինքը»[53] քերթվածներում, որոնք արձագանք են գրական հիշյալ հոսանքի, ինչպես նաև Ալիշանի «Բնունի» և «Տէրունի» բանաստեղծական շարքերի, խոսվում է աստծու համեմատությամբ մարդ արարածի չնչինության ու անօգնականության մասին, նրա մեջ հավատ ներարկվում անդրաշխարհյան երանության ու երջանկության վերաբեր-

---

50 «Ջիվանու քնարը», Երևան, 1959, էջ 35։
51 Գ. Պատրուբանյան, *Գիշերը*, 1902, № 11, էջ 334։
52 Գ. Պատրուբանյան, *Հարություն*, 1902, № 12, էջ 355։
53 Գ. Պատրուբանյան, *Երկինքը*, 1903, № 1, էջ 16։

մամբ, որին, ի վերջո, հասնելու էր տառապած մարդկությունը:

Ինչպե՞ս էր, ընդհանրապես, հունգարահայ այս գրական գործիչն ըմբռնում բանաստեղծի դերն ու կոչումը ազգային խնդիրներում և հանրային կյանքում. այս հետաքրքրական հարցի պատասխանը մեզ տալիս է Պատրուբանյանի «Բանաստեղծը» ոտանավորը, որն իրավամբ կարելի է նրա հանգանակ-հավատոն կոչել.

Բանաստեղծը ակն ունի
Եվ բերան է մեկ ազգի.
Որ եթե մեծ վտանգ է՝
Գուշակելով կը խոսի:

Շարունակության մեջ բանաստեղծին համեմատելով մարգարեների հետ և անդրադառնալով նրան ծնած ու սնած ազգի, ավելի ճիշտ ցեղի՝ հայության նկատմամբ ունեցած պարտականություններին, հեղինակն եզրափակում է.

Հայ երգիչնե՛ր, երգեցե՛ք
Երգ մը՝ տխուր, ցավալի,
Գուշակելով նոր դար մը
Երջանիկ և շնորհալի...[54]

Գ. Պատրուբանյանը գրել է նաև հանգավոր ուղերձ «Ոտանավոր մը առ պ. Բասմաջյան» խորագրով: Կարապետ Բասմաջյանը «Բանասեր» հայագիտական հանդեսի խմբագիր-հրատարակիչն էր և ապրում ու գործում էր Փարիզում: Սույն ուղերձն արժեքավոր է ո՛չ այնքան իր արվեստով, որքան խորհրդով: Եվրոպական երկրներում ապաստանած երկու հայ մտավորականներ՝ Բասմաջյանը և Պատրուբանյանը, նույն հայրենասիրական շահերն էին հետապնդում, նույն հոգսերով տանջվում, գիտակցում, որ միևնույն պարտքն ունեն մայր հայրենիքի ու հայության հանդեպ: Եվ դա բավականաչափ դիպուկ է ասված Պատրուբանյանի ուղերձում.

---

[54] Գ. Պատրուբանյան, *Բանաստեղծը, 1902, № 10, էջ 293:*

Միշտ այսպես ջանալով՝
Մենք հօգուտ հայության,
Իրավամբ կը մնանք
«Հայկազունք» հավիտյան[55]։

Պատրուբանյանի մտահղացումներին, ինչպես նշվեց, անմիջական առիթ է ծառայել XIX դարի երկրորդ կեսի հայ քաղաքացիական բնարերգությունը, այն էլ ո՛չ թե մեկ որոշակի քերթող, այլ հայ գրականության մի ամբողջ շրջափուլ ու գրական հոսանք։ Նմանողության կամ էպիգոնության համար մեղադրելը կլիներ մեծագույն անարդարություն, քանի որ նրա գրչի արգասիքները, անգամ այդ ձևով՝ խորապես ապրած էջեր են և միջոցներ՝ հրահրելու ազգությունից աստիճանաբար խորթացող հունգարահայության մեջ ազգային տրամադրություններ, շահագրգռվածություն առաջ բերել մայր երկրի ու հայրենիքի հոգսերով ապրելու։ Բացի այդ՝ դրանք գրական ստեղծագործություններն են մի գաղթավայրի, որի բանաստեղծական մտածողության մասին ցարդ շոշափելի նյութեր չեն եղել հետազոտողների ձեռքի տակ։ Պատրուբանյանի քերթվածները լեզվական հետազոտությունների համար ևս ունեն մեծ արժեք, որովհետև, իբրև հունգարահայության շրջանում տարածված արևմտահայ աշխարհաբարի նմուշներ, եղակի են։ Դրանք բարեպատեհ հանգամանքներում կարող էին նպաստել հունգարահայերի՝ մայրենի լեզվով գրականության ձևավորմանը, որ, ցավոք, քաղաքական ու տնտեսական մի շարք անբարենպաստ գործոնների թելադրանքով խափանվեց։

Բուդապեշտի համալսարանի գիտնական-բանաստեղծի քերթվածներից բացի, «Արմենիա» հանդեսում հայալեզու ոտանավորով հանդես է եկել նաև մեկ ուրիշը՝ ճանաչված փաստաբան Հովհաննես Մուրադյանը (Յանոշ Մուրադ), որը բնակվում էր Արադ քաղաքում։ Նրա գրվածքը խորագրված է «Հայոց նորտարյան բարեմաղթությունները» և բնույթով կենցաղային զավեշտ է.

---

[55] Ղ. Պատրուբանյան, *Ոտանավոր մը առ պ. Բասմաջյան*, 1902, № 3, էջ 81։

Շնորհավոր Նոր տարին
Ես ալ կը կամենամ
... Հազար բարի
Քեզի, օ՛հ, բարեկամ.
Առողջություն ապրելու
Եվ ասված խնդրելու,
Եվ երկիրը գովելու,
Անուշ բաներ ուտելու,
Կարմիր գինի խմելու...

Իսկական բանաստեղծություն, ինչ խոսք, այստեղ չկա, այլ սոսկ պարզ ոտանավոր, որ անգամ այդ վիճակում ունի գնահատելի կողմեր: Որքան էլ ձուլման վտանգի առջև, հունգարահայության մուսան նվաղուն ձայնով դեռ շարունակում էր իր երգը...

Մայրենի լեզվով ստեղծագործող հունգարահայ ուրիշ հեղինակներ մեզ հայտնի չեն ո՛չ միայն «Արմենիայում», այլև նրանից դուրս, հետևաբար Պատրուբանյանն ու Մուրադյանը միակ դեմքերն են, որ պատկերացում են տալիս հունգարահայ հայալեզու քերթության մասին՝ նրա հոգեվարքի շրջանում:

3. ՓՇՐԱՆՔՆԵՐ ՏՐԱՆՍԻԼՎԱՆԱՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ

Զարթոնքի տարիներին հունգարահայ մտավորականությունը պակաս ջանքեր չի թափել նաև գաղթաշխարհի հոգևոր մշակույթի և ժողովրդական բանահյուսության գանձերն հավաքելու և հրատարակելու ուղղությամբ, ուշագրավ մի երևույթ, որը մի կողմից «Արմենիա» ամսագրի վարած գրական-մշակութային քաղաքականության հետևանքներից էր, մյուս կողմից՝ XIX դարի վերջին քառորդին հայ իրականության մեջ մեծ թափ ստացած բանահավաքչական ու ազգագրական հետազոտությունների արգասիք:

Այս առումով՝ հունգարահայ բանահավաքներին, նաև՝ Հունգարիայի մյուս ազգությունների նյութական ու հոգևոր մշակույթի հուշարձանների հավաքման գործին ընդհանրապես մեծ օգնություն էր ցույց տալիս հայտնի բանագետ

Անտալ Հերմանը, որը քանիցս հրապարակային ելույթներ է ունեցել Սամոշույվարի հասարակայնության առջև, հորդորելով ու շահագրգռելով կարող անձանց ու իր հայազգի բարեկամներին՝ «փրկելու գիտության համար Տրանսիլվանիայի հայության ավանդությունները, քանի դեռ նրանք չեն անհետացել երկրի երեսից»[56]։

Սամոշույվար քաղաքի հայոց թանգարանը և Խ. Սոնգոտյանի «Հունգարահայոց ազգագրությունը» ծանրակշիռ աշխատությունը այս շարժման ամենանշանակալից արդյունքներն էին։

Սոնգոտյանի ուսումնասիրությունը նախ՝ շարունակաբար լույս է տեսել «Արմենիայի» 26 համարներում, այնուհետև՝ առանձին գրքով, և, ըստ էության, հանդեսում երևացած լուրջ ու մնայուն աշխատություններից մեկն է[57]։

«Հունգարահայոց ազգագրության» ստեղծումը Սոնգոտյանի վեհ նպատակներից էր, և նա այդ ուղղությամբ նյութեր է հավաքել համարյա իր ողջ կյանքի ընթացքում։ Բուն բնագրերին ու բանահյուսական նյութերին են նվիրված աշխատության վերջին՝ 29—32 ենթագլուխները, ուր հեղինակը շարադրել է նաև իր տեսակետները հայ ժողովրդի անգիր ստեղծագործությունների մասին առհասարակ, ընդգծելով նաև, թե ներկա ժամանակներում՝ «այնտեղ, հեռու-հեռուներում ընկած Արևելքում, օր-օրի բռնությամբ՝ հայ ժողովրդից օտարում են նրա ազգային դեմքը... չնայած որ դեռ չի ծնվել մեկը, որն ուժ ունենար ժողովրդի շուրթերից հափշտակել նաև նրա երգերը...»[58]։ Այս խոսքերի տակ թաքնված է գիտնական հետազոտողի անխախտ հավատը՝ ժողովրդի ստեղծագործական ուժերի կենսունակության վերաբերյամբ, որ աղբյուրն է ճշմարիտ ու կատարյալ և այդ պատճառով՝ անպարտելի։ Նույն այս կապակցությամբ՝

---

56 *Herrmann Antal*, Ápoljuk az örmény hagyományt, 1892, № 5 o. 130.

57 *Տե՛ս ամսագրի 1901—1903 թթ. համարները։*

58 *Szongott Kristóf*, A magyarországi örmények ethnographiája, Szamosújvár, 1903, o. 301.

Սոնգոտյանը բարձր է գնահատում հրապարակախոս Աբգար Հովհաննիսյանի և բանասեր Գրիգոր Խալաթյանցի ձեռնարկումը՝ «Հայկական գրադարան» մատենաշարի միջոցով հայ ժողովրդական բանահյուսության մարգարիտները Եվրոպայի կրթված հասարակայնությանը ծանոթացնելու նպատակով։

Անշուշտ, այսօր մեզ համար ամենից արժեքավորը Սոնգոտյանի «Ազգագրության» այն էջերն են, որոնք ամփոփում են հունգարահայ բանահյուսության փշրանքները, որոնք բանահավաքը դասդասել է ըստ ժանրերի[59]։ Հետաքրքրական է այս առումով միջնադարյան Հայաստանի անանուն, անվավեր զրույցները և Վարդան Այգեկցու առակները հիշեցնող այն փոքրիկ ավանդությունը, որ նվիրված է Քրիստոսին ու նրա աշակերտ Պետրոսին (խորագրված է՝ «Պետրոսը և գառնի պուրյագը»)։ Այն մեջ է բերված նախ՝ բնագրով, ապա՝ լատինատառ հայերենով (տառադարձությամբ) և վերջապես՝ հունգարերեն թարգմանությամբ։ Այս ուրախ պատմության մեջ դժվար չէ նկատել Հիսուսի ու նրա աշակերտների պարզունակ կենցաղը, առօրեական արարքները և մարդկային թուլությունները.

«Զամփա կելլե Հիսուս հետ աշակերտացը... Օրհասդըրկին կի կաննին, ըղճաշը Պետրոսը կի հօգա։ Ուտելլէ միջոցը կի հարցընու Հիսուս.

—Ո՞ւր է գառնին պուրյագը։

Ասոր վըրա Պետրոսը՝

—Տե՛ր, չ՚ունացի։

Հացին ետև կի շարունակեն ըղճամփան։ Կի գըտնուն մեկ քըսակ մը, ըլինքը պանով։

---

59 *Սոնգոտյանի աշխատության 29-րդ հատվածի երկրորդ գլուխը ամփոփում է «Երազ» խորագրով մի ասք, որ Լուիզա Հարմատի ձեռքով թարգմանված է Գ. Խալաթյանցի կազմած (ու թարգմանած) գերմաներեն ժողովածուից (նախապես տպագրվել է «Արմենիայի» 1887 թ. № 4-ում, էջ 107—112)։ Իսկ նույն հատվածի 3-րդ գլուխն ընթերցողին ծանոթացնում է Մխիթար Գոշին վերագրվող երեք առակների հետ, որոնք խորագրված են՝ «Հրեշտակ և ջրաղացպան», «Աբրահամ և կուռքեր», «Ճշմարիտ տիրոջ իշխանությունը»։ Վերջիններս, որոնց հեղինակային պատկանելիությունը կասկածելի է, հայերենից թարգմանել է Զիկսավլիգի ծխատեր քահանա Շիմոն Ֆարաոն։*

—Նըրանը կ'ըլլա քըսակը, որ կերիլ է ըղպուրյաղը,— ասավ Հիսուս։ Նա դավանեց Պետրոսը.

—Տե՛ր, ես կերիլ իմ ըղլայն»[60]։

Գրքի հետագա էջերում «Հայկական սրամտություններ» խորագրի տակ զետեղված է վեց նմուշ հունգարահայոց ժողովրդական երգիծանքից ու զվարճախոսություններից, որոնցից են հետևյալները.

«Համոզումն այրանք է, որ փոփոխվում է պաշտոնը փոխվելու հետ միասին»։

«Փող ունենալ, նշանակում է միշտ ընկերներ ունենալ»[61]։ Սրանց հաջորդում է «Տաղ ուրախության» խորագրով մի կատակ-երգ, որի տարբերակները դժվար չէ գտնել մայր հայրենիքի բնաշխարհների բանահյուսության մեջ.

«Եկեք, տեսեք, թե վո՞վ կերիլ է էս մուկը։ Եկան, տեսան՝ կատուն կերիլ է էս մուկը։ Կատուն էս մուկը, մուկը էս ժանգը, ժանգը էս թուրը, թուրը էս ինձը, ինձը էս արջը, արջը էս կալլը, կալլը էս ածը, ածը եղեքին... Դագն երազին, մեղի պարիգանթան, բարի տարին»[62]։

Երգն ուշագրավ է նաև այն առումով, որ նրա տարբերակների վրա ժամանակին ուշադրություն են դարձրել Մ. Աբեղյանն ու Կոմիտասը և զետեղել իրենց նշանավոր «Հազար ու մի խաղ» երգարանում։ Այդ նշանակում է, թե հայոց հին բանահյուսության նմուշները, որոնցից է նաև սույն ուրախության տաղը, եղել են անչափ կենսունակ և իրենց հին հայրենիքից վաղուց տարագրված հայության բեկորների

---

60 Szongott Kristóf, նշվ. աշխ., էջ 315։ Ուշադրությամբ ընթերցելով Սոնգոտյանի լատինատառ գրառումները, նկատում ենք, որ հայերեն պայթաշփականն և շնչեղ խուլ հնչյունները նա տառադարձել է հետևյալ ձևով. ch=խ, cs—ջ, csh=չ, cz=ձ, czh=ց, ds=ձ. dz=ծ, e=ը. gh=ղ, kh=ք և th=թ։

61 Նույն տեղում։

62 Երգը մեջ է բերված լատինատառ հայերեն բնագրով ու հունգարերեն թարգմանությամբ, թվագրված ու ծանոթագրված՝ «Սամոշույվար, 14 հունիսի 1784 թ., գրեցի սեփական ձեռքով. Կրիշտոֆ Սոնգոտ», որին «Արմենիայի» խմբագիրն ավելացրել է, թե գրառողն եղել է իր ազգականը և կրել է նույն անուն-ազգանունը, ինչ որ ինքը։ Նեղ բարբառային բառերից եզնէը նշանակում է խաղող, դագն Երագին՝ տաք եղանակին։

հետ դնելով՝ XIX դարում անգամ շարունակվում էին հարատևել ու երգվել։

Աբեղյանի և Կոմիտասի խմբագրած բնագիրը հունգարահայ տարբերակի համեմատությամբ ունի շատ տարընթերցումներ, որոնց բոլորի հաշվառումն, անշուշտ, մեծապես կօգնի այդ հին երգի՝ դարերի միջով անցած ճանապարհն ու կրած փոփոխություններն ավելի ճիշտ հասկանալուն։ Ուստի ավելորդ չենք համարում մեջ բերել նաև վերջինը.

Ելե՛ք, տեսե՛ք, ո՞րն է կերել մեր թուփ։
Ո՞րն է կերել մեր թուփ։
Ելան, տեսան՝ ուլն է կերել մեր թուփ։
Ուլն է կերել մեր թուփ։
Ուլն էր թըփուն,
Թուփն էր իգուն,
Իգ Վարագա,
Տակն ագուգա,
Վըրեն կու գա,—
Հալալ է՝
Ջալալ է։
Ի՞նչ բարի տարեկ մ՚էլ եկավ վեր մե,
Գու վեր մե, գու վեր մե,
Գու վեր մե, գու վեր մե։
Ո՜ւ...[63]

Վերահիշյալներից բացի, Սոնգոտյանն հայկական սրամտությունների շարքն է դասել նաև պատմական զրույցները կամ զավեշտական ծաղրաթափորային արարողության ուղեկցվող խոսքերն ու կանչերը՝ մեջ բերելով դրանք ինչպես լատինատառ հայերենով (ավելի ճիշտ՝ հունգարահայ արտասանությամբ) և հունգարերեն թարգմանությամբ։ Այդ բնագրերի ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց ծնունդ տվողը բուն հունգարահայոց կյանքն ու կենցաղն է։

Բերենք միայն մի նմուշ.

[63] «Հազար ու մի խաղ», ժողովրդական երգարան (2-րդ հինյակ), խմբագրեցին՝ Կոմիտաս Վարդապետ և Մանուկ Աբեղյան, Վաղարշապատ, 1905, էջ 59, այլ տարբերակ, 1-ին հինյակ, № 47։

«Ես՝ դագաղդ անպաճաքուրըս, հորարած խուրութով ու մըսի կեր շուրըվով, որ եմ որտի քաղվելի Աղաշահ խըծբած մեծ անդըձներով շամակիշով պիրահունը...»[64]:

Սոնգոտյանի կարծիքով՝ հանելուկներն ու ազգային սրամտությունների շարքը պիտի գային, և այդ հայեցակետից էլ նա քննել է հունգարահայ հանելուկները, միայն թե, ցավոք, մեջ է բերել ո՛չ թե բնագրերով, այլ թարգմանությամբ: Ահա՛ դրանցից մեկը.

«Ես չունեմ ո՛չ լեզու, ո՛չ տեսք և այնուհանդերձ ասում եմ ճշմարտությունը»,—որի լուծումը կամ պատասխանն է՝ խիղճ:

Աշխատության մեջ բերված են չափածոյով հորինված և առավել ծավալուն հանելուկների երեք նմուշ ևս, որոնց տողերն հանգավորված են[65]: Թեև ինչպիսին է եղել դրանց հայերեն նախօրինակը, դժվարանում ենք ասել, սակայն հունգարերեն թարգմանության մեջ առկա է գեղարվեստական կատարելություն և կենդանի ու գեղեցիկ լեզու.

Ճերմակ տունը փոքր է,
Վրան թռչուն նստել է:
Ձագ է հանում, բազմանում,
Լեզվիդ ես դնում՝ հետդ խոսում...[66]

(Պատասխանն է՝ գիրք)

Հայկական ժողովրդական զվարճախոսության նմուշներից են և այն փոքրիկ անեկդոտները, որոնք նույնպես բերված են միայն հունգարերեն թարգմանությամբ: Ահա դրանցից երկուսը.

«Հայրը գրում է որդուն. նամակը, որով ինձանից փող էիր խնդրում, չեմ ստացել»:

---

64 Szongott Kristóf, նշվ. աշխ., էջ 317—318:

65 Բոլոր երեք չափածո հանելուկներն էլ նախապես տպագրվել են «Արմենիայի» 1892 թ. № 9-ում (էջ 272), այս ծանոթությամբ. «Հայերենից թարգմանեց Շիմոն Ցարառ»: Որովհետև չի նշված, թե հայոց ո՞ր բարբառից կամ գրական լեզվից են թարգմանված (արևմտահա՞յ, թե՞ արևելահայ), չենք կարող հաստատ պնդել, թե դրանք Տրանսիլվանիայի հայ բանահյուսության անապակ նմուշներից են:

66 Szongott Kristóf, նշվ. աշխ., էջ 319:

«Անասունների առևտրով պարապող մեկը, որ վաճառում էր միայն եզներ, կինը՝ կովեր, իսկ որդին՝ հորթեր, դիմելով գնորդներին՝ ասում էր.

—Եթե ապրանք եք ուզում, խնդրե՛մ՝ ես, եթե կով՝ ահա՛ իմ կինը, իսկ եթե հորթուկ՝ ահա՛ իմ տղան...»[67]։

Սոնգոտյանի հրատարակած բանահյուսական նյութերի մի կարևոր բաժինը կազմում են հունգարահայոց առածները՝ թվով 140, որ նույնպես տրված են նախ՝ լատինատառ հայերենով և ապա՝ հունգարերեն թարգմանությամբ։ Դրանց մասին բանահավաքը գրել է. «Հազիվ թե մեր այս հայրենիքում լինեն հայկական առածներ, որ ես չիմանամ։ Առանց ինքնագովության պիտի ասեմ, որ հայրենի, հայկական առածներ՝ համապատասխան բնագրերի հետ միասին, միայն ես եմ հավաքել։ Ուրիշներն էլ ժամանակին «Արմենիայի» միջոցով լույս աշխարհ են հանել որոշ առածներ, բայց դրանք բոլորն էլ, բացառությամբ 10—20-ի, այստեղի չեն, այլ՝ արևելահայոց առածներ և, հիմնականում, փոխ են առնված ու թարգմանված Աբգար Հովհաննիսյանի գերմաներեն ժողովածուից»[68]։ Ինչ վերաբերում է բուն առածներին՝ իբրև հունգարահայ բանահյուսության ուրույն տեսակի, ապա Սոնգոտյանի բնորոշմամբ՝ «Այդ գեղեցիկ հորինվածքները մեր փորձառու, իմաստուն հայերի վարքուբարքին վերաբերող վավերագրերն են»[69]։ Բերենք մի քանի նմուշ էլ Սոնգոտյանի հավաքած առածներից.

—Մարդ միայն նա է, ով խոսեցնելու կիդէ։

---

[67] Նույն տեղում, էջ 320։

[68] Նկատի ունի «Armenische Bibliothek» մատենաշարի I-ին գիրքը, որն իրականում տպագրության է պատրաստել Գր. Խալաթյանցը։ Ա. Հովհաննիսյանը հրատարակիչն է։

[69] Szongott Kristóf, նշվ. աշխ., էջ 321։ Առածներ կան նաև ամսագրի 1891 թ. նոյեմբերյան տետրակում, որոնք հավաքել է Լասլո Գույշայանը (1865—1933) և որոնցից մի քանիսը հանդիպում են նաև Սոնգոտյանի հավաքածուի մեջ։ Անձամբ՝ Լ. Գույշայանը սղագրության հռչակավոր մասնագետ էր, նաև՝ Տրանսիլվանիայի գրական ընկերության անդամ ու հունգարահայոց ժողովրդական բանահյուսության եռանդուն հավաքող։ Հայտնի են նրա «Հայկական առածներ» (Կոլոժվար, 1888) և «Հայկական ավանդույթներ» (Բուդապեշտ, 1911) աշխատությունները (երկուսն էլ հունգարերեն)։

—Եղ ծառը գիպըլի, նա գա պավաղան փաղըղըրող։

—Ջրին մեջ ձուզը չունի արժեկ[70]։

—Ամեն տար ունի տարնիվար ալ։

—Թե որ ամեն ջրի մեջ թքնուս, նա ուսկի՞ց բի խմիս[71]։

—Գլաս պարեզմություն դարելու հետ շանը, պայց ձեղդայախը մի անի վար ձեռքեդ[72]։

—Ամեն անդոլվաթություն մեմեգ խրատ[73]։

«Արմենիայի» էջերում տպագրված բանահյուսական նյութերի մի արժեքավոր մասն էլ կազմում են հունգարահայոց բերանից գրի առնված (լատինատառ-հայերենով) թվով տասնմեկ հեքիաթները՝ «Տգետ մարդը», «Ուղտու ձագը», «Առյուծը, Արջը և Աղվեսը», «Երեք ընկույզ», «Մալախը», «Ընկալըրինդ (այսինքն՝ ամենագեղեցիկ—Է. Բ.-Գ.) աղջիկը», «Օգտմության պարգևը», «Կացինը», «Հպարտությունը և խոնարհությունը», «Խելքը և Ուժը», «Սուրբ խաչը»։

Դատելով Սոնգոտյանի նկատողություններից՝ տվյալ հրատարակությունների մեջ հեքիաթներ հավաքելը անչափ ծանր, իսկ երբեմն էլ անկարելի գործ էր։ Նույն գրքում նա գրում

70 Նույն տեղում, էջ 322։

71 Նույն տեղում, էջ 323։

72 Նույն տեղում, էջ 324։

73 Նույն տեղում, էջ 328։ Հարկ է նշել, որ Սոնգոտյանի տառադարձությունները ո՛չ միշտ են հետևողական, ուստի և մեր վերծանած բնագրերում կարող էին սխալներ սպրդել։ Եվ այնուհանդերձ՝ դա չէր կարող պատճառը լինել այն տարընթերցումների, որ նկատվում են Սոնգոտյանի հրատարակածների և այդ միևնույն առածների՝ Հովհաննես Անեցու (այսինքն՝ Գ. Գովրիկյանի) պատրաստած բնագրերի միջև, որոնք լույս են տեսել «Հանդես ամսօրյայի» 1895 թ. № 8-ում (էջ 244—246) և հետևյալներն են.

«—Մարդ միայն նա է, վով խոսեցնելու* գիտէ։

—Եփ ծառը կի փըլի, նայ կայ բավական փատ կոտրող։

—Ջրին մեջ ձուկը չունի արժէք։

—Ամէն դար ունի դարմվար ալ։

—Թէ որ ամէն ջրի մէջ թքնուս նայ, ուսկից պի խըմիս։

—Կըլաս* բարեկըմություն կապես հետ շանը, բայց ըտայախը* մի գնի ձեռքեդ։

—Ամէն անտարվաթություն՝ մեկ մեկ խրատ»։

Տողատակի ծանոթագրություններում Գովրիկյանը հիշյալ աստղանիշերով բառերը բացատրել է այսպես՝ կարդալ, կրնաս, գավազան։

է. «Անցյալ (իմա՛ XIX) դարու 50-ական թթ. պատահում էր երբեմն, որ հայերից մեկն ու մեկը հեքիաթ ասեր... բայց նահապետական վարքուբարքով այդ հարգարժան անձինք կյանքից վաղուց հեռացել են, և մեր օրերում հունգարահայերի մեջ հազիվ թե մի քանի հոգի գտնվի, որոնք կարողանային հայոց լեզվով հայերեն հեքիաթ պատմել»[74]:

Սոնգոտյանը, այնուամենայնիվ, գտել է այդ եզակի մարդկանց, դրի առել իրապատում հեքիաթների ու կենդանական զրույցների առանձին նմուշներ, որոնցից կարելի է ենթադրել, թե բանահյուսական ինչ արժեքավոր ժառանգություն է կորել առհավետ:

Տրանսիլվանիայի հայոց հեքիաթների մեջ իրենց արտացոլումն են գտել ժողովրդական խավերի իմաստությունն ու մարդասիրությունը, նրանց հոգեկան աշխարհի հարստությունը և խոր հավատը ճշմարտության անհաղթահարելիության վերաբերյալ[75]:

«Արմենիայի» լույս աշխարհ հանած բանահյուսական նյութերն այսքանով չեն սպառվում: Սոնգոտյանի ուշադրությունից չեն վրիպել նաև ժողովրդական երգերը, որոնցից ինը նմուշ տեղավորված է ամսագրի 1903—1904 թթ. համարներում, նորից լատինատառ-հայերենով և հունգարերեն

---

[74] Նույն տեղում, էջ 332:

[75] Հայ ժողովրդական հեքիաթների հավաքման ու հրատարակման գործում մեծ ծառայություն ունի գերմանացի գիտնական Հայնրիխ Վլիսլոցկին: Նրա „Märchen und Sagen der Bukovinaer und Siebenbürger Armenier", Hamburg, 1892(«Բուկովինիայի և Զիբենբուրգի հայերի հեքիաթներն ու զրույցները», Համբուրգ, 1892) պարունակում է 60 հեքիաթ և 93 զրույց: Ավելի վաղ՝ հայկական հեքիաթներ տեղ են գտել „Armenische Bibliothek" մատենաշարի առաջին գրքում (Գր. Խալաթյանցի), որոնցից մի քանիսը թարգմանաբար (գերմաներենից հունգարերեն) արտատպվել են «Արմենիա» հանդեսի էջերում (թարգմանիչ՝ Լուիզա Հարման): Մեր օրերում տրանսիլվանահայ հեքիաթների հավաքման շնորհակալ գործով զբաղված է ռումինացի հայագետ Իոն Ակոպսոս Պոպեսկուն: 1974 թ. լույս է տեսել նրա գիրքը, որն ընդգրկում է ընդամենը 26 հեքիաթ: Նրա գրչին է պատկանում «Ուսումնասիրություններ ժողովրդական բանահյուսության և արվեստի» գիրքը, ուր պատշաճ տեղ է հատկացված Տրանսիլվանիայի հայոց ժողովրդական արվեստին և էպիկական ժանրերին (տե՛ս «Գրական թերթ», 1968, № 20 և 1971, № 18):

թարգմանությամբ, ըստ որում՝ դրանցից չորսն ուղեկցվում են երաժշտական տեքստերով ու ձայնագրությամբ։ Երգերի նյութը հարափոփոխ աշխարհն է, օրավուր վատթարացող կյանքը և հունգարահայոց աշխատավոր խավերի տնտեսական անմխիթար վիճակը, նրանց առջև մշտապես ծառացող դժվարություններն ու ամենօրյա տագնապները։

Երգերից առաջինը իր երբեմնի կայքն ու հարստությունը կորցրած մի վաճառականի դառը ճակատագրի մասին է պատմում։ Նա գանգատվում է իր բախտից ու վիճակից. միշտ ճանապարհի վրա է, ընտանիքից հեռու, առանց հանգիստ ու դադար ունենալու... Նրան հալածում են չոգն ու պարտապանները, կարծում է, որ նորից ձեռնունայն պիտի դառնա տուն և ավելի սաստկացնի կնոջ վիշտը, որովհետև տան հոգսերը անչափ շատ են, իսկ քսակը՝ դատարկ։ Եվ ինչպես լինում է նման պահերին, վաճառականին այցի են գալիս երբեմնի ուրախ ու երջանիկ օրերի հուշերը.

Փախել են ժամանակները,
Ալ վաղուցու ադենները,
Քիչ ապրելիքով խարջերը
Էնդոր կաներն ծերերը։
Քալեցեք ու մեխլեեցեք,
Էվ գլխըներդ դուք ծեծեցեք[76]։

Հունգարահայոց մեկ այլ երգում, որ Սոնգոտյանը վերնագրել է «Երգ քաղաքականության մասին» և որի նախնական տարբերակի հորինողը Մոլդավիայի Կեմպելունգ քաղաքի հայ բնակիչներից մեկն է, պատմվում է տարագիր հայության դժգոհությունների մասին՝ նենգ ու պատիր աշխարհից ու շրջապատող իրականությունից, որ հայերի գոյությունը հանդուրժվում է միայն նրա համար, որ վերջիններս հնազանդ ու հլու են պետական կարգերին և ժամանակին վճարում են օրենքով սահմանված հարկերը.

Նեմեցըն է թագավէր,
Ու մաջարը հեծելվէր,

[76] Szongott Kristóf, նշվ. աշխ., էջ 312։

Հառամը մեծ դուշման,
Բայց հայն է բարեկամ,
Չե կփիչարե ղդամղան[77]:

Երգի շարունակության մեջ անանուն հեղինակը բողոքում է բարքերի անկման դեմ, տրտնջում, որ կանայք դարձել են նենգ և հարել սատանային, իսկ տղամարդիկ ողջ օրն անց են կացնում գինետներում՝ հարբեցողության կամ տուրուդմփոցի մեջ:

«Տաղ քաղաքի մասին» պայմանական խորագրով բնարական հատվածում պատկերվող իրադարձությունները առավել սրտակեղեք են: Գեղացի հայը հարկադրված է հրաժեշտ տալ հայրենի քաղաքին և դառն արցունքներ թափելով՝ մեկնել օտարություն, քանի որ աղքատի համար այլևս չունի ոչ մի ճար ու հնարավորություն[78]:

Անգամ Տրանսիլվանիայի հայոց սիրած քաղցրավենին՝ դալաուզին, առկոչել է մի վշտալի խաղ կամ հանգավոր գանգատ.

Դալաուզի, դալաուզի,
Քաղցրն իս դուն ուտվե մեղի:
Բայց սառվը ի՞նչ կանիս,
Զբեռընները կըխաբիս:
Ձեռամ բերընոււ քաղցրություն
Կուտաս իրմե անուշություն.
Բայց պարապ հույս կիցողիս
Թե՛ զտարին քաղցըր է բանիս[79]:

Ամսագրի 1902 թ. № 6-ում (էջ 185) այս նույն խաղի մասին ասված է նաև, որ Զ. Կարրուչյանն այդ 12 տնանոց երգը հորինել է 1836 թվականին, նոր տարվա առթիվ՝ օգտագործելով մի հին մեղեդի, որը Տրանսիլվանիայի հայերին ծանոթ է եղել մինչև Հունգարիա գաղթելը:

Մեկ ուրիշ խաղի մեջ էլ, որի խորագիրն է՝ «Մեղադրանքին բանը»[80], անանուն տաղասացը դառնացած է, որ

---

77 Նույն տեղում, էջ 373:

78 Նույն տեղում, էջ 377—378:

79 Նույն տեղում, էջ 378:

80 Նույն տեղում, էջ 379—381:

զրպարտիչների նյութած դավերի հետևանքով՝ արտաքսվում է ավնիվ ու առաքինի մարդկանց բարի անունը:

Սոնգոտյանի հավաքածուի մեջ կա նաև մի կատակ-խաղ, որի հերոսուհիները՝ Մարիամն ու Աննան, իրենց հարսների «քաջագործություններից» ղանձացած՝ միմյանց առջև բաց են անում սրտերը, պատմում ցավերը և, ի վերջո, մտածում ու գտնում ճարը, որպեսզի կրկին արժանանան որդիների սիրուն ու հարգանքին.

> Գիտես, թե ինչ բիանինք,
> Որ մենք հարգիք կընդունինք,
> Ասինք, թե շատ բան ունինք,
> Բայց գետնի մեջ թաղիլ ենք,
> Այնպես խաբենք էսորղաքը...[81]

Երգեր էլ կան, որ պատմական վավերագրի արժեք ունեն. դրանցից է «Մեռած բանքըներ...» խաղը, որը, Սոնգոտյանի ասելով, հորինվել է իրական դիպվածի ազդեցության տակ. «Դրամների արժեքազրկման տարին» (այսինքն՝ 1811 թ., երբ 100 ֆորինտը փոխանակվեց 20-ով) մի հայ, որ մեծ վնասներ էր կրել, «հորինեց այս հետաքրքրական խաղը»[82]: Երգի առաջին տողերում գծված պատկերները մռայլ են, տխրության ու տագնապով լի, բայց վերջում, կարծես թե, ճառագում է լավ օրվա ինչ-որ հույս:

Ամփոփելով մեր խոսքը «Արմենիայի» էջերում լույս աշխարհ հանված քնարական էջերի կամ երգերի մասին, պետք է ասենք, որ դրանք հունգարահայ բանահյուսության իշխող տեսակներն են և արժեքավոր են մանավանդ այն նրանով, որ գաղափար են տալիս հունգարահայոց կյանքի, կենցաղի ու հոգեբանության այնպիսի կողմերի ու ծալքերի մասին, որոնց մեջ այլ պարագաներում հազիվ թե կարողանայինք թափանցել:

Տրանսիլվանիայի հայության շրջանում լայն տարածում ունեին նաև ծիսական երգերը՝ կապված եկեղեցական տոների հետ, որոնց մեջ բեկված է քրիստոնեական աշխարհա-

---

[81] Նույն տեղում, էջ 388:

[82] Նույն տեղում, էջ 390:

յացքը և միաժամանակ թևածում է հեթանոսության շունչը։ Բայց, ցավոք, բանահյուսական նմանօրինակ նյութերից «Արմենիայում» տեղ են գտել միայն երկու նմուշ։

Առաջինը Ծննդյան երգ է՝ ասված հանդիսավոր թափորի ժամանակ։ Որպես կանոն՝ այդ երգը կատարել են հատուկ տարազով ու դիմակավորված երգիչները՝ ամեն տան առաջ՝ իբրև վարձ ստանալով դրամ ու նվերներ։ Ահա մի քանի տող.

Հիսուս կույս,
Բալուլ չիկա։
Փեշը կտրած
Նա բալուլած...
Տըվեցեք էս բանըս,
Որ էրթամ ես բանըս...[83]

Դժվար չէ տեսնել, որ Քրիստոսն այս խաղում ներկայացվում է իբրև հողեղեն արարած՝ իր տագնապներով և կարիքներով։

Մյուս երգը սովորաբար ասվել է Զատկի տոնին և իր զուգահեռներն ունի ընդհանրապես հայ ծիսական բանահյուսության մեջ։ Բերենք մի քանի տող էլ այդ երգից.

Զատիկ, պատիկ, բարով եկար,
Դուն մեր տեղը բարով եկար։
Օրըն օխտը ֆունտ մանեցի,
Գարչարըս իլիկ լեցուցի,
Լիսեռ և ռուբթակ մաշեցի,
Քըրտինքըս ի ոտկս իջուցի։
Կարմեր հավկիթ, սիրուն հավկիթ,
Սիրականիս հարուր հավկիթ...[84]

«Արմենիայի» էջերում երբեմն-երբեմն տպագրվել են բարեմաղթության խոսքեր ու օրհնանքներ, որոնցով այս

---

[83] „Karácsonyi népszokás", 1890, № 1, o. 30.
[84] „Húsvéti örmény népdal", 1892, № 5, o. 152.

կամ այն տոնի առիթով հայերը դիմում էին միմյանց, բայց դա արդեն այլ ոլորտի՝ ազգագրության խնդիր է։

Տրանսիլվանիայի հայության ստեղծած բանահյուսական արժեքները՝ երգերը, հեքիաթները, առածները և այլն, հարկավ, բերվածներով չեն սպառվում։ «Արմենիայի» հրապարակ հանածը եղածի մի փոքր մասն է միայն, մյուսները պիտի փնտրել հունգարերեն ու գերմաներեն լեզուներով լույս տեսած բանահյուսական ժողովածուներում ու հանդեսներում։ Բայց տպագրվածներն արդեն անչափ ուշագրավ են և դասվում են ամսագրում հրապարակված գրական ամենաարժեքավոր նյութերի շարքը։

Եթե «Արմենիայի» գրական-գեղարվեստական ինքնուրույն էջերն արձագանքն էին Տրանսիլվանիայի հայության միջին խավերի կեցության ու մտածողության ձևերի, շարունակաբար նրանց առջև ծառացած խնդիրների, առօրեական հույզերի ու հոգսերի,— ապա բանահյուսական նյութերը՝ առակները, հանելուկները, զվարճալի պատմությունները, հեքիաթներն ու երգերը, իրենց հերթին ծնունդն էին տվյալ գաղթօջախի հայության հարյուրամյա, համընդհանուր ջանքերի ու երևակայության։ Հունգարահայ բանահյուսության այս փշրանքների մեջ արտացոլվել են ժողովրդի պայծառ միտքն ու բարոյական բարձր ըմբռնումները, առաքինության և ճշմարտության, բարու և մարդկայինի նկատմամբ տածած սերն ու ակնածանքը, աշխատասիրությունն ու նվիրական հույզերը, երազանքն ու բարձր ձգտումները։

Բանահյուսական այդ նյութերը աչքի են ընկնում հյութեղ ու ինքնատիպ լեզվով, որն այլ բան չէ, քան հունգարահայոց խոսվածքը՝ հարուստ միջին հայերենի լեզվամտածողության տարրերով, իսկ երբեմն էլ՝ հունգարիզմներով ու կամ թե այն ժողովուրդների լեզուների տարրերով (ասենք՝ ռումիներեն, թուրքերեն, սլավոներեն և այլն), որոնց հետ, պատմական բախտի բերումով, առնչվել էր հայության այս հատվածը։

Դ

ՀՈՒՆԳԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԱՐՄԵՆԻԱ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

«...Միջնորդ օղակ դառնալ հունգար և հայ գրականությունների միջև»[1]:

1. ԱՐԱ ԳԵՂԵՑԿԻ ԱՌԱՍՊԵԼԻ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Հնօրյա առասպելը, որ հորինվել է Ասորեստանի տռփամոլ թագուհի Շամիրամի տածած կրքոտ սիրո մասին՝ հանդեպ իր արտաքին բարեմասնությունների ու կատարելության պատճառով Գեղեցիկ հռչակված հայոց հերոս արքա Արան, հայ ժողովրդի հոգևոր մշակույթի թանկարժեք հիշատակարաններից է:

Այն իր սկիզբն առնում է հեթանոսության դարերից ու շատ հին ժամանակներից, երբ ժողովրդի երևակայության մեջ Արան ապրում էր իբրև գեղեցկության և բնության անմահության աստված:

Դարերի հոլովույթի հետ միասին Արայի կերպարն ևս լուրջ փոփոխություններ է կրում: Քրիստոնեության դարերում արդեն նա հանդես է գալիս որպես մի հերոս, որը միա-

---

[1] *Gövrik J. Gergely, Szongott Kristóf,* Előfizetési felhivás 1887, № 1, o. 2.

ժամանակ և՛ բարձրագույն հայրենասիրության գաղափարի կրող է, և՛ մարմնացումն անապակ սիրո, որի վրա խարսխվում էր հայկական ընտանիքը։

Անցյալ դարի 30-ական թվականներից մինչև մեր օրերը բազմաթիվ պատմաբաններ ու բանասերներ ուսումնասիրել են Արա Գեղեցիկի առասպելը, քննել նրա պատմական հիմքերը և հանգել այն եզրակացության, թե այն արձագանքն է մ. թ. ա. VIII—VI դդ. ասորեստանյան զավթիչների դեմ ուրարտական պետության ու հայկական ցեղերի մղած պայքարի։

Առասպելի հնագույն տարբերակը գրի է առել V դարի հռչակավոր պատմագիր Մովսես Խորենացին և օգտագործել որպես աղբյուր հայ ժողովրդի նախնական շրջանի պատմության համար։ Նա ոչ միայն փրկել է առասպելը կորստից, այլև վերամշակել ըստ իր գեղագիտական ճաշակի և գաղափարական ըմբռնումների, որը առասպելի դասական տարբերակ պետք է գիտել։

Խորենացուն հաջորդած ժամանակներում Արա Գեղեցիկի կերպարը նյութ է ծառայել ամենատարբեր սեռի գրական ստեղծագործությունների համար՝ անցնելով զարգացման հետաքրքիր ճանապարհ[2]։

Հները մի որոշ իմաստով դեռ կրկնում էին Խորենացուն։ Դրա ապացույցը Սեբեոսի, Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու պատմագրքերն են։ Արդեն XVI դարում Սիմեոն Ապարանեցին փորձում է չափածո խոսքով վերապատմել Արայի առասպելն իր նշանավոր «Վիպասանության» մեջ, իսկ XIX դարի երկրորդ կեսից սկսած՝ Արայի կերպարը հայ գրականության մեջ ձեռք է բերում գաղափարական նոր նշանակություն։ Գրականագետ Ա. Ինճիկյանն այդ կապակցությամբ գրել է.

[2] Առասպելի հայ և օտար բազմաթիվ մշակումների մանրամասն քննությունը տե՛ս հանգուցյալ գրականագետ Արամ Ինճիկյանի «Արա Գեղեցիկի առասպելը և նրա մշակումները» ուշագրավ աշխատության մեջ, տպագրված՝ նրա «Մտերիմներ ու մտորումներ» գրքում (Երևան, 1967, էջ 3—114)։

«Տնտեսական-հասարակական նոր, բուրժուական հարաբերությունների սկզբնավորումը մեր իրականության մեջ հանդիսացավ սոցիալական այն հողը, որ սնեց ազգային ինքնաճանաչման գաղափարախոսությունը, իսկ վերջինս դարձավ ազգային պատմական ողբերգության և քաղաքական-հայրենասիրական բանաստեղծության գաղափարական բովանդակությունը։ Ազգային-պատմական և առասպելական հերոսների, այդ թվում նաև Արա Գեղեցկի, կերպարները վերակոչվում էին հիշյալ գաղափարախոսության տարածման համար»[3]։

Այս շրջանի բազմաթիվ ստեղծագործություններից, որոնց մեջ Արան հանդես է գալիս իբրև ազգային հերոս, հիշենք միայն հետևյալները՝ Հովհան Միրզայան Վանանդեցու «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ և Արայի», Սրապիոն Հեքիմյանի «Նուարդ առ Արա», Խորեն Գալֆայանի (Նար-Պեյ, Իշխան Բագրատունի) «Արա Գեղեցիկ և Նվարդ», Գաբրիել Պատկանյանի «Անուշավան», Րաֆֆու «Արան պատերազմի դաշտում» և այլն։

Հայ գրականության նորագույն շրջանում ևս Արայի կերպարը շարունակում է ոգևորել գեղարվեստական խոսքի վարպետներին (օր.՝ Զարենց), մեծ նշանակություն ստանալով մանավորապես Հայրենական մեծ պատերազմի օրերին, երբ սովետահայ գրողները ինքնաբուխ ցանկությամբ դիմում էին պատմական թեմաներին, որպեսզի նրանց մշակման միջոցով արծարծեին արդիականության համար կենսական նշանակություն ունեցող հարցեր։ Այդ տեսակետից հենքով նույն այս շրջանում գրվել է մի այնպիսի բարձրարժեք ստեղծագործություն, ինչպիսին է Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը, որին հաջորդեցին Գևորգ Էմինի նույնանուն անավարտ պոեմի հատվածները (լույս են տեսել երեքը) և այլ բանաստեղծություններ։

Արա Գեղեցկի կերպարը վաղուց իր վրա էր բևեռել օտարազգի ստեղծագործողների ուշադրությունը ևս։ Հայտնի

---

[3] Նույն տեղում, էջ 29։

են, օրինակ, իտալացի Անտոնիո Բարիլլիի «Շամիրամ» վեպը և ամերիկյան կին արձակագիր Դարգընի նույնանուն ողբերգությունը, որոնք սակայն շատ են հեռացել հայ ժողովրդի հյուսած հնօրյա ավանդույթից։ Ե՛վ Բարիլլիի վեպում, և՛ Դարգընի ողբերգության մեջ կենտրոնական դերը հատկացված է Ասորեստանի թագուհուն։ Երկուսն էլ վերջինիս օժտել են բնավորության այնպիսի գծերով, որոնց իրական կրողն, ըստ ավանդույթի, Արան է։

Զափազանց հետաքրքրական են նաև ավանդույթի այն մշակումները, որոնք կատարել են տարբեր գաղթավայրերում ծնված ու մեծացած հայ գրողները։ Հիշենք նորնախիջևանցի Կորոտկովի (Կարճիկյա՞ն) «Շամիրամ» պոեմը (1917)՝ գրված ռուսերեն, թավրիզաբնակ Արամ Գարոնեի «Արա և Շամիրամ» պոեմը (1926) և ֆրանսահայ բանաստեղծ Ա. Սեմայի (Գեղամ Աթմաճյան) «Շամիրամ» դրաման (1938)։

Կորոտկովի համար էականը միայն ֆիզիկապես երկրից հեռացած Արայի կատարած գործերի անմահության գաղափարի ընդգծումն է։ Գարոնեին ուշադրությունը բևեռում է մասնավորապես այն հանգամանքի վրա, որ կռվի դաշտում զոհված Արայից ժառանգություն է մնում մի արու զավակ, որ շարունակում է հոր սերունդն ու գործը։ Մի այնպիսի ժամանակ, երբ հայ գաղթավայրերի համար ուծացման վտանգը ցավոտ հարց էր, պոեմի այսօրինակ ավարտը ձեռք էր բերում գաղափարական մեծ հնչեղություն։

Ինչ վերաբերում է Սեմային, ապա վերջինս բանվորական միջավայրում ձևավորված բանաստեղծ էր, մասնակցել էր ֆրանսիական դիմադրության շարժմանն ընդդեմ ֆաշիզմի և հերոսաբար զոհվել։ Հայ ժողովրդական ավանդույթը նա օգտագործել է սոցիալ-պատմական դրամայի համար, որի գլխավոր հերոսներից մեկը՝ Նինուասը, ծառանում է ընդդեմ սոցիալ-դասակարգային անհավասարության։

Այսպիսով՝ ունենք բուն Հայաստանից դուրս ապրող հայության երեք հատվածների ներկայացուցիչների մշակումներ, երեքն էլ գրված տարբեր նպատակներով, բայց առանց

հակասելու հայ դասական ատասպելի էությանն ու ընդհանուր ոգուն։

Արա Գեղեցկի առասպելի՝ հայ գաղթավայրերում կատարված և մեկ հայտնի մշակումներից մեկն էլ, որ ցարդ դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից և որն, ըստ ժամանակագրության, մշակումներից առաջինն է, հունգար գրող Դավիթ Մարտոնի «Արա Գեղեցիկ» ողբերգությունն է։ Այս երկը ստեղծվել է XIX դարի 80-ական թվականներին և «Արմենիա» հանդեսի գրական լավագույն էջերից է։ Այն լույս է տեսել ամսագրի 1896—97 թթ. ամսատետրակներում և հետո՝ առանձին գրքով (1897, 98 էջ)։ Հեղինակը՝ Դ. Մարտոնը, հայոց միջավայրում պաշտոնավարող հունգար էր, դրականություն էր ավանդում Եղիսաբեթուպոլսի գիմնազիայում և ուներ գրական հակումներ։ Նրա առանձին բանաստեղծությունները տպագրվում էին նաև Բուդապեշտի գրական մամուլում։

Ասորաց թագուհի Շամիրամի առ հայոց արքան տածած կրքոտ սիրո գրավիչ պատմությունը Դ. Մարտոնը լսել էր իր պաշտոնակցից՝ Եղիսաբեթուպոլսի գիմնազիայի պատմության ուսուցիչ Ղուկաս Ավետիքյանից և այնպես գրավվել, որ վճռել էր այդ թեմայով պատմվածք գրել։ Բայց ստեղծագործական որոնումների ընթացքում, ինչպես ինքն է խոստովանում, պարզվում է, որ Արա Գեղեցիկի առասպելի գրական մշակման համար ավելի հարմար էր դրամայի ժանրը[4]։ Եվ նա պատմվածքի փոխարեն գրում է հինգ գործողությամբ մի ողբերգություն և 1884-ին մասնակցում դասական թեմաներով գրական-գեղարվեստական երկերի համահունգարական մրցանակաբաշխությանը։ Ճիշտ է, «Արա Գեղեցիկը» մրցանակի չի արժանանում, բայց ճանաչվում է իբրև հաջողված գործ[5]։ Հետագայում, 1894-ին Մարտոնը վերջնականապես վերանայում է այն և երկու տարի անց հանձնում տպագրության։

Դ. Մարտոնը ազգությամբ հայ չէր, բայց նրա ողբեր-

---

[4] „Szinmü az örmény történelemböl", 1896, № 9, o. 293.

[5] Նույն տեղում։

գությունը դասում ենք հունգարահայոց լավագույն գրական ստեղծագործությունների շարքը, մանավանդ որ հեղինակն իր կյանքի մեծ մասն ապրել էր Տրանսիլվանիայի հայերի շրջանում, որոնց հետ ուներ նաև ազգակցական կապեր։

Նկատի ունենալով, որ այս ուշագրավ երկը արդեն վաղուց մոռացված է Հունգարիայում, ինչպես նաև ցարդ անծանոթ է մնացել հայ գրականության եվրոպական առնչությունների հետազոտողներին, ավելորդ չենք գտնում նախ՝ գեթ համառոտ գծերով, շարադրելու բովանդակությունը։

Առաջին արարը բաղկացած է երեք պատկերից։ Երիտասարդ և գեղեցիկ Շամիրամը (Սեմիրամիս) մոլեգնորեն տենչում է իր հանգուցյալ ամուսնուն՝ քաջարի Նինոսին։ Պալատական տիկին Շամուրամուտը մխիթարում է նրան, աշխատում գուրգուրանքով ու երաժշտությամբ զվարթացնել և համոզում է գնալ-հանգստանալ։ Շամիրամը խնդրում է, որպեսզի Ջրադաշտ մոգը հսկի իր քունը։ Այնուհետև Շամուրամուտի մենախոսությունից պարզվում է, որ վերջինս Նինոսի երբեմնի կինն է եղել և ատում է թագուհուն, որովհետև խլել էր իր ամուսնուն և կործանել։ Սրանից դրդված՝ նա վաղուց մտադրվել էր վրեժ լուծել Շամիրամից, բայց սպասում էր հարմար պահի, երբ վերջինս կխոստովաներ, որ ինքն արդեն երջանիկ է.

Boldogtalant megölni nincs erőm;
Bánatnak a halál jótétemény...[6]

Դժբախտին սպանել չեմ կարող,
Քանզի վշտացյալի համար մահը բարիք է...

Ջրադաշտ մոգը, որ Շամուրամուտի երբեմնի սիրեկանն էր, երդվում է օգնել նրան, չնայած այդ պահին ինքն էլ սիրահարված էր Շամիրամին և անգամ ցանկանում էր, որ Շամուրամուտը մեռնի։ Շամիրամն ահավոր երազ է տեսնում և արթնանալով՝ խնդրում մոգին, որ մեկնի։ Ըստ

---

[6] *Márton Dávid*, Szép Ára tragoedia öt felvonásban, Szamosújvár, Aurora, 1897, o. 14.

այժմ՝ թագուհին պետք է անցներ կյանքի արյունոտ ճանապարհներով, գրավեր շատ տղամարդկանց սրտեր, ավերեր քաղաքներ ու երկրներ և վերջում զոհ գնար մարդասպանի դաշույնին։ Ահաբեկված Շամիրամը անսալով մոգին՝ խոսք է տալիս թողնել սուրն ու վահանը, նվիրվել խաղաղ գործերի ու երկրի բարգավաճմանը, միայն թե կարողանար խուսափել օրհասից։

Երկրորդ արարի դեպքերը ծավալվում է Շամիրամի բաբելոնյան պալատում։ Թագուհին ասեղնագործում է վարդեր, բայց անհանգիստ է հոգով և ծարավի՝ պատերազմի։ Նրա առջև փռված է մի մեծ գորգ, որի վրա սարկուհիներից յուրաքանչյուրը ասեղնագործել էր կյանքում իր համար ամենից թանկ արարածի պատկերը։ Նույն պահին ներս է գալիս պալատական ճարտարապետը և զեկուցում ավարտված շինարարական գործերի մասին։ Շամիրամն աշխարհին զարմացնելու ցանկությամբ հրամայում է, որ սկսեն կառուցել կախվող պարտեզներ։

Ուշադրությամբ դիտելով գորգը՝ Շամիրամը հմայվում է հայ գերուհու՝ Ալմիրայի ասեղնագործական գեղեցիկ պատանու պատկերով։ Դա հայոց թագավոր Արան էր, որին սիրահարված էին «հերոսական ժողովրդի բոլոր դուստրերը»[7], չնայած որ նա սիրում էր միայն մեկին... իր «քաղցր ու սրբազան հայրենիքը»[8]։ Բավական էր մի անգամ նայել այդ պատկերին, որ Շամիրամը բռնվեր անհագուրդ կրքով ու որոշեր նվաճել հայոց թագավորի սիրտը։ Շամուրամուտն ու ասորական զորահրամանատար Գուլը լուր են բերում, որ Մարաստանն ապստամբել է Ասորեստանի դեմ։ Հակառակ Զրադաշտ մոգի զգուշացումների՝ Շամիրամը հրամայում է, որ հայոց երկրի վրայով իր բանակը տանեն դեպի Մարաստան։

Հաջորդ՝ երրորդ արարի (ունի ութ պատկեր) դեպքերն ամբողջապես փոխադրվում են Հայաստան։ Քաղաքամայր Արմավիրում իշխան Զարը դավեր է նյութում թագավորի

---

7 Նույն տեղում, էջ 39։

8 Նույն տեղում։

դեմ, որոնց բարբարոսը նախանձն է։ Նա էլ է ձգտում Հայոց գահին և Ամիրայի սիրուն։ Արան կերտում է Ամիրայի անդրին ու միաժամանակ ջանում կռահել, թե ո՞ւր անհետացավ իր սիրած օրիորդը։ Զարը զեկուցում է Արային, որ ասորաց թագուհին պատրաստվում է ներխուժել Հայաստան։ Նույն պահին, իբրև Շամիրամի դեսպան, ծպտված ներս է մտնում Ամիրան և հաղորդում թագուհու ցանկությունները։ Արան մերժում է ճանապարհ տալ ասորաց զորքին, որովհետև ներքուստ համոզված էր, որ դա լոկ պատրվակ էր Հայաստանը գրավելու համար։ Ի դեմս ծպտված դեսպանի, Արան այնուամենայնիվ ճանաչում է Ամիրային։ Այնուհետև երկուսն էլ խոստովանում են միմյանց իրենց սերը։ Արան խնդրում է, որ Ամիրան չվերադառնա Շամիրամի բանակը, բայց երբ լսում է, որ օրիորդն ազնիվ խոսք է տվել, թողնում է համոզելը, միաժամանակ որոշելով՝ անձամբ ազատել նրան գերությունից։

Չորրորդ արարը ամենաընդարձակն է և ունի տասը պատկեր։ Ամիրան ներքին ուրախությամբ հաղորդում է Շամիրամին, որ Արան մերժում է նրա առաջարկը, նաև ակնարկում իրենց սիրո մասին։ Շամիրամը հրամայում է հայ օրիորդին զնդան նետել։ Զարը պատրաստ է գործակցել Շամիրամին, միայն թե հասնի իր նպատակներին և խորհուրդ է տալիս թագուհուն՝ Ամիրայի անունից տեսակցության կանչել Արային։ Շամիրամը լավ գիտեր իր գեղեցկության ու հմայքի ուժը և կարծում էր, որ անձնական հանդիպման ժամանակ Արան կբռնկվի իր սիրով։ Գիտենալով հանդերձ, որ թշնամու ճամբար մտնելը վտանգավոր է, Արան դիմում է այնտեղ. Ամիրայի սերը մոռացրել էր ամեն դժվարություն։ Հպարտ ու դաժան Շամիրամը չի քաշվում մինչև իսկ ստորանալուց, միայն թե հագուրդ տա իր մոլեգին կրքերին։ Նա ծունկի է գալիս Արայի առջև և սեր աղերսում, բայց Արան մնում է անդրդվելի. այդպիսի սերը կարող էր միայն հակակրանք առաջ բերել հայոց արքայի հոգում։ Մինչ Շամիրամը հրայրքի մեջ համբուրում է Արա-

յին և արտասանում՝ «Ես երջանիկ եմ...»[9], թաքստոցից դուրս է գալիս Շամուրամատը՝ դաշույնը ձեռքին։ Արան խանգարում է նրան ու փրկում Շամիրամի կյանքը. Շամուրամատը դատապարտվում է մահվան։

Հինգերորդ, վերջին արարով (ունի ինը պատկեր) լուծվում է հանգույցը. հայերն Արայի առաջնորդությամբ քաջաբար կռվում են ասորեստանցիների դեմ։ Ալմիրան էլ Արայի հետ է ու իրեն նետում է կռվի վտանգավոր տեղերը։ Չարը փակվել է հայոց արքայի պալատում և պատուհանից ուշիուշով հետևում է դեպքերի զարգացմանը. նրան ուրախացնում է, որ հաջողությունը թշնամու կողմն է, և ինքն անպայման կստանա հայոց թագը։ Ներս է մտնում հաղթած թագուհին՝ հետը մի զրահավորված գերի, որը նրա կարծիքով՝ Արան պիտի լիներ, մինչդեռ Ալմիրան էր։ Բերում են սպանված Արային։ Ալմիրան ողբում է, իսկ Շամիրամը զարմանքից քարանում. չէ՞ որ խստիվ հրամայել էր իր զինվորներին՝ ամեն կերպ պահպանել հայոց թագավորի կյանքը։ Արքայական պալատի բակում հավաքված հայ գերիները՝ տակավին կատարվածին անտեղյակ, ջարդում են շղթաները և ցասումով պահանջում՝ վերադարձնել իրենց թագավորին։ Չարը, որ կարծես Արայի երկվորյակը լիներ, հանդերձավորվում է ու դուրս գալիս պատշգամբ, որպեսզի խաբի նրանց։ Ալմիրան դիմակերծ է անում դավաճանին, բայց և միաժամանակ զոհ է դառնում զայրացած Շամիրամի դաշույնին։ Չարը անսահման վիշտ է ապրում, իրեն համարելով սիրած աղջկա մահվան պատճառը։ Շամիրամը հրամայում է՝ դավաճանին նետել զնդան։ Ողբերգությունն ավարտվում է Զրադաշտ մոգի՝ Արայի ու Ալմիրայի մասին ասած փառաբանական խոսքերով.

Oh, mint tudátok ti szeretni hősök!
Tiétek a diadal holt szivek!
Szerelmetek örökre élni fog...[10]

---

[9] *Նույն տեղում, էջ 75։*

[10] *Նույն տեղում, էջ 88։*

Ի՞նչպես կարողացար դուք սիրել, օ՜, հերոսներ,
Հաղթանակը ձերն էր, օ՜, հանգած հոգիներ։
Ձեր սիրտը պիտի այրի հար ու հավետ...

Հունգար բանաստեղծ Գ. Մարտոնի ողբերգությունն էլ հնագույն առասպելի հենքի վրա ծնված սիրային պատմության յուրօրինակ մշակման նմուշ է։ Արա Գեղեցիկն, իբրև գրական կերպար, մասնավորապես հայ նոր գրականության մեջ, հայրենիքի նկատմամբ տածած բոցավառ սիրո և հանուն նրա շահերի, նրա անկախությունն իր անձը զոհելու գաղափարի մարմնավորում է։ Հունգարական Արա Գեղեցիկը համընկնում է կերպարի այդ ավանդական մեկնաբանմանը։ Գ. Մարտոնի Արան իր երկրի բախտի նկատմամբ պատասխանատվության խոր գիտակցման տեր անձնավորություն է, որն իր սուրբ պարտքն է համարում պաշտպանել հայրենիքն օտարերկրյա զավթիչներից։ Ոչինչ ի վիճակի չէ խախտելու նրա այդ համոզմունքն ու հավատը՝ ո՛չ Շամիրամի գայթակղությունները, ո՛չ էլ այն ձախող խրատրությունը, որ սիրած աղջիկը գերության մեջ է։

Արային, որպես հայրենասերի, բարոյական վեհությունն ընդգծվում է նաև նրանով, որ նա, արքա լինելով հանդերձ, վայելում է իր հպատակների սերը և ստանում նրանց ջերմ աջակցությունը։ Ճիշտ է, ողբերգության մեջ որոշակիորեն չի խոսվում Արայի և ժողովրդի առնչությունների մասին, բայց բոլորովին էլ դժվար չէ կռահել, որ նրա համար ազգի և հայրենիքի շահերը նույնանում են։ Ալմիրայի պատմելով՝ ողջ երկիրը սիրում ու գորովանքով էր նայում Արային, բոլոր աղջիկների երազանքը նա էր։

Boldog király, ki egy kebel helyett
Egy nép szerelmét bírja zálogul![11]
Երջանիկ է այն արքան, որին մեկ սրտի փոխարեն
Սիրում է մի ամբողջ ժողովուրդ...

Դա ընդունում է անգամ իշխան Զարը՝ Արայի երդվյալ թշնամին.

---

[11] Նույն տեղում, էջ 40։

Nép-milliók szerelmi tárgya ő[12]

Նա միլիոնավոր մարդկանց սիրո առարկան է...

Թշնամու դեմ մղված կռիվներում միասնական կամքով են հանդես գալիս արքան և ժողովրդի ծոցից դուրս եկած նրա ռազմիկները: Կռվի դաշտում Արան ընկնում է իբրև շարքային զինվոր, առանց արտաքին տարբերանշան կրելու: Հինգերորդ գործողության մեջ հայ գերիները մի փափագ ունեն միայն՝ տեսնել իրենց սիրելի արքային ողջ-առողջ:

Եթե հայ գրողների պատկերած Արա Գեղեցիկը միաժամանակ և՛ հայրենասեր է, և՛ ընտանիքի սրբության գաղափարի արտահայտիչ, հունգար մշակման մեջ տվյալ խնդրում համանման մոտեցում է հանդես բերված, չնայած որ առասպելի հայկական մի շարք մշակումներում Արայի կինը՝ Նվարդ թագուհին, կենտրոնական գործող անձ է, մինչդեռ Դ. Մարտոնի Արան իրականում կին չունի և պատկերված է իբրև սիրահար երիտասարդ, որն անապակ սիրո պաշտամունք ունի: Շեղվելով առասպելից և ողբերգության մեջ մտցնելով համապատասխան կերպար՝ Ալմիրային, «Արմենիայի» խմբագրին ուղղված իր նամակում Դ. Մարտոնն այսպես է պատճառաբանել. «Դրա հետևանքով Արան, իբրև անապակ սիրո կողմնակից, հակադրվում է բարոյական այն սկզբունքներին, որոնք մերժում էին սերն ընդհանրապես»[13]: Դ. Մարտոնը դրանով չէր աղավաղում հայկական առասպելը, քանի որ բուն ողբերգության մեջ հիշվում է այնուհանդերձ, որ Արան ամուսնացած է եղել, բայց կինը վախճանվել է: Նշանակում է, ըստ հունգարական մշակման, Արան սիրել էր երկու անգամ, առանց սակայն ոտնահարելու ընտանեկան սրբությունը: Նա ջերմորեն սիրում է Ալմիրային, և այդ սերը չեն կարող մարել ո՛չ Շամիրամի գեղեցկությունը, ո՛չ գգվանքները, ո՛չ պաղատանքները: Ալմիրայի հանդեպ Արայի տածած զգացմունքներն անկեղծ են, ինչպես անկեղծ ու տևական էր նրա երբեմնի սերը հանգուցյալ կնոջ նկատմամբ: Կնոջ մահն, ասում է Մարտոնը, «խոր

12 Նույն տեղում, էջ 48:

13 „Színmű az örmény történelmből", 1895, № 9, o. 293.

վերք էր թողել»[14] նրա հոգում։ Պետք է տարիներ անցնեին, որպեսզի Արան կարողանար վերստին սիրել։

Նվիրվածությունը հայրենիքին և հավատարմությունը սիրած էակին (այսինքն՝ ընտանիքին)՝ Արայի համար փոխադարձորեն միմյանց հետ կապված ու անխախտ համոզումներ կամ գաղափարներ են։ Դավաճանել սիրած կնոջը, նշանակեր լինել հայրենիքի ազատության թշնամի, իսկ պաշտպանել հայրենիքը, նշանակեր անաղարտ պահել իր մեծ սերը։ Արան իր պարտքն է համարում զոհաբերել կյանքը հանուն հայրենիքի, չվախենալով, որ կորցնելով մեկը, կկորցներ և մյուսը։ Կոչ անելով հայերին՝ ընդդեմ զավթիչների դեմ մղվող պայքարի, Արան միաժամանակ բացատրում էր այն ահավոր վտանգը, որ սպասում էր Հայաստանին ու ժողովրդին.

A hon veszélyben, és ha elbukik
Kényén a durva hóditónak: akkor
A szerelem, család, s minden ami szent
Rommá törik...[15]

Հայրենիքը վտանգի մեջ է, և եթե նա անձնատուր լինի
Զավթիչ կնոջ մոլական քմահաճույքներին,
Այնժամ և՛ սեր, և՛ ընտանիք, և՛ ամեն ինչ, որ սուրբ են,
Կդառնան փոշի ու մոխիր...

Հունգար հեղինակին, հիրավի, հաջողվել է շոշափելի դարձնել Արա Գեղեցկի հմայիչ անձը և վեհ գործերը։ Շամիրամը թեպետև բռնի ուժով հաղթում է և՛ Արային, և՛ Ակմիրային, բայց անզոր է դառնում հպատակեցնելու նրանց, կարողանալով միայն սպանել վեհ գաղափարների կրողներին, մինչդեռ բարձր բարոյականությունը և, առհասարակ, մարդկայնության էական հատկանիշները մնում են հավիտենապես։ Շամիրամն էլ զգում է, որ Արայի մահը դեռևս ոչնչացումը չէ այն գաղափարների, որոնց մարմնացումն էր հայոց գեղեցիկ արքան.

---

[14] Márton Dávid, նշվ. աշխ., էջ 51։
[15] Նույն տեղում, էջ 77։

De hasztalan is voln'a gyilkolás,
Ha nemzetét is meg nem semmisitjük,
Mert minden ember a szivében hordia[15].

Նրան սպանելն ավելորդ բան կլիներ,
Երբ դեռ չի ոչնչացված նրա ազգը.—
Չէ՞ որ ամեն մարդ նրա կերպարը պահում է իր
սրտում...

Եվ այն, որ Արայի հաղթանակի մասին հիացական խոսքեր ասողը Շամիրամի մարդկանցից է՝ Զրադաշտ մոգը, դրանով առավել ընդգծվում է հեթանոս հայ իրականության մեջ աստվածացած Թագավոր-հերոսի մարդասիրական էությունն ու վեհությունը, հատկանիշներ, որոնք իրենց արտահայտությունն են գտել առասպելի գրական բազմաթիվ մշակումների մեջ նույնպես։

Դ. Մարտոնի Շամիրամը ամբողջությամբ համընկնում է հայ հին առասպելի գրառման օրերից հայտնի դարձած ավանդական կերպարին։ Հեղինակն այն գրեթե չի փոխել և իր կողմից էական ոչինչ չի ավելացրել։ Ասորեստանի փառամոլ թագուհին սովոր է ամեն ինչ ենթարկել սեփական կամքին ու նպատակներին՝ իր արարքներում ղեկավարվելով բռնահաճ եսամոլությամբ։ Նա զավթողական պատերազմներ է մղում, որպեսզի ընդարձակի իր իշխանությունն ու անձնական փառքը։ Նա չունի բարոյական պատասխանատվության զգացում, չի մտածում երբեք իր հպատակների բարեկեցության մասին և նրանց վրա նայում է իբրև «ստրուկների հոտի»։ Նա ընդունակ չէ նաև իսկական սիրո։ Արայի հանդեպ տածած զգացմունքները արդյունք էին լոկ ցանկասիրության ու տարփանքի։ Սիրո վրա Շամիրամը նայում է իբրև պատերազմի, որը պետք է շահել, իսկ տարփածու հակառակորդին՝ ոչնչացնել կամ ստրուկ դարձնել (չորրորդ արարի չորրորդ պատկերում Շամիրամը պատրաստվում էր Արային ընդունել որպես մի փորձառու զորավար, որ վճռական ճակատամարտից առաջ հաշվի էր առնում ամեն բան)։

---

15 *Նույն տեղում, էջ 41։*

Մյուս կողմից՝ Շամիրամն ընդունակ է ո՛չ միայն խաբելու, այլև սպառնալու, անգամ՝ անխնա պատերազմ սկսելու, որ բերում էր բազում աղետներ ու անմիտ զոհեր, միայն թե կարողանար հագուրդ տալ իր մոլի կրքերին։

Դ. Մարտոնի մշակման մեջ կան նաև ինքնատիպ կերպարներ, որոնք ծառայում են երկու գլխավոր հերոսների բախման էությունն ըմբռնելու համար։ Ալմիրայի դերը բացատրել է հեղինակն ինքը։ Այդ մասին խոսվեց վերևում։ Իսկ բանսարկու Զարի առիթով Մարտոնն ասում է, թե այն չափազանց «հարմար է Արայի բնավորության ողբերգականությունը բացահայտելու տեսակետից»[17]։

Գլխավոր կերպարներն ունեն նաև իրենց զուգահեռները կամ երկվորյակները, որոնց աշխարհընկալումը, վերաբերմունքը դեպի կյանքը կամ բախտը մեծ տարբերություններ չունեն։ Ալմիրան, ինչպես և Արան, զոհվում է հանուն հայրենիքի և անապակ սիրո։ Նա օժտված է նույն դրական գծերով, ինչ Արան։ Անհետաքրքիր չէ համեմատել նրան Արայի կնոջ՝ Նվարդի հետ, որ հանդես է գալիս առասպելի հնագույն տարբերակներում և բազմաթիվ մշակումների մեջ։ Նվարդը հավատարիմ կին է, ամուսնու հայրենասիրական ձեռնարկումների էությունը խորապես ըմբռնող ու բացարձակապես դրանց աջակցող անձ, բայց այն պարագան միայն, որ նա կին է, սահմանափակում է վերջինիս գործունեության ոլորտը։

Ալմիրան, ընդհակառակը, ո՛չ միայն սիրահարված ու նրբազգաց մի աղջիկ է, այլև հայրենիքի զինվոր, որն իր պարտքն է համարում կռվել և, եթե հարկ լինի, նաև հայրենակիցների հետ միասին զոհվել մարտի դաշտում։

Զարը, ինչպես և Շամիրամը, էությամբ լինելով չարության մարմնացում, ի վերջո չեն հասնում անձնական երջանկության։ Շամուրամուտի կերպարի օգնությամբ էլ լուսաբանվում են Շամիրամի ներքին էության ինչ-որ կողմեր (նա դայթակղել էր Շամուրամուտի ամուսնուն՝ Նինոսին և դարձել նրա կինը) և կրկին ու կրկին ընդգծվում Ա-

---

[17] „Szinmü az örmény történelemből", 1896, № 9, o. 293.

բայց մարդասիրությունն ու մեծահոգությունը մինչև իսկ թշնամու հանդեպ (Արան խափանում է Շամիրամի սպանությունը Շամուրամատի ձեռքով)։

Իր ողբերգության համար իրական (տվյալ դեպքում՝ պատմական) և ենթադրական գործող անձեր ընտրելիս Մարտանը հետևել է համաչափության սկզբունքին։ Ե՛վ հայոց, և՛ ասորիների կողմից հանդես են բերված չորական գործող անձինք (Արան, Ալմիրան, Զարը և Արայի թիկնապահ Սարգիսը։ Շամիրամը, Շամուրամատը, Զրադաշտ մոգը և ճարտարապետ Շամշիտը), որոնցից մասնավորապես երեքը հույժ կարևոր դեմքեր են, միմյանց փոխադարձաբար լրացնող ու բացահայտող։ Այս երեք զույգերից երկուսը՝ Արան ու Ալմիրան և Շամիրամն ու Շամուրամատը բնավորությամբ ու հավատով միրձենում են իրար, այնինչ երրորդը՝ Զարն ու Զրադաշտ մոգը, հակոտնյաներ են։

Ե՛վ հայկական, և՛ ասորական հերոսների միջև ստեղծված է մի տեսակ սիրային եռանկյունի (Արան ու Ալմիրան սիրում են միմյանց, իսկ Զարը նման զգացումներ է տածում հանդեպ Ալմիրան։ Զրադաշտը սիրային կապերի մեջ է Շամուրամատի հետ, բայց ներքուստ ձգտում է Շամիրամին)։

Դ. Մարտանի ողբերգության մեջ Արա Գեղեցկի նկատմամբ Շամիրամի տածած սերը սովական պատմությունը չէ, որ վերարտադրվել է։ Այն թեպետև ընկած է սյուժեի հիմքում, բայց լոկ միջոց է գեղարվեստորեն մարմնավորելու որոշակի գաղափարներ։ Ողբերգության մեջ միմյանց հետ բախվում են բարոյական երկու սկզբունք, մարդու և աշխարհի մասին երկու ըմբռնում։ Բախումը տեղի է ունենում այնքան բնական ձևով, որ կարծես բնության երևույթ լինի։ Բարոյական բարձր ըմբռնումների կործանումը իր հերթին միջոց է ծառայում անառարկելիորեն հաստատելու դրանց վեհությունը։ Հետևաբար և միայն դասական ողբերգության ժանրն էր հարմար Արայի և Շամիրամի առասպելական պատմության այդօրինակ գեղարվեստական վերարտադրման համար։

Դժբախտաբար, չգիտենք, բացի պաշտոնակիցների պատմածներից, Մարտանն ուրիշ աղբյուր ունեցե՞լ է ձեռքի

տակ, թե՞ ոչ։ Զգիտենք նմանապես, թե Ղուկաս Ալեքսիքյանը հիմնականում ի՞նչ գրքերից է քաղել համապատասխան տվյալները և հաղորդել նրան։ Որովհետև Մարտունի ողբերգությունը բավականաչափ մոտ է հայ ավանդական պատումներին, հավանական պետք է համարել, որ Ղ. Ալեքսիքյանի (հետևաբար և Մարտունի) հիմնական աղբյուրները Մովսես Խորենացու Պատմագիրքը և Մ. Չամչյանի «Հայոց պատմության» առաջին հատորն են եղել։

Արա Գեղեցկի և Շամիրամի պատմելի մեջ թաքնված ներքին դրամատիզմը իրոք որ հնարավորություն է ընձեռում կյանքի կոչելու մի անմահ ողբերգություն։ Դ. Մարտունի ստեղծագործությունն ունի ուրիշ ուշագրավ կողմեր ևս, բայց և, ցավոք, սակավ են։ Հեղինակն օժտված չէր այնպիսի տաղանդով ու վարպետությամբ, որ հնարավորություն ունենար ստեղծելու մի հաջողված թատերական երկ։ Մարտունի ամենաշոշափելի նվաճումն այն է, որ դասական օրինակների հետևությամբ գրված ողբերգության մեջ կարողացել է մարմին տալ հասուն ու հիմնավորված հայեցակետի։ Բայց կառուցվածքի, լեզվի ու տաղաչափության առումով թերությունները բավականաչափ շատ են։ Առանձին արարներում (օրինակ՝ երրորդ, չորրորդ և հինգերորդ) պատկերների շատությունը, ինչպես նաև ավելորդ դիպվածները (օրինակ՝ երկրորդ գործողության մեջ Զրադաշտ մոգն ինչոր երկար ու ձանձրալի մի գիրք է կարդում թագուհուն զվարճացնելու համար) կասեցնում են գործողությունների ընթացքը։ Երբեմն զգացվում է ճշմարտացիության և բնականության պակաս (օրինակ՝ միայն վերջին գործողության մեջ ու այն էլ անակնկալ ձևով՝ իմացվում է, որ Զարը շատ նման է Արային, և ժողովրդին խաբելու համար կարելի է նրան ապարեն հանել, կամ էլ վիթխարի բանակներ շարժման մեջ դնող Շամիրամը կարող է վախենալ շղթայակապ գերիներից և այլն)։

Ժամանակին «Արմենիայի» էջերում հարց բարձրացվեց բեմ հանել «Արա Գեղեցիկը», որը, անտարակույս, հնարավոր կլիներ որևէ փորձառու գրողի ձեռքով կատարված խմբագրումից հետո միայն։ Իսկ թե, առհասարակ, բեմադրվե՞լ

է այն ու ի՞նչ ձևով, ոչինչ հայտնի չէ առայժմ։ Եվ այնուհանդերձ՝ գեղարվեստական թերությունները չեն կարող ստվեր գցել Դ. Մարտոնի ստեղծագործության վրա։ Առասպելի օտար մշակումների մեջ հունգար հեղինակն ամենից մոտ է կանգնած ավանդական պատումին, որի պատճառը, թերևս, այն է, որ Մարտոնը ցուցաբերել է ո՛չ թե մակերեսային մոտեցում, այլ թափանցել է առասպելի էության մեջ, ըմբռնել վերջինիս այլաբանական կեղևի տակ թաքնված մտքերի վեհությունը։ Բայց որովհետև նա այդ ամենը վերարտադրել է կլասիցիզմի արվեստագետների նախասիրած ժանրի՝ ողբերգության միջոցով, իսկ կլասիցիստներին էլ խանդավառում էին անտիկ ըմբռնումները, այդ պատճառով ինչ-որ չափով պահպանվել է Արա Գեղեցկի դիցաբանական էությունը։

Հունգարական «Արա Գեղեցիկը» կյանքի էր կոչվել հունգարահայության մշակութային և հոգևոր զարթոնքի շրջանում։ Լիակատար ձուլման դատապարտված հայերի համար հանուն հայրենիքի ու հայրենի օջախի սրբության զոհված հերոսի մասին խոսքերը ձեռք էին բերում առանձնահատուկ հմայք և արտակարգ հնչեղություն։

Դ. Մարտոնի ողբերգությունն, անձամբ տրանսիլվանահայության համար, ուներ մեկ այլ՝ գործնական, ուսուցողական նշանակություն ևս. ընթերցող հասարակայնությունը դրա միջոցով հաղորդակից էր դառնում հայ ժողովրդի հյուսած խորիմաստ ու գեղեցիկ առասպելներից մեկին։

Հեղինակն ինքն էլ ողբերգության գործող անձանց բերանով կարծես թե հենց այդ է ակնարկում, երբ գրում է.

Jobban tudjuk szeretni a hazát,
Az elhagyottat, mint ki benne él![18]

Մենք ավելի շատ ենք սիրում հեռվում թողած մեր հայրենիքը,
Քան թե նրանք, որ ապրում են այնտեղ...

Բանն այն է, որ հեղինակը հատուկ դիտավորությամբ

[18] Márton Dávid, նշվ. աշխ., էջ 60։

ընդգծել է այս միտքը՝ ողբերգության տպագիր տարբերակում հիշյալ երկու տողը շարել տալով գլխագրերով։

2. ՀՈՒՆԳԱՐ ԳՐՈՂՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Փնտրել գտնել հունգար մատենագրության այն բոլոր էջերը, որոնք վերաբերում էին հայերին, և այդ ամենը ներկայացնել հանդեսի ընթերցողներին, անասելի աշխատատար և մասնագիտական պատրաստություն պահանջող գործ էր։ Չգիտենք, ամսագրի աշխատակիցներից կամ թղթակիցներից որևէ մեկին երբևիցէ տրվե՞լ է նման հանձնարարություն, բայց «Արմենիայի» տվյալ հարցին վերաբերող նյութերը շատ հեռու են լիակատար լինելուց։ Բայց եղածներն էլ, երբ նկատի ենք առնում, թե ում գրչին են պատկանում, անչափ ուշագրավ են. բոլորն էլ գրեթե քաղված են հին ու նոր շրջանի հունգար ամենանշանավոր գրողների երկերից։

Ըստ «Արմենիայի» ամենաեռանդուն աշխատակից Լ. Ըստկարյանի հետախուզումների[19], հայերին անդրադարձած առաջին հունգար գրողը XVIII դարի խոշորագույն արձակագիր Կելեմեն Միկեշն էր[20] (1690—1761), որի նամակներից

[19] «Արմենիան» 1892 թ. № 8-ում (էջ 216--218) իր ընթերցողներին ծանոթացրել է հանդեսի այս ամենաերիտասարդ աշխատակցի անձի ու գործի հետ և սեղմ ձևով շարադրել նրա դոկտորական դիսերտացիայի («Հունգարական գեղարվեստական բալլադի սկզբնավորումը», Բուդապեշտ, 1892) հիմնական դրույթները։

[20] Կ. Միկեշը Տրանսիլվանիայի ազնվականական գերդաստաններից մեկի զարմիկն էր։ Դեռ շատ երիտասարդ՝ ընկել էր երկրամասի իշխան Ֆերենց Ռակոցի II-ի պալատը. սկզբում նրա մանկլավիկն էր, հետո՝ սենեկապետը։ Հաբսբուրգների դեմ մղված ազատագրական պայքարի (1703—1711) պարտությունից հետո, իսկ Ֆ. Ռակոցի II-ը այդ շարժման առաջնորդն էր, իր սիրելի իշխանի հետ միասին տարագրվեց Լեհաստան, իսկ այնտեղից էլ՝ 1713-ին Ֆրանսիա և, վերջապես, 1717-ին՝ Թուրքիա։ Լյուդովիկոս XIV-ի պալատը, փարիզյան սալոնները և ժամանակի ֆրանսիական գրականությունը մեծ դեր են խաղացել Միկեշի գրական ճաշակի ու ըմբռնումների ձևավորման գործում։ Իր առաջին գրական ստեղծագործությունները նա գրել է Թուրքիայում եղած տարիներին։ Այստեղ է հորինել նրան գրական փառք բերած «Թուրքական նամակա-

երկուսը հանձնվում էին ընթերցողների ուշադրությանը[21], ընդարձակ քաղվածքներ անելով մասնավորապես 42-րդ նամակից (գրված՝ 20 նոյեմբերի 1721 թ.), ուր նկարագրվում էր Հայոց Հարսանեկան թափորը[22]։

Հունգար հանրաճանաչ գրողի այս ուշադրավ էջերին Ըստկարյանը մոտենում էր բոլորովին նոր հայեցակետից։ Եթե ուրիշների համար Միկեշի նամակները առաջնակարգ սկզբնաղբյուրներ էին հունգար տարագիրների կյանքի ուսումնասիրության համար, ապա «Արմենիայի» հոդվածագիրը Միկեշին նայում էր իբրև նուրբ դիտողականության տեր մի արվեստագետի, որի գրչի տակ մարմին էր առել թուրքական մի բազմազգ քաղաք՝ իր խայտաբղետ ազգային կազմով (Ռոդոստոյում ապրում էին թուրքեր, հույներ, հայեր և հրեաներ) ու առօրյայով,—և ճաշակ էր տալիս նամականու ամենագեղեցիկ էջերից, որոնք, ի դեպ, նվիրված էին հայերին և, առանց երկբայության, կարող են դառնալ հայ ժողովրդի մի հատվածի պատմական կյանքի ու կեցության կարևորագույն վավերագրերի շարքը։

Örmény menyasszonyt pompával
Viszik este sok gyertyával,
Ki templomba vőlegénnyel
Megesküszik nagy örömmel
Másnap menyasszonyt uteczákra

նիս» շարքը՝ բաղկացած 207 նամակից, որոնք ուղղված էին ինչ-որ ենթադրական կոմսուհու՝ «Պ. է.» անվանատառերով։ Միկեշի նամակների առանցքն են կազմում հունգարական գաղութի առօրյան, իշխան Ռակոցին, ապա և՝ իր մտորումներն ու զգացումները հեռավոր հայրենիքի ու հարազատ ժողովրդի ճակատագրի մասին, իր քնքուշ սերն առ Ժուժա Կեոսեգի և, վերջապես, իր պանդխտավայրից՝ ընդհանրապես Թուրքիայից և Ռոդոստո փոքրիկ քաղաքից ստացած բազմազան տպավորությունները։

21 *Esztegár László*, Az első magyar armenista, 1888, № 11, o. 337.

22 Ըստկարյանի ուշադրությունը գրաված մյուս նամակն էլ 36-րդն է, որտեղ, ի դեպ, ասված է. «Հայուհիները գնչուների պես սպիտակամորթ են»։

Viszik házakról házakra.
Annak fejét bétakarják,
Hogy ne lásson, azt akarják,
Orrára könnyen leesne,
Ha segitsége nem lenne.
Őtet kétfelől vezetik
Öreg asszonyok segitik.

Menyasszony nagy büszkén megál!
Minden háznak kapujánál,
Ott keszkenőt a nyakára
Tésznek, elég ajándékra
Onnét elébb meginditják
Meg más háznál megállitják.
A vőlegény pillangóson
Megyen előtte kardoson.
Az utczákat mind béjárván
S elég ajándékot kapván
Viszik vőlegény házához,
Hol kezdenek vigassághoz.

Egy hétig tart lakodalom,
Három napig az unalom;
Mert addig a vőlegénynek
Lánczon kell lenni kedvének.
Csak száraz kortyot kell nyelni,
Mert nem szabad megkóstolni.
Lakadalma vőlegénynek
Hasznára van erszényének;
Mert kiki ád néki annyit,
Hogy elteszi annak felit[23].

Հայ հարսնյակին տանում են գիշերները՝
Մոմերի լույսի տակ ու մեծ հանդիսավորությամբ.
Եկեղեցում պսակվում է փեսայի հետ՝
Անասելի ուրախությամբ։

---

[23] *Esztegár László*, Նշվ. աշխ., էջ 337։

Հաջորդ օրը պտտեցնում են հարսին
Փողոցից փողոց և տանից տուն.
Դեմքը ծածկում են, որովհետև
Չեն ուզում, որ մարդիկ նայեն նրան։
Եթե նա օգնողներ չունենա,
Հեշտությամբ կսայթաքի, կընկնի վար.
Դրա համար էլ ուղեկցում են տարեց կանայք,
Որ օգնեն ու առաջնորդեն նրան։
Ամեն մի տան դուռ հասնելիս՝
Հարսը կանգնում է վեհորեն.
Վզին թաշկինակ են կապում,
Այդ էլ նվեր է նրանց կողմից։
Հետո շարունակում են ճամփան
Ու կանգնում մեկ ուրիշ տան մոտ։
Առջևից փեսան է քայլում՝
Շքեղ հագուստներով և կեցվածքով հպարտ։
Երբ վերջին փողոցն էլ անցնում են
Ու բոլոր նվերներն հավաքում,
Հարսին տանում են փեսայի տուն,
Ու նոր միայն սկսվում է կերուխում։
Հարսանիքը տևում է յոթ օր,
Բայց երեք օր դեռ տխրելու է փեսան.
Նրա ցանկությունները դեռ չեն կատարվելու,
Նրա կապանքները դեռ չեն քանդվելու,
Կարող է հայացքով միայն գոհանալ,
Վայելելու իրավունք դեռ չունի։
Հարսանիքն օգուտ է բերում
Փեսայի քսակին,
Որովհետև այնքան են տալիս,
Որ կեսն հազիվ է ծախսվում...

Հայոց հարսանեկան թափորի այս նկարագրությունը հետաքրքրական է նաև նրանով, որ նշանավոր արձակագիրը դրա համար դիմել է հանգավոր տաղերի, որպիսի հնարանքից նա սակավ էր օգտվում իր նամակներում, ըստ որում Միկեշն իր կարծեցյալ հորաքրոջը (թե՞ մորաքրոջը)՝ կոմ-

սուհի Պ. Է.-ին այդ առթիվ գրում էր. «...մի ոտանավոր եմ հորինել, բայց չգիտեմ՝ ուղարկե՞լ, թե ոչ։ Բայց Ձեզ կուղարկեմ։ Օտարին հազիվ թե ծանոթացնեի նրա հետ, որովհետև չեն ասի, թե գեղեցիկ բանաստեղծություն է»[24]։ Համեստությունն այս դեպքում, գոնե, անտեղի էր, որովհետև Միկեշը չափածոյի ընձեռած հնարավորություններից օգտվել է մեծ հաջողությամբ։ Իր պարզ բանատողերով (որոնք հանգավորված են զույգերով a, a, b, b և այլն) ու համեմատաբար սեղմ ոտանավորով (ընդամենը 34 տող) նա կարողացել է վերականգնել ժողովրդական մի ծիսակատարություն՝ իր հատկանշական կողմերով։

Երբ ծանոթանում ենք Միկեշի բուն նամակի ամբողջական բնագրին, նկատում ենք մի շարք էական տարբերություններ ու հապավումներ։ Եվ մի բնական հարց է ծագում. ինչո՞ւ Ըստկարյանը բաց է թողել նամակի՝ հայերին վերաբերող մնացած մասերը և կամ թե ինչո՞ւ նա չի վերապատմել դրանց գեթ համառոտ բովանդակությունը, որ այնքան համահնչյուն էին իր հոդվածի հետապնդած նպատակներին։ Ենթադրել, թե Լ. Ըստկարյանն ըստ ամենայնի լավատեղյակ չի եղել Միկեշի «Թուրքական նամականի» երկին, սխալ կլիներ։ Պատճառը, մեր կարծիքով, հոդվածագրի զգուշավորությունն է։ Նա մտավախություն է ունեցել, որ եվրոպական կրթության ու բարոյական ըմբռնումների տեր այդ արևմտացված խոսքերը, թերևս, կարող էին ժամանակի ընթերցողների շրջանում առաջ բերել անցանկալի արձագանքներ, որոնք անհարիր էին ամսագրի բուն նպատակներին[25]։

---

[24] *Mikes Kelemen*, Törökországi levelek és misszilis levelek, 1. Bp., 1966, o. 67.

[25] Ըստկարյանը միակը չէր, որ նման մտավախություն էր հանդես բերում։ «Արմենիայի» 1890 թ. ապրիլյան համարում տպագրվել է գրող Լուիզա Հարմատի «Միկեշը և հայկական ամուսնության սովորույթը Սրբեկլըում» հոդվածը, ուր, անդրադառնալով բուն Հայաստանում տիրող ամուսնական սովորույթին, նկատում է, որ թուրքական խավար տիրապետության պայմաններում հազիվ թե ուրիշ բան կարելի լիներ ակնկալել, չնայած որ հայուհու կյանքն ու հասարակական դերը շատ ավելի բարձր են, մարդկային ու մարդասիրական, քան արևելյան մնացած ժողովուրդների կանանց։

Ճշմարտությունն այն է, որ Կ. Միկեշը բավականաչափ շատ է գրել հայերի մասին, այնքան շատ, որ ինքն էլ է դա զգացել ու փորձել կանխել. «Հերիք է, ինչքան հայերի մասին գրեցի, բայց չեմ կարող չգրել, որովհետև նրանց շրջապատում ենք ապրում...»[26]: «Ես ծառայիս հետ բնակվում եմ մի հարուստ հայի տանը...»[27] և այլն:

Լ. Ըստկարյանն, անշուշտ, իրավացի էր, երբ Միկեշին կոչում էր «առաջին հունգար հայագետը» այն առումով, որ հունգարական գրականության մեջ իսկապես նա առաջինն էր, որ վերարտադրում էր հայերի կյանքի ու սովորությունների որոշ կողմեր, մասնավորապես այնպիսիք, որոնք անսովոր ու տարօրինակ էին եվրոպացիների համար: Ամեն անգամ նա դրանք ներկայացնում էր միայն իրեն հատուկ մի այնպիսի նուրբ հումորով, որի պատճառով նամականիի ոճը յուրատեսակ գրավչություն էր ձեռք բերում:

Անշուշտ, կոպիտ սխալ թույլ տված կլինենք, եթե Միկեշի մոտ փնտրեինք հայ ժողովրդի վերաբերյալ գիտական լուրջ բնութագրումներ: Նա գիտնական չէր, այլ գրող, որ ստեղծագործում էր սոսկ անձնական հետաքրքրությունից դրդված, որպեսզի դրանով իսկ ցրեր ծանր խոհերը պանդխտության, հայրենիքի և հարազատ հունգար ժողովրդի բախտի վերաբերյալ:

Ի հաստատումն Լ. Ըստկարյանի տված բնութագրի ճշտության, ավելորդ չենք համարում փոքր-ինչ ծավալվել՝ շրջանառության մեջ դնելով նաև նոր քաղվածքներ Միկեշի մյուս նամակներից, որոնք պակաս ուշագրավ ու հետաքրքրական չեն, քան հարսանեկան թափորի նկարագրությանը նվիրված հանգավոր տողերը: Ներկա դեպքում էականն այն չէ, թե Միկեշը որքան խոր է կարողացել թափանցել հայ կյանքի մեջ և ինչ կողմերի վրա մասնավորապես ուշադրություն դարձրել, մանավանդ որ, երկար ժամանակ Ռոդոստոյում ապրելով՝ նա մի տեսակ մեկուսացված է եղել և քաղաքի ու նրա բնակիչների վրա նայել է հարևանցիորեն,

---

[26] Mikes Kelemen, նշվ. աշխ., էջ 198:

[27] Նույն տեղում, էջ 54:

իբրև կողմնակի, սակայն սուր դիտողականության տեր մեկը[28]։

Նրա 42-րդ նամակը համարյա ամբողջությամբ նվիրված է հայերին։ Հարսանեկան թափորի նկարագրությունից բացի, նամակում խոսվում է նաև այն մասին, որ հայերն անչափ աշխատասեր ժողովուրդ են, շատ են զբաղված առանձնապես աշնանը՝ նոյեմբեր ամսին, երբ ձմռան համար պաշար են ամբարում. «Նրանք մորթում են գոմեշներ, որանց մսից ապուխտ պատրաստում... որ չորացնում են արևի տակ ու դրանով սնվում ամբողջ տարին»[29]։

Նվազ հետաքրքրական չէ նաև 58-րդ նամակը, ուր նկարագրվում է ռոդոստոբնակ հայերի մեկ ուրիշ սովորույթ. «Պետք ասել,—գրում է նա,—որ այստեղ հաճախ է ձյուն տեղում, ու միմիայն նրա համար, որպեսզի հայերի խրախճանքները ծայր առնեն... Մի հսկա տաշտի մեջ նրանք լցնում են երեք-չորս օր առաջ տեղացած ձյուն, որը սովորաբար լինում է բավականաչափ համեղ, պինդ ու խշխշան, հետո վրան ավելացնում են մի տեսակ քաղցր հյութ։ Իսկ գիտե՞ք, թե ինչից է պատրաստված վերջինս. դա խաղողի հյութ է, որ եփում են մեծ կաթսաների մեջ, մինչև որ թանձրանում է ու նմանվում գարեջրի թթխմորի (դրոժի)։ Հետո դա քամում ու լցնում են տակառների մեջ... Երկնքից իջած այդ մանանան նրանք դնում են տան կենտրոնում, իսկ ընտանիքի բոլոր անդամները տանտիրոջ գլխավորությամբ նստում են շուրջը։ Ամենքի ձեռքին գդալ կա, և ուտում են այնպես, կարծես սերուցք լինի։ Անգամ կրծքի երեխան պիտի համտես անի։

[28] Ռոդոստոցիները հունգար վտարանդիների հետ վարվում էին ծայր աստիճանի անվստահությամբ։ Միկեշի ասելով՝ «Հենց սկզբից նրանք դիմում են ղադուն (այսինքն՝ թուրք դատավորին) և ասում, որ ինչպես լսել են, հունգարներն այնքան խարդախ մարդիկ են, որ բռնաբարում են կանանց ու աղջիկներին անգամ փողոցներում» (նույն տեղում)։ Այս ու նման ասեկոսեների պատճառով՝ հունգարները զրկված էին քաղաքի բնակիչների հետ սերտ հարաբերությունների մեջ մտնելու հնարավորությունից. «...Այստեղի մարդկանց հետ չի կարելի խոսել,—կարդում ենք նույն նամակում։ —Օտարերկրացուն արգելված է որևէ մեկի հետ երթուգալ ունենալ» (նույն տեղում, էջ 58)։

[29] Esztegár László, նշվ. աշխ., էջ 337։

Եթե ձմեռն այնքան ժլատ է, որ քաղաքում ձյուն չկա, կիներեխա ունեցողները ձյան համար կտրում-անցնում են մի քանի մղոն տարածություն ու այդ ձևով ծառայում յուրայիններին։ Բայց ներկա դեպքում ամեն ինչ բարեհաջող է, որովհետև ձյունը բավականացնում է։ Հիմա նրանց մոտ սկսվել է հարսանիքների ամիսը։ Անչափ շատ են չարչարում իրենց երկլարանի ջութակները»[30]։

Միկեշը հայերի մասին խոսում է և ուրիշ նամակներում, գովում է նրանց աշխատասիրությունը, առաքինությունը, նկարագրում տարազը և այլն։ Հայերի վարվեցողությունը հաճախ նրան տարօրինակ է թվում։ Օրինակ՝ 37-րդ նամակում կարդում ենք. «Մասնավորապես հայերը շատ ավելի են դողում իրենց կանանց վրա, քան թուրքերը. ես դեռ չեմ կարողացել տեսնել իմ հարևանուհուն։ Օրն ավելի քան տասն անգամ, պատահում է, որ անցնում եմ նրանց դռնով, բայց նա, եթե հանկարծ այդ պահին դռան մոտ է լինում, արագորեն փախչում է ինձանից, ինչպես սատանայից, և կողպում դուռը»[31]։

Միկեշի ուշադրությունից չի վրիպում նաև ընտանիքում հարսի կախյալ վիճակը։ «Մի տգեղ սովորություն կա նրանց (այսինքն՝ հայերի—Է. Բ-Գ.) մոտ,—գրում է նա,—հենց որ խեղճ հարսին տուն են բերում, խոսկապ են դնում, ինչպես պապն է վարվում իր կարդինալների հետ, և նա չի կարող խոսել այնքան ժամանակ, մինչև որ սկեսրոջից թույլտվություն չստանա։ Իսկ մինչև այդ օրը նա պետք է մունջ ձևանա և իրավունք ունի խոսելու միայն իր ամուսնու, բայց ո՛չ ուրիշ մեկ այլ մարդու հետ։ Երբ սկեսուրը դիմում է հարսին, կամ որևէ հանձնարարություն տալիս, վերջինս պետք է միայն գլխով անի։ Եվ դա շարունակվում է վեց-յոթ տարի։ Եթե սկեսուրը սիրեց հարսին, ապա ժամանակից շուտ է քանդում նրա խոսկապը։ Իսկ եթե հանկարծ չսիրեց, ապա սա պիտի համր մնա մինչև տասը տարի, չնայած բոլորն էլ միևնույն տան մեջ են ապրում։ Այս

[30] Mikes Kelemen, նշվ. աշխ., էջ 197—198։

[31] Նույն տեղում, էջ 58։

սովորույթի պատճառն այն է, որ ուզում են, որ նորահարսը վճեր չարքի և հլու հնազանդ լինի իր սկեսրոջը։ Մի՞թե օգտակար չէր լինի մեզ համար էլ նույն այդ սովորությունը»[32]։

Միկեշի նկարագրությունների արժեքը միայն այն չէ, որ դրանք հայերին վերաբերող առաջին էջերն են հունգար գրականության մեջ, այլև այն, որ նրա դիտողությունները ունեն ճանաչողական մեծ արժեք, իբրև հայ ժողովրդի մի փոքր հատվածի կյանքի ու կենցաղի ուշագրավ կողմերի մասին գաղափար տվող վստահելի սկզբնաղբյուրների, եթե նկատի առնենք, որ ազգագրությունն, իբրև գիտության բնագավառ, հայ իրականության մեջ սկսվում է ձևավորվել XIX դարի 30—40-ական թվականներից միայն, մինչդեռ Միկեշի նկարագրությունները շուրջ մեկ դարով կանխում են այդ։

Հայերին անդրադարձած մյուս հունգար գրողը, որը նույնպես ներկայացվել է «Արմենիայի» ընթերցողներին, Իշտվան Հորվաթն է (1784—1846)։ Նրա գործունեությունը զուգադիպում է XIX դարի առաջին տասնամյակներին, երբ եվրոպական երկրներում, ինչպես նաև բուն Հունգարիայում, բուռն հետաքրքրություն էր զարթնել դեպի պատմական անցյալը, երբ կենսական խնդիր էր դարձել ազգային հոգեբանության էական գծերի վերհանումը և գրական նոր լեզուների մշակումը։ Ռոմանտիկ գրական ուղղության երևան գալով պայմանավորված այս ձգտումներին զուգահեռ, եվրոպական մի շարք գրողներ (Գյոթե, Շիլլեր, Բայրոն և այլն) իրենց հայացքը դարձնում են դեպի Արևելք՝ վերջինիս մեջ որոնելով իրենց գրական ըմբռնումներն ու գաղափարները անձնավորելու համար կերպարներ ու բնավորություններ։

Ի. Հորվաթը կոչմամբ պատմաբան էր. Հունգարիայի հին պատմությունը նրա տարերքն էր, բայց նա պարապել է նաև գրականագիտական հետախուզումներով։ Ի թիվս մի շարք գրական-պատմական հուշարձանների (աստվածաշունչ, հույն ու լատին հեղինակներ), նրա ուշադրությանն է գրավել նաև աշխարհահռչակ պատմագիր Մովսես Խորենացին,

---

32 Նույն տեղում, էջ 198։

որի աշխատության մեջ Հորվաթն ատաղձներ է փնտրել հունգարների հին պատմության համար։

Ի. Հորվաթի պատմահայեցությունը ռոմանտիկական է, եզրակացությունները՝ երբեմն առանց գիտական լուրջ փաստարկման, բայց՝ դարաշրջանով պայմանավորված այս հակասությունների հետ միասին, նրա գործունեությունը նշանակալից տեղ է գրավում Հունգարիայի գիտական և մշակութային կյանքի պատմության մեջ։

Հայկական աղբյուրներին դիմելը և դրանց տված բարձր գնահատականը՝ հունգար հայագիտության Հորվաթի մատուցած ծառայություններից ամենաշոշափելին է։

Հոդվածներից մեկում նա պատմում է, թե ինչպես Վիեննայում ձեռքն է անցնում Խորենացու Պատմությունը[33], որը միանգամից կլանում է իր ուշադրությունը կրկնակի պատճառներով։ Նախ՝ այդ գրքում առատ էին նյութերը քուշանների մասին, որոնց գիտնականները երկար ժամանակ հունգարների նախահայր էին ենթադրում։ Եվ ապա՝ այդ անմահ ստեղծագործությունը ո՛չ միայն հիացմունքի զգացմունք է առաջ բերում Հորվաթի մեջ, այլև խորին հարգանք դեպի այն ժողովուրդը, որի զավակն էր հեղինակը։ «Գիտական աշխարհի աչքում ամենանվաղ իսկ արժեք չի կարող ունենալ այն ժողովուրդը, որը չունի սեփական լեզվով գիտական մաքի հնագույն հուշարձաններ, և, ընդհակառակը, մեծ հարգանք է վայելում այն ժողովուրդը, որը կարող է ի ցույց դնել վաղնջական դարերին վերաբերող և իր ազգային լեզվով գրված կոթողներ։ Այս խրողությունն ինձ հարկադրեց չհիշել ուրիշներին և գլխավորապես խոսել հայոց, այսինքն հայկազյան գրականության մասին։

Եվրոպական ազգերից ո՞րն է ի վիճակի ի ցույց դնելու իր մայրենի լեզվով և այնքան վաղ դարերից եկող նման գործեր։ Մինչդեռ մենք ցայժմ Հունգարիայի պատմության

---

33 Խոսքը Վիստոն եղբայրների հրատարակած՝ Խորենացու «Հայոց պատմության» մասին է, որ լույս է տեսել Լոնդոնում, 1736 թվականին։

ուսումնասիրության համար չէինք ուզում հաշվի նստել հին հայկազյան պատմագիրների հետ»[34]:

Հունգար գիտնականն ուշադրություն է դարձրել նաև Խորենացու Պատմության մյուս առավելություններին, մասնավորապես ժողովրդական բանահյուսության հնագույն նմուշները հետնորդներին հասցնելու վրա: Նրան առանձնապես մտահոգել է այն, որ հայկական աղբյուրները, որոնք, իր կարծիքով, հունգարների հին պատմության ուսումնասիրման գործին կարող էին շոշափելի նպաստ բերել, մատչելի չէին հունգար գիտնականներին, ուստի և՝ հետևյալ հռետորական հարցումն էր ուղղում հունգարահայերին. «Մեր շրջապատում ապրող հայերից ո՞րը պիտի արդյոք կարողանա՝ հոգալով իր նոր հայրենիքի համար... հայ հեղինակների գրվածքներից քաղել ու թարգմանել հունգարներին վերաբերող մասերը...»[35]:

Սամոշույվարի ծխատեր քահանա Խ. Ղուկասյանն եղավ այն մարդը, որն, իսկապես, նկատի առնելով իր նոր հայրենիքի շահերը, գրեց մի ուշագրավ աշխատություն, խորագրելով այն «Հունգարների նախնիները, հնագույն անունները և բնակավայրերն ըստ հայկական աղբյուրների», որի մասին հունգար արդի մեծ գիտնական, Բուդապեշտի Լ. Էոտվեշի անվան պետական համալսարանի հնագիտության ամբիոնի վարիչ պրոֆ. Դյուլա Լասլոն գրել է. «Աղբյուրների վերլուծման եղանակն այն ժամանակների համեմատությամբ՝ հիմա շատ լուրջ փոփոխություններ է կրել, և Լուկաչու աշխատությունն էլ մոռացվել է, բայց մենք դեռ շատ բան կարող ենք գտնել այնտեղ»[36]:

Ի. Հորվաթի անվան հետ է կապված նաև հայ գրականության մատենագիտական մի փորձ, որ նա կազմել է լատիներեն լեզվով (անցյալներում պահվում էր Բուդապեշտի ազգային թանգարանում, հետևյալ խորագրով. „Adversaria pro notitia historiae literariae armeniacae. Colligit Step-

---

[34] S. J., Horváth István, mint armenista, 1888, № 3, o. 89.

[35] Նույն տեղում:

[36] Դ. Լասլոյի՝ մեզ ուղղված մասնավոր նամակից:

hanus Horvat Bibl. Szech. Regu. Custos. Pestini MDCCC XXXV"):

Վերջինս պարունակում էր IV—XVIII դդ. այն հայ մատենագիրների անունները, աշխատությունների ճիշտ վերնագրերը, նրանց վերաբերող ձեռագրերի ու ուսումնասիրությունների անունները, որոնք հայտնի էին տպագիր աղբյուրներից[37]*։ Ծանուցելով այս մասին «Արմենիայի» ընթերցողներին՝ Է. Բանյային ավելացնում էր նաև, որ Հորվաթը առաջին գիտնականն է աշխարհում, որ փորձել է կազմել հայ մատենագրության՝ այդօրինակ վիթխարի և տքնաջան աշխատանք պահանջող հատկանշական ցուցակ, ավելացնելով նաև, թե այդ գրքում համապատասխան տեղ է հատկացված հունգարահայ միջավայրից դուրս եկած գրող Իշտվան Ազոնց Կեովերին*[38]*, որին վերաբերող բաժինը գրված է ոչ թե լատին լեզվով, այլ հունգարերեն։*

«Արմենիայի» մեկ ուրիշ աշխատակից՝ Յանոշ Տեմեշվարին, ընթերցողների ուշադրությունն է հրավիրել հունգար մեծ գրող, քննադատ և քաղաքական գործիչ, հունգարական ազգային հիմնի հեղինակ Ֆերենց Կեոլչեու՝ հունգարահայ հանրային գործիչ Անտալ Նովակին գրած նամակի վրա և իր «Նովակ գերդաստանի սրբությունը»[39] *հոդվածում ամբողջությամբ մեջ է բերել բանաստեղծի սքանչելի տողերը, վերապատմել նրանց գրության շարժառիթները։ Տեմեշվարին պատմում է, որ երբ բանաստեղծը Հունգարիայի պետական ժողովում Սատմարի մարզի պատգամավոր էր, իր գործակից մյուս պատգամավորների խնդրանքով ու համաձայնությամբ կազմել է հայազգի պատգամավոր Նովակին ուղղված ուղերձի տեքստը, ուր գովաբանվում էր վերջինիս օգտաշատ հանրային ու քաղաքական գործունեությունը (Նովակը Բեկեշի մարզի պատգամավորն էր հունգար պետական ժողովում և ծերության պատճառով ի վիճակի չէր այլևս*

---

[37] *Bányai Elemér*, Egy örmény bibliográfia tervezete, 1906, № 5 o. 139.

[38] *Խոսքը Վիեննայի Մխիթարյան միաբան, հանրաճանաչ գրող ու գիտնական Ստեփանոս Ազոնցի մասին է։*

[39] *Temesváry János*, A Novák család ereklyéje, 1891, № 6, o. 174—178.

իր պարտականություններն, ինչպես հարկն է, կատարելու)։ Տեղեկանում ենք, այնուհետև, որ Նովակի մահվանից հետո նրա ժառանգները դիմում են պետական հանրաճանաչ գործիչ Ֆերենց Դեակին (1803—1876) և խնդրում՝ վավերացնել Կեոլչեու ձեռքով գրված ուղերձի իսկությունը։ Դեակը սիրով կատարում է նրանց ցանկությունը և ուղերձի մաքուր էջի վրա իր կողմից ավելացնում միաժամանակ, որ Ս. Նովակն «եղել է հայրենիքի ամենահավատարիմ զավակը»։

Հայերի նկատմամբ հունգար գրողների տածած համակրանքի ու հարգանքի արտահայտություններից պետք է համարել հունգար ռոմանտիկական արձակի խոշորագույն վարպետ Մոր Յոկայիի (1825—1904) ստեղծագործությունները, որոնց մի մասի հերոսներն ու առանձին դրվագներ վերցված են հայկական միջավայրից ու կյանքից։ Հայտնի է, որ մի որոշ ժամանակ Մ. Յոկային եղել է Եղիսաբեթուպոլսի պատգամավորը Հունգարիայի պետական ժողովում և, պետք է կարծել, որ հենց այդ հանգամանքն առիթ է դարձել հայերի հետ շփվելու և ստեղծագործական ազդակներ ստանալու։ Եվ ահա՛, «Արմենիա» ամսագիրը իր նպատակներին համահունչ գտնելով այս իրողությունը, 1892 թ. համարներից մեկում արտատպել է մի հատված Մ. Յոկայիի «Դամոկոշյանները» (Damokosok)[40] վեպից, որի գործողությունները ծավալվում էին XVII դարում, Տրանսիլվանիայի իշխան Դյորդյ-Ռակոցի II-ի ժամանակներում (1621—1660)։ Հիշյալ էջերում նկարագրված էր պետական ժողովի նիստը, որը տեղի էր ունենում Սամոշույվարում։ Որքան էլ ժողովի մասնակիցները ջանք են թափում համոզելու թեթևամիտ ու ագահ իշխանին՝ փրկագին վճարելու թաթարական գերության մեջ տառապող տրանսիլվանիայի զինվորների համար, արդյունքի չեն հասնում։ Եվ ինչ չեն կարողանում անել տղամարդիկ, գլուխ են բերում կանայք՝ գերի ընկածների մայրերն ու կողակիցները, որոնց հետ էին նաև Սամոշույվարի հայուհիները։

---

40 „A szamosújvári országgyűlés—Jókai Mórnak a „Damokosok" czimű regényes történetéből", 1892, № 3, o. 84—92.

«Արմենիայի» ուշադրությունից չի վրիպում հունգար քննադատական ռեալիզմի գրականության հեղինակավոր դեմքերից մեկի, արձակագիր Կալման Միկսատի (1847—1910) «Մարցին մնաց...» ակնարկը, որն իբրև թերթոն լույս է տեսել «Ույգաշ» պարբերականի 1904 թ. ապրիլի 19-ի համարում և շատ չանցած՝ ամբողջությամբ արտատպվել հունգարահայ ամսագրի էջերում։ Դրության շարժառիթը Եզիսաբեթուպոլսի պատգամավոր Մարտոն Դանիելի անժամանակ մահն էր։ Միկսատն ինքը ազատամիտների կուսակցության պարագլուխներից էր, ճանաչված հանրային գործիչ և իր մտերիմ բարեկամի մասին պատմում էր մեծ ջերմությամբ ու նուրբ թախծով՝ վարպետորեն օգտագործելով թերթոնի ընձեռած հնարավորությունները։ Գրվածքի ամենահետաքրքրական մասը Մ. Դանիելի բնութագիրն է, որն ավելորդ չենք համարում մեջ բերել ստորև.

«Նա երանելի ժամանակների մարդկային կերպարներից էր. բարձրահասակ ու հսկայամարմին։ Հիմա էլ աչքիս առաջ է նա... ուժեղ, եղեգնի պես ուղղաձիգ կեցվածքով, կարմիր այտերով, առողջ ու գեղեցիկ դեմքով, կենդանի ու խելոք աչքերով, փայլուն, սև մազերով ու մորուքով։ Իբրև անձնավորություն, նա մարդասեր էր, ազնիվ՝ սքանչելի բնավորության ու բարի սրտի տեր։ Նա հավատարիմ բարեկամ էր, որին կարելի էր վստահել... Միայն սիրել կարելի էր ծերուկ Մարցուշին (բարեկամները նրան այդ անունով էին կոչում)։

Երբ երեկոյան մենք հավաքվեցինք և առանց նրա՝ վշտով բոլորեցինք խաղասեղանի շուրջ, նա արդեն կանգնած էր այնտեղ, դրախտի ինչ-որ դռան առջև, և սուրբ Պետրոսը հարցուփորձ էր անում նրան.

—Ո՞վ ես դու և ի՞նչ ես արել...

—Ես երեսուն տարի Հունգարիայի պետական ժողովի պատգամավոր եմ եղել։

—Որևէ բան արե՞լ ես...

—Բոլորին ձայն եմ տվել։

—Հըմ... Իսկ ի՞նչ հաջողությունների ես հասել։

—Դարձել եմ արքունի խորհրդական։

—Դու ո՞ր ազգից ես:
—Ես հայ եմ:
—Ի՞նչ, հա՞յ, ու սոսկ արքունի խորհրդակա՞ն,—բացականչում է սուրբ Պետրոսը՝ գլուխն օրորելով: —Ուրեմն՝ դու շատ խոնարհ մարդ ես: Կարող ես մտնել Տիրոջ աշխարհը»[41]:

Հունգար գրողների վերոհիշյալ ստեղծագործությունները հայերին պատկերում էին իբրև հին ու քաղաքակիրթ մի ժողովուրդ, որ արժանի էր եվրոպական տերությունների ուշադրությանն ու աջակցությանը, ընդգծում, որ նրանք հավատարիմ ու աշխատասեր որդիներն են եղել իրենց նոր հայրենիքի և աչքի ընկել բարոյական բարձր նկարագրով:

«Արմենիան» այս ձևով իրագործում էր իր հետապնդած գլխավոր նպատակներից մեկը և մեծապես նպաստում հունգարահայերի ազգային ինքնագիտակցության արթնացմանն ու ամրապնդմանը:

3. ՀՈՒՆԳԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մասնավորապես XIX դարի վերջին տասնամյակներին հունգարական մշակույթն ու գրականությունը, ըստ ամենայնի, հանրածանոթ ու ընտանի էին Տրանսիլվանիայի հայ զանգվածներին, որոնց մեծամասնության համար հունգարերենը ո՛չ թե սոսկ երկրորդ լեզու էր, այլ միակն ու մայրենին, իսկ հունգար գրականությունը՝ հայրենի դպրություն: Այսօրինակ պայմաններում հունգար գրականությունից թարգմանություններ կատարելը ավելորդ ժամավաճառություն պիտի դիտվեր, մանավանդ որ ինքնին վերցրած՝ «Արմենիա» ամսագրի նպատակներին չէր էլ առնչվում:

Բայց, այնուամենայնիվ, ամսագրի երկարատև գոյության ընթացքում թարգմանական մի քանի ստեղծագործություն հյուրընկալվել են նրա էջերում: Դրանցից են Ցերենց

[41] X, Dániel Márton volt országgyűlési képviselő, 1904, № 12. o. 359–360.

Կեոլչեու «Հիմնը» (1823) և Միհայ Վերեշմարտու «Բարբառը» (1836), երկուսն էլ հունգար հայրենասիրական քնարերգության մարգարիտներից, երկուսի թարգմանիչն էլ հունգարահայ մշակութային նշանավոր գործիչ Զաքարիա Կապրուշյանը, կատարած տակավին 1840-ական թվականներին, երկուսն էլ լույս աշխարհ հանված իբրև պերճախոս վավերագրեր հայ-հունգար գրական առնչությունների պատմության։

Պատահականություն չպիտի համարել բնավ, որ Կապրուշյանը հատուկ ուշադրություն է դարձրել մասնավորապես հունգար քերթության այս երկու բարձրագույն արտահայտությունների վրա։ Նախ՝ նրանց հեղինակները Կապրուշյանի ժամանակակիցներն էին, և ապա՝ դրանք կարծես թե ընթերցողի, այն է՝ հոգով հայ, բայց պատմական բախտի բերումով նաև հունգար հայրենասեր ընթերցողի սրտերից էին ջուր խմում։

«Հիմնը» և «Բարբառը» հորինվել էին հունգար ժողովրդի համար հեղաբեկիչ ու ճգնաժամային մի ժամանակաշրջանում, երբ եվրոպական հեղափոխական շարժումները (20-ական թվականների սկզբների իտալական և հունական շարժումները) պարտություն էին կրել, իսկ բուն Հունգարիայում էլ օրավուր սաստկանում էին Հաբսբուրգների բռնությունները և հետադիմական քաղաքականությունը։

Ժամանակի առաջադեմ մտածողներն այդ տարիներին որոնում էին հիրավի կենսունակ այն ուժերին, որոնք ի վիճակի պիտի լինեին լուծելու և մինչև վերջ հասցնելու արդիականության երկու հրատապ խնդիրները՝ ազգային ինքնուրույնության և հասարակական առաջադիմության հարցերը։

Երկու բանաստեղծությունն էլ, այս առումով, արձագանքում էին վերոհիշյալ խնդիրներին, երկուսի մեջ էլ ոգևորության մեծ ուժով ու շնչով խոսվում էր հունգար ժողովրդի պատմական բախտի մասին՝ու այն էլ այնքան ճշմարտապատում, որ «Հիմնն» ու «Բարբառը» շատ-շուտով լայն տարածում գտան ու դարձան ազգային երգեր և, որպես

այդպիսիք, երգվում են նաև մեր օրերում[42]: Ազգային խնդիրներից բացի, հիշյալ ստեղծագործություններին հատուկ են նաև համամարդկային գաղափարներ և փիլիսոփայական հարուստ ենթատեքստ, քանի որ երկուսի մեջ էլ շոշափվում են ամեն մի ժողովրդի համար էլ մշտապես կենսական հարցեր, որոնք առնչվում են բարոյականության բարձրագույն ըմբռնումներին, այն է՝ փոքր ժողովուրդների տեղը ընդհանուր մարդկության շրջանում, արդի սերնդի պարտականությունները հերոսական անցյալի ավանդների և պատասխանատվությունը գալիքի նկատմամբ, մարդու անհատական ճակատագրի անխզելի կապը հայրենիքի ճակատագրի հետ և այլն:

Ֆերենց Կեոլչեու «Հիմնը» հեղինակի տառապագին խոհերի արդյունքն էր, ազգի տխուր ներկայի և անհույս գալիքի հետևանքով նրան պաշարած խոր տագնապների արձագանքը: Չկարողանալով հայրենի ժողովրդին այդ ծանր վիճակից դուրս բերելու ոչ մի ելք գտնել, հուսահատ բանաստեղծն օգնություն էր աղերսում գերբնական ուժերից, կոչելով վերջիններիս մերթ աստված ու մերթ էլ՝ օրհաս կամ ճակատագիր, իսկ նմանօրինակ իրավիճակին պատշաճողը հոգևոր երգը կամ մաղթանքն էր, հոգևոր հիմնը: Բանաստեղծն իր ազգակիցներին բաժին ընկած թշվառության պատճառը կարծես թե ուզում է տեսնել ողջ ազգի մեղսապարտության մեջ: Նա վերհիշում է Հունգարիայի պատմության ամենադրամատիկ պահերը և այդ ձևով կամենում ասել, թե քանի որ ազգն արդեն վաղուց տառապանքներով ու արյամբ քավել է մեղքերը, հետևաբար և իրավունք է ձեռք բերել, որ նրա բախտի անիվը շրջվի դեպի բարության շավիղներ:

Երբ գրական ավանդների զարգացման առումով ենք մոտենում խնդրին, նկատում ենք, որ «Հիմնը» մի կողմից

---

[42] Կեոլչեու բանաստեղծության համար երաժշտություն է գրել (իբրև պատասխան հունգար ազգային թատրոնի՝ 1844-ին հայտարարած մրցույթի) հռչակավոր երգահան, հունգար ազգային օպերայի նախահայր Ֆերենց Էրկելը (1810—1893), իսկ Վերեշմարտու ստանավորի համար՝ լայն տարածում գտած երգերի հանրաճանաչ հեղինակ, երգահան Բենի Էգրեշին (1814—1851):

շարունակությունն էր XV—XVI դդ. եվրոպական երկրներում ծայր առած վերանորոգչական ու հակավերանորոգչական բորթվածների և սնունդ էր տալիս ժողովրդի հայրենասիրական և կրոնական զգացումներին և մյուս կողմից՝ ռոմանտիկ աշխարհընկալման զտարյուն արտահայտություն, որով ոգեկոչվում էին պատմության դասերը, որպեսզի հակադրվեին հունգար ժողովրդի ողբալի ներկային։

Ցավոք, տպագրելով այդ բանաստեղծության Կապրուշյանի թարգմանությունը, «Արմենիայի» խմբագիրը որևէ ծանոթություն կամ բացատրական չի կցել նրան, մինչդեռ դա անհրաժեշտ էր, նաև օգտակար, քանի որ ընթերցողի համար պարզ կլիներ, թե «Հիմնը» ի՞նչ հանգամանքներում ու նպատակով է հայացվել և որոշակիորեն ի՞նչ նպաստ կարող է բերել հայ ժողովրդի ազգային համախմբման և հանուն անկախ պետականության մղած պայքարին։

Կեոլչեու «Հիմնի» հայերեն թարգմանությունն ամբողջական չէ։ Բնագիրը բաղկացած է ութ ութնյակից, այնինչ դրանցից հայացված են միայն չորսը՝ առաջինը, երկրորդն ու ութերորդն ամբողջությամբ և չորրորդի 1—4-րդ և հինգերորդի 5—8-րդ տողերը, ըստ որում դրանք միացնելով իրար, իբրև մի անկախ ութնյակ։ Հնարավոր է, որ Կապրուշյանի թարգմանությունն ամբողջական է եղել, և խմբագրությունն է կրճատումներ կատարել, թեպետ հօգուտ դրա խոսող փաստեր չկան մեր ձեռքին։

ՏԱՂ[43]

Աստված, ըղձաչար օրհնյա՛
Զվարճ և լիութենով,
Նորա օգնիչ եղրը ցողեա՛,
Թե մարտի թըշնամով։
Անբախտություն, որ փետև
Վաղուց, տուր լավ տարի

[43] *Szongott Kristóf*, A magyarországi örmények ethnográphiája, Szamosújvár, 1903, o. 395.

Նորա, ղի աղգըս այս գիրն
Ջանցյալն և զապանիր։

Ջնախահայրք մեր բերեցեր
Ի զազաթս Կարպատյան,
Եվ կերտըվեց լավ երկիր՝
Արյուն Բենդեգուզյան։
Եվ յոր կողմ փըրփուրք վըժան
Տիզայի, Դունայի,
Ազնիվ զավակք Արպադյան
Բարձրազույն շիշայի։

Վա՜խ, բայց վասըն մեր մեղաց
Ի սիրտըս բորբոքի
Բարկություն, կայծակ սերմեաց
Ի մեջ զոռուն ամպի։
Քանի՜ անգամ որդիրդ
Երկիր ընդդեմ եղան.
Եվ եղեր վասն որդոց՝
Զավկընուդ մոխրարան։

Աստված, մաշրին օգնիշ լե՛ր,
Ջոր փորձանք վշտեցան,
Ցողյալք նորա օգնիշ սեր
Ի ծովս տաշորությանս։
Ջավ անբախտություն փեսն
Վաղուց, տո՛ւր լավ տարի
Նորա, ղի աղգըս այս գերն
Ջանցյալն և զապանիր։

Երբ վերոհիշյալ թարգմանությունը համեմատում ենք հունգարերեն բնագրի հետ, առանց դժվարության նկատում ենք, որ արհեստականորեն միմյանց հակադրված են քերթվածի երկու անբաժան հատկանիշներ, և հայկական կերպարանափոխության մեջ «Երգ»—«Հիմնը» զրկվել է բնագրին բնորոշ քաղաքական հագեցվածությունից և դարձել խսկական հոգևոր երգ, մի հանգամանք, որ իրավունք չի տալիս տվյալ գործը հաջողված կամ բնագրին համալոր

թարգմանություն համարել։ Մյուս կողմից՝ զրկվելով իր բուն ոգուց, այդ գործը, որ այնքան համահնչուն էր հայոց պատմական բախտին, անզոր է դառնում որոշակի դեր խաղալ, չնայած որ Հունգար ժողովրդի պատմությունից Կյոլչեու քաղած ողբալի պատկերները իրենց մշտական զուգահեռներն ունեին հայոց կյանքում։ Թուրք-թաթարական արշավանքները, ներքին երկպառակությունները, ամայացած բնակավայրերը, հանուն ազատության զոհվածների դիակները և նրանց արյամբ ողողված հայրենի հողը, որբերի աղիողորմ լացը, օտար զավթիչների բռնության տակ ու գերության մեջ տառապողների տվայտանքները, բռնապետության ճիրանների մեջ շնչահեղձ դարձող փոքր ազգերի առջև մշտապես ծառացած՝ «լինել-չլինելու» խնդիրը և այլն, մի՞թե հայոց համար ևս առօրեական չէին այս ամենը։

Հունգարական հիմնը լավագույն առիթն էր հայ ընթերցողներին ևս վերհիշեցնելու իրենց դառն անցյալը, անուրախ ներկան և մշուշված ապագան, օրհասական մի ճակատագիր, որով հայությունն այնպես մերձենում էր հունգար ժողովրդին։

Կապրուշյանը, սակայն, իբրև թարգմանիչ, այլոց համեմատությամբ մի մեծ առավելություն ուներ. նրա համար գոյություն չուներ լեզվական պատնեշ, քանի որ և՛ հայերենը, և՛ հունգարերենը նրա համար մայրենի լեզուներ էին, հրաշալի ծանոթ էր և՛ մեկի, և՛ մյուսի բառապաշարին, քերականական ձևերին, ոճերին ու դարձվածքներին։ Կապրուշյանի ձգտումն էր ընդհանրապես հարազատ մնալ բնագրին, և նրա թարգմանությունն, ըստ էության, բառացի է, այն էլ դարմանալիորեն ճշգրիտ։ Նա կարողացել է հեշտությամբ գտնել հայերեն համարժեքներ գրեթե բոլոր հունգար արտահայտությունների համար, ինչպես օրինակ՝ jó kedvvel—զվարթ, balsors akit régen tép—անբախտություն, որ փետե, elsújtád villámidat—կայծակ սերմեց, kit vészek hányának—փորձանք վշտեցան և այլն[44]։ Իսկ մեկ-երկու դեպքում էլ՝ հարկադրաբար թե գիտակցորեն, շեղումներ է

[44] *Kölcsey Ferenc.* Himnusz, Válogatott művei, Bp., 1975, o. 68—70.

կատարել բնագրից, որ և պատճառ է դարձել Կեոլչեու մտածողության անհարիր ու անարտահայտիչ առանձին տողերի։ Այսպես օրինակ՝ «Árpád hős magzatjai» տողը Կապրուշյանը թարգմանել է՝ «Ազնիվ զավակք Արպադյան», չնայած հունգարերեն «hős» բառի իմաստն է՝ «քաջ», բայց ո՛չ «ազնիվ»։

Բացի այդ՝ Կեոլչեին տվյալ մակդիրն ընտրել է ո՛չ առանց դիտավորության, քանի որ բանաստեղծության նպատակն էր հունգար ժողովրդի հերոսական անցյալը հակադրել ներկային և ընդգծել, որ հունգարները, որոնք Արպադ իշխանի գլխավորությամբ նվաճել էին հայրենի հողը, իսկական քաջարի այրեր էին, և ոչ արդի վախկոտներ։

«Հիմնի» բնագրի և թարգմանության տարբերություններից ամենացցունը վերջին ութնյակի առաջին տողն է.

Szándd meg, Isten, a magyart,
Աստված, մաչրին օգնի՛չ լե՛ր...

Նախ՝ պետք է աչքի առաջ ունենալ «szándd meg» և «օգնի՛չ լե՛ր» արտահայտությունների տարբերությունը։ «Szándd meg» նշանակում է «խղճա», «մեղք արի», այստեղից էլ՝ իմաստային այն տարբերությունը, որ ծագում է տվյալ թարգմանությունից. օգնել կարելի է ուզածդ մարդուն, բայց խղճում են սովորաբար նրանց, որոնք գտնվում են թշվառ կացության, ծայրահեղ կարիքի ու անելանելի դրության մեջ։ Կեոլչեին «szándd meg» բայով կամեցել է հատկապես դա ընդգծել, ասել, որ հունգար ժողովուրդը շատ է անօգնական, շատ է տառապել ու հարստահարվել, և հիմա՝ աստծո բարի կամքը միայն կարող է նրան դուրս բերել այդ դրությունից։

Բնագրում այս իրավիճակը ընդգծվում է նաև օգտագործված բառերի հերթականությամբ. բանաստեղծության վերջին ութնյակը համարյա բառացի կրկնությունն է առաջինի, և տարբերությունն այն է, որ վերջին ութնյակում «szándd meg» (խղճա) բայը, որ փոխարինում է առաջինի

«áldd meg» (օրհնյալ) բային, բերվում է ութնյակի հինգ առաջին տողում, հուշելով այն միտքը, թե աստուծո գթասրտությունը միայն կարող է կանխորոշել հունգար ազգի լինել-չլինելու հարցը։

Իհարկե, Զ. Կապրուշյանը հայոց լեզվի հնարավորություններից ելնելով՝ արել է և այլ փոփոխություններ. օրինակ՝

S lettél magzatod miatt
Magzatod hamvvedre!,—

տողերը նա թարգմանել է այսպես.

Եվ եղեր վասն որդվոցդ՝
Զավկընուդ մոխրարան...

Բնագրում «magzat» բառը կրկնվում է, բայց թարգմանության ժամանակ, խուսափելով ճապաղ կրկնությունից, երկրորդ տողում օգտագործվել է նույն բառի հոմանիշը (որդի, զավակ), որով, պիտի խոստովանել, ոտանավորն ավելի է շահել և ոճապես էլ հղկվել։

Հայերենի ոգուն հարազատ մնալու ցանկությունից ելնելով՝ Զ. Կապրուշյանը հարկադրված է եղել լուծել և մեկ ուրիշ դժվար հարց։

Արևմտաեվրոպական ժողովուրդների գրական առօրյայից ելնելով՝ Կեոլչեյին հիմնը գրել էր վանկա-շեշտային ոտանավորով և քորեական ոտքերով.

Isten/ áldd meg, a ma/gyart   7 a
Jó kedv/vel, bő/séggel,   6 b
Nyújts fe/léje/ védő/ kart,   7 a
Ha küzd/ ellen/séggel   6 b

Քանի որ հայկական տաղաչափության մեջ քորեական չափը նվազ գործածական է, ուստի չէր կարելի սպասել, որ Կապրուշյանը ոտանավորը հայացներ մաքուր քորեական ոտքերով։ Միանգամայն բնականորեն՝ նա դիմել է յամբ-անապեստյան ոտքերի (հանդիպում է և քորեյ, օրինակ՝ 3-րդ տողում), դրանով իսկ միաժամանակ պահպանելով բա-

նաստեղծական տողի չափը, հանգավորումը և կշռույթը։ Ահա՛ այս ձևով.

Աստված, բղմաչար օրհնյա՛ 7 a
Զվարճ և լիութենով, 6 b
Նորա օգնիչ եղբը ցույցա՛, 7 a
Թե մարտի թըշնամով։ 6 b

Կապրուշյանի թարգմանած մյուս բանաստեղծության խորագիրն է «Բարբառ», որի հեղինակն է հռչակավոր հունգար բանաստեղծ Միհայ Վերեշմարտին։

Այս ստեղծագործությունն ևս հունգար հայրենասիրական քերթության և ռոմանտիկ ոճի հաջողված արտահայտություններից է, գաղափարական առումով շատ ավելի բարձր, քան Կեոլչեու «Հիմնը»։ Վերեշմարտու երկում բացակայում են կրոնական տարրերը։ Եթե Կեոլչեին հերոսական անցյալը վերհիշելով՝ այն անուղղակիորեն ծառայեցնում էր անհրապույր ներկայի դիմագծմանը, ապա Վերեշմարտին շատ որոշակի ու գործնական խնդիր էր դնում իր առջև. ազգի հերոսական անցյալի օգնությամբ ժամանակակիցների մեջ պատվաստել հայրենասիրության, անվեհերության և ինքնազոհության գաղափարներ։

«Բարբառի» քնարական հերոսը բնավ էլ կարիք չունի ու-րիշի գթության, որովհետև դարերի փորձությունները նրան ոչ թե հուսահատեցրել կամ հոգեպես ընկճել են, այլ, ընդհակառակը, հասցրել են ազգային ինքնագիտակցության, սովորեցրել՝ ապրել պայքարելով և մեռնել գլուխը բարձր պահած, իբրև արժանապատվության բարձր գիտակցության տեր անձ։

Հունգար գրականագիտության մեջ ընդունված է Վերեշմարտու «Բարբառը» որակել իբրև 1848—49 թթ. ազատագրական շարժման ավետաբեր։

«Բարբառի» թարգմանությունն ամբողջական է և նույնությամբ էլ տպագրվել է «Արմենիայում»։ Տասնչորս տնից բաղկացած երկարաշունչ քերթվածից ստորև կբերենք առաջին, երկրորդ, հինգերորդ և վեցերորդ քառատողերը։

ԲԱՐԲԱՌ[45]

Երկրիդ անշարժ, հավատարիմ
Լե՛ր, մաջար, զի այն է
Օրոցքըդ և գերեզմանըդ,
Որ պահե և թաղե։

Աշխարհես աստի ի դուրս չունիս
Տեղ։ Օրհնե կամ պատժե
Պատահման ձեռըն, աստ ապրիլ
Կամ մեռանելոց է։

Ազատությո՜ւն, աստ քալուցին
Զարնոտ նըշաններըդ,
Ի մեջ հերկանց պատերազմի
Անկյան զինորդիքըդ։

Եվ ի մեջ անհամար, անչափ
Վատաբախտ կացության
Պակասացյալ՝ ո՛չ կոտորյալ
Հայս յերկրիս ազգըք կան։

Կապրուշյանի՝ վկայակոչված երկու թարգմանություններն էլ տառապում են նույն պակասություններով և աչքի ընկնում միևնույն առավելություններով։ Պատճառներից մեկը, թերևս, այն է, որ Կեոլչեու և Վերեշմարտու քերթվածները հղացմամբ, նպատակադրմամբ ու բանաստեղծական կատարման մակարդակով անչափ մոտ են իրար։ Մյուսը՝ որ թարգմանիչն երկու դեպքում էլ կիրառել է նույն ըսկըզբունքները, օգտագործել նույն արտահայտչամիջոցները և հանգարանությունը։ Ինչ վերաբերում է տարբերիչ գծերին, ապա՝ չնայած երկուսի թարգմանության ընթացքում էլ Կապրուշյանը ջանք չի խնայել հարազատ մնալու բնագրին, այնուամենայնիվ «Բարբառի» վրա, որ թարգմանված և հրատարակված է ամբողջությամբ, զգացվում է բնագրի դրոշմը։

---

[45] „Gábrus Zakhar hátrahagyott kézirataiból, A "Szózat" örményül", 1889, № 2, o. 343.

Իբրև ապացույց մեր ասածի, կարելի է մատնանշել հունգարական բառերի ու արտահայտությունների հայերեն մի շարք համարժեքներ, որոնք իրենց ճշգրտությամբ ու բանաստեղծականությամբ մրցում են բնագրի համապատասխան արտահայտությունների հետ[46]*։ Վերցնենք թեկուզ խորագիրը՝* Szózat—*Բարբառ, ապա նաև՝* sors keze—*պատահման ձեռն,* rabiga—*գերության լուծ։*

Buzgó imádság epedez
Százezrek ajakán.

Բյուր բյուրոց բերան աղոթքով,
Անդադար աղաչէ։

Կան տողեր էլ, որոնց իմաստը մութ ու անհասկանալի է մնում, քանի որ թարգմանիչը ավելի բնագրի տառին է հետևել։ Օրինակ՝

Ez, melyhez minden szent nevet
Egy ezredév csatolt,—

որ թարգմանված է՝

Այս է յորս հազար տարով
Զամեն բարի կոճկեց։

Իրականում, սակայն, այս տողերով հեղինակը կամեցել է ասել, թե հունգար ժողովրդի ազգային հերոսների սրբացած անունները անխզելիորեն կապված են հայրենի հողի և հունգարական պետականության հազարամյա պատմության հետ, իսկ այս պարագայում՝ միջբերած տողերում կապել, միացնել իմաստի համար «կոճկել» բառի օգտագործումը միանգամայն անտեղի է։

Բանաստեղծության 8—12 քառատողերում հունգար բանաստեղծը խորին համոզվածությամբ ուզում է ընդգծել, որ դարավոր փորձությունների բովով անցած մի ժողովրդի համար, ինչպիսիք հունգարներն են, վաղվա երջանիկ օրն

---

[46] *Vörösmarty Mihály*, Szózat, Válogatott művei, I, Bp., 1974, o. 347—349.

անպայման ապրի դա: Իսկ եթե բախտն այնպես է տնօրինել, որ Հունգար ժողովուրդը կործանվի, ապա դա կլինի ազատասեր և քաջարի մի ազգի կործանում և առաջ կբերի ողջ մարդկության խորին ափսոսանքը:

Վերեշմարտու բանաստեղծական խոսքի անկեղծությունն այնքան ակնառու է, որ ընթերցողը չէր կարող չոգևորվել դրանով, մի էական հատկանիշ, որ, սակայն, հայ թարգմանության մեջ բացակայում է:

Վերեշմարտին, ինչպես և նրանից առաջ Կեոլչեին, Հունգարների նախնիներին որակել են քաջ (hős) *մակդիրով: Կապրուշյանը, պիտի կարծել, չի ըմբռնել երկի գաղափարական միտումը և այդ պատճառով* «hős Árpádnak hadai» *արտահայտությունը թարգմանել է «Ազնիվ զորք Արպադյան»: Նրա ուշադրությունից վրիպել են նաև կրկնակների մեջ բանատողերի տեղաշարժման հետ կապված հեղինակային հատուկ դիտավորությունը ու դրա համաձայն՝ բառերի շարադասության մեջ արված փոփոխությունները: Օրինակ՝ բանաստեղծության առաջին երկու քառյակները, համարյա նույնությամբ, կրկնվում են վերջում, բայց նման տպավորությունից խուսափելու համար առաջին քառատողի մի տեսակ աղաչական «Երկրիդ անշարժ, հավատարիմ լե՛ր, մաջար...» արտահայտությունը տրամաբանական շեշտի տեղաշարժման ու բառերի հաջորդականությունը փոփոխելու միջոցով համարյա դարձել է կոչ, հրավեր.*

Légy hive rendületlenül
Hazádnak, oh magyar...

Բայց թարգմանիչն այդ նրբությունը չի նկատել:

«Բարբառը» գրված է երեք ու չորստողյա յամբական ոտանավորով, որն անչափ հարմար է ստեղծագործության ներքին դրամատիզմը վերարտադրելու համար.

Հայ թարգմանիչը օգտագործել է յամբ-անապեստյան չափը.

Hazád/nak ren/dület/lenül   8 a
Légy hi/ve oh/ magyar;   6 b

Bölcsőd/ az s maj/dan si/rod is, 8 a
Mely á/poi s el/takar. 6 b

Երկրիդ անշարժ, հավատարիմ 8 a
Լե՛ր մաջար, զի այն է 6 b
Օրոցքըդ և գերեզմանըդ, 8 a
Որ պահե և թաղե։ 6 b

Ավարտելով մեր խոսքը Կապրուշյանի թարգմանությունների մասին, պիտի նկատենք, որ դրանք ամենից ավելի հետաքրքրություն են ներկայացնում լեզվական առումով, որպես Տրանսիլվանիայի հայոց բանաստեղծական լեզվի սակավաթիվ հուշարձաններ, ու այդ պատճառով էլ միշտ պիտի գրավեն ազգագրագետների ու լեզվաբանների ուշադրությունը։

Չնայած շատ քիչ բան է հայտնի Կապրուշյանի թարգմանական գործունեության մասին, այնուամենայնիվ, նրա ծառայությունն այդ մարզում արժանի է գնահատանքի, որովհետև նա առաջինն է, որ փորձ է արել հայացնելու հունգար մեծ քերթողների ստեղծագործությունները և դրանով իսկ սկիզբ դրել այդ ազգի բանաստեղծական գոհարներն իր հին հայրենիքին ու հայրենակիցներին մատչելի դարձնելու շնորհակալ գործին։ Նրա օրերում ապրող և հունգարերենից հայերեն թարգմանող մեկ ուրիշի անուն հայտնի չէ։

«Արմենիայում» տպագրված երրորդ բանաստեղծության հեղինակը հունգար հանճարեղ գրող Շանդոր Պետեֆին է, խորագիրը՝ «Reszket a bokor, mert...» («Դողդողա թուփը...»), իսկ թարգմանիչը՝ այդ ամսագրի բազմավաստակ խմբագիր Խ. Սոնգոայանը[47]։

Այս ստեղծագործության ծնունդ տվողը Պետեֆիի զգացումներն էին առ Յուլիա Սենդրեի, մի սքանչելի աղջիկ, որ հետո դարձավ բանաստեղծի կինը։ Հորինվել է 1846 թ. աշնանը, այն հոգեցունց պահից հետո, երբ Տրանսիլվանիայում ճամփորդելիս՝ Նագիկարոյում տեղի ունեցած պարահանդեսի ժամանակ Պետեֆին ծանոթացավ կոմս Կարոյիի կալվածք-

---

47 „Petőfi Sándor összes költeményei", Bp., 1959, o. 255.

ների կառավարչի գեղանի դստեր՝ Յուլիայի հետ։ Երկուսի հոգում էլ սերը բոցավառվում է առաջին հայացքից։ Բայց երջանիկ հանդիպմանը շատ շուտով հաջորդում է ցավալի բաժանումը, ու երկուսն էլ ապրում են ծանր օրեր, ինչպես այդ խոստովանում են Պետեֆին՝ իր քերթվածներում, և Յուլիան՝ օրագրերում։

Յուլիայի հոր՝ բանաստեղծի հանդեպ ունեցած թշնամական վերաբերմունքը, զանազան բամբասանքներ, և, որ նման դեպքերում անպակաս չեն լինում, թյուրիմացությունները պատճառ են դառնում, որ սիրահարները մինչև իսկ կասկածեն իրենց սիրո անկեղծության վրա և անասելի տանջվեն ու տառապեն։ «Կըդողա թուփը...» քերթվածը վերջակետ է դնում այդ տառապանքներին։ 1847 թ. սկզբներին «Életképek» ամսագրի էջերում հանդիպելով հիշյալ բանաստեղծությանը՝ Յուլիան ի վերջո հավատում է Պետեֆիի սիրուն և անմիջապես մի գերհամառոտ նամակով իր փոխադարձ սերը խոստովանում. «Հազար անգամ... Յուլիա»,—սրանք էին նրա պատասխան խոսքերը, որ հարասումն էին ռոմանավորի եզրափակիչ տողը։

«Կըդողա թուփը..» քերթվածը Պետեֆիի հասուն շրջանի ստեղծագործություններից է և հունգարական սիրային քնարերգության մարգարիտներից։

«Արմենիա» ամսագիրն այդ բանաստեղծության՝ Խ. Սանդոյանի թարգմանությունը տպագրել է երկու անգամ՝ 1894-ի հուլիսին և 1895-ի ապրիլին։ Դրանով հունգարահայ մշակույթի այդ բազմավաստակ դեմքը թևակոխում էր գործունեության նոր բնագավառ՝ գրական թարգմանության ասպարեզը։ Նույն պարբերականի «Մատենագրություն, գեղարվեստ» բաժնի մի համառոտ լրատվությունից տեղեկանում ենք, որ Սանդոյանը թարգմանած-պատրաստ ունեցել է Պետեֆիի ուրիշ բանաստեղծություններ ևս, որոնց հետքերը, սակայն, տակավին չենք կարողացել գտնել։ Այնպես որ, հունգարահայերի ձեռքով հունգար մեծ քերթողի լավագույն գործերի հայ թարգմանությունների մասին մեր

խոսքն առայժմ սահմանափակվելու է վերոհիշյալ ստեղծագործությամբ[48]:

Նախ՝ մեջ բերենք բանաստեղծությունն ամբողջությամբ, ինչպես որ այն հայացրել է Սունդուկյանը.

Կըդողա թուփը, զի
Թռչուն վըրան իջավ.
Կըդողա հոգիս, զի
Դուն ի միտքս ընկար։
Դուն ի միտքս ընկար,
Փոքըր, պըստիկ աղջիկ,
Որ էս մեծ աշխարհի
Ամենամեծ ակնիկ։

Լի է ջըրով Դունան,
Գուցե դեռ կըթափվի,
Սըրտիս մեջ փափագն ալ
Հազիվ որ կըմեկնի։
Կըսիրե՞ս իմ զավարդ,
Նաև ես կըսիրեմ,
Ավելի քեզ ոչ մայրդ
Սիրէ, քան էս հայրըդ։

Երբ միատեղ էինք,
Սիրեցիր, գիտեմ թէ.
Հայնժամ տաք ամառ էր,
Այժմիկ ցուրտ է, ձմեռ։
Իսկ թե որ ո՛չ սիրես,
Աստված ըզքեզ օրհնե.
Բայց թե որ դեռ սիրես,
Հազար անգամ օրհնե...

[48] Տեղեկություն կա, որ Սամոշույվարի գիմնազիայի տարեգրքերից մեկում տպագրված են եղել Պետեֆիի ուրիշ հինգ ոտանավորների հայերեն թարգմանությունները, իսկ „Összehasonlító Irodalomtörténeti Lapok“ («Էջեր համեմատական գրականագիտության») ամսագրում՝ մի վեցերորդ բանաստեղծություն ևս։ Ցավոք, սկզբնաղբյուրում («Արմենիա», 1894, № 7, էջ 230) այդ բերթվածներից և ոչ մեկի անունը չի հիշված։

Մեջբերված տողերի համեմատությունը բնագրի հետ և ուշադիր քննությունը համոզում է, որ Սոնգոտյանը ոգևորված, բարեխիղճ ու արդյունավետ է աշխատել ո՛չ միայն իբրև հայագետ-գիտնական ու հրապարակախոս-լրագրող, այլև գրող ու թարգմանիչ՝ միշտ էլ գործելով ուժերի գերագույն լարումով ու ձգտելով լավագույնին։ Արդեն թարգմանության ու բնագրի առաջին համեմատությունը ի հայտ է բերում հունգար և հայոց լեզուների նրա կատարյալ իմացությունը, և այնպիսի արտահայտությունները, ինչպես օրինակ՝ «eszembe jutottál», «rózsaszálam», «indulat» (սիրո զգացում նշանակությամբ), որոնք, ընդհանրապես, թվում է, թե անկարելի էր թարգմանել մեկ այլ լեզվով, Խ. Սոնգոտյանը կարողացել է գտնել դրանց ճշմարիտ համարժեքները՝ «միտքս ընկար», «իմ զառվարդ» և «փափագ»։

Բայց «Կըդողա թուփը...» քերթվածի հայ թարգմանության մեծագույն արժանիքը բնագրի ոգին ու ոճը բացառիկ ճշգրտությամբ հայ ընթերցողին հաղորդելու մեջ է։ Ինչպես Պետեֆիի ուրիշ շատ բանաստեղծություններ, սույն քերթվածն ևս գրված է հունգարական ժողովրդական երգերի ոճով։ Խոհերն ու զգացումները վերարտադրելու եղանակով, ստեղծագործական հնարանքներով և բառ ու բանով խորապես ժողովրդական այս գրվածքն ամբողջությամբ շնչում ու հնչում է նույն անկեղծությամբ, թափանցիկությամբ, բնական գեղեցկությամբ ու անսեթևեթ հրճվանքով, ինչպես ժողովրդական անգիր ստեղծագործության շատ գոհարներ։ Սոնգոտյանի նման թարգմանիչը միայն, որին քաջածանոթ էին ու հարազատ հունգարների ժողովրդական բնարական երգերը, Պետեֆիի բանաստեղծական ժառանգությունը և հայոց լեզուն ու մատենագրությունը, ի վիճակի էր նման հարազատությամբ վերարտադրելու բնագրի ազգային կոլորիտը, ինչպես նաև թափանցելու Պետեֆիի ստեղծագործական յուրահատկությունների ներքին ծալքերը։

Իբրև օրինակ, բերենք քերթվածի այն տողերը, որոնք կոչված էին սիրած էակին ըմբռնելի դարձնելու բանաստեղծի սիրո անչափելիությունն ու հոգու խռովքը՝ զուգակցելով դրանք բնության երևույթների հետ.

Teli van a Duna,
Tán még ki is szalad.
Szivemben is alig
Fér meg az indulat.

Լի է ջրով Դունան,
Գուցե դեռ կըթափվի,
Սրտիս մեջ փափագն այ
Հազիվ որ կըմեկնի։

Պետեֆիի բանաստեղծության մեջ, ինչպես բովանդակության, այնպես էլ կառուցվածքային առումով՝ հիշյալ տողերին կարևոր տեղ է հատկացված, քանի որ առաջին ութնյակի պատմողական ոճը արդեն այստեղ՝ հանդիսավորությամբ ու աննկատ, կարծես, տեղի է տալիս ամենամտերմիկ ու պոեթիկ հույզերին։

Հետևաբար, դրանց ճիշտ ընկալումն ու թարգմանությունը բանալի է դառնում ողջ բանաստեղծության ոգին ու բնույթը ճիշտ հասկանալու և հաղորդելու համար։ Եվ ի պատիվ Սոնգոտյանի պիտի ասենք, որ նրա հայերեն բանաստողերը նույնքան հակիրճ են, հստակ ու շոշափելի, որքան բնագրինը։

Պետեֆիի քերթվածը հորինված է հունգար ժողովրդական երգերին ու բալլադներին բնորոշ ոճով, որ Սոնգոտյանն աշխատել է պահպանել։ Չի՛ խախտված ոտանավորի չափը, ամբողջությամբ պահպանված է նաև բնագրի կշռույթը՝ փոփոխելով միայն ոտքերի դասավորությունը.

Կըդողա /թուփը, դի	6 a
Թռչուն /վըրան/ իջավ.	6 b
Կըդողա /հոգիս, դի	6 a
Դուն ի միտքս /ընկար[49]։	6 b

Հունգար գրականության ընտիր էջերի հայերեն թարգմանությունը Տրանսիլվանիայի հայության հոգևոր գործունեու-

[49] Պետեֆիի «Կըդողա թուփը...» քերթվածը մեր օրերում հայերեն է թարգմանել նաև բանաստեղծ Վ. Դավթյանը։ Տե՛ս Պետեֆի, Բանաստեղծություններ, Երևան 1957, էջ 106։

թյան նեղ բնագավառներից էր, և այս առումով հիշյալ պատմաշրջանի գրական կյանքում որոշակի աշխուժություն չի նկատվել: Բայց դրա պատճառները պարզ են, և երկրորդելու կարիք չի զգացվում: Եղած քիչն էլ վկայում է, որ հունգարահայությունը գրականության իր սերը և ստեղծագործական տաղանդը գործադրել է քերթության բոլոր բնագավառներում, իսկ «Արմենիա» հանդեսն էլ ընդառաջելով՝ երբեմն դուրս է եկել իր նախագծած շրջանակներից:

Այո՛, հունգար գրականության հայ թարգմանությունը ամսագրի նպատակներից չէր, քանի որ նրա ընթերցողները հրաշալիորեն հասկանում էին հունգար լեզուն և կամ թե միայն այս վերջինը գիտեին: Բայց հայ հոգևոր կյանքի զարթոնքի հետ որոշակի տեղաշարժ էր սկսվում նաև հունգարահայության գրական կյանքում, որի աշխուժացմանը և՛ այն օրերին, և՛ այսօր մեծ օգնություն կարող էին ցույց տալ բանաստեղծական խոսքի իսկական արտահայտությունները: Էլ չենք ասում, որ թարգմանության ճանապարհով ժողովուրդների հոգևոր մերձեցումը կենսական նշանակություն է ունեցել միշտ ու առավել ևս՝ այսօր:

Ե

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԱՐՄԵՆԻԱ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

«Այնտեղ, հունգարական հողի վրա, հայ գրականության խոշոր դեմքերին առաջին անգամ ներկայացրել է Սոնգոտյանը...»[1]:

Հայ և հունգար գրականությունների միջև կենդանի կապ հաստատելը կարևոր խնդիր էր, որի լուծման ուղիներից մեկը հայ գրականությունից կատարված թարգմանություններն էին։ Ամսագիրն ըստ այդմ պետք է իր ընթերցողներին ճաշակ տար մեծ մասամբ նրանց անծանոթ գրականությունից, որի գլխավոր դեմքերն ունեին նույնպիսի մտահոգություններ, ինչ մայրենին մոռացող հունգարահայությունը։

Այս շնորհակալ գործին են լծվում հանդեսի փորձված աշխատակիցները, խմբագիր Խ. Սոնգոտյանի գլխավորությամբ՝ ծավալվելով գլխավորապես երկու ուղղությամբ։ Մի կողմից թարգմանաբար հրատարակելով հայ գրականության հատկանշական էջերը, և մյուս կողմից գրական տեսությունների, հոդվածների ու մատենախոսությունների միջոցով գաղափար տալով հայ գրականության անցած ուղու, ոճի, ոգու և առանձին ստեղծագործողների գրական դիմանկարների վերաբերյալ։

[1] *Merza Gyula*, Szongott és az örmény irodalom, 1907, № 2, o. 69

1. ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԷՋԵՐ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Մինչև այսօր էլ Հունգարիայում չկա առանձին գրքով հրատարակված որևէ ժողովածու, որն ամփոփեր հայոց հին ու նոր բանաստեղծության ընտրանին։ Այդ բացն իր էջերում տպագրված բազմաթիվ ու բազմազան թարգմանություններով մասամբ լրացնում էր «Արմենիան», որը հունգարահայ հոգևոր մշակույթի հայելին լինելուց բացի նաև յուրօրինակ «Քնար հայկական» է, որին վերջին հինգուն տարիներին դիմել և առատորեն օգտվել են հայոց քերթության, մասնավորապես նոր, XIX շրջափուլն ուսումնասիրող հունգար բանասերները։

Չնայած հայ գրողների երկերի թարգմանությունների մեծ մասը սիրողների գործեր են, այնուամենայնիվ այս դեպքում էլ բացառություններ կան։ «Արմենիայի» էջերում տեղ են գտել գեղարվեստական բարձրարժեք թարգմանություններ, որոնք պատկանում են նշանավոր հունգար բանաստեղծ Գ. Ռուդնյանսկու, վաստակաշատ պատմագրագետ-թարգմանիչ Բ. Վիկարի և ծագումով հայ, բանաստեղծուհի Լ. Հարմատի գրչին։

Թարգմանվելիք երկերի մեծ մասի ընտրությունը կատարել են արքունի խորհրդական Գ. Շիմայանը, արդարադատության մինիստրության պաշտոնյա Հովհ. Շիմայանը և քահանա Գերեն Ցեկերյանը։ Իբրև հայ բանաստեղծության թարգմանիչներ, իսկ դրական այս սեռին բավականաչափ լայն տեղ է տվել հունգարահայ ամսագիրը, հանդես են եկել Յու. Մերզայանը, Ա. Մոլնարյանը և Լ. Ըստկարյանը, որը հայտնի է նաև որպես հայոց մշակութային ու հանրային կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող հանրամատչելի ու հետաքրքրաշարժ բազմաթիվ հոդվածների հեղինակ։ Արձակ երկերի ու սակավաթիվ թատերգությունների թարգմանությունները կատարել են Ա. Վոյթյանը, Խ. Սոնգոտյանը և Հովհ. Տուրչան (Յանոշ Տուրչա)։

Հունգարահայ գրասերների թարգմանական գործունեությունը գնահատելիս հաշիվ թե հարկ լինի, որպես կայուն չափանիշներ, գեղարվեստական թարգմանության խստիվ

կանոններին զիջելու, քանի որ մայր Հայաստանի գրողներին թարգմանելիս նրանք ո՛չ թե գեղարվեստական համարժեք թարգմանության սկզբունքներով են առաջնորդվել, այլ հետապնդել են բոլորովին այլ նպատակ. նրանց ցանկությունն էր մայրենին մոռացած հունգարահայությանը ճաշակ ու պատկերացում տալ բուն Հայաստանյան գրականությունից, հայերի իրավիճակի, տառապանքների, տենչանքների ու քաղաքական ակնկալիքների մասին՝ բերված այդ ամենը գեղարվեստական գրականության ու կերպարների մեջ։

Հետաքրքրական է, որ հունգարահայերին ամենից ավելի զբաղեցրել են տակավին V դարից սկիզբ առնող հայոց գրականության ու պատմագրության այն փուլերը, որոնք աչքի էին ընկնում մատենագիրների առատությամբ, արծարծած հարցերի, օգտագործած գրական տեսակների բազմազանությամբ։

Թարգմանական գործերի գերակշիռ մասը բանաստեղծություններ են։ Գրական մնացած սեռերը ներկայացված են բավականաչափ աղքատիկ։ Եվ դա ունի իր բացատրությունը և շատ որոշակի պատճառները։

«Արմենիայի» ծավալն ու բնույթն ունեցող ամսագրի համար ավելի նպատակահարմար էր ոտանավորներ հրատարակելը, որոնց միջոցով հեշտ կլիներ հայոց հույզերն ու գաղափարները խտացված ձևով ընթերցողներին հասցնելը, քան երկարապատում, արձակ երկեր։ Մյուս կողմից՝ այդ ճանապարհով կարելի էր արդյունավետությամբ արծարծել ամսագրի գաղափարական գլխավոր խնդիրը՝ հունգարահայոց մեջ արթնացնելով հայրենասիրական զգացմունքներ՝ կապել նրանց մայր հայրենիքին ու ժողովրդին։

Թարգմանական երկերի մեծ մասը XIX դարի երկրորդ կեսի հայ քաղաքացիական քնարերգության ընտիր էջերից են։ Եվ դա բնական է, քանի որ վերջինները արձագանքում էին ժամանակի քաղաքական ամենահրատապ հարցերին ու իրադարձություններին, հայ իրականությունը հուզող անհետաձգելի խնդիրներին, ամեն մի հայի միտքն ու հոգին ալեկոծող ողբերգական անցքերին։

Հունգարահայ իրականության հետ վերջիններիս սերտ

կայի մասին են վկայում ո՛չ միայն Ղ. Պատրուբանյանի հայալեզու բանաստեղծությունները և Տրանսիլվանիայի հայ գաղթօջախից դուրս եկած թերթողների հայրենասիրական երկերը: Պատրուբանյանի թերթվածների մասին մենք արդեն հանգամանորեն խոսել ենք: Իսկ ինչ վերաբերում է նրան ժամանակակից հունգարալեզու գրողներին, ապա դժվար չէ շոշափման եզրեր տեսնել Ռ. Պատկանյանի «Հացարեն մեկը» և Ռ. Շայլակի «Զրույց հայ գեղեցկուհու մասին» բանաստեղծությունների միջև: Կամ՝ Յու. Միրզայանի «Ազատության հայ զինվորները» ոտանավորի և XIX դարի երկրորդ կեսի հայ դասականների՝ հայության ու Հայաստանի թշվառ վիճակին նվիրված չափածո երկերի միջև:

«Արմենիայի» թարգմանիչներն առաջին հերթին ընտրել են այնպիսի ոտանավորներ, որոնք արձագանքն էին ժամանակի հասարակական-քաղաքական առաջադիմական հայեցությունների, այսինքն՝ այնպիսի գործեր, որոնց մեջ Հայաստանի հասարակական-քաղաքական իրավիճակը նկարագրվում էր առանց գունազարդման, դրանով իսկ սովորեցնելով ընթերցողներին ակտիվ, գործնական հայրենասիրություն:

Թարգմանական ոտանավորներից շուրջ 60-ի հեղինակները հայ նոր քնարերգության ականավոր դեմքերն են՝ Ղ. Ալիշանը (2 գործ), Մ. Պեշիկթաշլյանը (7 գործ), Մ. Նալբանդյանը (1 գործ), Ռ. Պատկանյանը (22 գործ), Րաֆֆին (1 գործ), Ս. Շահազիզը (11 գործ), Պ. Դուրյանը (2 գործ), Հովհ. Հովհաննիսյանը (3 գործ) և Ա. Ծատուրյանը (10 գործ):

Սակայն հունգարահայ թարգմանիչները սոսկ հայրենասիրական բանաստեղծություններով չեն բավարարվել: Նրանց ուշադրությունից չեն վրիպել նաև Պեշիկթաշլյանի, Շահազիզի և Հովհ. Հովհաննիսյանի հոգեցունց երգերը, որոնցից առանձին նմուշներ նույնպես փոխադրված են հունգարերեն:

Իսկ ինչպե՞ս են «Արմենիայի» աշխատակիցները լուծել իրենց ընթերցողներին թարգմանությունների միջոցով հայ գրականության հետ ծանոթացնելու բարդ և պա-

տասխանատու խնդիրը, երբ շատերը հայոց լեզուն կամ վատ գիտեին կամ բնավ չգիտեին։

Թարգմանությունները մասամբ միայն արված են բնագրից (այսինքն՝ հայերենից), մնացած դեպքերում օգտագործվել են օտար լեզուներով եղած թարգմանությունները՝ ֆրանսերեն կամ գերմաներեն, գլխավորապես Արթուր Լայստի «Armenische Dichter» (Հայ բանաստեղծներ) ժողովածուն՝ լույս տեսած՝ 1898 թ.։ Նշանակում է՝ շատ դեպքում մենք գործ ունենք կրկնաթարգմանությունների հետ։

Երբ համեմատում ենք հայ քաղաքացիական բնարերգությունից արված թարգմանությունները, նկատում ենք, որ դյուրին չի եղել Արևելքի ինքնատիպ մի ժողովրդի խորապես ազգային քնարերգությունը եվրոպացի ընթերցողներին մատուցելը։ Կարելի է բերել առանձին խոսուն օրինակներ՝ համոզվելու համար, որ թարգմանիչներն ինչպես կարողացել են հաղթահարել լուրջ դժվարությունները և հասնել գոհացուցիչ արդյունքների, բայց քիչ չեն նաև անհաջողություններն ու վրիպումները։

Հայ բանաստեղծների բնագրերը ամենից լավ հասկացել ու թարգմանել է Գ. Ռուդնյանսկին, որի թարգմանությունները, սակայն, սակավաթիվ են, ընդամենը չորսը, որոնցից Ռ. Պատկանյանի «Աղասու մոր երգը» և Ս. Շահազիզի «Գիշերը» առանց վարանելու կարելի է գեղարվեստական թարգմանության գլուխգործոցներ համարել։ Հայ բնագիրն այսչափ լավ հասկանալու և մեկ ուրիշ լեզվով (տվյալ դեպքում՝ հունգարերեն) վերարտադրելու անվիճելի կարողության հետ միասին, թե ինչո՞ւ Գ. Ռուդնյանսկին այդչափ քիչ է թարգմանել և կամ թե նրա հայկական բանաստեղծությանը դիմելու գլխավոր շարժառիթն ի՞նչն է եղել, մնում են չպարզված։

Ռուդնյանսկին հունգար նշանավոր բանաստեղծ էր։ Հայտնի են նրա սերտ կապերը Տրանսիլվանիայի հայության հետ։ Նրա կինը՝ Լաուրա Բեթին, ժամանակի ճանաչված ու սիրված երաժիշտներից էր (դաշնակահարուհի) և հաճախ էր համերգներով հանդես գալիս Սամոշույվարում, որոնց ընթացքում նրան մշտապես ուղեկցում էր բանաս-

տեղծ-ամուսինը, որի՝ հայ բանաստեղծներից կատարված թարգմանությունները, ի դեպ, համերգների ընդմիջումների ժամանակ արտասանվում էին բեմից։

Գ. Ռուդնյանսկու հետ միաժամանակ հայ բանաստեղծներին հաջողությամբ թարգմանել է Գ. Շիմայանը, որի փոխադրություններից երկուսը՝ Ա. Ծատուրյանի «Մուսան» և Պ. Դուրյանի «Ի՞նչ կ՚ըսենը», բավական են, որ լիակատար պատկերացում կազմենք թարգմանչի սկըզբունքների մասին։ Շիմայանը կարողացել է վարպետորեն վերարտադրել առաջին ստեղծագործությանը բնորոշ՝ կարոտի ու ոգևորության զգացումները հանդեպ գեղեցիկն ու մարդկայինը, որոնց այնքան կարոտ էր անելանելի վիճակի մեջ տվայտող բանաստեղծի հայրենիքը։ Դուրյանի հոյակապ բանաստեղծությունները, սակայն, թարգմանված են ո՛չ լրիվ ու երբեմն էլ արտահայտչական միջոցների առումով՝ աղքատ։ Օրինակ՝ Դուրյանի «Վարդեր, թրթռում, թռիչ և աստղեր...»[2] պատկերավոր արտահայտության փոխարեն, որն ակնարկ է մարդկային կյանքի երիտասարդական տարիների վերաբերյալ՝ իրենց գեղեցկությամբ, թովչանքով ու երանավետ պահերով,—հունգարերեն տարբերակում բառացի կարդում ենք. «...թախծալի սրտի բաղձանքը» («...bús szivednek vágyai»)[3]։ Չնայած բանաստեղծության առաջին տան կրճատմանը և բնագրից կատարված մի քանի ուրիշ շեղումների, Շիմայանն, այնուամենայնիվ, կարողացել է հաջողությամբ վերարտադրել երիտասարդ բանաստեղծի՝ իր մոտալուտ մահն զգալու հետևանքով ապրած խոր վիշտը և թախծալի տրամադրությունները։

Մասնավորապես երգիծական ստեղծագործությունների համար, որոնց նպատակը հասարակության համար չարիք դարձած կեղծ բարեպաշտների դիմակազերծումն է, խիստ կարևոր էր բառերի ու արտահայտությունների ընտրությունը։ Ռ. Պատկանյանի «Ազգասեր» բանաստեղծությունն այդ առումով թարգմանված է շատ հաջող։ Օրինակ՝ Պատ-

---

2 Պ. Դուրյան, *Բանաստեղծություններ*, Բաքու, 1900, էջ 47։

3 *Durján Petrosz.* Mondják..., 1893. № 8, o. 235.

կանյանի «...Ու մտքիս պես-պես խորհուրդ են ծագում»[4] արտահայտությունը Շիմայանը թարգմանել է՝ «Agyamra gyűl az eszmék tengere»[5], որ բառացի նշանակում է՝ «Ու գլխումս ծնվում են մտքերի ծովեր...», այսինքն՝ դրեթե նույնը, ինչ ցանկացել է ասել հայ բանաստեղծը։

Հարկ է վերհիշել նաև Պեշիկթաշլյանի ամենագողտրիկ քերթվածներից մեկը՝ «Երգը» (Ո՞ւր էր, թե զեփյուռիկ...), որի թարգմանիչը դարձյալ Շիմայանն է։ Մեջ բերենք ոտանավորի երկրորդ տան 3—4-րդ տողերը, որ զարմացնում են իրենց նրբությամբ ու վարպետությամբ։

Ընտրեի ինձ բաղձոց
Կուրծքդ ձյունափայլ...[6]

Այս տողերը Շիմայանի փոխադրմամբ դարձել են՝

Virulnék kora hajnalon
Magasztos—édes kebleden.[7]

Այսինքն՝

Փթթեի ես վաղ արշալույսին
Քո անուշ կրծքին...

Բառացի թարգմանելու դեպքում այդ տողերը հունգար ընթերցողի համար, գոնե այս դեպքում, կմնային անհասկանալի, մինչև իսկ՝ ծիծաղելի, և ամենավարպետ թարգմանիչն անգամ պիտի դժվարանար որոշել, թե ինչպես վարվել։ Շիմայանի ստեղծած հունգարական տարբերակը իր բանաստեղծականությամբ բնավ չի զիջում բնագրին։ Պետք է ափսոսալ միայն, որ բաց է թողնված բանաստեղծության վերջին տունը, որը խիստ կարևոր է տվյալ ստեղծագործության բուն էությունը հասկանալու համար։ Պեշիկթաշլյանն այդտեղ խոսում է սիրո երջանկության մասին, որ, ավա՜ղ, նրա ըմբռնմամբ՝ միայն տեսիլք կամ ցնորք է. «Երազ էր, որ անցավ»։

---

[4] Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1963, էջ 162։

[5] *Patkanján Ráfáel*, A hazafi, 1893. № 2. o. 34.

[6] Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան, 1947, էջ 30։

[7] „Besikthasiján dalaiból", 1887. № 12, o. 392.

Հունգարահայ թարգմանիչն այլ դեպքերում բնագրերից առանձին շեղումներ էլ ունի, որոնք, ըստ էության, չեն խանգարել բնագրի ոգին հաղորդելուն։ Դրա ապացույցներից մեկը Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունն է, որի հունգարական տարբերակում ներքին դրամատիզմը աստիճանաբար խորացվում է շնորհիվ ոճական նրբին փոփոխությունների։

Հայկական բնագրում քնարական հերոսն իր անձնական կյանքի անցքերը պատմում է իր իսկ բերանով՝ առաջին դեմքով.

Նախկին խոսքն, որ ասացի,
Չէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ...[8]

Հունգար թարգմանիչն, ընդհակառակը, շեղվելով՝ անցքերը պատմում է երրորդ դեմքով, այդ ամենը վերագրելով մանկանն ընդհանրապես։ Եվ դա, գոնե հունգարերենում, նպաստում է բանաստեղծի ազատության ըմբռնումը ավելի հանդիսավոր ձևով ներկայացնելուն.

Lám, a gyermek ajkain
Még se kél e szó: anya![9]
Եվ արդ՝ մանկան շուրթերին,
Չի երևում խոսքը՝ մայր...։

Հայ բանաստեղծները շատ հաճախ են դիմում խորապես հայկական խորհրդանիշների։ Նման դեպքերում՝ թարգմանիչն, ուզած-չուզած, պետք է փոխի բնագրի համապատասխան արտահայտությունը կամ վարպետորեն շեղումներ կատարի։ Օրինակ՝ «Բանաստեղծ Սմբատ Շահազիզյանին» խորագրով հանգավոր ուղերձի մեջ Ա. Ծատուրյանը իր բարեկամին դիմում է այս խոսքերով.

Մի՞թե դու ես, որպես նենգ Վասակ,
Խեղճ ազգըդ պետք է տայիր ոտքի տակ...[10]

---

[8] Մ. Նալբանդյան, *Բանաստեղծություններ, Երևան, 1954, էջ 61։*
[9] *Nalbandján M.*, Szabadság. 1896, № 1, o. 27.
[10] Ա. Ծատուրյան, *Բանաստեղծություններ, Երևան, 1958, էջ 26։*

Թարգմանիչը նկատի առնելով, որ հայրենիքի դավաճանի հոմանիշ-անունը՝ Վասակ, անհասկանալի է հունգար ընթերցողին, փոխարինել է Միքելանջելո անունով, որը սակայն խորհրդանիշն էր իր ստեղծագործություններով ողջ աշխարհը զարմացնող մեծ արվեստագետի։ Սիմվոլների այսօրինակ փոփոխությունից բանաստեղծության իմաստն ըստ էության չի փոխվել, քանի որ թարգմանիչն իր տրամաբանական հարցումը ներկա դեպքում անում է բոլորովին այլ ոճով.

Homlokod ha Michel—Angelónak
Lángeszétől fényes, büszke volna,
Elmerengve bús örmény hazádon-
Àldoznál-e idegen oltáron?[11]

Եթե դու ունենայիր
Վեհ ու պայծառ հանճարը Միքելանջելոյի,
Խորհելով քո Հայաստանի թշվառ բախտի մասին՝
Միթե՞ կնվիրվեիր օտար քրմերին։

«Արմենիայի» թարգմանիչները բնագրերից շեղումներ են կատարել նաև հանուն որոշակի նպատակադրման կամ գաղափարի։ Օրինակ՝ Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը» բանաստեղծության նախավերջին տան մեջ անձնավորված գետը անամոք վիշտ ու տագնապ է ապրում օտար ափեր քշված իր զավակների բախտի համար.

Քանի որ իմ զավակունք
Այսպես կու մընան պանդուխտ՝
Ինձ միշտ սըգվոր կը տեսնեք...[12]

Հունգարերեն թարգմանության մեջ արված է մի լրացում, որը նպատակ ունի հասկանալի դարձնել օտար ափերում դեգերող հայի վիճակն ընդհանրապես.

---

[11] *Dzadurián,* Sáhá'izján Szémpádnak. 1893, № 1, o. 10.
[12] Ռ. Պատկանյան, *նշվ. ժող., էջ 56։*

Mig gyermekeim bús számüzetésben-
Életük nyomor avagy leroskadás:
E gyászfátyolt én sem teszem le addig[13].

Նշանակում է՝ պանդուխտ հայի օրն անցնում է կարիքի ու թշվառության մեջ, և նա դատապարտված է «leroskadás»-ի, այսինքն անկման՝ ֆիզիկական ու բարոյական առումով, որ նույնը ակնարկ է գաղթավայրերում գանվող հայերի, այդ թվում և հունգարահայության գլխին կախված ձուլման վտանգի։

Իհարկե, թարգմանչին ամեն դեպքում չէ, որ հաջողվել է հայ հեղինակին հուզող գաղափարներն ու մտքերն ամբողջությամբ վերարտադրել հունգար լեզվով և հանգավոր տողերով։ Թարգմանության ընթացքում անուշադրության կամ այլ պատճառով հաճախ կրճատումներ են արվել։ Օրինակ՝ «Արաքսի արտասուքի» 12-րդ քառյակում բաց է թողած մի ամբողջ տող՝ «Շատերին՝ ես օտար եմ...», չնայած վերջինիս մեջ որոշակի ակնարկ կա անչափ ցավալի մի իրողության վերաբերյալ, ա՛յն, որ հայրենիքը, որպես սրբություն, այլևս չի ձգում որոշ հայերի և նրանց համար դարձել է օտար։

Ս. Շահազիզի «Երգ մեռնող հայրենասերի» բանաստեղծության թարգմանության մեջ բացակայում են քնարական հերոսի անչափ կարևոր այս խոսքերը.

Հեռանում եմ, անգին ընկեր,
Զգնահատված ո՛չ ոքից...[14]

որի հետևանքով այս գեղեցիկ բանաստեղծության հունգարերեն տարբերակը արտահայտում է լոկ հայրենիքին ծառայելու, նրա բարօրությանը նվիրվելու կոչ, մոռացության մատնելով մի էական հանգամանք՝ հայրենիքին ծառայելու պատրաստակամություն հանդես բերողը չպ՛իտի ակնկալի մեծարման դափնիներ և համակրական ցույցեր։

Մի ընդհանուր թերություն էլ է նկատվում հունգարերեն թարգմանություններում. բանաստեղծությունների բնա-

---

[13] *Pátkánján R.*, Araxes könnyei, 1887, № 11, o. 323.

[14] Ս. Շահազիզ, *Երկեր, Երևան, 1961, էջ 158։*

գրերում ասկա երկնակները համարյա թե միշտ կրճատվում են, որի հետևանքով դրանց ներազդման ուժը զգալիորեն թուլանում է։ Դա հաստատվում է մասնավորապես Մ. Պեշիկթաշլյանի «Եղբայր եմք մեք» քերթվածի օրինակով։

Բնագրի միտքը մթագնում կամ բոլորովին կորչում է մեկ այլ դեպքում էլ, երբ թարգմանիչը չի կարողանում գտնել հայերեն այս կամ այն բառի հունգարերեն համարժեքը և կանգ է առնում որևէ անհաջող իմաստի վրա։ Օրինակ՝ Պեշիկթաշլյանի «Գարուն» բանաստեղծության «Թե-պետ թռչնիկն ու հովն Հայոց Ավերակաց շրջին վերա...»[15] արտահայտությունը թարգմանված է «Armenia pusztáin át»[16] (Հայոց անապատների միջով), որից հազիվ թե հնարավոր լինի մակաբերել, թե բանաստեղծի ցանկությունն է եղել ասել, որ օտար չարագործները Հայոց երկիրը և նրա կոթողները դիտումնավոր ավերել ու ոչնչացրել են։ Եվս մի օրինակ՝ Ռ. Պատկանյանի «Հազարեն մեկը» բանաստեղծությունից եթե հապավենք վերջին տողը՝ «Ինչո՞ւ հայերը ինձ անտեր թողին...»[17], ապա կունենանք մի սովորական պատմություն բնույթյամբ թուրքական հարեմ տարված գեղեցիկ հայուհու մասին։ Այդ արտահայտության շնորհիվ է, որ երկը դառնում է ազգի անարգված պատիվն ու իրավունքները պաշտպանելու նպատակով ժողովրդին ուղղված յուրատեսակ կոչ։ Հունգար թարգմանության մեջ, սակայն, «հայերը» էթնիկական անվան փոխարեն գտնում ենք «senki» (ո՛չ ոք) անորոշ դերանունը՝ «Szabaditásomra mért nem siet senki?» (Ինչո՞ւ ո՛չ ոք չի շտապում, որ ինձ ազատի...)[18], որով կրկին մշուշվում է բանաստեղծության բուն խորհուրդը։

Դժբախտաբար, կան դեպքեր էլ, երբ անճիշտ թարգմանությունների պատճառով ո՛չ թե միայն մթագնել, նաև այլափոխվել է հեղինակի դիտավորությունը։ Օրինակ՝ նույն

---

[15] Մ. Պեշիկթաշլյան, նշվ. գիրքը, էջ 19։

[16] *Besikthasljân*, Kikeletkor. 1887, № 5, o. 129.

[17] Ռ. Պատկանյան, նշվ. ժող., էջ 119։

[18] *Pátkánján* R., Ezer közül egy, 1882, № 2, o. 34.

Պատկանյանի «Շինականի առավոտյան երգը» բանաստեղծության խորագիրը թարգմանված է՝ «A Khinaiak reggeli dala», այսինքն՝ «Չինացիների առավոտյան երգը», որ թյուրիմացության արդյունք է, «շինական» (գեղջուկ) բառը «չինական» նշանակությամբ վերծանելու հետևանք: Այս պատճառով էլ անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ չինացու առօրյան նման հովվերգական տրամադրություններ է առաջ բերել հայ բանաստեղծի հոգում:

Դեպքեր էլ կան, երբ հունգարահայ թարգմանիչները հայերեն բնագրի այս կամ այն արտահայտությունը հասկացել են տառացի ու այդպես էլ փոխադրել՝ դրանով իսկ շրջանառության մեջ դնելով հունգարերենի ոգուն խորթ բառակապակցություններ ու իմաստներ, որ հաստատվում է մասնավորապես Ս. Շահազիզի «Հանգած քնար» բանաստեղծության օրինակով, ուր գերակշռում են արմենիզմները և հունգարացուն անհասկանալի արտահայտությունները:

«Արմենիայի» էջերում տպագրվել են նաև չորս քնարական բանաստեղծություն, որոնց հեղինակային պատկանելությունը այժմ դժվար է որոշել: Մեկ-մեկ, իհարկե, նշված է դրանց հեղինակների անուն-ազգանվան սկզբնատառերը, բայց մեծ մասամբ բացակայում են ցուցումները: Հիշյալ ոտանավորները մի ընդհանրություն ունեն. դա նրանց թեմատիկան է: Բոլորն էլ հայրենասիրական երգեր են և բոլորի ստեղծագործմանն էլ ազդակ են ծառայել Ռ. Պատկանյանի կամ Ս. Շահազիզի այս կամ այն բանաստեղծությունը:

Հայ գրականության մյուս ժանրերը, ինչպես սկզբից էլ ասացինք, հունգարահայ թարգմանիչների ուշադրությունը բացառիկ դեպքերում են գրավել, և դրա պատճառը, թերևս, պարբերականի սահմանափակ հնարավորություններն էին:

Թատերգություններից ամբողջությամբ փոխադրված է Մխիթարյան դպրոցի ներկայացուցիչ Թովմաս Թերզյանի «Սանդուխտ» ողբերգությունը («Հայ իշխանուհի Սանդուխտը» խորագրով), որի թարգմանիչը Ա. Վոյթյանն է: Լեզվական առումով այդ թարգմանությունը կարող է քննություն բռնել: Դրա ապացույցը մասնավորապես հայերի ու

ալանների կռվի դրվագն է, ապա և Սանատրուկ արքայի ու հանուն նոր կրոնի նահատակված իշխանադուստր Սանդուխտի վեպը (3-րդ գործողություն, պատկերներ 5 և 7)։

Հայ արձակագիրների երկերից թարգմանաբար ներկայացվել է միայն Պռոշյանի «Հացի խնդիրը»[19], այն էլ սոսկ մի հատված, ուր նկարագրվում է բարեկենդանի տոնակատարությունը Աշտարակում։ Թարգմանիչն օգտվել է ո՛չ թե անմիջականորեն հայ բնագրից, այլ գերմաներեն թարգմանությունից, որ սկզբնապես տպագրվել է «Armenische Bibliothek» («Հայկական գրադարան») մատենաշարի հերթական գրքերից մեկում՝ «Սաքո» խորագրով։

Եթե վերհիշենք նաև ամսագրում տպագրված մի քանի բարոյախոսական և հոգեշահ պատմվածքներ, որոնց հեղինակները չեն նշված (թարգմանիչ՝ Խ. Սոնդաղյան), և հայ ժողովրդական բանահյուսության մի քանի նմուշ, որոնց թարգմանիչը (Լ. Հարմատ) աչքի առաջ է ունեցել դրանց գերմաներեն փոխադրությունները, ապա լրացրած կլինենք ցուցակը հայ գրականության այն բոլոր գործերի, որոնք անմիջականորեն կամ եվրոպական այս կամ այն լեզվի միջնորդությամբ մատուցվել են հունգարահայ (նաև՝ հունգար) ընթերցողներին։

Մենք հանգամանորեն վերլուծեցինք միայն քնարական էջերը, նկատի ունենալով, որ դրանք և՛ քանակով են շատ, և՛ կատարմամբ՝ առավել հաջողված։ Ուսումնասիրությունը ո՛չ նվազ կարևոր մի իրողություն էլ է ի հայտ բերում՝ թարգմանիչների ցուցաբերած որոշակի միտումնավորությունը։ Նրանք թարգմանել են մասնավորապես այն գործերը, որոնք այս կամ այն կետում ձայնակցում էին «Արմենիայի» հետապնդած նպատակներին և կամ օգնում՝ դրանք հունգարահայության համար ավելի դյուրըմբռնելի դարձնելուն։ Եվ, պետք է խոստովանել, ամսագիրն հասել է իր նպատակին։

2. ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

«Արմենիան» հայ գրականությանն անդրադարձել է գրեթե ամեն համարում ու ամենատարբեր առիթներով՝ և՛ շա-

[19] *Turcsa János*, Szákó, 1888, № 2, o. 55--57, № 3, o. 77—82.

քանակաբար ապացուցվող տեսություններով ու հոդվածներով և «Մատենագրություն, գեղարվեստ» բաժնի կարճ լուրերով ու տեղեկանքներով։ Իհարկե, ամսագրից չէր կարելի պահանջել ինքնուրույն հետազոտություններ, թարմ հարցադրումներ և բանասիրական կնճռոտ հարցերի խելամիտ լուծումներ, քանի որ դա նրա աշխատակիցներից շատերի ուժերից վեր էր, և պարբերաթերթի բուն նպատակն էլ այդ չէր։ Պարտադիր էր, սակայն, մեկ այլ բան. հայ բանասիրության ասպարեզում կատարված ուսումնասիրությունների արդյունքների հաշվառումը։

Հայ գրականությանը վերաբերող հոդվածներից լավագույնները պատկանում են Ա. Մոլնարյանի գրչին, որն իր հերթին մեծապես օգտագործում էր Մ. Էմինի[20] ու Է. Դյուլորիեի[21] հետազոտությունները և Ա. Չոպանյանի[22] ֆրանսերեն թարգմանություններն ու հրատարակությունները։

«Հայաստանի պատմությունը և գրականությունը»[23] խոշոր հոդվածում Մոլնարյանը փորձել է վերարտադրել հայ գրականության անցած ուղին հեթանոսական ժամանակներից մինչև «Արմենիայի» օրերը, ուշադրություն հրավիրելով այն կարևոր դերի վրա, որ գրավում էր հայ մշակույթը արևելյան և եվրոպական քաղաքակրթության սահմանագծում։ Հեթանոսական մշակույթին անդրադառնալիս՝ Մոլնարյանն առաջին գիծ էր մղում հայոց հին ու հարուստ բանաստեղծությունը, ջանում բացահայտել նրա հատկանշական գծերը, խոսելով ո՛չ միայն հայերի հեթանոսական կրոնի ու հավատալիքների, այլև հայկական առասպելների բնորոշ կերպարների մասին։ Վերջապես՝ քրիստոնեության ժամանակաշրջանի հայ մշակույթին անդրադառնալիս, Մոլնարյանը վեր էր հանում հայ հին պատմագրության, միջնա-

---

[20] «Վեպք հնոյն Հայաստանի», Մ., 1850։

[21] *L. Éd. Dulaurier*, Les chants populaires de l'Armenie, „Revue des deux Mondes", 1882, № 3.

[22] *Arsag Tsobanian*, L' Armenie son Historie, sa Litterature, son role en Orient, Paris, 1897.

[23] m. a. Örményország története és irodalma, 1898, № 3, o. 70—74, № 4, o. 102—106, № 5, o. 131—135, № 6, o. 164—169, № 7, o. 197—200, № 8, o. 229—234.

դարյան բանաստեղծության և Մխիթարյանների գրական-գիտական գործունեության նշանակությունը։ Նրա ուշադրությունից չեն վրիպել նաև հայ նոր գրականության դեմքերն ու դպրոցները իրենց երկու հատվածներով՝ արևելահայ ու արևմտահայ։ Ռուսահայ հատվածի գրականությունն, ըստ Մոլնարյանի, «խիզախ գրականություն» էր, և ուներ դաստիարակչական մեծ նշանակություն, մի անչափ կարևոր հատկանիշ ժամանակի պայմաններում, քանի որ հայ հայրենիքն ու ժողովուրդն ենթակա էին այնքա՜ն փորձությունների։

Հաջորդ՝ «Հայ գրականություն» աշխատության մեջ[24] Մոլնարյանը հայ ազգային բանաստեղծությունը դիտել է իբրև ժողովրդի պատմական կյանքի և սոցիալական տեղաշարժերի արձագանք ու արդասիք։ Նրա ուշադրությունից չի վրիպել հայ ժողովրդի անգիր գրությունն էլ, որին նվիրել է հատուկ հոդված՝ «Հին հայկական ժողովրդական բանաստեղծությունը»[25] խորագրով։ Առանձին բանահյուսական հուշարձաններին անդրադառնալուց առաջ Մոլնարյանը սեղմ գծերով քննում է այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ պարսկական հին մշակույթի ու կրոնի հետքերը հին հայոց մեջ, քրիստոնեության դերը հեթանոսական մշակույթին խորտակիչ հարված հասցնելու գործում, շարականների կապը հին հայկական բանաստեղծության հետ, հայ տաղաչափության հնագույն ձևերը, հին հայկական երգերի դասակարգումը և այլն։ Նա վերլուծել է Հայկի ու Բելի, Արա Գեղեցկի ու Շամիրամի, Տիգրանի ու Աժդահակի, Արտաշեսի ու Սաթենիկի, Վահագնի ու Արտավազդի (վերջինը՝ երկու տարբերակով) առասպելները, մատնացույց արել նրանց կապը այլ ժողովուրդների առասպելաբանության հետ։ Մոլնարյանն, օրինակ, մատնանշել է Վահագն-Հերկուլես, Արտավազդ-Պրոմեթևս-Ամիրան առնչակցությունները, փորձել պարզել հայերի և մարերի, հայերի և իրանական ու արա-

[24] *Molnár Antal*, Az örmény irodalom, 1887, № 9, o. 257—260, № 10, o. 298—301, № 11, o. 327—331, № 12, o. 374—378.

[25] „Az ó—örmény népies költészet“, 1888, № 4, o. 97—100, № 5, o. 134—137, № 6, o. 162—165, № 7, o. 197—201, № 8, o. 228—231.

բական ժողովուրդների փոխհարաբերությունները Տիգրան Մեծի ժամանակաշրջանում և Ֆիրդուսու «Շահ-Նամեի» արտացոլած դարերից մեկ հատած առասպելում:

Հայոց հին բանաստեղծության պատկերը վերստեղծելու նպատակով «Արմենիայի» աշխատակիցները անդրադարձել են նաև հին ժողովրդական վեպերի քննությանը, աչքի առաջ ունենալով մասնավորապես Խորենացու «Հայոց պատմության» մեջ պահպանված պատառիկները ու այդ կապակցությամբ գնահատանքի խոսք ասել պատմահոր մասին: Երիտասարդ լեզվաբան ու գրականագետ Ա. Վոյթյանն, օրինակ, ոչ միայն շատ բարձր է գնահատել պատմահոր վաստակը, այլև հրատարակել է հատվածներ Խորենացու գրքում պահպանված առասպելներից, նախ՝ մեջ բերելով դրանց բնագրերը լատինական տառադարձությամբ, և ապա՝ թարգմանելով հունգարերեն[26]: Ճիշտ է, Վահագնի, Արտաշեսի ու Արտավազդի մասին պատմող առասպելները ներկայացվում են լոկ վերապատմելով, բայց անգամ այդ ձևով հին հայկական պոեզիայի նշանակության մասին նրա արած եզրակացությունները դառնում են համոզիչ:

Հայ մշակույթի ոչ մի բնագավառ այնքան առատորեն չի ներկայացված «Արմենիայում», որքան պատմագրությունը: Արդեն անցյալ դարի կեսերից՝ հայ պատմագրության հուշարձանները իրենց վրա էին բևեռել ռուս և եվրոպական արևելագետների ուշադրությունը, իբրև Արևելքի ժողովուրդների հին ու միջնադարյան պատմության սկզբնաղբյուրների: «Արմենիան», բնականաբար, չէր կարող աչքաթող անել այդ կարևոր հանգամանքը: Այս առումով ուշագրավ են հունգարահայ մասնագետներ Ղ. Պատրուբանյանի[27], Խ. Սոնգոտյանի[28], Ա. Մոլնարյանի[29] և Գ.

---

[26] *Voith Antal*, Ókori örmény nemzeti énekek, 1895, № 3, o. 72—75.

[27] *Patrubány Lukács*, Tiridát örmény királyi és a gót király, 1901, № 1, o. 10—12.

[28] *Szongott Kristóf*, Az V. századbeli négy örmény történelem megírásának ideje, 1887, № 2, o. 47—50.

[29] *Molnár Antal*, Az örmény történeti irodalom, 1901, № 10, o. 290—294, № 11, o. 325—329.

Գովրիկյանի[30] շահեկան հոդվածները՝ նվիրված հայ առանձին պատմիչներին ու նրանց երկերին։

«Արմենիայի» 1900—1901 թթ. համարներում Ղ. Պատրուբանյանը մի ընդարձակ հոդվածաշարով (10 հոդված) բնութագրել է հայ պատմագրության ականավոր դեմքերին՝ սկսած Կորյուն վարդապետից մինչև X դարի պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը։ Դրանք այլ բան չէին, քան հեղինակի դասախոսությունների շարադրանքը, որոնք նա կարդացել էր Բուդապեշտի համալսարանում։ Ամսագրի ընթերցողները ճշգրիտ պատկերացում էին կազմում ո՛չ միայն առանձին պատմիչների, այլև V—X դարերի Հայաստանի քաղաքական և մշակութային կյանքի մասին։ Պատրուբանյանը չի սահմանափակվել առանձին երկերի բովանդակությունը վերապատմելով, ընդհակառակը, նա առաջ է քաշել նաև զանազան վիճելի հարցեր և ցույց տվել, թե ինչ նշանակություն կարող է ունենալ այս կամ այն պատմիչի երկն իբրև պատմական, գրական և լեզվական հուշարձան։ Լավագույններն, հարկավ, նրա զույգ հոդվածներն են Ագաթանգեղոսի մասին[31]։

Հայ պատմագրության հայր Մովսես Խորենացու անձն ու գործն ամենից ավելի էր հետաքրքրում «Արմենիայի» աշխատակիցներին։ Ժամանակին նրա Պատմությամբ զբաղվել էր Խ. Ղուկասյանը և ցույց տվել[32], թե Խորենացին որքան հավաստապատում և անկողմնակալ պատմագիր է, որքան արժեքավոր է նրա գիրքը հայ հին ժողովրդական բանահյուսության բեկորները կորստից փրկելու առումով և, առհասարակ, որքան կարևոր սկզբնաղբյուր է այն՝ ընդհանուր պատմության և հունգարների հին պատմության ուսումնասիրության համար։ Խորենացուն նվիրված հոդվածներով «Արմենիայում» հանդես են եկել Գ. Գովրիկյանը[33], Խ. Սոն-

[30] *Govrik Gergely*, Agathangelos történelemíró 1888, №1, o.22—24

[31] *Patrubány Lukács*, Agathangelosz IV. századbeli örmény író 1900, № 2, o. 41—42, Agathangelosz örményül és görögül, 1900, № 7, o. 201—211.

[32] „Chorenei Mózes és Lukácsi Kristóf", 1891, №12, o. 362—366.

[33] *Govrik Gergely*, Chorenei Mózes, 1887, № 1, o. 20—23.

գոտյանը[34], Ա. Մոլնարյանը[35], բացի այդ՝ թարգմանվել են Վահագնի և Արտաշեսի վերաբերյալ առասպելները (Հակոբ Մարկովիչյան)[36]։ Իսկ երբ 1892-ին առանձին գրքով լույս տեսավ Խորենացու «Հայոց պատմության» հունգարերեն ամբողջական թարգմանությունը, որն իրականացրել էր Խ. Սոնգոտյանը, հունգարահայությունը մեծ ոգևորություն ապրեց։ Գիրքն առաջ բերեց բազմաթիվ արձագանքներ, որոնք հաջորդաբար տպագրվեցին ինչպես «Արմենիա» ամսագրում, այնպես էլ հունգարական այլ պարբերականներում[37]։

Հայ հին գրականության տեսությանը նվիրված և «Արմենիայում» տպագրված մյուս նյութերից ուշադրության են գրավում Ղ. Պատրուբանյանի «Հայ գրականությունը V դարում»[38] և Լ. Ըստեգարյանի «Հայ գրականության ծաղկումը»[39] հոդվածները, ուր պատմական հարուստ փաստերի օգնությամբ ցույց է տրված, թե ինչպես է ծագել ու զարգացել հայոց ազգային մատենագրությունը, ինչ պայմաններում են հայերն ընդունել քրիստոնեություն և այն ինչ դեր է խաղացել երկրի ու ժողովրդի կյանքում։ Նրանք անդրադարձել են հայոց գրերի գյուտին, առաջին թարգմանիչների գործունեությանը, Աստվածաշնչի և հունարեն ու ասորերեն մատենագրական հուշարձանների հայերեն թարգմանության հարցերին և այլն։

Պակաս ուշագրավ չէ նաև Լ. Ըստեգարյանի «Հայ գրա-

---

[34] *Szongott Kristóf,* Chorenei müve és az európai armenisták 1891, № 12, o. 356—368.

[35] *Molnár Antal,* Khorenei Mózes, 1896, № 8, o. 265.

[36] „Teherben volt a mindenség", 1888, № 2, o. 38—39. „Ártásesz ül sötét lován.", 1890, № 12, o. 373—374.

[37] „Ujabb nyilatkozatok a magyar Choreneiről", 1893, № 3 o. 87—92. Գ. Գովրիկյանի մի վկայությունից պարզվում է, որ խմբագրությունն սկզբնապես դիտավորություն է ունեցել շարունակաբար տպագրելու Սոնգոտյանի ամբողջ թարգմանությունը, որը սակայն, անհայտ պատճառներով չի իրագործվել։

[38] *Patrubány Lukács,* Örmény irodalom az V. században, 1901. № 7, o. 202—205, № 8, o. 229—231, № 9, o. 266—270, № 10 o. 295—299, № 11, o. 333—335, № 12, o. 359—362.

[39] *Esztegár László.* Az örmény irodalom fénykora, 1899, № 3, o. 83—86.

կանության անկումը» հոդվածը[40], որ նվիրված է հետագա երկու հարյուրամյակների՝ VI—VII դարերի մեր մշակութային կյանքին։ Հոդվածագիրն ընդգծում է, որ հայ գրականությունը կարողացել է պահպանել իր ազգային բնավորությունը նույնիսկ ինքնուրույն պետականության բացակայության պայմաններում։

Եթե «Արմենիայի» աշխատակիցներին, այնուամենայնիվ, հաջողվել է վերստեղծել հայ պատմագրության համարյա ամբողջական պատկերը, ապա նույնը չի կարելի ասել միջնադարյան հայ գրականության հիմնական սեռի՝ քնարերգության մասին, որը հունգարահայ ամսագրում աղքատ և միակողմանի է ներկայացվել։ «Արմենիայի» առաջին տարվա համարներից մեկում տեղ է գտել Մոլնարյանի արդեն հիշված հոդվածը շարականների վերաբերյալ[41], որն իրականում վերաշարադրումն էր բելգիացի հայագետ Ֆելիքս Նևի (Felix Néve) աշխատության համապատասխան էջերի[42]։ Ճիշտ է, տպագրվել են ուրիշ երկու հոդված և՝ «Հայ գրականությունը Բագրատունիների շրջանում»[43] և «Հայ գրականությունը Կիլիկյան շրջանում»[44], որոնք նույնպես բանաքաղություն են, այս անգամ Ա. Չոպանյանի «La litterature armenienne» («Հայոց գրականությունը») հոդվածից։

Գնահատելին այն է, որ վերջին հոդվածի հեղինակ Ա. Վոյթյանը թարգմանաբար մեջ է բերել Ներսես Շնորհալու «Յաղագս երկնից» գեղեցիկ ստեղծագործությունը։

Միջնադարյան հայ գրականության մյուս կարևոր բնագավառը՝ առակագրությունը, ներկայացվել է գլխավորապես «Մանրալուրը» բաժնի «Կարճ հաղորդումների» միջոցով։

---

40. *Esztegár László*. Az örmény irodalom hanyatlási kora, 1889, № 4, o. 114—116.

41. *Molnár Antal*. Az örmény egyház énekei, 1887, № 5, o. 130—132, № 6, o. 161—163.

42. *Felix Néve*, L'Armenie chretienne, Louvain, 1886.

43. *Papp Gusztáv*. Az örmény irodalom a Bagratidák korában, 1899, № 4, o. 111—114.

44. *Voith Antal*. Az örmény irodalom a ciliciai Korszakban, 1903, № 9, o. 269—273.

Դրանցից ելնելով հարկ է նկատել, որ հունգարահայոց շրջանում տարածված են եղել Մխիթար Գոշին վերագրվող առակներ, որոնցից առանձին նմուշներ տեղ են գտել նաև Սոնգոտյանի «Ազգագրության» մեջ։

Միջնադարյան հայ գրականության այս միակողմանի ներկայացումն, ինչ խոսք, ապակողմնորոշում էր ընթերցողներին՝ ստեղծելով այն սխալ պատկերացումը, թե այդ դարերի մատենագրությունն իր էությամբ խիստ կրոնական պիտի լիներ։ Ահա՛ ինչու, այդ թյուր կարծիքը ցրելու համար, ամսագիրը տպագրում է նոր հոդված՝ «Հայ ժողովրդական երգիչներ»[45] խորագրով, որի հեղինակը (Հ. Չելինգարյան) աշուղական երգերի օրինակով ջանում է ցույց տալ, որ հայերն երգել են նաև սեր ու կարոտ։ Նրա կավանները, ցավոք, աշուղ Ղարիբի խաղերն էին, որոնցից մի նմուշ մեջ է բերված հունգարերեն թարգմանությամբ։

Հայ աշուղական բանաստեղծությանը ամսագիրը նվիրել է մեկ ուրիշ հոդված էլ, որի հեղինակը Գ. Շիմայանն է։ Նա ևս, ըստ էության, աղոտ պատկերացում ուներ արևելյան ժողովուրդների գրական ստեղծագործության այդ ինքնատիպ բնագավառի մասին և հայ հռչակավոր աշուղ Սայաթ-Նովայի կենսագրությունը վերապատմելուց բացի, ուշագրավ ոչինչ չի ասում[46]։

«Արմենիա» ամսագրի ամենասիրած թեմաներից էին հայկական մշակույթի ու գիտության եվրոպական կենտրոնների՝ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների գիտական գործունեությունն ու ստեղծագործական առօրյան։ Ա. Վոյթյանն իր մի հոդվածում գրում էր. «Փա՜ռք վիեննական և վենետիկյան Մխիթարյաններին, որ... փրկեցին կորստից հայ դասականների ձեռագրերը, որոնք պատած էին դարավոր փոշով, պատրաստեցին դրանք տպագրության և հանձնեցին ապագա սերունդներին, իբրև հավերժական հուշարձաններ։ Փա՜ռք նրանց այն բանի համար, որ պահպանեցին հայոց հին, դասական, ինչպես և նոր, խոսակցական լեզուները,

[45] *Cselingárián Jakab.* Az örmény népdalnokok, 1901, № 6, 1 16.

[46] *Simay Gergely.* Száját Nová ásugh, 1891, № 10, o. 311—314; Szájátnová, 1901, № 9, o. 260.

կազմեցին դրանց համար համակարգված քերականություն-ներ ի պետս հայ բոլոր լեզվաբանների և, ընդհանրապես, ողջ հայ գիտության»[47]։

Հայոց նոր գրականությունը նույնպես, որը բավականաչափ երիտասարդ էր և լուրջ հաջողությունների էր հասել XIX դարի 30—40-ական թվականներից սկսած, գրավում էր «Արմենիայի» աշխատակիցների մասնավոր ուշադրությունը։ Դա բնական էր, քանի որ ամսագիրն այն հայելին էր, որի մեջ հունգարահայերը կարող էին տեսնել ժամանակի իրական Հայաստանը և այնտեղ ապրող իրենց եղբայրներին։ Բայց, ինչպես լինում է սովորաբար, ավելի դժվար է խոսել ներկայի մասին, իբրև ավարտին դեռ չհասած հարաճուն իրողության, քան անցած-գնացածի։ Այդ նկատի ուներ Լ. Ռոսկարյանը, երբ գրում էր. «Մեզ դեռ շատ բան է պակասում, որպեսզի կարողանանք տալ հայոց բանաստեղծության ճշգրիտ նկարագիրը»[48]։ Այնուամենայնիվ, «Արմենիայում» տպագրված հոդվածները, հաճախ վիճելի կամ սխալ տեսակետներով հանդերձ, վկայությունն են այն բանի, որ ամբողջության մեջ՝ ամսագրին հաջողվել է ներկայացնել հայոց նոր գրականության ճշգրիտ պատկերը։

Այդ ուղղությամբ ամենից ավելի արել է Լ. Ռոսկարյանը՝ հրապարակելով առանձին ստեղծագործողների դիմաստվերների և խորհրդածությունների մի ուշագրավ շարք հայոց նոր գրականության մասին։ Նրա նախասիրած գրական սեռը բանաստեղծությունն էր, ներկա դեպքում՝ հայ նոր քնարերգությունը, որի հատկանշական գծերից երկուսը նախապատրաստել է և հաջողությամբ բացահայտել։ Ռոսկարյանի մեկնությամբ՝ պատմական հանգամանքների բերումով, հայ բանաստեղծները և գրողները իրենց ճակատագրով, կրթությամբ և անհատականությամբ, շատ են տարբերվում մեկը մյուսից, որի պատճառով էլ հայ գրականությունը դարձել է բազմազույն ու բազմաբովանդակ։ Սակայն նաև նյութ ունենալով գլխավորապես

[47] *Voith Antal*, A bécsi és velenczei mechitáristák irodalmi mü ködéséről. 1896. № 10. o. 315.

[48] *Esztegár László*, újabb adatok a mai örmény liráról. 1892. № 8, o. 236.

Հայրենիքի ճակատագիրը և նրա նկատմամբ տածած սերը՝ Հայոց նոր բանաստեղծությունը դարձել է զարմանալի միասնական[49]։

Այս նույն հարցերն է շոշափել նաև Խ. Սոնգոտյանն իր «Գաղափարի հաղթանակը» հոդվածում, թեև ո՛չ այնպես համակ ու պարզ, ինչպես Ըստկարյանը[50]։ Վկայակոչելով Խ. Աբովյանի, Ռ. Պատկանյանի, Ստ. Նազարյանցի, Րաֆֆու և Գր. Արծրունու ստեղծագործությունները, Սոնգոտյանը ջանում է հաստատել, որ հայ նոր գրականության մեջ առաջին գիծ է մղվել հայրենասիրության գաղափարը։ Իհարկե, այս տեսությունը հեռու է սպառիչ լինելուց, թեկուզև այն պատճառով, որ թվարկված գրողների մեջ բացակայում են հայ նոր գրականության դիմագիծը որոշող այնպիսի մեծություններ, ինչպիսիք են Պռոշյանը, Պարոնյանը, Սունդուկյանը և ուրիշները։

Հետաքրքրական է Սոնգոտյանի «Հայ գրականության ներկա վիճակը Թուրքիայում» հոդվածը նույնպես, որտեղ խոսուն օրինակներով ցույց է տրված արևմտահայ գրողների սերտ կապը հայ գրականության դարավոր և լավագույն ավանդների հետ։ Նա լավատեսորեն է տրամադրված գալիքի հանդեպ և հոդվածն եզրափակում է այս խոսքերով. «Հայ գրականությունն ունի իր ապագան»[51]։

«Արմենիայի» գրաքննադատներն առանձին հոդվածներ են նվիրել XIX դարի գրողներից ու գործիչներից միայն մի քանիսին, այդ թվում՝ Խ. Աբովյանին, որի ստեղծագործությունը հայ նոր գրականության հիմնաքար է դիտվում և որն, իբրև գրող, Խ. Սոնգոտյանի բնորոշմամբ՝ «Մեր գրականության վեպերի նորարարն» է[52]։ Այս ու նման խոսքերը սակայն լոկ հայտարարություններ էլ մնացել են, որովհետև ո՛չ Սոնգոտյանը, ո՛չ էլ Աբովյանին անդրադարձած մյուս հոդվածագիրները ցույց չեն տվել, թե ո՞րն

[49] Նույն տեղում, էջ 235—237։

[50] *Szongott Kristóf*, Az eszmény győzelme, 1890, № 7, o. 189—190.

[51] *Szongott Kristóf*, Az örmény irodalom jelene Törökországban, 1888, № 1, o. 15—18.

[52] *Sz. K.*, Regény—irodalmunk úttörője, 1897, № 5, o. 131—132.

չր Աբովյանի նորարարությունը։ Նրանք շարադրել են մեծ լուսավորչի հակիրճ կենսագրությունը և հպանցիկ ձևով քննել «Վերք Հայաստանի» վեպը, և միայն այդքանը։ Սոնգոտյանն, օրինակ, նկատել է, որ «վեպն ունի լեզվական, պատմական, հասարակական և ազգագրական նշանակություն», ազգային խնդիրների տեսակետից հետևորդների վրա ունեցել մեծ ազդեցություն։ Ցավոք, անտեսվել է Աբովյանի քաղաքական կողմնորոշման խնդիրը, որին անդրադառնալը ավստրո-հունգարական կայսրության պայմաններում անկարելի էր։ Նկատենք, վերջապես, որ Գ. Շիմայանը հունգարերեն բանաստեղծություն է գրել «Աբովյանի հիշատակին»[53] վերնագրով, ընդգծելով նրա ստեղծագործության հայրենասիրական պաթոսը։

«Արմենիայի» գրական անդրադարձումների մեջ մեծ բաժին է հատկացված Ղ. Ալիշանի անձին ու գործին, որի պատճառը հունգարահայերի սերտ կապերն էին նրա հետ։ Ամենանշանակալից հոդվածները պատկանում են Հովհ. Շիմայանին[54] և Խ. Սոնգոտյանին[55]։ Թվարկելով կամ սեղմ ձևով բնութագրելով Ալիշանի գրական-գիտական վիթխարի ժառանգությունը, նրա պատմական, հնախոսական և աշխարհագրական, բանագիտական, բանասիրական աշխատությունները, օտար ժողովուրդների գեղարվեստական ժառանգության հատկանշական էջերի հայերեն թարգմանությունը, վերջապես՝ Ալիշանի «Նվագների» հնգամատյանը,— հոդվածագիրները ուշադրություն էին հրավիրում Հայաստան աշխարհի նկատմամբ Ալիշանի տածած անմար սիրո և հայրենասիրական քերթվածների վրա, որոնք մեծ դեր են խաղացել հայ նոր քնարերգության զարգացման գործում։ Տարօրինակ, սակայն փաստ է, որ «Արմենիան» պատշաճ ձևով չի գնահատել հայ նոր քերթության երկու սյուների՝ Մ. Նալբանդյանին և Մ. Պեշիկթաշլյանին։ Վերջինիս թեպետև հունգարահայ հանդեսն անդրադարձել է երկու առան-

[53] *Simay Gergely*, Aboviáncz emlékére, 1895, № 8, o. 246.

[54] *Simay János*, Alisán Leont, a kolostor költője, 1887, № 12, o. 399–402.

[55] *Szongott Kristóf*, Alisán Leontinus, 1890, № 8, o. 226–237.

ձին հոդվածով, սակայն ո՛չ իբրև բանաստեղծի, այլ ավելի շատ՝ Մխիթարյան հայրերի օրինակելի աշակերտի և ֆըրանսիական ու անգլիական քերթության շնորհալի թարգմանչի[56]: Իսկ Մ. Նալբանդյանն ավելի իր կենսագրությամբ է ներկայացվել (Խ. Սոնգոտյան), ավելացնելով միայն, թե նրա բանաստեղծությունները գեղեցիկ են, արձակն՝ օրինակելի, իսկ ինքը, իբրև գրող ու գործիչ՝ հայոց Շանդոր Պետեֆին[57], որ, հարկավ, ուներ հարուստ ենթատեքստ:

Րաֆֆին, թերևս, ամենասիրված ու ժողովրդական հեղինակն էր հունգարահայոց շրջանում: Նրան նվիրված հոդվածներից մեկում, որը խորագրված էր «Հակոբ Մելիք-Հակոբյան (Րաֆֆի)», փորձ է արված բացահայտելու մեծ արձակագրի ստեղծագործության էական առանձնահատկություններից մի քանիսը, նշված է, որ նա ստեղծել է ժողովրդական հերոսներ, որոնք ազդեցություն են ունեցել հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարգացման վրա: Ընդգծված է այնուհետև, որ Րաֆֆին իր երկերում մերկացրել է եվրոպական տերություններին, որոնք իրականում անտարբեր դիրք էին գրավում հայերի դժբախտ ճակատագրի հանդեպ: Հանգամանորեն վերապատմվել է «Ջալալեդդինի» բովանդակությունը, ուշադրություն հրավիրվել «Խենթ», «Դավիթ-Բեկ», «Սամվել» և «Կայծեր» վեպերի վրա, որոնցից կարելի է շատ բան իմանալ Արևելքի ժողովուրդների կյանքի և մտածողության վերաբերյալ[58]:

Ընդհանրապես, հունգարահայ գրաքննադատներին ամենից ավելի հայրենի քնարերգության հայրենասիրական լարն է հուզել, և այդ հայացքով էլ գնահատել են մայր հայրենիքի բանաստեղծության արժեքներն ու արժանիքները: Բնական է, որ արևելահայ նոր քերթության մյուս երկու ներկայացուցիչները՝ Ռ. Պատկանյանն ու Ս. Շահազիզը, չէին կարող բացառություն կազմել: Լ. Ըստկարյանի «Նոր

---

[56] *Arthur Leist*, Besigtháslián a költö (ford. Simai János). 1887, № 8, o. 236—237.

[57] *Szongott Kristóf*, Nálbateáncz a költö, 1896, № 1. o. 1—2.

[58] *Cselingárián Jakab*, Hágop Melik—Hágopján (Raffi), 1887, № 7, o. 201—203.

տվյալներ ժամանակակից հայ քնարերգության մասին» մեծ հոդվածում մանրամասնորեն և հաջող կերպով վերլուծված է մասնավորապես Ռ. Պատկանյանի «Աղասու մոր երգը» բերթվածը, կապված պատմական այն իրադրությունների հետ, որոնք ստեղծագործական ազդակ դարձան հիշյալ ստեղծագործության ու հեղինակի հայրենասիրական գաղափարների համար։ Ռ. Պատկանյանի սույն բերթվածի կյանքի կոչող պատմական հանգամանքներն ու տրամադրությունները, ինչպես նշում է Ըստկարյանը, իրենց զուգահեռներն ունեին եվրոպական գրականության մեջ, հանձին Բերանժեի և Պետեֆիի անման ստեղծագործությունների։ Նա նկատում է, որ հիշյալ երկում հնչող բարձր գաղափարների, քնարական հերոսի հոգեվիճակի հաջող վերարտադրության և բանաստեղծական փայլուն վարպետության շնորհիվ Պատկանյանի «Աղասու մոր երգը» կարելի է դասել համաշխարհային գրականության ամենագեղեցիկ բերթվածների շարքը։ Ըստկարյանն իր ասածը հաստատել է Պատկանյանի երկերից բերած բազմաթիվ մեջբերումներով, որոնց գերազանց թարգմանություններն արված են հունգար բանաստեղծ Գ. Ռուդնյանսկու ձեռքով։ Ըստկարյանն իր սույն հոդվածում միաժամանակ փորձել է ցույց տալ այն հատկանշական կողմերը, որոնցով այս երկու անկաշառ հայրենասեր բանաստեղծները տարբերվում են միմյանցից։ Ըստ այդմ՝ թեպետև Ս. Շահազիզը հայրենիքի փրկության մասին մարտական երգեր չի գրել, բայց պատկերել է իր երազանքների աշխարհը՝ ազատ և ծաղկուն Հայաստանի կերպարը՝ անկեղծությամբ և խոր քնարականությամբ։

Ըստ էության այսքանով էլ ավարտվում են հայ նոր գրականությանը առնչվող հոդվածները, որոնք այնուամենայնիվ իրենց մեջ պարունակում են դրական շատ բան։ Հունգարահայ գրողները կարողացել են բացահայտել ամենակարևորը՝ հայ բանաստեղծության կապը իր պատմական հայրենիքի ու մայր հողի հետ, մատնանշելով շոշափման եզրեր հայ ու հունգար գրականությունների միջև։

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան. Հայ-հունգարական գրական առնչությունների ուսումնասիրության երախայրիքը 13

Երկու խոսք 13

Ա. Հունգարահայերը և գաղթավայրի մշակութային ու հոգևոր զարթոնքը XIX դարի վերջերին և XX-ի սկզբներին . . . 15

Բ. «Արմենիա» ամսագրի ընդհանուր բնութագիրը . . . 33

Գ. Հունգարահայերի գրական ստեղծագործությունները . . . 59

1. Հունգարալեզու հայ գրականություն 59

2. Հայալեզու քերթվածներ 83

3. Փշրանքներ տրանսիլվանահայ բանահյուսությունից . . 99

Դ. Հունգար գրականությունը «Արմենիա» ամսագրում . . . 113

1. Արա Գեղեցիկի առասպելի հունգարական մշակումը . . 113

2. Հունգար գրողները հայերի մասին 130

3. Հունգար գրականությունից կատարված հայերեն առաջին թարգմանությունները 144

Ե. Հայ գրականությունը «Արմենիա» ամսագրում 162

1. Թարգմանական էջեր հայ գրականությունից . . . 163

2. Գրականագիտական գործեր 174

ԷՎԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ-ԲԱԳԻ

ЭВА ГЕВОРГЯН-БАГИ

ՀԱՅ-ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ «ԱՐՄԵՆԻԱ» ԱՄՍԱԳԻՐԸ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ИБ № 93

Հրատարակչական խմբագիր
Ա. Հ. ՋԱՔԱՐՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ՋԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ
Մ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՎՖ 07301 Պատվեր 297 Հրատ. 4780 Տպաքանակ 1000

Հանձնված է շարվածքի 13/03 1978 թ.։ Ստորագրված է տպագրության 04. 01. 1979 թ.։ Տպագր. 11,75 մամուլ, պայման. 9,87 մամուլ, հրատ. 8,16 մամուլ։ Թուղթ № 1, $84 \times 108^1/_{32}$։ Գինը 1 ռ. 30 կ.։

Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան 19, Բարեկամության 24 գ.
Издательство АН Армянской ССР, Ереван, Барекамутян, 24-г
Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչության էջմիածնի տպարան
Эчмиадзинская типография АН Арм. ССР

1 ռ. 30 կ.:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1979

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220062242